

ՏԻԳՐԱՆ ՔԼՆՅ. ԽՈՑԵԱՆ

ՆԱՀԱՏԱԿ ՑԵՂԻ ԱՆՄԱՀՆԵՐ



Հ Մ Ը Մ Ի Կ Ե Դ Ի Ո Ն Ա Կ Ա Ն Վ Ա Ր Զ Ո Ի Թ Ի Ի Ն
Մ Ա Տ Ե Ն Ա Շ Ա Ր Թ Ի Ի Մ Է Կ

Տ Ի Գ Ի Ր Ա Ն Ք Հ Ն Յ . Խ Ո Յ Ե Ա Ն

Հ . Մ . Ը . Մ . Ի Հ Ի Մ Ն Ա Դ Ի Ի Ն Ե Ր Է Ն

Ն Ա Հ Ա Տ Ա Կ Ց Ե Ղ Ի Ա Ն Մ Ա Հ Ն Ե Ր



ՏԻԳՐԱՆ ՔՀՆ. ԽՈՅԵԱՆ

Ծնած է Տրապիզոն 1896-ին :

Մանկութիւնը կ'անցնէ Պոլիս՝ «Հայ Կղզի» (Գնալը-Բրոքի), որուն հոգեւոր հովիւն էր իր հայրը՝ Վահան Քհնյ. Խոյ-եան : Հոն կը ճանչնայ Վահան Զերազը որուն կը կապուի հոգեպէս :

Պատանեկութեան կ'աշակերտէ Լեւոն Շանթի :


1915-ին կ'աւարտէ «Սպայից» վարժարանը եւ կը մտնէ բանակ :

1918-ին կը հանդիսանայ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիր ժողովի կազմակերպիչներէն եւ այդ ժողովին քարտուղարը :

1920-ին ընդառաջելով Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան հրաւերին Վահան Զերազի եւ Օննիկ Եագմանեանի հետ կը կազմէ այն առաջելութիւնը որ կ'երթայ հայրենիք հոն կազմակերպելու համար սկստուական եւ մարզական շարժումները :

Պոլիս կը վերադառնայ կարճ ժամանակամիջոցի մը համար, ապա կ'անցնի Ամերիկա, ուր կ'ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ը կազմողներէն եւ տարածողներէն մէկը : Հոն կ'աւարտէ ամերիկեան մարմնակրթանքի վարժարանը : Կ'ըլլայ ծովափի ազատարար եւ մարզանքի ուսուցիչ : Ապա կը ձեռնադրուի քահանայ՝ աւելի լաւ ծառայելու համար Ազգին եւ Աստուծոյ :

1978-ին Հ.Մ.Ը.Մ.ի վաթսուհամեակին առթիւ գրի կ'առնէ իր յուշերը, որոնք նկարներով ճոխացած կը կազմեն ներկայ հատորը՝ «Նահատակ Ցեղի Անմահներ» :



ՏԻԳՐԱՆ ՔԶՆ. ԽՈՅԵԱՆ

Շատեր կը գրեն իրենց «Յուշեր»ը:

Անցեալ մը վերակերտելու ոգեւորութեամբ թուղթին սեւեռուած այս քանդակումները սակայն՝ չեն սահմանափակուիր սովորական կեանքի մը յիշատակներու գրառման նեղ ծիրին մէջ: Գաղափարագոհ եւ հայրենանուէր սերունդի շառաւիղ՝ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն մէկն է որ, անձնական ապումներ հաղորդելէ աւելի, կ'ոգեկոչէ ու կը վերակենդանացնէ՝ Հ.Մ.Ը.Մ.ի ծնունդին, նորաստեղծ Հանրապետական Հայաստանի մէջ անոր ստանձնած առաջելութեան, ու ապա՝ Սփիւռքի տարածքին անոր նիւդարձակումին ընդմէջէն՝ պատմական դէպքեր ու դէմքեր, վկայագրութեան պահանջած անշահախնդրութեամբ ու գրական վարակիչ շունչով:

Ոչ միայն 1915-ի Ցեղասպանութենէն հուզոյրած հայ որբերու բանակին վերեւ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշին արծուքեւ ծածանումներուն սխրանքը, այլեւ Հայաստանի հողը իր արիւնով վերակենդանացուցած, ընդ հուր եւ ընդ սուր հայրենիք կերտած սերունդի մը մաքառումներուն շկահիւնը եւ հոգեխռով կանչը կը բերէ՝ օրը օրին նօթագրուած ծոցատետրէ մը, տարիներ ետք, վերամշակումով եւ ընդլայնումով մարմին առած այս հատորը:

Հայաստանին եւ հայ ժողովուրդին գոհաբերուելու սփանչելի ոգիով տոգորուն սերունդ մը կը տողանցէ այս էջերէն:

Ահա թէ ինչո՛ւ ուրախութեամբ կը յանձնենք գայն ընթերցողին, մասնաւորաբար նոր սերունդին, տէրը մնալով այն համոզումին թէ՛ ոչ միայն լաւագոյն Հ.Մ.Ը.Մ.ականներ կերտելու պիտի ծառայէ այս գիրքը, այլ՝ միաժամանակ՝ ներշնչարան պիտի հանդիսանայ Հայուն դարաւոր երազի իրագործման հետամուտ հայ երիտասարդութեան:

Հ.Մ.Ը.Մ.ի ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ա.

Հ. Մ. Ը. Մ. Ի ԾՆՈՒՆԴԸ

«Երկներ երկին, երկներ երկիր,
Երկներ եւ ծովն ծիրանի,
Երկն ի ծովուն ունէր գկարմրիկն եղեգնիկ.
Ընդ խեղճան փող ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր
Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ.
Նա հուր հեր ունէր,
Ապա թէ բոց ունէր մօրուս
Եւ աչկունքն էին արեգակունք»:

Հայ Սկաուտ մրն եմ, եւ այժմ՝ Հայստ.
Ս. Եկեղեցւոյ քահանայ մը: Այս երկու սրբա-
զան հանգամանքներով կու գամ յայտարարե-
լու, թէ՛ ինչ որ պիտի գրեմ, ինչ որ պիտի
արձանագրեմ եղած է այնպէս՝ ինչպէս որ պի-
տի ներկայացնեմ: Այլ կերպ չէ եղած:

ՏԻԳՐԱՆ ՔՀՆՅ. ԽՈՅԵԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ ԵՒ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ
ԱՌԱՋԻՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Կ. Պոլիսը (Իստամբուլ), երբեմնի մայրաքաղաքը Թուրքիոյ, եղած է նոյնպէս կեդրոնական քաղաքն ու վառարանը Թրքահայոց ազգային, քաղաքական, կրթական, եւ բառին լայն առումով՝ մշակութային ու անտեսական կեանքին, իր պատրիարքարանով, հանրային գործիչներու, մտաւորականներու, ամէն ճիւղերու մէջ յայտնի ու կարող մասնագէտներու, արուեստագէտներու, եկեղեցիներու, պարոցներու եւ զանազան արժէքներու առատութեամբ: Պոլիսը եղաւ նոյնպէս ծննդավայրն ու օրրանը «Հ.Մ.Ը.Մ.»ին, համաշխարհային առաջին պատերազմի վերջանալէն (1918) անմիջապէս յետոյ: Բայց, մարդական շարժումը հայոց մէջ Հ.Մ.Ը.Մ.ով չէ որ սկսաւ:

Շատ դարեր առաջ, նախքան Քրիստոսնէութիւնը, մեր հեթանոս նախահայրերը ունեցած են համահայկական «Նաւասարդեան խաղերը», նման՝ հին հելլէններու, չորս տարին անգամ մը, իրենց աստուածանիստ Ողիմպոս լեւրան ստորտար սարքած ողիմպիական մրցումներուն:

«Նաւասարդեան խաղ»երը կը հովանաւորէր ու անձամբ ներկայ կ'ըլլար հայոց թագաւորը, իր ամբողջ աւագանիով: Զինուորականներ ու ասպետներ էին մրցակիցները: Ասպետական անխարդախ ու մաքուր ոգին էր հրակիչը մրցողներուն, որոնց մէջ յաղթական եղողը հայոց

արքայէն կը վարձատրուէր իր ճակատին շուրջ զետեղուած թափնեայ պսակով, եւ այդ յաղթական ասպետը կը յարգուէր ու կը սիրուէր ամբողջ հայ աշխարհի տարածքին:

Քրիստոնեայ Հայաստանի նախարարական տուններու զաւակներն ալ, շատ բժախնդրօրէն եւ կարող մարդիկներու ձեռքին տակ, երկար ատեն կը մարզուէին տիրանալու համար իրենցմէ պահանջուած զանազան կարողութիւններուն, ինչպէս՝ ճիւղարժուութիւն, նետաձգութիւն, սուսերամարտ, վազք ու ոստում, եւն.։ Հայկական այրուծին ամենալաւ մարզուածն ըլլալու համբաւն ունէր:

Հայ նորագոյն պատմութեան մէջ մարմնամարզական շարժումը կը սկսի 20-րդ դարու սկիզբը: Եզրիպոսի Ազէքսանդրիա եւ Գահիրէ քաղաքներուն մէջ, մարմնակրթական վկայուած մասնագէտներ՝ Ստեփան Խանճեանի, Գ. Նիզիպլեանի եւ նման ուրիշներու ասաջնորդութեամբ՝ 1900-ի սկիզբէն Փիզիքական դաստիարակութեան լուրջ շարժում մը զարգացած է, եւ «Կամք»ի նման ուժեղ ակումբներու մէջ, պաւսթօպոլի եւ դաշապին մրցումներու որակաւոր մարզիկներ հասցուցած:

Պոլսոյ մօտիկ Իզմիրի մէջ, Մկրտիչ Եանրբեանի, հեղինակը՝ Փութպոլի մասին հայերէնով գրուած առաջին գրքին, Յարէթեան եղբայրներու եւ զործակիցներու շնորհիւ, «Որսորդաց Ակումբ»ի նման լաւ կազմակերպուած կեդրոնի մը շուրջ խմբուած եռանդուն հայրերներ, ամէն կերպով յառաջադէմ այդ քաղաքին մէջ, նշանակելի արդիւնքներ արձանագրած են՝ մարմնակրթական գետնի վրայ:

Իսկ Պոլսոյ, գեղեցիկ այդ քաղաքին կենսունակ հայ նոր սերունդը... ահա թէ ինչ պատկեր կը ներկայացնէր:

Առնենք՝ Գնալը կղզին (Յունարէն՝ Proti), Մարմարա ծովուն մէջ. Պոլսէն, շոգենաւով 45 վայրկեան հեռու՝ առաջին կղզին է, գեղեցիկ բնութեամբ օժտուած կղզեխումբի մը՝ որ կը կոչուի «Իշխանաց Կղզիներ»:

Բրոքի կղզին Պոլսոյ ամէնէն առողջ ու զօրաւոր օդը եւ ամենալճիւտ մաքուր ծովն ունենալու համբաւն ունէր: Բնակչութեան մեծամասնութիւնը հայեր էին. հայերու թիւին կէսին չափ ալ յոյներ կային, ու քանի մը տուն թուրքեր, քանի մը ոստիկան եւ պաշտօնեայ թուրքեր: Հայերը եւ յոյները ունէին իրենց եկեղեցին ու դպրոցը: Հայրս՝ Վահան քհնյ. Խոյեան, հոգեւոր հովիւն էր մեր կղզիին, որ մեծ թիւ մը ունէր հայ մտաւորականներու թէ՛ իբրեւ մնայուն բնակիչներ եւ թէ՛ իբրեւ ամառնային օդափոխութեան համար եկողներ:




Շաւարշ Քրիսեան՝ 1908-ին հայ մարզական շարժումը կազմակերպող ոգին, ձեռնհաս մարզիչ եւ «Մարմնամարզ»ի գաղափարական հիմնադիր-խմբագիրը: Զոհ գնաց եղեռնին:



Գնալըն յիշեցի եւ այսքան տեղ արամազրեցի անոր՝ որովհետեւ իմ մանկութեանս ու պատանեկութեանս երջանիկ ու ժիւր տարիներն եմ ապրեր այնտեղ, եւ մեր այդ սիրելի կղզիին մէջ ունեցած տղայական կեանքի պատկերը — զոր պիտի տամ — առաւել կամ նուազ չափով այն է՝ ինչ որ է Պոլսոյ միւս թաղերու մատղաշ սերունդինը: «Հայ կղզին» քիչ մը աւելի բախտաւոր է բրած իր փոքրիկները, աւելով անոնց թէ՛ ցամաքային եւ թէ՛ ծովային առաւելութիւններով օժտուած չքեց «բնութիւն» մը:

Նախ քան Վահան Չերազի Բրոքի կղզիին մէջ երեւնալը՝ 1904-ին, մենք, առոյգ ու առողջ փոքրիկներ, ինչպէս բոլոր տեղերու մէջ ապրող փոքրիկները, մեր մարմիններու բնական պահանջը կազմող մարդական պատահական խաղեր ունէինք: Վազվզուկն ու բռնուկը եւ կրգվըռտուկը յաճախակի ու սովորական բաներ էին: Պահանջքին համեմատ կը ցատկէինք, վազելու մրցումներ կ'ընէինք, քար կը նետէինք, ծառեր կը մագլցէինք, կը լողայինք, կը պոռայինք, թռուցիկ կը թռցնէինք եւն. եւն. վերջապէս մեր կենսունակութիւնը կ'արտայայտէինք խաղալով: Կազմակերպուած ձեւով մէ՛կ խաղ ունէինք միայն, որ երկու խումբերու բաժնուելով կը խաղայինք, որոշ օրէնքներով, կանոններով: «Գերի» էր խաղին անունը եւ շատ կը սիրէինք այդ խաղը: Նմանօրինակ ոգեւորիչ ուրիշ երկու խաղեր կան, մէկը՝ «Դրօշակ», որ Պոլսոյ Պէրպէրեան վարժարանի ուսանողներու սիրած խաղն էր, միւսը՝ «Բերդ», որ Կարնոյ Սանասարեան վարժարանի ուսանողներուն նախընտրածն էր: Այս վերջինը սորված եմ Սանասարեանէն ընթացաւարտ Խոսրով Պապայեանէն: Երեք խաղերն ալ «Գերի», «Դրօշակ», «Բերդ» իրենց մարդական անունով ու ոգիով, շատ նման են իրարու:


Այսպէս, մեր մատղաշ մարմիններուն, դնդերներուն առողջութիւնն ու ճկունութիւնը կ'ապահովէինք բնագլօրէն պահելով դանոնք միշտ շարժման մէջ: Իսկ կեանքը ինքնին շարժում է: Մենք ու կենդանական աշխարհը, մեզ չըջապատող համայն աիեզերքը, իր երկրային թէ՛ երկնային ամենափոքրիկ մասնիկէն մինչեւ ամենամեծը, յարատեւ շարժման մէջ ենք: Հոն՝ ուր շարժումը դադրի, կը յաջորդեն նեխն ու մահը: Եւ մենք, մայր բնութեան այս խիստ օրէնքը առանց դիտնալու, մեր մարմիններու եւ դնդերներու առողջութեան համար անհրաժեշտ ու կենսատու սնունդը՝ Եարժում կը հայթայթէինք առատօրէն, մեր Հայ կղզիի սքանչելի կլիմային մէջ:



Գրիգոր Յակոբեան՝ 1904-ին, մարմնամշակմարզիկը, գործակիցը Շաւարշին, որուն երազը իրականացուց հիմնելով Հ.Մ.Ը.Մ.ը 1918-ին :



Գրիգոր Մերճանօփ, մարմնակրթանքի ուսիվիրաներէն :



Նրկսեռ մարզանք Աղէքսանդրիոյ Պօղոսեան վարժարանին մէջ՝ 1911-ին, Ստեփան հաննեանի ղեկավարութեամբ :



Ստեփան Խանճեան, համալսարնօր մարզիչը :

Օր մըն ալ, մեր կղզիի ծովեզերքի դաշտին վրայ երեւցան խումբ մը անծանօթներ, որոնք՝ մեզի նման կարճ տարատներ հագած՝ խոշոր գնդակի մը ետեւէն կը վազէին, զոյն կը հարուածէին միայն իրենց սաքերով եւ որոշապէս կազմակերպուած խաղ մը կը խաղային:

Հետաքրքրական էր. դիտեցինք զիրենք. նախանձեցանք իրենց ու մօտեցանք, շուրջերնին դարձանք: Բուրն ալ մեզմէ տարիներով մեծ էին եւ իրարու հանդէպ շատ բնկերական, եղբայրական էին:

Մաքուր հայերէն կը խօսէին եւ միշտ զուարթ էին: Իրենցմէ մէկը, քիչ մը խիստ յօնքերով, բայց ժպիտը երեսին, սպասորիչ մէկն էր եւ կատակներ կ'ընէր միւսներուն հետ: Ասելի ուշ իմացանք որ՝ վահան Չերագն էր ան: Ընկերներն էին՝ Եզնիկ ու Եղիշէ Քաջունի եղբայրները. յետոյ Սիմոնը, Վահագն ու Կէօզիւպէօյի քեանները, Շապօեանը, բոլորն ալ բարեկիրթ, օրինակելի հայ երիտասարդներ էին: Իրենց խաղի վերջանալուն մեզ իրենց մօտ կանչեցին, մեզմով հետաքրքրուեցան, թոյլ տուին որ խոշոր գնդակը շօշափենք, նոյնիսկ մեր սաքերովն ալ զոյն հարուածենք ու հալածենք... Քրտնեցանք, միտին վազեցինք ու ծով մասնք, զովացանք: Եւ այսպէս, շուտով, իրենց քաղցր ու հաղորդական բնաւորութեամբ մեզ իրենց խումբին մաս դարձուցին: Եւ արդէն Բրոթիի աղաքը գրասուեցան այդ մեծ գնդակով (Ֆուլթոլ) ու հոգեպէս կապուեցան այդ սքանչելի «մեծ»երուն, կապ մը՝ որ մնաց ու միշտ կը մնայ անքակտելի, եւ յիշատակն անոնց՝ անմոռանալի:

Առտուել կամ նուազ չափով այս էր պատկերը նաեւ պուրսահայ գանազան խաղերու՝ նոր, մատղաշ սերունդին: Խաղերն ու մարզանքը իրենց վայել արժէքը չունէին այդ օրերուն ծնողներու, դաստիարակներու, ղեկավար մարմիններու աչքին: Բայց նոր գարթօնի մըն էր որ կը մակարդուէր Փիզիքական դաստիարակութեան ուղղութեամբ, Կեդրոնական ու Պէրպէրեան վարժարաններու մէջ, եւրոպական քաղաքակիրթ ազգերու նոր մթնոլորտին ծանօթ՝ վերոյիշեալ տիպար հայորդիներու եւ իրենց նմաններու առողջ առաջնորդութեան շնորհիւ:

Պուտոյ մէջ, ամերիկեան Robert Collegeի ներկայութիւնը անկասկած փութացուցած ու զարկ տուած է մարզական կեանքին: Տարեվերջի Ֆիլտ տէյ (դաշտի օր)



Առաջին հայ սկաուտները, Սկիւտար :

Հայ մարգաշխարհը ստեղծողներէն եւ անոր բացառիկ դէմքերէն մէկը, որ դիւցազնօրէն հաւատարիմ մնաց ազգակերտ ու հայրենանուէր իր իտէալներուն, մինչեւ նահատակութիւնը . — վահան Չերագ

Պալիս՝ «Հայ Կզգի»ի առաջին փութայլի խումբը, 1906-ին: Ետեւի շարք, մէջտեղը՝ վահան Չերագ, ապետը խումբին: Իր աջին՝ Գարրիէլ Մանառեան: Անոր ճով նկարին ծայրը՝ Տիգրան Խոյեան, կրտսերը խումբին:



կոչուած իրենց մարզական ցուցահանդէսներուն մէջ, հայ, յոյն ու պուլկար (թուրքերը տկար էին, հաշիւի չէին աւնտուեր) ուսանողներու միջեւ մղուած մարզական ոգիով գեղեցիկ պայքարը օրինակելի ուղեցոյց մը եղաւ Պոլսոյ մարզական կեանքի կերտումին, եւ այդ նոյն գոլէճէն ընթացաւարտ մարզիկներ՝ Գրիգոր Յակոբեան, Հրանդ ու Բիւզանդ Կէօղիւպէօյիւքեանները, Մ. Մկրեան, Վ. Փափազեան եւ ուրիշներ եղան ռահվիրաները կազմակերպուած մարզանքի՝ հայ կեանքէն ներս:

Պալթալիման համբաւաւոր խումբը ոտնազնդակի (Ֆութպոլ), առաջին հայկական խումբն էր պոլսահայութեան, եւ կազմուած էր Robert College-ի հայ ուսանողներէն, գլխաւորութեամբ Գրիգոր Յակոբեանի:

Պոլսոյ մէջ հայ մարմնամարզական կեանքի, մայր բնութեան պաշտամունքի եւ մարզական բարձր ոգիի ամէնէն աչքասու քարոզիչը եղած է Վահան Զերազ (Մինաս Զերազի եղբօրորդին), որ իր բազմակողմանի յատկութիւններով, ընտիր նկարագրովն ու անձնական օրինակով՝ անչափելի ազդեցութիւն գործած է Պոլսոյ նոր սերունդին վրայ (1904-1912): Այս անմահ, ի ծնէ սկսուտ-ասպետի մասին քիչ մը աւելի պէտք է խօսիմ, աւելի ուշ:

1914-էն առաջ, ուրեմն, նախ քան համաշխարհային առաջին պատերազմը, մահաւանդ 1908-ի Օսմ. Սահմանադրութիւն կոչուած ծաղրանքի հռչակումէն յետոյ, մինչեւ 1914, ամբողջ 6 տարուան ընթացքին, Պոլսոյ եւ գաւառներու հայ ժողովուրդը, ձերբազատուած Համիտեան Բռնապետութեան ճիրաններէն, անօրինակ, հրաշագեղ վերածնունդ մը արձանագրեց, ամէն ճակատի վրայ, — ազգային, քաղաքական, գրական, կրթական, թատերական, հասարակական եւ... մարմնամարզական: Պոլսոյ ամէն մէկ թաղին մէջ մարզական ակումբներ հաստատուեցան, որոնց մարզական գլխաւոր արտայայտութիւնը եղաւ ֆութպոլը. սխալ պիտի շրջար բսել՝ զանազան անուններով ֆութպոլի խումբեր կազմուեցան: Պալթալիմանը գրեթէ քայքայուած էր, բայց հետզհետէ իրենց գոյութիւնը արժեցոյցին՝ «Տորք», «Արաքս», «Մասիս», «Արատազ», «Ռաֆֆի Յաւաջղիմական», «Բրոթի» (Գնալը կղզի), «Շիշլի», «Հայ Մարմնամարզարան», «Որբանոց» եւն. անուններով: Ասոնցմէ ոմանք, ֆութպոլի կողքին, հետաքրքրուած էին նաեւ ողիմպիական մրցումներու զանազան տեսակներով (վաղել, լողալ, գունտ, սկաւառակ ու նիզակ նետել, դրօշարչաներ կազմակերպել): Մայր



Պոլսոյ առաջին ակումբներուն մէջ լաւագոյնի տեղը գրաւող՝ «Տորֆ» ֆուքսպոլի խումբը, նկարուած 1911-ին: ՎԱՀԱՆ ՉԵՐԱԶ՝ նստած կեդրոնը, աջին՝ ԵՂԻՇԷ ՔԱԶՈՒՆԻ, ձախին՝ Սիմոն Պապիկեան: Ուտֆի, ձախ կողմէն՝ ԵԶՆԻԿ ՔԱԶՈՒՆԻ (պարզ հագուստով), Հայկ Սէմէրճեան, Գարրիէլ Մաճառեան, Ասատուր Պոտիկեան, Արամ Մազմանեան, Արամ Գորեան: Գետիներ, ձախէն՝ Յակոբ, Վահան, Մատթէոսեան, Գանտիտա (ծածկանուն):



«Արաբս» նոյն թուականներու (1908) Պոլսոյ յայտնի ուրիշ խումբերէն մէկը:

բնութեան մէջ, խմբական երկար արշաւներ ու զուտ մարզական դասախօսութիւններ կազմակերպող միութիւններ ալ հրապարակ իջան, ինչպէս՝ Սկիւտարի Ռաֆֆի Յառաջգիմականը: Եուէտական մարզանքի կանոնաւոր դասընթացքներ հաստատուեցան, մարմնամարզը հայ տուններէն ներս, ընտանիքի ամէն մէկ անդամին օգտակար դարձնելու նպատակով: Եզնիկ Քաջունի սքանչելի դեր մը կատարեց, թարգմանելով շուէտացի Քիւմիէնի «Ամէնուն Մարմնամարզը» գիրքը, որ այնքան նպաստեց ամէն տարիքի պատկանող երկսեռ հայերու մարմնակրթանքին: Ապա՝ Շաւարշ Քրիսեան, մարմնակրթութեան նուիրուած այդ նայ առաքեալը, որ Եւրոպայէն Պոլիս հասնելուն պէս, իրրեւ Ֆիզիքական դաստիարակութեան մասնագէտ, իր ամբողջ ուժերով եւ Գրիգոր Յակոբեանի նիւթական եւ բարոյական օժանդակութեամբ, առաջնորդող դեր կատարեց: Սկսաւ հրատարակել հայկական առաջին մարմնակրթական պարբերաթերթը՝ «Մարմնամարզ», որ իր որդեգրած բարձր պաշտօնականով, իր քարոզած՝ «Առողջ միտք ու հոգի՝ առողջ մարմնի մէջ» բնարանով՝ ձգտեցաւ հայ նոր սերունդը կերտել պատուախնդիր նկարագրով, հայկական երազներով հարուստ՝ գիտակից ու բարոյականի տէր մարդը պատրաստելու անկէ: «Մարմնամարզ» մեծ բաց մը գոցեց, եւ ճիշդ ատենին հասաւ օգնութեան՝ Ֆիզիքական դաստիարակութեան կարեւորութիւնը ծանօթացնելու համար, մինչ այդ եւ այդ ուղղութեամբ թափուած ջանքերուն այնքան յամառօրէն ընդգիծութիւն ցոյց տուողներուն: Եզաւ խորհրդատուն եւ առաջնորդը պատանի եւ երիտասարդ մեր սղոցը: Դարձաւ սաքուկ կեղրոն մը, ուր՝ մեր սերունդի աշնուացման նախանձախնդիր ու զարգացած հայօրդիներ, ի շարս այլոց՝ Վահան Չերազ, Քաջունի եզրայրներ, Յ. Ծ. Սիրունի եւ Գրիգոր Յակոբեան թեւ ու թիկունք կզան սքանչելի Շաւարշին, սրուն ցանած սերմերը հայ հովերը տարին մերձաւոր ու հեռաւոր քաղաքները թրքահայ պաւաններուն, ուր նոյնպէս ծլիլ սկսան մեր սերունդի կայտառութեան ու ասկունութեան նուիրուած միութիւններ:



«Տորֆ» եւ «Արաբա» խումբերը «Հայ Կղզի»ի դաշտին եզերքը, ընկերական հաւաքոյթի մը ընթացքին: Ոտֆի, կեդրոնը, գլխարկով՝ Եզնիկ Քաջունի: Անոր նիշդ ետին՝ Տիգրան Խոյեան, նոյնպէս գլխարկով:




Հայկ Առաքելեան
նախկին յիսնապետ
անգլ. բանակի
հեծելազօրաց, 1911-ին
ուսուցիչ մարզանքի՝
Պէրպլերեանի եւ
Ռօպերթեան
վարժարաններու



Իզմիրի «Որսորդաց Ակումբ»ի ֆուքպոլի խումբը, որ
ֆաղափին ախոյեանութիւնը իսաժ է 1911-ին եւ
վտանգաւոր մրցակիցը հանդիսացած Պոլսոյ Ֆէնէր
Պահնէի եւ Կալաթա Սէրայի ունան խումբերու:

Պոլսահայ Փաթարչի խումբերը կանոնաւորաբար մրցումներ կը սարքէին իրարու դէմ: Անոնցմէ սմանք անշամ էին միջազգային Փաթարչի բնկերակցութեան, որուն կազմած խաղաղանկին համաձայն կը մրցէին՝ զուտ անդլիական, թրքական, յունական եւ հրէական խումբերու դէմ: Սաղաթաչրը՝ Union Leagueի զեզեցիկ եւ ամէն յարմարութիւն ունեցող զաշան էր, Գառը Գիւղի մէջ:



Տրապիզոնի «Արծի» մարմնամարզական խումբը

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՈՂԻՄՊԻԱԿԱՆԸ

1911ին Շաւարշի, Գրիգորի, Յ. Ճ. Սիրունիի եւ գաղափարակիցներու յամառ ու անխոնջ ջանքերուն իբր արդիւնք՝ Գատը Գիւղի Union League-ի դաշտին վրայ տեղի ունեցաւ Հայկական Առաջին Ողիմպիականը, որուն մասնակցեցան, բացի Պոլսոյ ակումբներու եւ Robert College-ի հայ ուսանող մարզիկներէն, Իզմիրի «Որսորդաց Ակումբ»ի մարզիկներն ալ: Մինչեւ օրս, կը յիշեմ, կը տեսնեմ մտովի, Յարէթեան Գէորգի վճռական արտայայտութեամբ յաղթական վազքը՝ 100 եարտի մէջ: Թուրքիոյ Հայոց Պատրիարք՝ Զաւէն Արքեպիսկոպոսն էր օրուան նախագահը: Յաղթանակի օրն էր այդ Պոլսոյ մարզասէր երիտասարդութեան, եւ գրաւիչ մրցահանդէս մը՝ ամբողջ Պոլսոյ համար, որ սիրեց ու սկսաւ փնտռել այդ տեսակ հանդէսները:


Գ. Ողիմպիականին կը նախապահէր հայ ժողովուրդի սուրբ գաւազը՝ Կոմիտաս վարդապետ:

Ողիմպիական այդ խաղերը յետոյ կոչուեցան «Նաւասարդեան խաղեր», իբր ոգեկոչում՝ մեր հեթանոս նախահայրերու համահայկական եւ նոյն անուամբ մեծ Տօնին: Յ. Ճ. Սիրունին գլխաւոր թելադրիչը եղաւ այդ անուանափոխութեան, որ դժբախտարար կեանք չունեցաւ, համաշխարհային Ա. պատերազմի աւերիչ աղէտին պատճառաւ:

Մօտաւորապէս այս էր Հայ մարզական կեանքը Պոլսոյ մէջ նախ քան պատերազմը՝ 1914-ի: Այդ պատերազմը, որուն թուրքիան ալ մասնակցեցաւ իրրեւ զինակից Գերմանիայ, երկար ասեռնէ ի վեր սպասուած պատեհութիւնը առաւ թուրք ոճրածին կտուաւարութեան, գործադրելու՝ Հայութիւնն ու Հայ Դատը միանգամընդմիջաբնաջնջելու իր հրէշային ծրագիրը: Եւ... 1915ի ահաւոր պիչեր մը, դաւադրօրէն ձերբակալուած հարիւրաւոր մըտաւորականներու եւ Հայ ազգային ամէն կարգի զեկավարներու շարքին միացուց նաեւ մեր նոյիրեալ առաքելը՝ Շաւարշ Քրիսեանը: Լսեցինք որ Այաշ կեդրոնացած «ծանր յանցապարս»ներուն մէջն էր ինք, եւ հոն, ամէնօր, մօտալուռ մահուան շուքին տակն իսկ, կը ջանար իր բախտակիցներուն Փիզիքական ու բարոյական կորովը բարձր պահել, անոնց՝ շուքտական մարզանքի խմբական փորձեր կատարել աւելով: Եւ, սեւ օր մը, իր բանտակից հայերուն հետ Շաւարշն ալ նահատակուեցաւ: Գնաց՝ իր հետ տանելով նաեւ, Պոլսոյ բոլոր մարզական ախումբներն ու խումբերը «Հայ Մարմնամարզական Ընդհ. Միութեան» մը գրօշին տակ հասաքելու իր զեղեցիկ Երազը:

Իսկ այսօր, Հ.Մ.Ը.Մ.ի հայանուէր ու ազնուական գաղափարականով հպարտ սերունդը, իր 15.000ի հասնող անդամներով ուժեղ եւ միակամ, յարգանօք ու սիրով կը խոնարհի անոր անձանօթ շիրիմին առջեւ եւ սրտազեղ աղօթքի մը մրմունջներուն հետ, կ'ըսէ...


Շաւարշ, ննջէ խաղաղութեամբ,
Մեծ Երագդ իրականացած է:



Մարտիրոս Գուլումբեան, ողիմպիականներու
աստղերէն, յատկապէս ձողով ցատկելու եւ
արգելարշաւի ախոյեան :



ՄԱՐՏԻՐՈՍ
ԳՈՒՅՈՒՄՅԵԱՆ



Վահրամ Փափագեան, Սթոքհոլմի ողիմպիականին
մասնակցած (1912) վագֆի ախոյեան



ՎԱՀՐԱՄ
ՓԱՓԱԶԵԱՆ




Բիւզանդ Կէօզիւպէօյիւեան, Բ. մրցահանդէսի
ախոյեան եւ բարձրութիւն ցատկելու մրցանիշակիր



ԲԻԻԶԱՆԻ
ԿԷՕԶԻԻՊԷՕՅԻԻՔԵԱՆ



Յարեթ Ս. Փափագեան Ա. հայ մարզիկը, որ մասնակցած է Աթէնքի ողիմպիականներին (1906)



Հայ. Բ. ողիմպիական Տիտան եւ Վահագն ակումբները կը տողանցեն



Մկրտիչ Մկրեան Սթոհոլմի մէջ (1912) ողիմպիականի հայ ներկայացուցիչը



Հայ. Բ. ողիմպիական Տիտան և Վահագն ակումբներու հաւաքական մարզանքը



Գեորգ Յարեթեան արքայազնի ախոյեան եւ նշանաւոր փութպուլիստ



Սերովբէ Արեւեան Մարմնամշակ մարզիկ



Վաղարշակ Վարժապետեան հեծանիւի Ախոյեան

ԱԿՆԱՐԿ ՄԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐՈՒ
ՄԱՐԶԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Ա. ընդհանուր պատերազմի 4 ծանր տարիներու ընթացքին՝ պոլսահայութիւնը նախ ապրեցաւ ինքն իր վըրայ կծկուած, վախի եւ անորոշութեան, վաղուան հանդէպ անվստահութեան անհանգիստ մթնոլորտի մը մէջ: Գաւառներէն ու Պոլսոյ մօտակայ շրջաններէն հասնող հատ ու կտոր լուրերը հայ ժողովուրդի ողբերգութեան ահաւոր պատկերը կը գծէին՝ պոլսահայ մնացեալ կամ դեռ չձերբակալուածներու հոգիներուն մէջ, անգոր ու լուռ դայրոյթի մը մատնելով զանոնք: Մինակ Պոլիսն էր որ, իր ընտրանին կորսնցնելէ ետք, չաքսորուեցաւ, իր տուներուն մէջ մնաց, միշտ՝ սակավառ, անմարդկային նայուածքներու, հալածանքներու ենթակայ: Հայ երիտասարդութիւնը բանակի ծառայութեան, կամ՝ սա կամ նա պատճառներով՝ մեծամասնութեամբ հեռացած էր իր տունէն, ընտանիքէն. բայց կերպով մը, հայ ժողովուրդը, իր իմաստուն ճարպիկութեամբ, դարերով հալածուած, անիրաւուած ազգի մը փորձառութեամբ ու հնարամտութեամբ, ոչ միայն սովաց նիւթական ու բարոյական ճնշումներուն, այլ նոյնիսկ բախտաամամբ Պոլսոյ բնակչութիւնը կազմող միւս տարրերուն, ապրեցաւ՝ համեմատաբար աւելի բարօր կեանք մը, պահելով իր ընտանեկան երգիքները, դըպրոցներն ու եկեղեցիները, «անյնաս» կազմակերպութիւնները, նոյնիսկ «տանիքարնակ փախստականները» ապահով վիճակի մը մէջ:

Մարդական կեանքը, բնականաբար, կարուստովը իր շատ մը անաջնորդ ուժերուն, կորսնցուց իր թափն ու խանդը: Շատ մը թաղեր զրկուեցան իրենց Փութպուլի խումբերէն. զնդակիր սակայն մնաց, ու աննպատակ կերպով գլորեցաւ հոս ու հոն՝ փոքրիկ ու յաճախ բոպիկ տօտիկներու հարուածներով:

*
**

Երկրորդական վարժարանի կամ Լիսէ-ի ընթացաւարտ շատերու նման՝ ես ալ, 1915ին, թրքական «Սպայից վարժարան»ը աւարտեցի ու բանակ մտայ: Գնալը կղզին ալ, հակառակ իր հոծ հայութեան, որոշ չափով ինքն իր


մէջ քաշուած էր եւ՝ զգոյշ: 1917-ին էր, երբ իմ Պոլիս մը-
նայս սրտուեցաւ: Հայ մարզական «սրբոյ» մէջն շարժիչ
սկսաւ, եւ անգլիական կրթութիւն առած բարեկամք՝ Լե-
ւոն Թօփալեանի հետ ֆուտպոլի փորձերս սկսանք, կզգի
մեր ազաներով: Հեազհեա՛կ սղիմպիական մրցախաղերն
ալ սկսանք կատարել, լաւ արզիւնքներով: Մեր ֆուտպոլի
խումբը բաւական ներկայանալի վիճակի հասած էր արզէն
եւ մեր տեղեկութիւններուն համեմատ՝ Բերա-Շիշլիի հայ
աղաքն ալ լաւ խումբ մը հասցուցած էին: Նման տեղեկու-
թիւնները եկան մեզի նաեւ Գաար զիզի եւ ուրիշ թաղե-
րու ազաներէն: Եւ ահա՛ սկսանք մեր միջեւ ֆուտպոլի
մրցումներ սարքել, միշտ մե՛ր գաշախն վրայ, սրպէսզի
թարք ժողովուրդի խաժանային տարրեր շխանդարէին
մեր խաղերը: Կզգիի կապոյտ ծովը անշուշտ հրաւիր մըն
էր նոյնպէս լողալու եւ մրցումներու... Այսպէս, ուրեմն,
սահմանափակ ու զգոյշ շարժում մը եղաւ պատերազմի
տարիներու հայ մարզական կեանքը՝ մինչեւ զինազաղար:



Տիգրան հոյեան իմբանկարին կեդրոնը, սեւ փափախով եւ բաց գոյն
համազգեստով, բանակի սպայ եղած ժամանակ, 1917-ին: Իր ձախին՝
Նդուարդ հաչատրեան, նշանաւոր ֆուրբպոլիստ, անոր ձախին՝ Պողոս Շա-
պոեանը գին. համազգեստով եւ գդակով, Ա. շարք, աջ, ծայրը, գդակով
եւ գին. համազգեստով՝ Զարմայրը, արագավագ աթլէթ եւ յայտնի ֆուրբ-
պոլիստ:



Խմբանկար ուսանողութեան տարիներէն, նստած, ձախէն աջ՝ Պետրոս Ատրունի, Լեւոն Շանթ, Մարտիրոս Նալբանտեան (Տնօրէն) եւ ընդհ. հըսկիչը: Ա. շարք.— Անուշաւան Պետրոսեան, Սեդրակ Սասունի, Սմբատ Շահնագարեան, Տիգրան Խոյեան (Կեդրոնը), Գէորգ Համբարեան, Գրիգոր Ղնչէկիւլեան, Վահրամ Զարիփեան: Բ. շարք.— Վահան Մինասեան, Լեւոն Քաֆէսեան, Անդրանիկ Միսիթարեան, Պօղոս Արսէնեան, Երուանդ Յովհաննէսեան (1913 Պոլիս):



Շաւարշ Քրիսեանի շրջանին կազմուած սկաուտական խումբերէն «Նոր Դպրոց»ի եւ Սկիւտարի Հ.Մ.Ը.Մ. սկաուտները միասին՝ 17 Մայիս 1914-ին, Սկիւտար, հանդէսէ մը վերջ: Կեդրոնը սկաուտներու պետ (եւ Հ.Մ.ի վարիչ) Գրիգոր Յակոբեան:



Պերպերեան վարժարանի ֆուքպոլի խումբը :
Կեդրոնը՝ վարժարանին Բ. տնօրէնը՝
Ա. Նիկողոսեան :




Ազէֆանդրիոյ «Կամֆը» 1912-ին,
Կեդրոնը՝ հիմնադիր
Բարսեղ Օհանեան



Գահիրէի «Արարատ»ը
Կեդրոնը՝ մարզիչ Ստ. Խաննեան



Մկրտիչ Եանրզեան
Այտրնի նահանգի
հայ սկաւտներու
պետ եւ ֆուքպոլի
մասնագէտ



Գահիրէի սկաւտներու երդման Ա. արարողութիւնը եւ
դրօշակի բարելը (1914)

«Հ.Մ.Ը.Մ.»-ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Հայ Սկսուտ մրն եմ եւ այժմ՝ Հայոց Ս. Եկեղեցւոյ քահանայ մը: Այս երկու սրբազան հանդամանքներով կու գամ երգնուլ, թէ՛ ինչ որ պիտի գրեմ, ինչ գէպք որ պիտի արձանագրեմ, եղած է այնպէս՝ ինչպէս որ պիտի ըսեմ. ուրիշ կերպ եղած չէ՛:

Համաշխարհային Ա. Պատերազմի գինադադարը ստորագրուեցաւ 1918 Նոյեմբեր 11ին: Պոլսոյ նաւահան- պիտար մանուկ «Համաձայնական» ստաջին նաւր Փրանսա- կան դրօշ կրօց յածանաւ մրն էր:

Ի՞նչ մեծ արտաւ թիւն, մեկի համար, տեսքը՝ մեր այնքան կարօտցած Փրանսական Ետադոյնին: Անհաւատալի յոյսերու վրայ բացուող պատահան մր՝ սրուն կր մօտե- նայինք տակաւին վախով եւ զգուշութեամբ:

Օրը՝ Շարաթ էր: Նախորդ օրը զայցած էի Ղալաթ- իոյ Կեղբնական վարժարանի եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ միացեալ բակը, ուր տեսայ՝ արխնտո նախճի- ըէն հրաշքով մը ազատած ու նոր հասած զապթականներ, մեծ մասամբ կիներ ու սրբեր, խնուած, աղիխարչ տես- քով: Տեսայ՝ իրենց մօր քղանցքին կառչած անօգնական փոքրիկներ ու քիչ մը տեղի մեծեր, սրնք կր վարձէին կերպով մը օգնել իրենց մայրերուն: Սեւաշեայ, զլխիկօր հայրերիններ, սրնց տատաղանքէն յոյնած անայուած քնե- րը զուրկ էին մանկական, պատանեկան աշխոյճէն: Կրակը մարած ըլլալ կր թուէր անոնց բիրերուն մէջ, եւ հարցում- ներուն կր պատասխանէին ճշտօց, քար լուսութեամբ, սա՛ռ նայուած քով միայն: Սրտածմլիկ էր տեսարանը: Հեռացա՛յ զանդազ ու մտամոլոր, միտքս ու սիրտս ընկճուած ու ար- իտուր:

Յաջորդ օրը՝ Կիրակի, Հայ Կղզիի զոդարիկ եկեղե- ցիին մէջ ազօթեցի՝ հոգիս զրած ազօթքիս մէջ: Ասաքե- լատիպ հօրս՝ Վահան Քհնյ. Առլեանի իրեն յատուկ ազգա- շունչ եւ մօտիկ ապագայի մասին բարձրօրէն յուսալից քա- րոյր լսեցի եւ խորապէս ապրեցայ այդ հին յեղափոխական բացասիկ հայ քահանայի ամէն մէկ բառին ուղիովը: Հե- տարզեակ, զազափարներու զուգորդութեամբ, մտքիս մէջ պայծառացաւ՝ պօյ-սկսուտներու կազմակերպութիւնը, սրուն նոր ծանօթացած էի տակաւին, իբրեւ լուսաշող յոյ- սի մէկ վարտս՝ Պոլիս խոժոց այդ յուսարեկ սրբուկներու Փրկիքական ու հոգեկան փրկութեան համար:

Երկու շարժի ստատոս, Նոյ. 13ին, իմ ստաջին գործըս եղաւ երթալ գրասենեակը Գրիգոր Յակոբեանին, որ ինձմէ շատ աւելի ծանօթ էր սկառաւական շարժման և շատ անգամներ մեր Հայ Կղզիին մէջ (ուր կու գար օգտափութեան) այդ ուղղութեամբ իմ ցոյց տուած հետաքրքրութեանս սիրով գոհացում տուած էր, և այդպէսով մեր մէջ ջերմ մտերմութիւն մը, փոխադարձ համակրանք և վստահութիւն մը յատաջացած էին:

— Բարի լոյս Պր. Յակոբեան, — բռնով մտայ գրասենեակը: Եղբայրը՝ Լեւոն Յակոբեանն ալ հոն էր:

— Կէ՛ր է, Տիգրան, այսպէս, ստատոն կանուխ...

«Այո» բռն և պարզեցի իմ ապրած հոգեկան ստատպանքս՝ ի տես մեր թանկագին խրեակներու ողբերգութեան և... «Բան մը պէտք է բնել» գոչեցի ո... «կը կարծեմ» բռն «միակ ու ֆիշդ բանը հայ սկառաւական կազմակերպութեան մը շարժերուն մէջ քաշելն է գանոնք, եւ մարմնական ու հոգեկան ստոյգ ու մաքուր դաստիարակութեամբ մը, այդ անուշիկ, անգին գլխիկորներուն փակասները հպարտօրէն վեր բարձրացնելով՝ անոնց ազուրպ աչքերուն մէջ մարած կրակը նորէ նոր արծարծել: Ի՞նչ կ'ըսես, Պր. Յակոբեան»:

Իմ ա՛յս սրբանուէր պոսթիւմիս յափշտակութեամբ մտիկ բնոյ Գրիգորը՝

— Տիգրան, — բոս ողբերգուած, — ես ալ ճի՛շդ այդ կը մտած էի:

— Սքանչելի՛, — պատասխանեցի նոյնքան ողբերգուած: Ուրեմն ա՛նք ինձի թույլի ու գրիչ, և իսկոյն խորհրդակցական ժողովի մը հրաւիրենք Պոլսոյ մէջ գտնուող այս ուղղութեամբ օգտակար բլլալու կարողութիւն ունեցող մեր ծանօթները:

Իր եղբայրը՝ Լեւոնը, գուտ գերմանական, թիկնեց արտաքինով, այլ հեղ ու բարի սրտով այդ հսկան, երախտայի մը արագաշարժութեամբ և հրճանքով բերաս խնդրածներս:

Եւ... սկանք մեր աշխատանքին:

Շաւարշի չկար, նահատակուած էր, ափսո՛ս... Եգնիկն ու Եղիշէն և Վահան Զերազը՝ նորագոտ հայրենիքին իրենց նուիրեալ ծառայութիւնը կը բերէին: Բիւզանդ Կէօքիւպէօյի ֆեանը թրքական բանակի վերասրբալնութեան գլխութեան ֆոնտին մէջ էր և տակաւին չէր վերադարձած: Գրիգոր Մերհանօֆը հետո էր Պոլսէն... Գրեթէ միասին առինք անունը Յ. Ճ. Սիրունիին, որ՝ թէ և մարզիկ մը չէր, բայց հաստատօր նուիրեալ մըն էր հայ նոր

սերունդի մարմնական գաստիարակու թեան, զայն զատանկայ լուսազոյն միջոց մը՝ ցեղը ազնուացնելու, ու թեղացրնելու: Սիրունի միշտ քաջայերած էր ու ոչի ի բռնի գործակցած՝ Շատարչի եւ անոր բնկերներուն յատաջ բերած մարմնակրթական շարժումին (որուն աչքատու ներկայացուցիչներն եղան իր՝ Հայկ ու Գրիգոր Ճօլօլեան երկու եղբայրները) ու «Մարմնամարզ» պարբերաթերթին: Խորհրդատու գործակից մը եղած է նաև Հայկական Ողբույրականներու կազմակերպման:

Հեռոցհեռէ յիշեցինք անունները՝ Գարլօ Շախինեանի, որ Սկիւտարի մէջ Գրիգորի գեկալարած «Հայ Մարմնամարզարան» (հիմնուած յայտնի աթլէթ Մ. Մկրեանի կողմէ) ակումբին մօտիկ գանուոյ «Հայրադիկ» անունով հիանալի ակումբին հիմնադիրն էր:

Հայկ Ճիգլէեանի, որուն համար Գր. Յակոբեան առարկեց թէ՛ մարզական կամ սկստատական սեւէ գործի մէջ ծանօթ անձ մը չէ. բայց շուտով անգի տուաւ իր բարեկամին՝ Հայկին կանչուելուն ի նպատակ:

Վահրամ Փալիագեանի, որուն համար նորէն առարկեց, թէ յայտնի մարզիկ է միայն, սկստատու թենէ բան չի հասկնար: Նորէն անգի տուաւ սակայն:

Ժիրայր Խորասանեանի, Գրիգորի թեկնածուն: Այս անգամ ես առարկեցի թէ՛ անունը բաւրովին անծանօթ է թէ՛ մարզական եւ թէ՛ սկստատական շարժումներուն մէջ: Գրիգոր սակայն հանդարտօրէն բացատրեց սապէս. «Տիգրա՛ն, աս երիտասարդը շատ յփուած եւ հարուստներու շրջանակին մէջ ծանօթ ու սիրուած մէկն է, եւ մենք, սկստատական շարժումին համար, պէտք պիտի ունենանք մեր հարուստներուն: Ժիրայրը կարեւոր է»:

Համոզիչ էր իր բացատրութիւնը: Ինքն ալ այդ շրջանակին մօտ մէկն էր: Յանկր բաւ համարեցինք:

Ժողովի օր սրուչուեցաւ — լաւ կը յիշեմ — յաջորդող Հինգշաբթի, որուն թուականը կ'ըլլայ, ուրեմն՝ Նոյեմբեր 16, 1918: (*)

(*) Երէց եղբ. Տիգրան Քեմլի. Խոյեան մեզի յղած նամակի մը մէջ (Հոկտ. 1, 1981, Ուաշինկթըն), կ'ընէ հետեւեալ հաստատումը. —

Ռումանիայ «Արի» անունով թերթը, մեր երէց եղբայր՝ Գրիգոր Յակոբեանի գրութեան մէջ Հ.Մ.Բ.Մ.ի հիմնադրութեան թուականը յայտարարած է Նոյեմբեր 1-ին, 1918 թ.: Վտտահարար տպագրական վերլուծով՝ պատմագրական սխալ մըն է այս: Բազմիցս նշած եմ այս սխալը: Համաշխարհային Ա. պատերազմի զինա-

Հրահրագիրները երբ պատրաստեցի՝ Գրիգոր Յակոբեանն առաջարկեց, որ միասին ստորագրենք զանոնք: Մերժեցի, առարկելով որ, իբրեւ երիցագոյն ու բազմավաստակ մարդիկ մը, իր ստորագրութիւնը միայն բաւական էր: Ընդունեց, շնորհալիօրէն եւ ջերմ կերպով սեղմեց ձեռքս ու՝ «Տիգրան, — բաւ — այսուհետեւ Գրիգոր եմ քեզի համար, եւ ոչ՝ Պր. Յակոբեան»: Համաձայն էի, եւ մեկնեցայ ուրախ սրամազրութեամբ՝ զէպի նամակատուն:

Նամակատունէն զէպի Բերա (Պոլսոյ Եւրոպական գաղութի մասը) երթալու ճամբուս վրայ՝ հանդիպեցայ Հայկ Ճիզմէճեանի խանութր, կամուրջին մօտ: Յայտնեցի իրեն ստանալիք հրուէրի մասին եւ պահանջիտութեամբ խնդրեցի, որ շրջակայի: Համեստօրէն ինքզինք յարմար չնկատեց այդ ժողովին, սակայն խոստացաւ գալ: Նոյն օրը յաջողեցայ կապ հաստատել Յ. Սիրունիին ու Գարլօ Շահինեանին հետ: Գրիգորը յանձն ոտաւ տեսնել ժ. Խորասանճեանը, իսկ Սիրունին՝ Վ. Փափազեանը:

Խորհրդակցական ժողովը գումարուեցաւ որոշեալ օրը, 1918 Նոյեմբեր 16ին Հինգշաբթի երեկոյեան, Յակոբեան եղբայրներու գրասենեակին մէջ, Վիթալ Խան, Կ. Պոլիս:

Բոլոր հրահրեալները ներկայ էին, բացի Սիրունիէն որ՝ արդարեւ՝ չափազանց զբաղած էր, հանրային, ազգային պարտականութիւններով: «Մեծ»երու սերունդը նահատակուած էր, եւ անոնց ձգած Բացը անոնց ձեռակերտ՝ Բ. րդ սերունդին կը մնար լեցնել, իբրեւ սուրբ կըրտակ մը նահատակներէն: Եւ Սիրունին, իբրեւ արժանա-

զազարը հոչակուեցաւ 1918 Նոյեմբեր 11-ին: Պատերազմի 4 տարիները ահարկու տարիներ եղան, եւ լուրջ ու կարեւոր որեւէ ձեռնարկ կարելի չէր ունենալ այդ ժամանակամիջոցին: 1918 Նոյեմբեր 11-ին՝ Թուրքիան պարտեալ պետութիւններէն եղաւ, եւ այդ թուականին, Համաձայնական Ազգերու յաղթական ներկայացուցիչը (Ճրանսա) յաժմանաւ մը զրկեց Պոլսոյ նահանգիտը, ինչ որ նոր շունչ եւ յոյս բերաւ մեզի սկսելու՝ ինչ որ հնարաւոր էր: Այսքանը ծանօթ է բոլորին: Սրբազրիւն՝ Հ.Մ.Բ.Մ.ի հիմնադրութեան թուականը պէտք է ըլլայ, — 16 ՆՈՅՄԲԵՐ 1918 ՀԻՆՓՇԱԲԹԻ ՕՐ, Գրիգոր Յակոբեանի գրասենեակին մէջ, Վիթալ Խան, Կ. Պոլիս: Եւ միշտ 18 Նոյեմբեր 1918 յայտարարած եմ նախապէս. բայց մանրամասնութեան նոր մտարեբուժով մը՝ կը յիշեմ որ Հինգշաբթի երեկոյ մը տեղի ունեցաւ հիմնադիր ժողովը, 16 Նոյեմբերին: Խորհրդակցական հրուէրը գրեցի երկուշաբթի օր, 13 Նոյեմբեր, կէսօրէ առաջ, եւ ստորագրեց, բնականաբար, մեր երէց եղբայրը՝ Գրիգոր Յակոբեանը:



Շաւրշ Քրիսեան
նահատակուած 1915-ին

Հ. Մ. Ը. Մ. Ի
ՀԻՄՆԱԳԻՐ ԺՈՂՈՎԻ
ԱՆԳԱՄՆԵՐԸ



Գրիգոր Յակոբեան
Ատենապետ



Գարլօ Շահինեան
«Հայ Սկաուտ»ի
արտօնատէրը



Տիգրան Խոյեան
Ատենադպիր



Հայկ Ճիզմէնեան



Լեւոն Յակոբեան

ւորնեւրէն մէկը, ամէնէն աւելի ի՛նք մխրճուած է՛ր, ամբողջ թափով, հասարակական գրեթէ ամէն գործի մէջ: Այդ օրերուն, ինչպէս մեր ժողովուրդը կ'ըսէ՝ «Որ քարը որ վերցրնէ իր՝ տակէն Սիրունին գուրս կու գար»: Այո՛, բազմազարգ անձնասորոթիւն մըն էր, սրով իր բացակայութիւնն ալ՝ հասկնալի:

Ժողովի նստելէ առաջ, ներկաներու միջեւ, ոտքի վրայ՝ խօսակցութիւններ սկսան, ու կարծիքներ, տեսակէաներ տակաւին կը շարունակէին փոխանակուել, երբ՝ ձիգմէճեան Հայկը ձայնը բարձրացնելով, խնդրեց որ նըստինք կանոնասոր ժողովի: Եւ իսկոյն՝ «Ես կ'առաջարկեմ Գրիգորը իրբեւ տանապեա, քանի որ ինքն է ստորագրած հրաւիրագիրները, իսկ իրբեւ տանապուր՝ Տիգրանը, որուն ծանօթ ձեռագիրով է լեցուած մեզի հասած հրաւիրագիրը»:

Բոլորն ալ հասանութիւն տուին եւ սկսանք ժողովի:

Գրիգորը շատ լաւ կերպով պարզեց հրաւիրագիրներուն տուն տուող պատճառները, սրանք ծանօթ էին նոյնպէս բոլոր ժողովականներուն եւ գանձնախոսը ալ կը մտահոգէին նոյնքան:

Այդ առաջին ժողովը եղաւ ամենակարգը գոր կը յիշեմ: Հրաւիրեալները եկած էին սկառուտական շարժումի մը շուտափոյթ կողմակերպման շուրջ խորհրդակցելու համար, իրբեւ լուսագոյն միջոցը Պոլիս խուժող հայ բեկորներու փոքրիկները փրկելու, եւ այդ ուղղութեամբ եղած լուրջ ու շինիչ առաջարկներ գրեական ու ոգևորիչ միջնորդա մը յառաջացուցելու արդէն, երբ նոր մտածում մը, աւելի լայն հորիզոնով ծրագիր մը մէջտեղ նետուեցաւ . . . Ինչո՞ւ չկողմակերպել նոյնպէս, աւելի ասրեց պատանի սերունդը, մեր ներկայ եւ ապագայ մարզիկները մարզական առողջ ծրագրի մը շրջագծին մէջ եւ կրկին կեանքի չկոչել նահատակ Շատարչի «Մարմնամարզ» պարբերաթերթով ցանուած սերմերու եւ այդ ուղղութեամբ իրեն գորավիզ կանգնած նուիրեալներու մեծ ու գեղեցիկ երագը, որ էր՝ Պոլսոյ մարմնամարզական բոլոր ակումբներու, խումբերու մէկտեղումով եւ գործակցութեամբ՝ Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միութիւն մը հիմնել, եւ մարզիկէ մը ակնկալուած մաքուր ու անխարդախ ոգիով յազեցած միջնորդութիւն մը միջոցաւ հայ ժողովուրդի լուսագոյն ապագայի մը կառուցման ձգտող պիտակից ու պատասխանատու քաղաքացիներ՝ Հայ Մարդեր հասցնել:

Այս ազնիւ ծրագիրը հրապարակ նետուած էր Օսմանեան Սահմանադրութեան հռչակումէն ետք եւ ատոր ի-



Ժիրայր Խորասանցեան



Վահրամ Փափագեան

ՊԱՏՐԻԱՐԳԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ԿՈՍՏԱՆՅՆՈՒԳՈՒԽՍ

Կ. Պոլիս, 28 Յուլիս 1916

ԿԱՂԱՎԱՆԱՆ ԺՈՂՈՎ,
ԱԶԳ. ԿԵՂՐ. ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

ՀԱՄԱՐ 1454

Հեռաձայնի թիւ 1328

ՀԱՅ ԱՐԻՆԵՐՈՒ ՊԱՏ. ՄԻՈՒԹԵԱՆ
ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ՍԻՐՈՑ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

Մրտի մեծ բերկրութեամբ կարգացի Ձեր Յունիս 12 թ. գեղեցիկ գրութիւնը, ուր խոտացուցած էիք Ձեր բիւրեղ սիրտերու և շուշան հոգիներու ծնունդ եղող մաքուր զգացումները: Ձեր Միութիւնը անոր համար աւելի մօտիկ է սրտիս, վասն զի Դուք կ'խորհրդանշէք ապագայ Հայութիւնը իր մաքրակենցաղ, առոյգ և կենսունակ պատկերով: Հայ ցեղը թէև ի բնէ լաւ յատկութիւններով օժտուած, սակայն դարերու ընթացքին մէջ ստրկութեան շղթայներէն ազդուած՝ սակաւ ինչ արատներ կ'կրէ իր ֆիզիքական ու բարոյական դիմագծութեան վրայ: Արդի և յաջորդ սերունդներուն գործն է ուժեղացնել, բարձրացնել ցեղին ֆիզիքական, բարոյական և մտաւորական ընտիր յատկութիւնները, մարդկելով իրենց մարմինն ու նկարագիրը: Դուք, սիրելի Հայ Արիներս, Դուք Հայրենիքի յոյսն ու լոյսն էք, Ձեր բարեսիրական զինուորագրութիւնը գործունէութեան լայն ու գեղեցիկ դաշտ մը ունի զիր առջեւ: Կազմակերպուեցէք, ազնուացէք, բարձրացէք որքան կրնաք, լեցուցէք Ձեր սիրտն ու միտքը, վասն զի Դուք պիտի ըլլաք վաղուան սրբազան Հայրենիքին հրաշակերտ տաճարին սիւները:

Եւ ես իմ Հայրական սրտաբուղիս մաղթանքներով կ'օրհնեմ Ձեր սիրելի Միութիւնը, հայցելով Աստուծոյ հովանաւորութիւնը Ձեր բարենպաստակ գործերուն և ջանքերուն վրայ:

Աղօթարար
ՊԱՏՐԻԱՐԳ ՀԱՅՈՑ
ԶԱԻԷՆ ԱՐՔԵՊ.

Պոլսոյ Պատրիարքարանին վաւերագիրը

բականացման համար շատ յամատ ճիգեր թափուած էին. այդ նպատակով նոյնիսկ ժողովներ սարքուած. բայց այն օրերու տեղական, անհատական փոքրիկ «Յս»եր ու ճղճիմ հաշիւներ, ախար բախումներ և պեղ կոչուելու արժանի հակառակութիւններ, մեծամասութիւններ՝ միշտ ալ արգելք եղած էին միութեան փրկարար զապափարին, մինչև այն օրը, երբ 1914ին պայթած համաշխարհային ահաւոր պատերազմը (որուն թուրքիան ալ մասնակցեցաւ) վերջակէտը կը զնէր ազգային ամէն ազնիւ ու օգտակար ձեռնարկի, և թրքական ցեղասպանութեան ամենազաժան ծրագրով՝ անպաշտպան հայ ժողովուրդը կը քշուէր գէպի անյայտ ու արիւնոտ հորիզոններ:

Այս նոր ու լայն առաջարկը նոր թափ ու ոգևորութիւն տուաւ արդէն իսկ բարձր արամապրութեան մէջ գրանուող ժողովականներուն, և չուսով որոշուեցաւ նոր կազմուելիք միութեան մէջ տանել ամբողջ նոր սերունդը. փոքրերը, և թէն ասանելից (7-16) տարեկանները՝ իբրև սկստաններ, և աւելի հասունները՝ իբրև մարզիկներ: Ի մի ձուլել մեծագոյն Պոլսոյ մէջ գոյութիւն ունեցող և նոր կազմուելիք բոլոր մարզական ակումբները և համախորմրել գանձնք մէկ անուան տակ՝ «Հայ Մարմնամարզական Ընդհ. Միութիւն Եւ Սկստաններ», մտնալով հին անունները, որոնց յիշատակութիւնն իսկ կը թարմացնէր հին, քնքին ու պատակաւիչ խնդիրները:

Այս չէ՞ր միթէ նահատակ Շաւարշ Քրիսեանի և իր գաղափարկից ու գործակից հիանալի բնկերներուն երազը:

Ի զէպ՝ հետեւեալ թերագրութիւնը կ'ուր: Նկատել ունենալով սկստանական փարպապետութեան ներկայութիւնը այս նոր կազմուող միութեան մէջ, և գիտակցելով սկստանական գասախարակութեան բարձրօրէն մանկավարժական ու կրթական արժէքին, փոխել մարմնամարզական բոլոր մարմնակրթականի, և մեր այս նորածին «մանուկը» անուանել՝ «Հայ Մարմնակրթական Ընդհ. Միութիւն Եւ Սկստաններ»: Գարջո Շահինեանի կողմէ բերուած այս թերագրութիւնը միաձայնութեամբ ու խանդավառօրէն բնութենուեցաւ: Այդ կարեւոր ու նշանակալից փոփոխութիւնը կու գար ապացուցանելու, որ հիմնադիրներուն հետապնդած իռէպր աւելի լայն հորիզոններ կ'ընդգրկէր:

Առաջարկուեցաւ՝ միութեան երկար անունը կրճատել և չորս բառերուն սկզբնատառերը միայն գնել քով քովի, — Հ.Մ.Ը.Մ.: Այս մասին ասարկութիւն կ'ուր թէ՛ շատ նման ու շփոթեցնող պիտի ըլլար Հայ Բարեգործական

Ընդհ. Միութեան կրճատումը ձեռքին՝ Հ.Բ.Բ.Մ.ի հետ: Եւ սակայն, վերջապէս բնդունուեցաւ բնորոշութիւնը՝ Հ.Մ.Բ.Մ. ձեռով կրճատումին, որ շատ շուտով պիտի դառնար, իր սկսուածական ախպար «Բանակով», բնդհ. հայութեան համար ազգային վերականգնումի խորհրդանշան, ամենասիրելի նշանակմբ՝ այդ շորս գիրքերու եզրայրակցութիւնը:

Ժողովին միջնուրար բարձրօրէն ազնուական էր եւ աննկարագրելի: Շատ մեծ ու փոքր ժողովներու մէջ գանձում էր, բայց այդ ժողովի ջերմօրէն խանդավառ ու ապագայի կարելիութիւններով յուսալից, երջանիկ ու վճռակամ միջնուրարին նմանը չեմ տեսած, երբեք: Իսկական, գերազոյն վայելք մըն էր հոգեկան: Սրբազան խաչալով մը քով քովի եկած, սրացաւ ու սրտակից երիտասարդներ էինք, վաղուան մեր նոր սերունդին՝ աշտօրումն միզամած հոգին արեւոտելու, ազգային միութեան սուրբ կապով գանձնք շաղկապելու «Նրազով» արբշիտ, արեւելքէն՝ այլեփաս Մասիսի կատարէն մեր հոգիները ջերմացնող Հայ Հանրապետութեան հրաշակերտ սակզծումը աւետող հայ ազատութեան արեւակի շողշողուն ճատագայթներու զրգունանքովն աւելցուն, եւ հայութեան «Վաղ»ը կերտելու անսեղիբալի սրտման յանգամ՝ այդ պատմական ժողովին «Յարգանքի քեզ» բտելու ազնուագոյն վայրկեանն էր որ կ'ապրէինք:

Եւ այդ ժողովը միաձայնութեամբ տուաւ իր սրտշումները, սրտնք սակայն պէտք էր որ գործադրուէին եւ . . . շուտով:

Որոշուեցաւ՝

ա. — Հայ մամուլի միջոցաւ եւ իսկոյն յայտարարել Հայ ժողովուրդին ու մասնաւորաբար նոր սերունդին թէ՛ այս անունով միութիւն մը կազմուած է եւ պէտք ունի սրացաւ գործակցութեան:

բ. — Ամէն կիրակի աչելութիւն տայ գանձական թուղերու, հրախրելով մանուանդ նոր սերունդը, լսելու «Հ.Մ.Բ.Մ.»ի կեդր. Վարչութեան խօսքը:

Ժողովին իրբեւ տանապարհ-բարտուցար՝ շարագրեցի հասուեալ յայտարարութիւնը, որ շատ քիչ տարբերութեամբ՝ այն օրումն գրածս է, գրեթէ:

Պոլսոյ մէջ կազմուած է «Հայ Մարմնակրթական Ընդհ. Միութիւն» մը, որուն կեդր. Վարչութեան ներկայացուցիչները յաջորդաբար պիտի այցելեն Պոլսոյ բոլոր հայաշատ քաղաքը. բացատրելու համար այս միութեան նպատակն ու ծրագիրը: Կր հրախրուի մեր երկսեռ նոր սերունդը անխախտ, ներկայ ըլլալու իրեն համար շատ կարեւոր:

ւոր այս ժողովներուն: Ժողովներու թուականներն ու վայրերը պիտի ծանուցուին նախօրօք: Ծնողներն ալ կրնան ներկայ ըլլալ:

**Ստորագրութիւն՝
Վարչութիւն**

Գրածս ընդունուեցաւ գնահատանքով եւ պաշտօն յանձնուեցաւ ինծի*, յաջորդ օրն իսկ, անձամբ յանձնելու զայն հայ մամուլին:

«Ժողովուրդի Չայն», խմբագրապետ՝ Վ. Թէքէ-
եան:

«Ճակատամարտ», խմբագրապետ՝ Շաւարշ Մխաբ-
եան:

«Նոր Լուր» (Երեկոյեան Թերթ) խմբագրապետ՝
Հրաչեայ Ներսէսեան:

Յեզափոխական կոչուելու արժանի յանդուգն ու պատասխանատու քայլ մըն էր առնուած: Եօթր հոգի էինք միայն եւ մենք մեկ անուանեցինք «Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն» եւ նոյնպէս եղանք առաջին Կեդր. Վարչութիւնը այդ միութեան:

Այս երկու մարմինները կը կազմուէին հետեւեալ-
ներէն.

- 1.— Գրիգոր Յակոբեան (առեւտապետ)
- 2.— Տիգրան Խոյեան (առեւտապետ)
- 3.— Լեւոն Յակոբեան
- 4.— Հայկ ձիգմէճեան
- 5.— Գարլօ Շահինեան
- 6.— Վահրամ Փափապեան
- 7.— Ժիրայր Խորասանճեան

եւ... Նահատակ՝ Շաւարշ Քրիսեան

Տակաւին Գանձ չունէինք, որ գանձապահ ունենա-
յինք իսկոյն: Նախնական ծախքերը կը հոգացուէին նիւ-
թապէս ի վիճակի անդամներու կողմէ:

Ամէնուս սրտին զպէտք զգայուն թելապարանք մը ե-
ղաւ...

* Ժողովականներուն մէջ կրտսերագոյնն էի եւ միակը որ ազատ ժամանակ ունէի: Թրքական բանակի սպայ՝ դեռ արականման քուլքօ առած չէի:



Յովհաննէս Հինդլեան
Ակադեմիքեան Գաղափարախօսը



Յ. Ճ. Սիրունի
Հ.Մ.Ը.Մ.ի ծրագիր-կանոնագրի
գլխաւոր խմբագիրը



Եղիշէ Քաջունի



Եգնիկ Քաջունի



Արամ Երկողոսեան



Պետրոս Ասրունի

Նկատի ունենալով մարմնակրթութեան, սկսուածութեան համար տարած բարձրանուէր աշխատանքը, ինչպէս նոյն շ.Մ.Ը.Մ. մը կազմելու իր «Պարտուած» ջանքերը, թէ՛ իբրեւ «Մարմնամարզ»ի խմբադիր և թէ՛ իբրեւ զբոսըրոցներու մարմնամարզի ուսուցիչ, և զխտակցելով թէ՛ նոյն այլ նուիրումին ու գաղափարականին համար այ նահատակուեցաւ, քէն յաւէտ բացակայ, բայց միշտ ներկայ Շաւարշ Քրիսեանը նկատել, ի բացակայութեան, անգամ շ.Մ.Ը.Մ.ի ներկայ և զայլք բոլոր կեդրոնական Վարչութիւններուն, և հասարակից մնալ միշտ նահատակ — ստաբիլի իր ներշնչող պատգամներուն:

Յոտնկայս բնդունուեցաւ Շաւարշի մուտքը՝ «Շ.Մ.Ը.Մ.»ի ներկայ ու ապագայ կեդրոնական Վարչութիւններէն ներս:

Իսկ Սիրունին, որ բազմազբոյց վիճակին բերմամբ չէր կրցած ներկայ բլրալ այլ ժողովին, մնաց սակայն միշտ պատրաստակամ սեւէ կերպով աջակցելու վարչութեան աշխատանքներուն, և շ.Մ.Ը.Մ.ի առաջին ծրարըր-կանոնադրի խմբադրութեան մէջ՝ զլիսաւոր ու կարեւորագոյն զերբ կատարեց:

Մամուլի միջոցաւ, համաձայն մեր խոստումին, Բ. կոչ մը առ ինք, երկսեռ նոր սերունդը հրաւիրեցինք ժողովի հեռուեալ թաղերուն մէջ. — Բերա, Սաւաթիա, Սկիւտար: Գրիգորը և ժիրայրը՝ Բերա գացին, Հայկն ու Գարլօն՝ Սկիւտար, իսկ Սաւաթիա՝ Տիգրան Խոյեան ու Լեւոն Յակոբեան:

Սամաթիոյ ազգային վարժարանի սրահը ամբողջովին լեցուած էր խանդավառ ու կրակոտ ազոց ու ազջիկներու խուսնեղամ բողմութեամբ: Հոն էր նոյնպէս իմ պատանեկութեան մօտիկ ու քաղցր բնկեր՝ Արշակ Սահակեանը, որ յետոյ գարձաւ մեր կազմակերպութեան լուրջ ու զեկաւար անգամներէն մէկը: 1922ին, Գր. Յակոբեանի շատ կարեւոր պատճառով մը Պոլսէն արտասահման երթալուն առթիւ, հայ սկսուածներու սկսուածապէտի զիրքը, Գր. Յակոբեանի յանձնարարութեամբ, իրեն վստահուեցաւ:

**

Նոյ. 27, 1918, Երկուշաբթի օրուան մեր վարչական բ. ժողովին, թաղերու կազմակերպիչ մեր ներկայացուցիչներու անդեկազիրները աւելի քան խրախուսիչ էին: Երեք թաղերուն մէջ ալ ժողովարահները ամբողջովին լեցուած են եղած երկսեռ ու կազմակերպուելու անհամբեր նոր սերունդով, և երեք թաղերուն մէջ ալ անգոյն վրայ

հիմնած են Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղեր՝ սկստաական շարքերու մէջ մանկ փափաքողներու կարելու թիւով մը:

Կազմակերպչական այս յաջող քայլերէն խրախուսուած, ամէն շաբաթ, մամուլի մէջ նախօրօք յայտարարութեամբ, նոր թաղերու կամ արուարձաններու մէջ տեղի ունեցան մեր հասարակութիւնը եւ անոնց արդիւնքները եղան միշտ բարձրօրէն սկստորիչ, խոսամանալից, ամէն Երկուշաբթի օրուան մեր վաչական ժողովները վարձաարելով 3-4 մասնաճիւղերով: Այնպէս որ, կարճ ժամանակի մը րնթացքին, ամբողջ Պոլիսը, իր գլխաւոր թաղերով ու արուարձաններով, կազմակերպուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի անուան տակ համախմբուած հաստատուոր անդամներով: Խանդավառութիւնն ու սկստած մեծ Գործը յատուկ տանելու տենչը անդիմադրելի էին, որքան մեր՝ նոյնքան ալ նոր ու ըսքանչելի մեր գործակիցներուն մէջ:

Ժամանակը հասած էր խակոյն ձեռնարկելու Հ.Մ.Ը.Մ.ի ծրագիր-կանոնագրի մը խմբագրման: Այդ խիստ կարելու եւ պատասխանատու գործին համար, որոշուեցաւ երեք հոգիինց յանձնախումբ մը՝ հետեւեալներէ, — Յ. Ծ. Սիրունի, Գրիգոր Յակոբեան, Տիգրան Խոյեան:

Սիրունին եւ Գրիգորը կը բնակէին Բերա, իսկ ես՝ Հայ Կղզի (Գնալը), որով՝ որոշեցինք հաւաքուիլ Գրիգորի Բերայի բնակարանը: Երեք գիշեր յաջորդաբար նուիրուեցանք այդ կենսական, դժուարին, սակայն հաճելի ու հրպարացնող աշխատանքին: Սիրունին ըլլալով ամէնէն փորձառուն ու կարողը, գլխաւոր թելադրիչն ու առաջնորդողը եղաւ յօղուածներու խմբագրման: Իր ներկայութիւնը այդ յանձնախումբին մէջ բարձրօրէն գնահատելի էր:

Այդ երեք գիշերները ես հիւրն էի Տէր եւ Տիկին Գ. Յակոբեաններուն եւ վայելցի իրենց շատ անկեղծ ու սիրալիբ հիւրասիրութիւնը:

Վերջապէս խմբագրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի առաջին ծրագիր-կանոնագիրը, որ իր բնոյճով կամ նպատակով, միջոցներով եւ անդամակցութեան անխտիր պայմաններով, մինչեւ հիմա կը մնայ նոյնը: Ատկէ յետոյ, քաղաքական պայմաններու իրր հետեւանք, Հ.Մ.Ը.Մ., ի սփիւստ աշխարհի ցրուած փիճակին պատճառաւ, գանազան տարրեր շրջաններու մէջ կազմեց մասնաճիւղեր. 1924-ին Պէյրութի մէջ գումարուած տեղական բնոյճ. ժողովէն մինչեւ 1974-ի անդրանիկ բնոյճ. ժողովը վերամշակման ենթարկուեցան ծրագիր-կանոնագրիները: Բայց կը յուսամ որ, ինչպէս ցարդ, ատկէ յետոյ ալ Հ.Մ.Ը.Մ.ը կը յարգէ ու կը գործադրէ իր կենսունակութեան, անկաշկանդ բարգաւաճման

և ազգային հպարտութեան ազդիւր դարձած իր ծրագիր-կանոնադրի ոգին, ի սէր հայ նոր սերունդի միութեան և ի սէր հայ ժողովուրդին:

*
**

Պատերազմի տարիներու անօրինակ նախճիրէն հազիւ ճոզապրած մեր ժողովուրդի բեկորները անճանաչելի վիճակի մտանուած, սխտած էին լեցուիլ Պոլիս՝ իրբև փրկութեան վերջին յոյս, և պոլսահայ զանգուածը — պատի՛ւ իրեն — իր դօտին սեղմեց, լրջօրէն կազմակերպուեցաւ թրքական բարբարոսութենէն հրաշքով ազատած իր քոյրերուն, եզրայրներուն ու սրբերուն ուսելիք, հագուելիք ու պատասպարան ճարելու համար: Ղալաթիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ բակին մէջ բանակած մեր դրժբախտներուն համար Ազգային Վարչութիւնը բացաւ դռները Կեդրոնականի նախակրթարանին: Կազմուեցաւ «Ազգային Միամաստարութիւն» մը, իրբև պատասխանատու՝ գլխութեան այս գործին: Իրարու ետեւէ սրբանոցներ հաստատուեցան Պոլսոյ զանազան թաղերուն մէջ, այլ թաղերու հայ ժողովուրդին իսկ խնդրանքովը: Օգնելու, շարիքը մեղմացնելու, զարմանելու, իրենց ունեցածէն բաներ մը տալու,՝ սեւէ կերպով օգտակար բլլալու իրենց մրբկահար, բնիճուած հայրենակիցներուն, անոնց հօգինները խաղաղեցնելու, յոյս ներշնչելու մրցում մը յատաճ եկաւ պոլսահայ ժողովուրդին մէջ: Անձնասէր ու անտարբեր կարծուած պոլսեցիին, ի տես իր արենակիցներու քայքայուած վիճակին, բացաւ իր սիրան ու հօգին, ուր միշտ արթուն կը հսկէր Հայոս Ուգին, և պատուով դուրս եկաւ այլ անգութ, անորոշ օրերու փորձութենէն:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդր. Վարչութիւնը իսկոյն ճրի զեզարան մըն ալ հաստատեց Ղալաթիոյ եկեղեցւոյ բակին վրայ բացուող սենեակներէն մէկուն մէջ: Իսկ զեղերը՝ . . . Իր ունեցած սակաւին փոքր թիւ մը սկաուտները շարժման մէջ զրաւ, և շուտով, Պոլսոյ հայ և յոյն զեղարանները հաճոյքով լեցուցին իրենց գլխով սկաուտներուն խոշոր պայտասակները ամէն տեսակ պիտանի ու անհրաժեշտ զեղերով: Իսկ պոլսահայ բժշկական զասը, զմայլելի կեցուածք մը ցոյց տուաւ իր շարչարուած ազգակիցներուն հանդէպ, — կանոնաւոր հերթով, ամէն օր, բժիշկ մը կը սպասէր Ղալաթիոյ այլ կայանին մէջ, իր ինամքին պէտք ունեցող հիւանդներուն օգնելու համար: Իսկ զրան առջև իրբև պահակ, անուշիկ հայ սկաուտ մը հպարտօրէն ու ժպտերես կը սպասէր իր բարի գործը ամբողջացնելու համբերութեամբ:

ՏԱՅ ՍԿԱՆՈՒՄ



ՕՐԿԱՆ Հ. Մ. Ը. Մ. Ի

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

Ա. ՏԱԻ, ԹԻԻ 19-20 — 1 ՕԳՈՍՏՈՍ 1920



Կարօ Ուշագլեան
խմբագիր
«Հայ-Սկանուտ»ի



Գրիգոր Ճօլօլեան, Հ.Մ.Ը.Մ.ի
սկանուտ խմբագրատ,
վագֆի մրցանակակիր



Ազգ. Ընդհ. Սկանուտագրատ՝ Գրիգոր Յակոբեան,
սկանուտական շարքերու բնուրբեան պահուուն:
Ետին՝ Հայկ Ճիզմէնեան (բաղաբացիի տարագրով):



«Հայ կզգի»ի յաջորդ
կզգիին ժայռերուն տակ,—
1917,— Տիգրան հոյեան՝
ետերը, փափախով.
Հայկ Ճիզմէնեան, աջ
ծայրը, վարը, ռաբէթ մը
բռնած. Լեւոն Թաշեան,
Պերպէրեան վարժարանի
փոխ-տնօրէնը,
ճախ ծայրը, վարը:

Այս հայանուէր գործը աւելի ուշ իր ուսերուն վրայ
առաւ Պոլսոյ Հայ Կարմիր Սաչը:

*

**

«Հայ Մարմնակրթական Ընդհ. Միութիւնը» փաստօրէն հիմնուած էր արդէն: Մեր նորագոյն բազմահազար նահաաակներու տասնապանքի արցունքներովն ու արեան հեղումովը մեր ազգային հոգը պարարտացած էր, ցանուած սերմերը թարմ էին եւ առողջ, խոկ սերմնացանները՝ բարձրորէն հասաաուոր ու վճաակամ: Այս, զես երէկ ծնած «Մանուկ» Հ.Մ.Ը.Մ.ը, ազգային պայմաններու սնիղման սակ, անհասաաալի արազութեամբ հասակ էր նետած, գեղեցկօրէն, եւ ազգային կեանքին մէջ վարձած հայ ժողովուրդի ապագան կերակրու ձգաող առոյգ, խոսարմնալից եւ հայանուէր ոյժ ու կամք:

Բացայայտօրէն նոր ու յուսաշող միջնորդա մը սկըսած էր զարգանալ: Ահասոր փոթորիկը, որ թրքական աբիւնարբու բնազգովն ու սճրային կաաապութեամբը պայթեցաւ հայոց աշխարհի գլխուն՝ արմատախիլ բրաւ հայ ժողովուրդը իր զարաուոր հայրենիքէն, զրկեց իր «Մեծ»երէն, իր աուն ու աեղէն, իր ամէն ինչէն, անճիտեց ու զգեանեց այլ աշխատունակ, բարբ ու շինարար ժողովուրդը, բայց երբեք չկրցաւ ընկնել անոր ազրելու, յարատեւելու զարաուոր ու երկրպագելի կամքը եւ մեռելներէն յարութիւն կարենալ աննելու զարմանալի կենաունակութիւնը: Իսկ Հ.Մ.Ը.Մ.ը, հարապաա ծնունդ հայ ժողովուրդի, ճիշդ աանին հասաւ՝ իր աաաապած, բնկճուած, հոգեկէս վհաաած Մօրը թեւ-թիկունք բլլալու, անոր ոյժ ու կորոյ ներշնչելու, վազուն համար վասահութիւն ապահալելու եւ հոգիին ժպիտ ու խազապութիւն պարզեւելու: Անցնող այս 60 աարիններու փասաուոր վասաակը, որուն պատմութիւնը կը փորձենք զրել, այլեւս սովորական իմասաով պատմութիւն մը չէ, այլ քանդակումը՝ հայկական ցեղի ուժեղացման եւ ազնուացման նուիրուած անպարակի «Ոգի»ի մը, որուն ուժգնութեամբը զօրացած հայ նոր սերունդը հրաշքներ գործեց զինք ծնող հայ ժողովուրդի մեռելներէն Յարութիւն աանելու հրաշափաւ երեւոյթին մէջ:

*

**

Հ.Մ.Ը.Մ.ը, ուրեմն, զեղեցիկ եւ յուսաաու իրաւանութիւն մըն էր եւ անհրաժեշտ ոյժ մը՝ պոլսահայ կեանքին մէջ, միշտ պաարաաա օգնելու, ժողովուրդին ծաաալելու իր քաանկ աւելի մասնաճիւղերով, որոնց վրայ




Հ.Մ.Ը.Մ.ի Բերա-Շիշլիի
խումբը 1921-ին շահած
ախոյեանութեան
բաժակով, Հ.Մ.Ը.Մ.ի
մրցաշարին :



Հ.Մ.Ը.Մ.ի Գումգարուի խումբը, որ մրցաշարի
աւարտականը խաղցաւ Բերա-Շիշլիի դէմ :



Պոլոյ մեր լաւագոյն
ֆութպոլիստներէն
Ասատուր Պոտիկեան՝ աջին,
Գաբրիէլ Մանառեան՝ ձախին



Բերա-Շիշլիի եւ Գումգարուի միջեւ աւարտական մրցումը
Բերա Շիշլիի դաշտին վրայ (1921)

չուտով պիտի աւելնար՝ Պուլսէն ոչ շատ հետո՝ պանտող Արմաշի, Հայց. Եկեղեցւոյ արժանատոր ու զարգացած հոգեւորականներ պատրաստող երբեմնի համբաւաւոր զբօրեվանքին մէջ հաստատուած եւ երկրագործութեան նուիրուած սքանչելի որբանոցը, իրբեւ 24-րդ մասնաճիւղ*:

Պուլսոյ մօտիկ աւելի հայաշատ եւ հայաչունջ քաղաքներ նոյնպէս արձագանգ եղան Հ.Մ.Բ.Մ.ի համահայկական կոչին եւ շատ չանցած՝ Ատարազար, Պարտիզակ, Իգմիա (Նիկոմեաիա) ու Ռոստոթօ ունեցան իրենց խոտարմնալից մասնաճիւղերը, բարձրացնելով անոնց թիւը՝ 23-ի:

Հ.Մ.Բ.Մ.ը բազմաճիւղ եւ շքեղօրէն սաղարթախիտ ծառ մը դարձած էր ազգային մեծ «անասա»ին մէջ: Թաղերու մէջ հիմնուած որբանոցները ժամանակն էր որ բանային իրենց գոները՝ հոն հասարած մեր որբերուն հասնելու համար: Այդ էր արդէն Հ.Մ.Բ.Մ.ի հիմնադրութեան մղում տուող առաջին գաղափարը: Կեդրոնական Վարչութիւնը որ շրջապատուած էր ու խրախուսուած բազմաթիւ սրացու ու հայրենանուէր անձնատուրութիւններէ՝ սրուչեց պաշտօնապէս ղիմել Ազգային Կեդր. Վարչութեան եւ խնդրել որ փաւերացուի Հ.Մ.Բ.Մ.ի առաջին ծրագիր-կանոնադիրը եւ թոյլ արուի մեղի որբանոցներէն ներս մտնել եւ կողմակերպել մեր մօտիկ ապագան կազմող այդ խոտարմնալից «հանակը» որբերու՝ սկաուսական փրկարար շարքերու մէջ:

* 120 հոգիէ բաղկացած այս մասնաճիւղը, 1920-ին Հայաստանի Հանրապետութեան հետ կայացած համաձայնութեամբ եւ Հայկ Սէրէնկիլիւեանի ու Կուպեռնիկ Թանուրենեանի առաջնորդութեամբ փոխադրուեցաւ Հայաստան, հոն մնալու եւ երկրագործական դաստիարակութիւնը շարունակելու համար: Մակը ու տխուր օրերու մէջ հասաւ հայրենիք: Թրփահայ պատերազմը սկսած էր, Կարս՝ ինկած եւ Ալեքսանդրաբոլը (Լեւինական) խուճապի մատնուած: Սկաուս խմբապետնիկն էր՝ ողբացեալ ու անգին Զաւէն Սարունին, ամէնէն հաւնած սկաուտներէս մէկը: Հանդիպեցանք իրարու եւ ջերմօրէն ողջագուրուեցանք Ալեքսանդրաբոլի Թօփեան գլխաւոր փողոցին վրայ եւ այդ եղաւ մեր վերջին հանդիպումը, շա՛տ ավաստ...:



ՀԵՏ ԱՅՐԱՆՊՐԱՅԻՆ ԸՄՏՏՈՒՄ ԱՌՈՒՄԻ

ՏԵՏ-ՍՎԵՈՒՄՈՐ

ՀՈՒՆՈՒՍ

4 ՊՈՒՆՅ

1921



Քի 191

1921

Արեւիկայ

ժյուր Ա. Զարիֆեան

Կար

Անձնագրի մասին հարցազրույցի մասին
Այ. Ա. Զարիֆեանի հարցազրույցի մասին
պիտի հարգելով ձեռնարկելու հարցին
ու ձեռքով պատասխանելով մեզ ձեռնարկելու
հարցին և յայդանոց համարելու:

Ի հետևյալ հ.ա. գ. մ. բ. բաժնի մեջ գրանցված

Արեւիկայ

Արեւիկայ

Մարտի 1921

Արեւիկայ

Հ.Մ.Ը.Մ.ի մէկ նամակը Մ. Զարիֆեանին



Մատթեոս Զարիֆեան

Անկեղծ եւ ստոյիկ բանաստեղծու
թեան փաղցրահունչ փնարակիրը,
հայ զերթողներէն միակը, որ միա-
ժամանակ զեղակազմ մարզիկ մըն
էր, բարձրութիւն ցատկելու, երեք
փայլ ոստումի ախոյեան, որուն
հաստատած մրցանիշները երկար ա-
տեն մնացած են անգերազանցելի,
մեր մէջ:

Եղած է հատորիս հեղինակին
հետ, Պերպէրեանի վարժարանին
մէջ: Զոհ գացած է թոճախին, Ա.
ընդհ. պատերազմին ճաշակելէ ետք
թրփական բանտերու մրուրը (1894-
1924):



Մ. Զարիֆեան եղած է նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի առաջին
սկաուտներէն մէկը: Խաչանիշով նշանակուածը ինքն է,
Պերպէրեան վարժարանի սկաուտներուն հետ, արշաւի
մը ընթացքին (1921): Զախ բարձունքին կանգնած, ֆա-
զաֆացիի գգեստով եւ գլխարկով՝ ուսուցչապետ՝ Շա-
հան Պերպէրեան:

Հ.Մ.Բ.Մ.ի վարչութեան անունով գտցի պաշտօնապէս սեւեռելու Ազգային Կեդր. Վարչութեան տաննապետար՝ Տոքթ. Գառնիկեան, շատ յարգուած, բարեկիրթ ու նուիրուած անձնատարութիւն մը: Ներկայացուցի իրեն, որբանոցները կազմակերպելու մեր առաջարկը, որուն Տոքթ. Գառնիկեան պատասխանեց շատ ջերմ ու անկեղծ կեցուածքով մը: Գնահատեց մեր մտածումն ու գործակցական Ոգին եւ աւելցուց. «Ապրիլի 2-ը, երիտասարդները, Ձեր այդ Հ.Մ.Բ.Մ.ով կեցեցիկ գտա մը սուրբ մեղի եւ համայն հայութեան, ցոյց ապրով Միութեան կարեւորութիւնն ու անոր փրկարար հետեւանքը՝ մեր ազգի գաղիք օրերուն համար: Շա՛տ ապրիլք, յաջողութիւն ձեզի: Մեծ ու կարեւոր մասնագիտութիւն մը, բեռ մը պիտի վերցնէք մեր միտքերէն եւ արդէն ծանրարեքնուած ուսերէն»: Առատացաւ եւ փոստահեցուց որ՝ Ազգ. Կեդր. Վարչութիւնը որբախտութեամբ պիտի զիմատրէ Հ.Մ.Բ.Մ.ի այս գործակցական ոգին:

Շուտով ստացանք Ազգ. Կեդր. Վարչութեան վաւերացումը՝ մեր ծրարիւր-կանանազրին, եւ գնահատալից արտօնազիրը՝ որբանոցները սկստատական շարքերու մէջ կազմակերպելու մեր առաջարկին:

1919-ի մէջ էինք արդէն: Պաշտօնապէս վաւերացուած կազմակերպութիւն մը, եւ մեր մտադաշ սերունդի եւ որբանոցներու մէջ ցրուած մեր ամէնէն աւելի ուշադրութեան պէտքն ունեցող փոքրիկներու սկստատրէն կազմակերպման մեծ պատասխանատուութիւնը ստանձնած էինք: Կատակ չէր, որովհետեւ այդ սարք ու գծուար գործը գլուխ հանելու համար բաւականին պատրաստուած առաջնորդներ չունէինք: Սակայն եւ այնպէս, պէտք էր խելոյն փարիլ աշխատանքին եւ պատուով գուրս գալ այս՝ ամենակենսական, եւ կը կրկնեմ՝ Սուրբ Գործը յաջողցնելու աշխատանքին: Սուրբ բախ, որովհետեւ հայ անդին որբերու եւ նոր սերունդի առողջ գասախարակութեան գործն էր այդ, եւ տանց սկստատական շարժումին՝ Հ.Մ.Բ.Մ.ը չէր կրնար իր անունին տալ այն պաշտելի Հմայքը, որ անունի ախօր: Սկստուտութիւնը «Սիրուն» է Հ.Մ.Բ.Մ.ին, որ միշտ կը բարախէ հայ ժողովուրդի ազնուացման ի խրնդիր: Առանց այդ գմայլելի շարժումին՝ Հ.Մ.Բ.Մ.ը կը մնար հայ մարդիկ երիտասարդներու մարդական միութիւն մը միայն եւ անկարելի է որ կարենար զիմանալ 60 տարիներ: Շատ մը օրիշներու նման՝ ան ալ կու գար ու կ'անցնէր:

«Հ.Մ.Ը.Մ.»-ի Ա. ՈՂԻՄՊԻԱԿԱՆՆԸ

Սկստուածական շարժման արագ ու յաջող ընթացքը արձանագրելէ առաջ՝ կ'ուզեմ, նախ, Հ.Մ.Ը.Մ.-ի գուտ մարմնամարզական կեանքին անդրադառնալ:

Ինչպէս որ գիտենք, մարմնամարզական շարժումը, մասնաւորաբար Փութպոլի խումբերու խողովակով, շատ աշխոյժ վիճակ մը ունեցած է Պոլսոյ եւ շրջաններու նոր սերունդին մէջ, եւ ասոր կողքին, բաւական յարջ կերպով զարգացած են՝ դաշտային դանազան մրցումները, բսենք՝ ողիմպիական խաղերը: Հ.Մ.Ը.Մ.-ի գրեթէ ամէն մասնաճիւղ ունեցաւ իր Փութպոլի խումբը, եւ Կեղերոնական Վարչութիւնը, միջ-մասնաճիւղային մրցման փափաքները պոհացնելու մտօք, Փութպոլի մրցաշարք մը հաստատեց, սրուն կը մասնակցէին եւ իրենց համար որոշուած օրը դաշտ կ'իջնէին զօրաւորագոյն խումբերը: Եղանակի վերջաւորութեան, աստելագոյն կէտերը շատ խումբը կը հռչակուէր այդ տարուան արտոյեանը:

Պատերազմէն առաջ, 1911-ին եւ յաջորդող սղիմպիականներու, բսենք՝ Նաստարեկեան Խաղերու համար բերանին մնացած հին ու նոր սերունդներ սենկոտ պատրաստութեան լծուած էին Հ.Մ.Ը.Մ.-ի վարչութեան կողմէ իրասացուած 1919-ի սղիմպիականին համար, որ հին օրերու նման տեղի ունեցաւ Գասար գիւղի Union Club-ի դաշտին վրայ: Առաջին անգամ ըլլալով սկստուաներ կը տողանցէին, եւ օրուան նախագահ՝ Չուէն Պատրիարք, դաշտավայրի դռնէն մինչեւ իր պատուոյ աթոռը, կ'առաջնորդուէր հայ սկստուաներու պատշաճ յարգանքով, եւ մինչեւ հանդէսին վերջանալը՝ Պատրիարք Սրբազանը շրջապատուած կը մնար պահակ սկստուաներով: Տակաւին՝ Չուէն հայրենասէր պատրիարքին մէջքին շուրջ հպարտօրէն կը տեղաւորուէր հայ սկստուաներու գօտի մը՝ «Բարձրացիր-Բարձրացուր» նշանակով, նուիրուած «Սիրելի Սրբազանին», Հ.Մ.Ը.Մ.-ի Կեղր. Վարչութեան կողմէ:

«Յաղքանակի օր» մըն էր թէ՛ իր կազմակերպչական կարողութեամբ եւ թէ՛ մարզիկներու ցոյց տուած մաքուր ոգիով, սրտնք դաստիարակուած ու մասնաւորապէս թելադրուած էին ըլլալ մրցորդներ՝ մարզական ոգիի ցուցադրութեամբ, եւ ոչ թէ՛ ամէն գնով յաղթելու անպատուաբեր ընթացքով:

Այստեղ չեմ կրնար շխիշել ամօթայի եւ քսամնելի մթնոլորտը միջազգային կոշուած նորագոյն Ողիմպիականներուն, ուր քաղաքական, ազգային, անհատական, եւ այլ հաշիւներ, զգացումներ սանձարձակօրէն կը մրցին՝ յանդերով նոյնիսկ ահաւոր սճիրի, սպանդի: Ո՞ր է, հին հեղինական մարզական սղին, օրհնուած՝ Ողիմպոսի աստուածներէն, եւ ո՞ր են անհետացած, Վարդանի, Անահի-



Հ.Մ.Ը.Մ.Ի Ա. Ողիմպիականներն (1919, Գատը Գիւղ) տեսարան
Մարզիկները շարքի



Կը տողանցեն տղաքն ու աղջիկները սկաուտական տարագով, Հ.Մ.Ը.Մ.Ի
Ա. Ողիմպիականին



Հ.Մ.Ը.Մ.Ի Ա. Ողիմպիականներն վերջ առնուած խմբանկար մը
Զաւէն Պատրիարքին հետ


Զախէն աջ կ'երեւին՝ Լ. Յակոբեան, Հ. Ճիզմէնեան, Բ. Կէօզիւպէ-
յիւեան, Ա. Սալմասեան, Յ. Թ. Հինդլեան, Տոբք. Էֆմէֆեան, Զաւէն
Պատրիարք, Տոբք. Ուզունեան, Գր. Յակոբեան, Ժ. Խօրասանեան, Ա.
Գալանօզեան, Ա. Ալլահվերտի:




Արամ Աբէլեան առաջնակարգ
մարզիկ եւ գունտ նետելու
ախոյեան Հ.Մ.Ը.Մ.ի Ա.
Ողիմպիականին :



Հ. Գալֆայեան
1921-ի Ընդհ.
Ողիմպիականի
Ախոյեանը.
Մէկ Քայլ,
Երեք Քայլ եւ
Բարձր. Ցատկե-
լու Առաջին



ՀԵԾԱՆԻԻ ՄՐՑՈՒՄ



Սկաւառակ նետելու մրցում

տի մաքրամաքուր համբաւով հպարտացող հայ ապկա-
ները: Մեր ողիմպիական խաղերու ընթացքին ըլլայ թէ
այլ տեղ, ուրիշ մրցումներու ատեն, հայ մարզիկը պէտք
է մնայ գերիվեր փոքրագու քիւններէ: Ասպետօրէն պիտի
մրցի եւ յաղթէ, եւ կամ իր լաւագոյն ուժերու ցուցադրու-
թեանէն ետք, եթէ հօգորագոյնին կը մնայ յաղթանակը, աւ-
պետի մը ազնուականութեամբ պէտք է ընդունի իր պար-
տու թիւնը: Այսպէս է գրուած իսկական մարզիկի «Հաւա-
տոյ հանգանակը», եւ այսպէս կ'ընդունի ու կը դաստիա-
րակէ իր մարզիկները՝ Հայ Մարմնակրթական Ընդհ.
Միութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.ի այս Առաջին Ողիմպիականը 1919-ին՝
ինծի կը յիշեցնէ տիրուր պատահար մը: Այլ ողիմպիական-
ներն եւ ալ կը մասնակցէի իբրեւ մրցորդ մարզիկ: Երեք
մրցումներու մէջ մաս առի, — 100 եարտ վագել, երկայն
նստում ցատկել եւ երեք քայլ ցատկել: Մեր դաշտային
վրանին տակ էր նաև Robert College-էն այլ տարի ընթա-
ցաւարտ եղած Արամ Պապականը: Իմ ու շատերու կարծի-
քով՝ մեր ամենալաւ ու յամառ վագողը: Այլ տարուան
College-ի տարեվերջին դաշտային մրցումներուն մէջ քա-
ռորդ, կէս, մէկ մղոն վագներուն համար իսկապէս որա-
կաւոր վագող հայ մարզիկը միայն ինքն էր: Հայոց, հայ
ուսանողութեան պատիրը վեր բռնողը ինք պիտի ըլլար՝
յոյն ու պուլկար լաւագոյն մրցորդներու զէմ: Իսկ ա-
նոնք, ամէն մէկ մրցումին համար թարմ, շոգնած ոյժ մը
զբաժնէին:

Մեր աննման ու պարտութիւն ճանչնալ չուզող
սքանչելի Արամը, քառօրդ մղոնին մէջ, առաջին ելաւ, կէս
մղոնի վագքին՝ նոյնպէս յաղթական ելաւ, մանաւանդ
College-ի մրցանիչին հաւասար ժամանակով վերջացուց-
իսկ մէկ մղոն վագքին մէջ, կրնկակոխ իբրեւ հեանող յոյն
մարզիկ մը, վագքի վերջաւորութեան մօտ, իր շոգնած
պահեստի ուժերը օգտագործեց եւ կուրծքի մը տարբերու-
թեամբ առաջ անցաւ Արամէն, որ հակառակ չպարտուելու
իր վերջին սպասած ճիգին, շկրցաւ արդիւիւ յոյն մրցակի-
ցին յաղթանակը: Օրուան լաւագոյն մարզիկն էր Արամ
Պապական եւ հայերու կարգին յոյներն ու պուլկարներն
ալ ընդունեցին գերազանցութիւնը: Միշտ եղած ենք շատ
մօտիկ սրտակիցներ, իսկ ես՝ հիացող մըն եմ եղած իր
սրունքներու նետուածքին, շնորհալիութեան, նման՝ ա-
րարական անուայեղ նժույզներու սրունքներու առաջ նետ-
ուածքին:

Վագքի վերոյիշեալ ցուցադրութեան ապա ինելով,
մեր ողիմպիականի յանձնարումըն ու մարզիկներս, բա-



1919-ին Ա. ողիմպիականէն ընդհ. տեսարան մը




Արամ Պապանան
Վագֆի ախոյեան
Տ. հոյեանի
մտերիմներէն



Վարագ Փողարեան
Ախոյեան
մարզիկ էւ
առաջնակարգ
ֆուքպոլիստ

Համագասպ
Փանոսեան
նախկին
«Արաբ»ի
յայտնի
ֆուքպոլիստնե-
րէն ապա՝
վաստակաւոր
խմբապետ



1920-ի Բ. ողիմպիականի հայ սկաւտներու տողանցքը


ցասիկ արդիւնքներ կը սպասէինք Արամէն, մստահ՝ որ ամբողջ Պոլսոյ բարձրագոյն մրցանիշը պիտի հաստատէր ան՝ այդ օր: Սակայն, մրցումներու ընթացքին, Արամ Պապական մեկի ծանօթ վազողը չէր. բան մը, խորհրդաւոր ոչ մը կարծես իր վազողի շնորհալի սրունքները անզօրութեան դատապարտած էր, և Պապական առաջնութիւն մը անզամ շարձանագրեց, և իրմէ շատ աւելի տկար վազող մը եղաւ յայթականը: Իսկ Արամ արտում ու լուս գնաց իր վրանը՝ հագուելու և... թերեւս ինքն իր մէջ խոկալու, ինքզինքին հաշիւ տալու... ինքզինք գտնելու...

Յետոյ լսեցինք, որ իր մրցման վայրկեաններուն, Պոլսոյ առաջնակարգ գոհարավաճառներէն եղող իր հայրը՝ Լեւոն Պապական, անձնասպան էր եղած, Վոսփորի յորձանուա ջուրերուն մէջ...

Կը խնդրեմ որ ինձի ներսի աշտեղ արձանագրել նոյն այդ ողիմպիականին մէջ պատահած ուրիշ զբոսապ մը, ուր կ'երևայ հայ մարզիկ-մրցորդներու սքանչելի ոգին:

Մեր լաւագոյն մարզիկներէն եղող՝ Մասթէոս Զարիֆեանի հետ կը մասնակցէի երեք քայլ ոստումի մրցումին: Արատօնուած երեք փորձերէ հոք Զարիֆեանը շտուաւ այն արդիւնքը, զոր կ'ակնկալէի իրմէ, որովհետեւ Պէրպլերեան վարժարանի մէջ իբրեւ ներքին ուսուցիչներ, մեր միասին անցուցած երջանիկ օրերուն, երբ յաճախ, մեր ազատ ժամերուն, կ'երթայինք պարտէզ ու գանազան մարզանքներու մէջ մրցելով մենք մեզ կը մարզէինք՝ երեք քայլ ոստումի մէջ ան միշտ յայթականը կ'ըլլար: Ես, այդ օր, երբորդ զիրքը չահած էի: Արզար բողոք մը յառաջ եկաւ մէջս և իսկոյն գացի մեր դատաւորին՝ Բիւզանդ Կէօզլուպէօյլու քեանին, մէկը մեր առաջնակարգ ու ամենամաքուր ոգի կրող մարզիկներէն, և պարզեցի իրեն կացութիւնը, խնդրելով որ, նկատի առնելով ամէն ինչ, պատեհութիւն արտի Զարիֆեանին շորբորդ փորձ մըն ալ ընելու: Նկատեցի չրճուանքը Բիւզանդի աչքերուն մէջ, և՛ «Տիգրան, — բաս — կը համբուրեմ քու այդ գմայլելի զգացումդ, բայց ես իրաւունք չունիմ այդ որոշումը տալու. իսկ եթէ միւս բոլոր մրցակիցները միաձայնութեամբ խնդրեն այս առաջարկդ՝ ես մեծ հրճուանքով կ'ընդառայեմ իրենց ազնիւ փափաքին»:

Իսկոյն փութացի տեսնել մրցակիցները: Բացատրեցի իրենց բացասիկ կացութիւնը և իրենց մարզական բարձր կոչումին զիմելով պատասխաններն ինչպէս: Եւ... պատիւ իրենց, և շ.Մ.Բ.Մ.ական կամ հայ մարզիկի ոգին, համաձայնեցան մեր սիրելի Զարիֆեանին տալ այդ



1921-ի Բ. ողիմպիականէն տեսարան մը



Զարմայր Դերձակեան
Հ.Մ.Լ.Մ.ի Պոլսոյ
նշանաւոր
ֆուքպոլիստներէն



Վաղարշակ
Վարժապետեան,
հեծանիւի նախկին
ախոյեան, ապա
Հ.Մ.Լ.Մ.ական
անուանի
կորամարտիկ



Նուագախումբը, որ միշտ փառքերէն մէկն է եղած
Հ.Մ.Լ.Մ.ի սկաուտութեան

«ապօրինի» պատահու թիւնր: Իսկ Մատթէոսը, այդ քաղցր հոգիով գեղեցիկ մարդիկը, բացառապէս պեւորուած իր մրցակիցներու այդ ազնիւ կեցուածքէն եւ հոգեկան նոր ոյժ ու թափ ստացած, այնպէսի կատարեալ ոստում մը իրագործեց, որ գլեց անցաւ բոլոր նախկին մրցանիշերը եւ տարիներով իր այդ օր հոստատած մրցանիշը մնաց սմենարարձրը:

Մատթէոս Զարիֆեանի այդ օրուան անյաջող արդիւնքը՝ հիմա, տարիներ ետք, հասկնալի կը գտնուայ, այն իրողութեամբ որ, քանի մը տարի յետոյ զինք գերեզմանող անոցորմ հիւանդութեան աւերիչ մանրէշները սկըսած էին արդէն իրենց մահարեւ աշխատանքին, անոր թութեան մէջ: Մրցորդ մարդիկներու ցոյց տուած եզրայրական ջերմ ոգիէն թոխք սոսա իր խայտուն հոգին, եւ զմայլելի, թերեւս գտնատանջ ճիգով մը, արդարացուց իրմէ սպասուածը: Երջանիկ էր ու գոհ՝ իր յայթանակով, զոր շահեցաւ գեղեցիկօրէն: Իր վերջին յայթանակն էր, իրբեւ մարդիկ: Հինգ տարի ետք՝ մեռաւ՝ իրբեւ զգայուն բանաստեղծ:

Սէր ու յարգանք իր յիշատակին:

**

Այսպէս, ուրեմն, մարդական կեանքը Պոլսոյ եւ անմիջական շրջանակներու մէջ հիմնուած Հ.Մ.Ը.Մ.եան ոգիով իրարու շողկապուած մասնաճիւղերու շնորհիւ, փորձառու հին մարդիկներու ետանդուն առաջնորդութեամբ՝ թեւ սոսա, զօրացաւ, եւ մարդասէր երխասարդութիւնը վերածեց պատիւ բերող ու խանդավառ, նոր նուաճումներու կարօտ եւ հպարտ ճակատով խոստմնալից հաւաքականութեան մը, որ իր մարդական ետանդը կը գոհացնէր, Քրիստոսից զատ, մարդական ամէն տեսակ անհատական թէ խմբական փորձերով: Հարուստ ու գեղեցիկ էր մարդական գեղեցիկը Հ.Մ.Ը.Մ.ի, որ հինէն ի վեր փորձուած էր ու ծանօթ, բայց...

Հ.Մ.Ը.Մ.ի անջեւ բացուած նոր պաշար հերկուած էր տակաւին: Նոր գեղեցիկ մըն էր անձայրածիր, եւ շրջապատուած էր ամենաշքեղ ու խոստմնալից կարելիութիւններով՝ մեր ցեղի բարոյական, գաղափարական եւ նկարագրային ազնուացման ուղղութեամբ: Եւ սկսուտութիւնն էր սերունդներու գաստիարակութեան նուիրուած՝ փրկութեան այն լուսասր փարսար, լուսաշող այն ջահը՝ զոր Հ.Մ.Ը.Մ.ը բարձրացուցած էր, խոստանալով հայ ժողովուրդին պահել եւ գայն վերածել անչէջ՝ իր գաւակներու հոգիները տաքցնող վաստարանի:

ՍԿԱՌԻՏՈՒԹԻՒՆՆ ՈՒ Հ.Մ.Ը.Մ.Ը

Մեզի ծանօթ սկաուտական շարժման հիմնադիրը եղած է անգլիական բանակի զօրավարներէն՝ Պէյտըն Փաուըլ, որ սկաուտական շարժման միջոցաւ թէ՛ իր երկրին եւ թէ՛ համայն աշխարհի պատանիներու նկարագիրի ազնուացման ի խնդիր բերած հսկայ նպատարն իրը զնահատանք, վարձատրուած է Լորտ սիրտոսով, եւ կոչուած՝ Լորտ Պէյտըն Փաուըլ:

Լորտ Պէյտըն Փաուըլ եղած է դիտող ու տեսնող մը: Տարբեր երկիրներու բնիկներու ապրելակերպը գիտած ու գիտար կեանքի պայքարին մէջ անոնց բնազդօրէն կիրարկած լաւ յատկութիւնները ակտիւ ըլլալով՝ ջանացած է իր զինուորներուն, եւ աւելի ուշ իր ձեռքին տակ եզոյ պատանիներուն սորվեցնել՝ Մայր Բնութեան ոյժերուն գէժ պաշտպանուելու կերպերուն ակեղեկանալ, քաղաքի ապականած մթնոլորտէն հեռու, Բնութեան առողջ ու արկածախնդրական կեանքը ուսումնասիրել եւ ինքզինքին օգնել սորվիլ: Պատանիներուն մէջ, որոնք վաղուան սերունդը պիտի կազմեն, մաքուր ապրելակերպի, առողջ մտածումի եւ պատուախնդիր մարզու, պարկեշտ ու պատասխանատու քաղաքացի մը ըլլալու առաքինութիւնները զարգացնելու «Երազն» է ունեցած Սկաուտութեան մեծ հիմնադիրը:

Իր սկսած շարժումը եղաւ աննախընթացօրէն վարակիչ եւ տարածուեցաւ Անգլիայէն դուրս հեզահեռէ բոլոր երկիրներուն մէջ:

1907-ին, հիմնեց իր առաջին խումբը՝ երեսուն հոգիէ բաղկացած, որոնք ունեցան իրենց առաջին բանակումը Պրաուն կղզիին մէջ, իր առաջնորդութեան եւ հսկողութեան տակ:

Այս առաջին դործնական փորձը չափազանց յաջող էր, ոգևորիչ ու գոտարարակիչ: Խանգավառութիւնը սահման չունէր այդ երեսուն հոգինոց խումբի անդամներուն մէջ: Պէյտըն Փաուըլ ինքն ալ խրախուսուած այս յաջողութենէն՝ 1908-ին գրեց իր առաջին գիրքը՝ «Scouting for Boys», որ վարձաւ պատանի սերունդի արկածախնդրական բնազդին գոհացում տուող եւ գէպի առողջ ապրելակերպ ու նկարագիր առաջնորդող նոր «Աւետարան» մը:

Ժողովուրդներու, ազգերու բարոյական բարձրացման, ազնուականացման ծառայող ամէն պաշտօնակարանի նման, հայ ժողովուրդը այս նորագոյն վարդապետութիւնն ալ, որ իր մօտիկ ապագան կազմող մտադաշտ ու պատանի սերունդին ֆիզիքական ու հոգեկան ուժեղացման նուիր-

ՍԿԱՌԻՏՈՒԹԻՒՆՆ ՈՒ Հ.Մ.Ը.Մ.Ը

Մեզի ծանօթ սկաուտական շարժման հիմնադիրը եղած է անգլիական բանակի զօրավարներէն՝ Պէյտըն Փաուըլ, որ սկաուտական շարժման միջոցաւ թէ՛ իր երկրին եւ թէ՛ համայն աշխարհի պատանիներու նկարագիրի ազնուացման ի խնդիր բերած հսկայ նպաստին իրը զնահատանք, վարձատրուած է Լորտ Խաղոսով, եւ կոչուած՝ Լորտ Պէյտըն Փաուըլ:

Լորտ Պէյտըն Փաուըլ եղած է դիտող ու տեսնող մը: Տարբեր երկիրներու բնիկներու ապրելակերպը դիտած ու զժուար կեանքի պայքարին մէջ անոնց բնազգօրէն կիրարկած լաւ յատկութիւնները տեսած ըլլալով՝ ջանացած է իր զինուորներուն, եւ աւելի ուշ իր ձեռքին տակ եզրղ պատանիներուն սորվեցնել՝ Մայր Բնութեան ոյժերուն զէմ պաշտպանուելու կերպերուն անդեկանալ, քաղաքի ապականած մթնոլորտէն հեռու, Բնութեան առողջ ու արկածախնդրական կեանքը ուսումնասիրել եւ ինքզինքին օգնել սորվիլ: Պատանիներուն մէջ, որոնք վաղուան սերունդը պիտի կազմեն, մաքուր ապրելակերպի, առողջ մտածումի եւ պատուախնդիր մարզու, պարկեշտ ու պատասխանատու քաղաքացի մը ըլլալու ասաքինութիւնները զարգացնելու «Նրազն» է ունեցած Սկաուտութեան մեծ հիմնադիրը:

Իր սկսած շարժումը եղաւ աննախընթացօրէն վարակիչ եւ տարածուեցաւ Անգլիայէն դուրս հեզահեռէ բոլոր երկիրներուն մէջ:

1907-ին, հիմնեց իր առաջին խումբը՝ երեսուն հոգիէ բաղկացած, որոնք ունեցան իրենց առաջին բանակումը Պրաուն կղզիին մէջ, իր առաջնորդութեան եւ հսկողութեան տակ:

Այս առաջին գործնական փորձը չափազանց յաջող էր, սգեւորիչ ու դատախարակիչ: Խանդավառութիւնը սահման չունէր այդ երեսուն հոգինոց խումբի անդամներուն մէջ: Պէյտըն Փաուըլ ինքն ալ խրախուսուած այս յաջողութենէն՝ 1908-ին գրեց իր առաջին գիրքը՝ «Scouting for Boys», որ դարձաւ պատանի սերունդի արկածախնդրական բնազգին գոհացում առող եւ զէպի առողջ ապրելակերպ ու նկարագիր առաջնորդող նոր «Աւետարան» մը:

Ժողովուրդներու, ազգերու բարոյական բարձրացման, ազնուականացման ծառայող ամէն զաղափարականի նման, հայ ժողովուրդը այս նորագոյն վարդապետութիւնն ալ, որ իր մօտիկ ապրապան կազմող մասդաշ ու պատանի սերունդին ֆիզիքական ու հոգեկան ուժեղացման նուիր-



Բերայի սկաուտներու
խմբանկար, Երդման
արարագութենէն ետք :
հաշանիշ կրողը՝
Գրիգոր Յակոբեան



Ս. Ջատիկի Օրհնութիւնը
Եսայեան խումբը
11 Ապրիլ 1920, Պոլիս



Խառգիւղի սկաուտները կը վերակենդանացնեն
Մինաս Չերազի տան աւերակները,
կտորածէն ետք



Սկաուտապետ՝ Գրիգոր Յակոբեան



Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները դժուար
ու վտանգալոր մագլցումի մը
ընթացքին (1920)

Պուլսոյ Հայ կղզիի (Գընալը) Հ.Մ.Ը.Մ.ի
մասնաճիւղի սկաուտները կը մարզուին՝
մասնակցելու համար 1920 Յունիս 20-ի Պուլսոյ
Միջգ. Սկտ. շէնքիին: Զախին՝ խմբապետը՝
Եղբ. Տիգրան Խոյեան:



Գատըզիւղի որբանոցի սկաուտները



Սկիւտարի սկաուտները Զամլընայի բարձունքին, 1921

ուսած ամենախոստամնալից զագագիարականով առցորուած էր, գառաւ իր նկարագրին ու սիրահին շատ մօտիկ, և 1907-ին Անգլիոյ մէջ պաշտօնապէս հիմնուած Սկաուտական Շարժման արձագանդեց՝ 1912-ին, Պոլսոյ մէջ:

Շատարչը Պոլիս եկած էր Անգլիայէն, ուր ծանօթացած էր սկաուտական շարժման: Գրիգոր Յակօբեանը Պոլսոյ մէջ, մօտէն հետաքրքրուած էր՝ նոր սերունդի առողջ դաստիարակութեան նուիրուած այդ շարժումով: Քրիսեանի հետ թղթակցութեամբ յարարեցող Գրիգորի թելադրութեամբ՝ Շատարչ կու գայ Պոլիս և Գր. Յակօբեանի թէ՛ բարոյական և թէ՛ նիւթական քաջայերուութեամբ կը սկսի հրատարակել «Մարմնամարզ» անունով հայ կեանքի առաջին պարբերականը՝ նուիրուած ֆիզիքական գաստիարակութեան:

Այդ նոյն թերթի 1912 Յունուար 15 քուին մէջ, Շատարչ Քրիսեան, հանդէս կու գայ՝ պոլսահայ ժողովուրդին և մանաւանդ երիտասարդութեան պարզելու սկաուտական շարժման կենսունակ զագագիարականը՝ «Տիպոյնց զումարտակներ» վերնագիր կրող իր յօդուածով: Իսկ, «Նոր զպրօց»-ի հիմնադիր անօրէն, յայտնի մանկավարժ գաստիարակը՝ Յովհաննէս Հինդլեան, իր բազմամասնակ հեղինակութեամբ, «Մարմնամարզ» թերթի Մայիս 15-ի և յաջորդող թիւերուն մէջ ընդարձակօրէն գրած է սկաուտութեան մանկավարժական ու գաստիարակչական բարձր արժէքի և ազգային վերականգնումի ուզգոյթեամբ անոր վիճակուած կենսական ու փրկարար գերի մասին, «Պոյ սկաուտը եւ իր կեանքին նպատակը» և «Հայ պոյ սկաուտներ» խորագրուած յօդուածներով: Յարգելի ու սիրուած գաստիարակը իր յայտնած զագագիարները գործնականացուցած է իր զպրօցին մէջ, հիմնելով առաջին սկաուտական խումբը, վստահելով զայն, նախ՝ Գրիգոր Յակօբեանի, աւելի ուշ՝ Քրիսեանի:

Շատ շուտով, երկու սկաուտական նոր խումբեր ալ կազմուած են Սկիւտարի մէջ. մէկը՝ Գր. Յակօբեանի ձեռներիցութեամբ, իր գեկավարած «Հայ մարմնամարզարան»-ի անդամներէն, իսկ միւսը Գարլօ Շահինեանի միջոցաւ՝ իր հիմնած ու առաջնորդած «Հայտրդիք» մարմնամարզական ակումբի անդամներէն:


1913 տարուան Մարտ ամսուան մէջ, Սկիւտարի «Ռաֆֆի Յասաջլիմական» միութեան հրաւերով, Քրիսեան կը գաստիօնէ Սկաուտութեան մասին, սր կը յանդիկ կազմութեանը «Հայ Սկաուտիզմի Տնօրէն ժողովի մը», «յարմարագոյն և նուիրուելու արամադիր անձնաւորութիւններով», և աստամեայ հանդամանքով: Այդ նոյն հա-



Հ.Մ.Ը.Մ.ի Նոր Դպրոցի սկաուտներու խումբը կեդրոնը՝ Ա. Քրիսեան Հ. Թ. Հինդլեան, Գ. Մալաթեան եւ Ս. Քնարեան



Հ.Մ.Ը.Մ.ի վոսփորի սկաուտները



Հ.Մ.Ը.Մ.ի Սկաուտական վերին մարմին 1921, Պոլիս: Ա. շարք, ճախէն աջ՝ Ա. Յովակիմեան, Թ. Մեծատուրեան, Գ. Յակոբեան, Հ. Ճիգմէնեան, Օ. Ֆրէնկեան: Բ. շարք, ճախէն աջ՝ Ե. Տ. Աթանասեան, Պ. Պէօրէճեան, Մ. Մամուլեան, Ա. Յակոբեան, Ժ. Մինքանեան, Ն. Սեբրեան, Յ. Թոգստլեան:



Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներու բանակում՝ Մեծ Կղզիին վրայ



Սկաուտ Հայուհիներ
Armenian Girl Guide



Ս. Զատկին սկաուտները օգնարանու իրահաւաճում կը կատարեն (Պոլիս)

ւաքոյթին մէջ արուած են կարգ մը լուրջ ու պիտանի որոշումներ, սկստաական շարժումը որքան կարելի է շուտ ծաւալելու, մեծագոյն Պոլսոյ եւ, ինչո՞ւ չէ, գաւաաներու եւ բնոջ։ Հայութեան մէջ։ Ընարուած է Տնօրէն ժողով մը, կազմուած՝ արժանատի տիկիներէ եւ կրթական, հասարակական կեանքի մէջ յայտնի եւ վաստակաշատ հեռուէր անձնատրութիւններէն,— Յ. Հինգլեան, Շ. Քրիսեան, Արամ Նիկոպոսեան, Լեւոն Թաշճեան, Վահան Թէքէեան, Տոքթ. Ուզունեան, Գարլօ Շահինեան, Սարգիս Մինասեան, Մ. Մկրեան։


Այս եւ ուրիշ ոգևոր, ազգանուէր ձեռնարկներ, իրենցմէ ակնկալուած մեծ ու շինարար արդիւնքը գեռ. շատուած, խամբեցան, սկստայ կծկտեցան եւ անհետացան զժրախտարար, 1914—ին պայթած ահաուոր պատերազմով, որ հայերուս համար եղաւ այնքա՛ն ազեատարեր։ Պատերազմի 4 մահարեր տարիները եկան—անցան, հայ անօղնական ժողովուրդի բազմազարեան շքեղ կազնին արմատախիլ բրին ու նեակեցին զայն կիզիչ անապատներու անջրբղի աւաղներուն վրայ, վստահ որ՝ այդ ձեռով տրուած կ'ըլլար շտրնալու մահաովճիտը հսկայ կազնիին... Օ՛... յիմա՛ր գահիճներ... Հայոց թափած տաք արիւնով կուրցած իրենց աչքերն ու հոգիները չէին կրնար տեսնել, երեւակայել այն ներքին անապատ ու կենսատու աւիշը՝ տապալած հսկայ կազնիին, որուն երակներուն մէջ գեռ այնքա՛ն արիւն կար, որ արգէն իսկ շտրցած արմատներուն կարիք շունեցաւ, իր հսկայ ու գեղեցիկ մարմնի զանազան մասերէն թարմ ծիլեր սկսան ծլիլ, զգուշօրէն ու սճրագործին վախտվը սարստուն, բայց հեազհեաէ, շատ մը մասերու վրայ, այդ ծիլերը ծլեցան եւ շատցան, զօրացան եւ 1918—ի զինազազարին հեա նոր ու ամենաշքեղ կազնիներ դարճան։

**

Հիմա, 1918 տարուան մէջն էինք։ Հ.Մ.Ը.Մ.ը հիմնուած էր, ճաւալած եւ բաւականին ուժեղ ու պատրաստ, ստանճնելու՝ Պոլսոյ մէջ հաստատուած որբանոցներու, ազգային զպրօցներու աշակերտներուն եւ Հ.Մ.Ը.Մ.ի Պոլսոյ մէջ կազմակերպած 20—է աւելի մասնաճիւղերու սկստաական տարիքի մէջ գանուող անդամներու սկստաական զասախարակութեան պատասխանատուութիւնը։ Գիտակից ու լարուած աշխատանքի անհրաժեշտութիւնը կար, որովհետեւ այդ մեծ ու պատասխանատու գործը պատուաուոր կերպով գլուխ հանելու համար՝ բաւականին պատրաստուած առաջնորդներ շունէինք։ 1918—ը



Հ.Մ.Ը.Մ.ի Բերա-Շիշի մասնահիւղի սկաուտները դէպի «Գայլը Տաղի»
արշաւի մը ընթացքին, 29 Մայիս 1920-ին



Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներու
բանակում 1920-ին



Գատը Գիւղի Միխիթարեան
վարժարանի սկաուտներու երդման
արարողութիւնը

պատմութեան յանձնած էինք եւ 1919 նոր տարուան նոր եռանդով փոռուած : Հեղաշեւի Պոլիս վերազարձող եւ Պոլսոյ մէջ պանուսոց սքանչելի երիտասարդներու յուսալից ու խանդավառ խումբ մը ունէինք, որ սպեւորուած էր Հ.Մ.Ը.Մ.ի միութենական ու ազգային ոգիով եւ պատրաստ օգնելու եւ գործակցելու անոր՝ ամէն կերպով : Ամէն թաղի մէջ կային այդ երիտասարդներէն, եւ մեծ մասը անոնց, թրքական բանակին մէջ մարտուած, գիտակից, հայրենասնուէր ու կրթուած երիտասարդներ էին, եւ հիանալի առաջձ մը՝ աշխարհի սկզբէն սկսող առաջնորդներու, խմբապետներու : Գրեթէ բոլորն այդ արամազրեցի իրենք գիրենք սկստատական սուրբ գործին : Անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներով հրատարակուած սկստատական գիրքեր ձեռք բերուեցան եւ արուեստի իրենց՝ ուսումնասիրութեան համար : Գրիգոր Յակոբեանը, ամենատրտանաւորը եւ փաստակաւոր նախընտրածը այդ շարժումին, նշանակուեցաւ Հայ Ակադեմիայի Ազգային Ընդհ. Պետ : Գրիգոր, հպարտ ու գիտակից իր գիրքով, առաջնորդութեան եւ խմբապետութեան թեկնածու երիտասարդներուն քանի մը պատխօսութիւններ տուաւ եւ մնաց միշտ աշակերտ չսկսող անոնց բնթայքին* :

Մասնաճիւղերու մէջ սկստատութիւնը թափ էր ստացած եւ մեր փոքրիկներուն ազնիւ հետաքրքրութիւնը գրգռած : Առաջնորդները իրենց գործին ու պարտականութեան գիտակ՝ բնութեան գիրկը արշաւներ բնելու, խմբական մարտուած քալումըքի եւ այլ սկստատական մարտանքներու սկզբը կը զարգացնէին իրենց տղոց մէջ : Գոհացուցիչ էին արդիւնքները, բայց գեւ անբաւարար ու տկար :

(*) Կ'ուզեմ ուշացած յուշ մը արձանագրել այստեղ : Շուարշ Բրիսեան, 1912-ի Յունուար 15 քուակառով, «Մարմնամարզ»-ին մէջ «Տղայոց Գումարտակներ» յօդուածը գրելէն ետք, բերքին միջոցաւ իր սկստատական երդումը տուած է՝ հրաւիրելով ուրիշներ հետեւելու իր օրինակին : Այդպէսով, Պոլսոյ մէջ, հրապարակաւ սկստական երդումը առաջին անգամ է ինքը՝ նահատակ Շուարշը :

«ԲԱՐՁՐԱՑԻՐ ԲԱՐՁՐԱՑՈՒՐ»Ը ԻՆՉՊԵՍ ՍՏԵՂԾՈՒԵՑԱԽ

1919-ի զարնան եղանակն էր: «Մարմարա» ծովուն ըստը, Պուլսոյ մօտիկ «Իշխանայ Կղզիներ» կոչուող կղզեխումբի երեկոյեան շոգեհատերէն մէկուն վերի՝ բացօթեայ կամբջակին վրայ էինք: Հոն էին՝ Հայկ Ճիզմէնեան, իր քեռայրը՝ «Պէրպէրեան» վարժարանի փոխ. Տնօրէն՝ Լեւոն Թաշնեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնի կարող ու կամաւոր հաշուապահ եւ տոմարակալ՝ Գառնիկ Շէիրիկեան, «Կեդրոնական» վարժարանի եւ «Կալաթա Ալբայր» Լիսէի ուսուցչութեան ուսուցիչ՝ Պետրոս Ատրունի եւ Տիգրան հոյեան:

Այդ օրերուն մեր խօսակցութիւնները, ապրումները կը կեդրոնանային միշտ՝ Հ.Մ.Ը.Մ.ի շուրջ. — Ի՞նչ նոր բան մըն ալ ընել, որպէսզի պոլսահայութեան գուրդուրանքին առարկայ զաննայ սկսած մեր կազմակերպութիւնը աւելի՛ զօրանայ եւ օգտակար ըլլայ. ա՛յդ էր մեր մտասեւեոսմը:

Կը խօսէինք՝ Հ.Մ.Ը.Մ.ի յարմար եւ իր խնայելին արժանի նշանաբան մը գտնելու մասին: Հինէն ծանօթ նշանաբաններու կողքին նորեր կ'ըսուէին: Յանկարծ... «Բարձրացիր՝ Բարձրացուր» բառեցաւ: Ամէնքս մէկէն «Էվրէքա» բսելու պէս զարձանք ձայնին եկած կողմը, — Ատրունին էր: Նախ՝ կարծես անտարբեր, հեազհեազ մեր խանդավառ հաւանութեան զգացումներէն ազդուած, արգար զոհացումի արատայայտութիւն մը ունեցաւ: Շնորհաւորեցինք զինք ջերմօրէն:

Երեկոն հիանալի էր: Արեւմտաի սակի շղարշով մը զեղեցկացած էին Մարմարայի ջուրերը, մինչ շոգեհատը կը մօտենար Հայ Կղզի (Գնալը)ին, ուր ես կը բնակէի: Հայկը, Լեւոն Թաշնեանը կ'երթային յաջորդ կղզին (Պուրկազ), իսկ Ատրունին ու Շէհրիկեանը կ'իջնէին Մեծ կղզի: Ինձմէ զատ՝ միւսները ամառնային օգտախոսութեան համար եկած էին մեր կղզիները:

«Բարձրացիր—Բարձրացուր» նշանաբանը արագօրէն սարածուեցաւ ամէն կողմ եւ հիացում առթեց: Իր թուիչք ունեցող իմաստով մեր՝ Հ.Մ.Ը.Մ.ականներու սնորեանը բերաւ կարծես, թեւ աուա մեր ջանքերուն եւ մեր հոգիները զէպի վեր, զէպի Մասեայ բարձունքը սլացք առին:

Իսկոյն ձեռնարկուեցաւ Հ.Մ.Ը.Մ. նշանակներու ձուլման. մէկ փոքր՝ սկստաի գլխարկին համար, եւ աւելի խոշոր մը՝ գօտիին համար: Նշանակը ցոյց կու տայ Արեւը՝ որ կը բարձրանայ երկու Մասիսներու մէջտեղէն, վարը՝ Հայաստանի գետը՝ Արաքս եւ մեր նշանաբանը՝

«Բարձրացիրը» չըջանակին վերի կողմը, իսկ «Բարձրացուր»ը վարի կողմը: Գեղարուեստական ու իմաստալից, ճաշակաւոր նշանակ մը՝ զոր հպարտօրէն կը կրեն Ն.Մ. Ը.Մ. ի սկաուտները, ի սփիւոս աշխարհի:

Սկաուտական բիրեղ սգին կը ներգրաւէր մեր փոքրիկներու եւ պատանիներու հոգեկան աշխարհը, բայց արտաքնապէս շատ քիչեր, իրենց ծնողներու միջոցաւ կըրցած էին հագուել: Հագուեստ ու գլխարկ պէտք է ապսպրուէին Անգլիայէն, ինչ որ ժամանակի ու նիւթականի կը կարօտէր: Գրիգորի նախագահութեամբ կազմուած սկաուտական խորհուրդը գործնական ու «Գորթեան Հանգոյց»ային վճռականութեամբ մը, նկատի ունենալով սկաուտական գլխարկներու սղութիւնն ու ստանալու դժուարութիւնները, կ'որոշէ ամերիկեան նաւատորմի սպիտակ ու բամպակէ շինուած գոգակները ընդունիլ՝ իրրեւ հայ սկաուտներու գլխարկ: Դիւրին էր: Շուտով եւ մեծ թիւով շինուեցան այդ գոգակներէն: Որքա՛ն խելացի որոշում: Աժան էին եւ յաճախ լուսցուելու կարելիութիւնով՝ կը մնային միշտ մաքուր ու ճերմակ: Իսկ տեսքը՝ շատերու կարծիքով հիանալի էր, — շուշաններու գաշտի մը կը նմանէր այդ գլխարկներով սկաուտական խումբի մը երեւոյթը: Երանի՛ թէ այդպէս մնային միշտ, հայ սկաուտներու մաքուր սգին խորհրդանշող եւ ամէն ուրիշ սկաուտէ զանազանուող մեր ժիր փոքրիկներու խումբերը:

**

Պուսոյ գրաման բանակին զինուորական ամէնէն ուժեղ եւ աչքառու մասը Փրանսական ուժերն էին: Փրանսական ազդատօնի թուականը մօտ էր: «Ն.Մ.Ը.Մ.»ը իմաստուն գաղափար մը յղացաւ. Փրանսական տօնին սութիւ, Յուլիս 14-ին, հայ սկաուտական ստղանցքով մը մասնակցիլ հանդիսութեանց: Հիանալի մտածում մըն էր եւ սգելուրիչ:

Փութով բոլոր մասնաճիւղերուն հրահանգուեցաւ, շատ բծախնդրօրէն, սկաուտներով զբաղուիլ, ու փորձերը կեղբոնացնել կեղբոնէն զրկուած ստղանցքային ու յարակից մարդանքներու վրայ: Խմբապետները յաճախակի կապ հաստատեցին սկաուտական խորհուրդի եւ պետին հետ: Իսկոյն քանի մը զինուորական կրթութիւն ստած խմբապետներու միջոցաւ եւ շատ յաջող արդիւնքով, հրամանները զտուեցան ու հայացան: Ետուկեւ մըն է, որ յառաջ եկաւ կեղբոնի եւ մասնաճիւղերու սկաուտական մարմիններու եւ խմբապետներու միջեւ: Ամէն մասնաճիւղ, մինչեւ Յու-



Հ.Մ.Ը.Մ.Ի եւ իր սկաուտութեան
խորհրդանիշը նշանաբանը վրան



Սկաուտութեան Հայրը
Լորտ Պէյտն Փաուլը




Նշանակը



Պետրոս Աստրոնի
հեղինակը՝
Հ.Մ.Ը.Մ.Ի նշանաբանին
«Բարձրացիր-Բարձրացուր»

լիս 14-ի մօտ որոշուած թուական մը, սկսեց էր տեղեկացնէր Կեդրոնին, թէ քանի՞ սկաուտ պիտի կրնայ արամադրել սկաուտական ամբողջական տարազով եւ մեծ օրուան համար մարզուած վիճակով:

Եւ... Յուլիս 14ր եկաւ: Հագուստի չզոյութեան պատճառով՝ շատ փոքր թիւ մը, մեր որբանոցներու տղաներէն, մասնակցեցաւ տողանցքին: Վերջին ժողովին (տողանցքէն առաջ) որոշուած էր ամէն տասնեակի տասնապետին ձեռքը լուսավառ ջահ մը առլ, տողանցքը վերածելով ջահագնացութեան մը: Կեդրոնի ազդեցիկ անդամներ դիմած էին հայ մեծ վաճառատուներու, որոնք այդպէսի բաներ կը ծախէին, բայց անոնք՝ առատօրէն ու սիրալիբ կերպով չէին վարձատրած զիրենք, երախայական նկատելով ըլլալիք տողանցքը: Բայց հաւաքուածը բաւական եղաւ արդէն:



1920-ի Բ․ ողիմպիականի մարզիկներու տողանցքը

«Հ.Մ.Ը.Մ.»-ի ԱՌԱՋԻՆ «ՅԱՂԹԱԿԱՆ» ՏՈՂԱՆՑՔԸ

1919 Յուլիս 14ին, նախապէս Կեղերոնի կողմէ տըրուած հրահանգներու համաձայն, բոլոր մասնաճիւղերու սկաուտները, իրենց խմբապետներով, առաւօտեան ժամը 9-ին, ճի՛շդ 9-ին, պէտք է հաւաքուէին, Պէշիկթաշի մէջ, Կարմիր Սուլթան Համիտի (որ գահրնկեց եղած էր) պալատին՝ Երլտըզ (աստղ)ի ետեւի դաշտը, տասնեակային ու խմբական փորձերով իրենց սորված մարզանքները համադրելու եւ ընդհ. տողանցքին պատշաճեցնելու համար: Մեր սկաուտներու առաջին մէկտեղումն ու հաւաքական մարզանքն էր այս, եւ ի՛նչ հեզնանք... տեղի կ'ունենար ոճրածին «Երլտըզ»ի դաշտին վրայ...:

Հաւաքուած էին 200է աւելի հայ սկաուտներ: Մինչեւ կէսօր, բծախնդրօրէն պատրաստուած ծրագիրով մը, նախ՝ ամէն տասնեակ, յետոյ, տասնեակներու միաձեւ մարզուելէն ետք, ամբողջ խումբը մարզուած էր ու պատրաստ, հայկական զինուորական հրամաններու առաջնորդութեամբ, քալելու դէպի յառաջ:

Կէս օրուան թեթեւ ճաշէ մը ետք՝ ամբողջ խումբը ծառերու շուքերուն տակ հանգստացաւ, իր ուժերը հաւաքելու համար շուտով սկսելիք տողանցքին: Պիտի քալէին Պէշիկթաշէն վեր՝ Եիշլի եւ անկէ վար, Բերայի «Շիտակ ճամբով» դէպի Փրանսական զեապանատուն:

Կէսօրէ ետք ժամը 3ին, սկաուտապետ Գրիգոր Յակոբեանի սուլիշի հրամանով, բոլոր սկաուտները, ժիր ու ժպտուն, հաւաքուեցան եւ իրենց շարքերը կազմեցին: Հոգի պարուրող մթնոլորտ մը կար, կարգապահութեամբ շողկապուած փոքրիկ «բանակ» մը հայորդիներու, որ կարծես կը մեկնէր դէպի լուսաշող հորիզոններ, պարտականութիւն մը կատարելու՝ իր ցեղին համար, Հայութեան համար:

«Պատրաստ. քայլ յառաջ, օ՛ն»... Եւ այդ «հոգի» խումբը, կոնակը դարձուց «Երլտըզ»ին ու քալեց յառաջ: Եիշլիի բարձունքին վրայ քիչ մը հանդարտելէ յետոյ զլուխը դարձուց դէպի Փրանսական զեապանատան կողմը եւ ջահերը վառելով՝ իր անմոռանալի, վեհօրէն տպաւորիչ տողանցքը սկսաւ: Ամէնէն առջեւէն երկու ըսկաուտներ կը տանէին թարմ ծաղիկներով նաշխուն եւ Փրանսական դրօշի գոյներով (կապոյտ, ճերմակ, կարմիր) կազմուած սրտաձեւ պսակ մը: (Այդ պսակը նախորդ գիշերը կազմած էին քոյրս՝ Հայկանոյշը եւ իր ընկերուհին Հայ Կղզիի ծաղիկներով): Պսակին կը յաջորդէր սկաուտ մը, որ կը կրէր խոշոր Փրանսական դրօշ մը, որուն կ'ընկերանային երկու կողմերէն՝ երկու հայկական եռագոյն

դրօշներ, սկաուտներու կողմէ բարձրացուած: Այս գեղեցիկ ճակատին կը հետեւէին կրակոտ փողահարները, որոնք կ'առաջնորդէին 200 հոգինոց այդ խումբը: Ամէն մէկը այս սկաուտներուն, պսակակիր թէ դրօշակիր, փողահար թէ ջահակիր, տասնապետ թէ իմրապետ կամ պարզ սկաուտ կը քալէր ճակատը վեր՝ հպարտ եւ առոյգ, ճամբու եզերքին յուզումով խոնուած հայաշատ բազմութեան հիացմամբ ու զարմացումով լեցուն աչքերուն առջեւէն: Անոնք, ուրախութեան, հպարտութեան արցունքներ կը թափէին ի տես՝ այդ առոյգ ու ժպտուն «հայ բանակ»ին, որ անթերի կերպով կը քալէր ակնարկները յառած հետուն, ալեփան Մասիսներուն, որոնց սգեկան բարձրութեան ձրգտելու խորհուրդը կը պարփակէր իր սպիտակ գզակի ճակտին տեղաւորուած մեր նոր ու խորիմաստ նշանարանը՝ «Բարձրացիր — Բարձրացուր»:

Այս հոգեպարար խումբը հասաւ, վերջապէս, իր նպատակակէտին. եւ իր քալած ճամբայէն փոքրիկ շեղումով մը, երբ ուղղուեցաւ դէպի Փրանսական զեսպանատուն, երկու երիտասարդ Փրանսացի սպաներ իսկոյն վազեցին ու Փրանսական եռագոյնը եզերող երկու հայկական դրօշները իրենք կրեցին մինչեւ զեսպանատան շէնքին առջեւը: Փրանսական զեսպանը՝ Պր. Պէմփար պատշգամբին վրայ էր, շրջապատուած՝ իր առաջանիւով: Ողջոյնի ու շրնորհակալութեան գեղեցիկ ճառ մը խօսեցաւ, փայլուն խոստումներով, ի խորոց սրտի մաղթանքներ ձեւակերպելով հայ ազնիւ ժողովուրդի սպազայի նկատմամբ, եւն, եւն.: Այդ օրերուն, պաշտօնական մարդոց կողմէ այդպէսի շողջողուն ճառեր մեծ հրճուանքով եւ լաւասենչ յոյսերով կ'ունկնդրուէին: Բայց այսքան տարիներու ականջը փորձասութիւնները մեզի ստովեցուցած են արժէքը այդ խարզախեալ խոստումներուն, դժբախտարար...:

Հետաւոր թաղերէ եկող սկաուտները գիշերեցին Ս. Յարութիւն եկեղեցիին բակին մէջ, բացօթեայ, աստղազարդ երկնքի ժպտուն կամարն ունենալով իրրեւ աստուածակերտ ձեղուն:

Յաջորդ օրը, Հայկ ձիգմէճեանն ու Էս Ղալաթիոյ կամուրջը կ'երթայինք կողմերու շոյեհաւր ասնելու համար, երբ իրենց թաղը գացող երկու տասնեակ սկաուտներ եկան ու բարեւելով անցան:

— Տիգրան, կրնայի՞ր երեսակայել որ՝ գրած քանի մը տողերէդ այսպէսի գեղեցիկ արդիւնք մը յաստջ պիտի գար, — բտաւ ինձի Հայկ ձիգմէճեան:

— Հայկ, կը յուսամ ու կը զգամ թէ՛ «ծայրն Էնք ծրարոց», — եւ ջերմօրէն ժպտեցանք, մինչ սկաուտները կը հեռանային:



Պոլսոյ Միջազգային սկաուտական տողանցքին մէջ
Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները



Հ.Մ.Ը.Մ.ի սիրելի սկաուտներ,
իրեն ձեր նախագահը, կ'ուզեմ յայտնել ձեզ
ամենուր, ըլլաք խմբապետ, առաջնորդ թէ պարզ
սկաուտ, ինչ աստիճանի որ պատկանիք, ամէն
տղո՛ւ առանց բացառութեան իմ խորին գոհունա-
կութիւնս այն կարգուարքին համար, որով տեղի
ունեցաւ ձեր տողանցքը, անցեալ կիրակի, 20
Յունիս 1920-ին:

Թէ՛ Ջօր. Ուիլսոնն եւ թէ՛ ես պիտի փափա-
քեմք անշուշտ իւրաքանչիւր սկաուտի ուղղել մեր
խօսքը, բայց, ինչպէս կ'ըմբռնեմք, ժամանակը
բոլորով չէր այդ բանին:

Մինչ ձեր շարքերուն առջեւէն կ'անցնէի, Քա-
նի Քանի անգամներ փորձուցայ զատել այս կամ
այն պայծառ աչուի եւ վառվռուն սկաուտը, եւ
մինչեւ վերջ, տղայ դէմքերը դիտելով հանդիպով,
կը նշմարէի հոն ցոլացուիմ մտաւոր եւ առողջա-
բար սկաուտական կեանքի մը:

Բոլորդ ալ սկաուտական օրէնքին համաձայն
նշմարիտ սկաուտի կարգապահութիւնը ցոյց
տուիք, եւ երբ խուն բազմութեան խանդավա-
ռութիւնը տեսաք, մեզմէ իւրաքանչիւրը զգաց թէ
որքան զովելի է սկաուտներուն կատարեալ կար-
գապահութեան տիրացած ըլլալ, որով կրցաք
Թաֆսիմի մարգավայրին վրայ այդքան հոյակապ
տեսարան մը ներկայացնել:

Տողանցքը մեծ գոհունակութիւն պատճառեց
Ջօր. Հըր Էնթրի Ուիլսոնի, որ բարեհաճեցաւ
սկաուտական բարեւը առնել: Ի տես այս բանին՝
զգացի թէ իւրաքանչիւր սկաուտ որքան մեծ պա-
տիւ մը կը բերէր ինձի՝ իմ նախագահի հանգա-
մանքիս մէջ:

Ենթրիակալութիւն կը յայտնեմ ամէնուն ալ
յանուն Ջօր. Ուիլսոնի ու Տիկնոջ, եւ նաեւ իմ
անունովս, այն փառաւոր շնորհակցանքով համար
դունցումով ողջունեցիք մեզ՝ ձեր զիտարկները ձեր
գաւազաններուն վրայ բարձրացնելով:

Իմ կեանքիս ամէնէն յիշատակելի եւ հետա-
քրքրական օրերէն մէկը պիտի նկատեմ այն օրը,
երբ իմ պոլ-սկաուտներս ներկայացուցան ինձի:

Ջերդ անկեղծօրէն՝
Ի. ՔԱՍԷԼ ՄԱՐՍՈՒԷԼ

Ջօր. Մաֆսուէլի նամակը



Նոյն տողանցքէն Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներու այլ տեսարաններ

Այդ ջահակիր սողանցքը «յաղթանակի օր» մըն էր, բոլորիս համար. ամբողջ Պոլիսը սկսաւ խօսիլ ու բարձրօրէն դռվել եղածը: Այդ ջահագնացութեամբ Հ.Մ.Լ.Մ.Ր միանգամընդմիշտ փաստեց հայ ժողովուրդին, թէ ինք ԿԱՅ ու ՊԻՏԻ ՄՆԱՅ՝ իր աղնիւ հոգին կրող մարդիկներով, իր ոգեպաշա, ջինջ պաղափարականով, աննման սկաուտներով եւ բարոյական ու ազնիւ նկարագրի թելադրիչ իր «Բարձրացիր — Բարձրացուր»ով:

Մարզական արտաքինով այդ սողանցքը Հ.Մ.Լ.Մ.Ի ներքին բարոյական ոյժն ու միշտ բարձրացման կարելիութիւնները ցոյց տուող քաղաքական արժէք ներկայացնող քայլ մըն էր, որ յաջորդ օրուան հայ մամուլին մէջ, միաբերան գովեստի, գնահատանքի արժանացաւ եւ թրքահայոց Պատրիարք՝ Ջաւէն Եպիսկոպոսին խրախուսիչ, բարձր ոգիով Հ.Մ.Լ.Մ.Ի ազգային գեանի վրայ փրկարար գոյութիւնը գովարանող՝ օրհնալից նամակով մը վարձատրուեցաւ:

Պոլսահայ ազգ. կեանքի մէջ սկսուածները սիրուած ու վնասուած տարր մը եղան: Ամէն ձեռնարկ ու հանդէս սկսուածներու, իրրեւ պահակ ու կարգապահութեան հսկող, գործակցութիւնը կ'ապահովէր: Իսկ բնութեան սողալարար ծոցին մէջ այլևս յաճախակի պարձած բանակումները՝ մերձարեակ հայ բնասնիքներու սիրալիք գուրգուրանքին կ'արժանանային: Մեր սկսուածները, իրենց անբասիր բնթացքով, հայ ժողովուրդի բոլոր պատկարակներուն սիրոյն եւ հոգածութեան արժանի եղած էին արդէն:

**

Այս ոգևոր օրերուն Քէօթահայէն (Ուտինա) Պոլիս հասաւ պաղափարական ու համով հոտով բնասրութեան աէր՝ Կարօ Ուշագլեանը, որ պատերազմէն առաջ «Մարմնամարզ»ի մէջ երբեմն կը գրէր, Քէօթահայէն: Ճիշտ ասեմին հասաւ, որովհետեւ՝ որբախնամ մարմնի վարչութեան կողմէ ինձի առաջարկուած էր ստանձնել պատասխանատու Տնօրէնութիւնը որբերու կեդրոնական կայանին, որ կը գտնուէր Թաքսիմի գինուորական մարզարանին քով գտնուող եւ Հայ Կաթողիկէ համայնքին պատկանող կալուածին մէջ: Մեր անուշիկ խլիակներուն աէր ու նուրում տալու սրբազան պաշտօն մըն էր, եւ սրախ մօտիկ: Կարօ Ուշագլեան հետեւէն խանդավառուած էր Հ.Մ.Լ.Մ.Ի շարժումով եւ առաջին ասթիւ յարարերու թեան մէջ մըտաւ վարչութեան հետ: Պաշտօն ուղելու չէր եկած, բայց, ինքնարեւարար, Հ.Մ.Լ.Մ.Ի քարտուղարի պաշտօնին գլուխը դրուեցաւ, եւ շատ շուտով ուրախութեամբ բնգունեց նաեւ հրատարակուելիք Հ.Մ.Լ.Մ.Ի պաշտօնաթեր-

թիւն՝ «Հայ Սկսուտ»-ի խմբագրութիւնը: Գործ մը ունենալու համար չէր որ Կարօն իր ուսերուն վրայ առաւ այդ երկու պարտականութիւնները: Ինք՝ իր կարողութիւններով եւ շէնչող բնասրութեամբ կրնար շատ աւելի մեծ վճարումով գործ մը գտնել: Անհաստատութիւնն ծաւալած Հ.Մ.Լ.Մ.ը, իր սկսուաներով, նիւթական ծանր բեռան տակ էր: Կարօն յօժարեցաւ 30 քրֆական թղթաղրամով գոհանալ, եւ միշտ գուարթ ու կատակախօս՝ իրեն վստահուած այդ շատ կենսական գործը անարտունջ, ընդհակառակն... միշտ բարձր ու գոհունակ տրամադրութեամբ եւ արժանաւոր կերպով տանիլ մինչեւ 1922 տարին, երբ, քաղաքական աննպաստ պայմաններու բերումով, Հ.Մ.Լ.Մ.ի վարչութիւնը ստիպուած գոցեց իր գրասենեակը եւ պաշտօնապէս վերջացած յայտարարեց Հ.Մ.Լ.Մ.ի գործունէութիւնը՝ թուրքիոյ սահմաններուն մէջ:

«Հ.Մ.Լ.Մ.»-ը շատ բան կը պարտի Կարօ Ուշագլեանին:

**

Ես՝ ընդունեցի որբերու կեղը. կայանի անօրէնութիւնը, բայց միշտ կապ պահեցի Հ.Մ.Լ.Մ.ի կեդրոնին հետ, եւ Հ. Ճիզմէճեանի, Գարրլոյի եւ Գրիգորի միջոցաւ մօտէն տեղեկացայ աղի ունեցող կամ ըլլալիք ձեռնարկներուն եւ անոնցմէ ոմանց կրցայ բերել իմ մասնակցութիւնը:

Պոլսոյ մէջ, այդ տարիներուն, ամէն Կիրակի, ծանօթ կազմակերպութիւն մը, կատալարական արածնութեամբ, ամէն կողմ, իր անդամներու կամ բարեկամներու միջոցաւ Cocard մը կը հաստատէր անցող-գարձողներու լամբակներուն վրայ եւ փոխարէնը նուէր մը կը ստանար անոնցմէ, այսպէսով նշանակելի գումար մը կը հաւաքուէր իր կարիքներուն համար:

«Հ.Մ.Լ.Մ.»-ը Պոլսոյ զանազան որբանոցներէն ներս զբաժնէր իր սկսուտական մարդիչները եւ շատ խրախուսիչ արդիւնքներու հասած. բայց այդ աղեկները զեռ սկսուտական տարազ չունէին. որով՝ Կեղը. Վարչութիւնը, 1920 Ապրիլ 21ի Կիրակին, կրցաւ վերապահել իրեն՝ Cocard-արաշխութեան ի՛ր օրը:

Հիանալի՛, եւ մինչեւ այն ատեն սարքուածներէն ամենալաւ կազմակերպուածը եղաւ: Բերայի Եսայեան վարժարանն էր կեդրոնավայրը, ուր՝ տարազաւոր սկսուտներ՝ միշտ «Շոյլի վրայ», իրենց հեծելանիւններու կողքին, «Միշտ պատրաստ» կը սպասէին հեռաձայնի միջոցաւ բտացուելիք հրահանգի մը, սրպէսզի որքան կարելի է տարազ, յատկապէս Cocard-ներ հասցնէին, հրահանգը զրկող

Cocard բաշխողներուն: Այլ օր, շնորհալի հայուհի մը՝ Օր. Էդրա հի Սիրաքեանի հետ, եւ այ մասնակցեցայ զբամասնաքու թեան աշխատանքին, կզգիներ երթեւեկող շոգեհատերուն մէջ:


Օրուան նիւթական հասոյթը եղաւ 4000 թրքական թղթազրամ: Լուսպոյնն էր մինչեւ այլ օր եղած հասոյթներուն: Մեր՝ ներքնապէս սկստատացած հպարտ սրբուկներու արատքնապէս այ սկստատանալու պատահու թիւնը ձեռք անցուած էր եւ յաջողութեամբ պսակուած:

**

1920 տարուան Մայիս ամսուն, Եսայեան վարժարանի մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի պատգամաւորական ժողով եւ նոր կեդր. վարչութիւն մը ընտրուեցաւ:

Նոյն տարուան Յունիս ամսուն, Պոլսոյ զանազան ազգերու պատկանող սկստատներու եւ Հ.Մ.Ը.Մ.ի սկստատներու մասնակցութեամբ, սկստատական մեծ ցուցահանգէս մը տեղի ունեցաւ Թաֆսիմի զինուորական մարզարանի զաշտին վրայ: Իր հետեւորդներով ներկայ էր նաեւ ու մօտէն կը զննէր, միջազգային բնո՛ւ՛ սկստատական կազմակերպութեան նախագահ՝ անգլիացի զնգապետ Մաֆսուէլ:

Հայ սկստատները, իրենց ամէն կերպով աչքառու եւ կարգապահ կեցուածքին համար, մասնաւոր զնահատանքի եւ յիշատակութեան արժանացան: Եւ այ հոն էի. իմ Հայ Կղզի (Գրեալը)ի սկստատներովս:



Յուլիս 14-ի տողանցքի յաջորդ օրը Պոլսոյ հայ սկստատներու ընդհ. խումբը Շիշլիի բացերը արշաւի մը պահուն

ՔԻԱՂԸՏՀԱՆԷԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ

Պոյսէն ոչ շատ հետո Քիաղրոսանէ անունով գիւղ մը կայ: Գեղեցիկ վրտափայլ մըն է, բնութեամբ մարդագեղեցիկներու մէջէն հոսոյ գեղատափ մը, սրուն վրայ, պալատական գեղութիւններ, պերճ «Քայաֆ»ներու մէջ ծուլօրէն երկնցած՝ արեւելեան շէշտաւած մթնոլորտ մը կը ստեղծեն:

Հ.Մ.Ը.Մ.ի կեղրոնի սկաուտական վերին մարմինը, սրուն մէջ նախկին սպաներ կային, կ'որոշէ վորձել հայ սկաուտներու գանազան կարողութիւնները, զինուորական խոշոր գործողութեամբ մը:

«Քիաղրոսանէ»ն գրուելն էր նպատակակէտը: Գրելթէ բոլոր մասնաճիւղերը իրենց ուժերը գրկած էին ու բաժնուած էին «յարձակոց» և «պաշտպանոց» բանք՝ բանակներու միջև: Երկու խումբերու վերին մարմինները բաւարարած էին հրահանգներ, զոյ ու կնքուած պահարաններու մէջ և հրամայուած էր իրենց, բանալ զանոնք այսինչ կամ այնինչ ժամուոյ միայն, տեղեկանալու համար պատահելիքին և սրտելու՝ իրենց ասնելիք քայլերը:

Յարձակոց ուժի կեղրոնատեղին էր՝ գիւղին վրայ նայող բլուրի մը վրան գանուոյ պալատանման տուն մը, որ պատկանած էր նախկին հարուստ «փաշայ»ի մը: Շէնքը շրջապատուած էր երկու մարդահասակ բարձր պատով մը, որ ունէր մէկ դուռ միայն:

Օննիկ Եղգմաճեանն ու ևս սրտչեցինք, այդ գիւղեր, երբ ամէն ոք քնանայ՝ հակոյ սկաուտ պահակներու արթնութիւնը փորձել: Մեր ծրագրի մասին տեղեկացուցինք իրենց խմբապետին, որ մեր շատ ուշիմ ու գիտակից խմբապետներէն մէկն էր:

Երբ շէնքին մէջն ու շուրջը լուսթիւն տիրեց, աստիճանց գուրս ելած երկուքս՝ Օննիկն ու ևս, խոշոր պատի

երկու կողմերէն սողալով եւ շատ զգոյշ, սկսանք յառաջանալ գէպի մուտքի դուռը, որ հսկողութեան տակն էր երկու պահակներուն: Ուրիշ երկու պահակներ ալ աջալուրջ կերպով կը հսկէին պատի ետեւի մասի երկու անկիւններուն մօտ: Օննիկին եւ իմ միջեւ մեր սրուած բարակ սուլոցի ազդանշանը բաւական ատեն շարունակուեցաւ, ապահովցընելով մեզ թէ՛ գեռ չենք ձերբակալուած: Այդ գիշերուան պահակութիւն ընուլը, Վոսփորի մեր լաւ պատրաստուած մասնաճիւղն էր, որոնց մէկ խմբակը այդ ժամուն պահակն էր եւ այդ խմբակի ընտրած կենդանին՝ «Տօւտ-Վ»-ը՝ էջն էր: Եւ յանկարծ... Օննիկի հետ իմ նշանային հազորդակցութիւնս կարուեցաւ, երբ այդ գեղեցիկ գիշերուան խաղաղ լուսթիւնը պատաս-պատաս եղաւ իշու լիաթոք զոսցով մը, որ ոչ միայն շէնքին մէջ քնացողները, այլեւ՝ բլուրին սասորտը գանուող Քիաղըտհանէի ամբողջ բնակչութիւնը քունէն սարսափահար արթնցուց: Խնդուքս հազու զսպեցի եւ ստքի ելլելով գացի մուտքի դուռը, ուր երկու պահակ սկսուաները, հպարտօրէն կը յանձնէին իրենց «Որս»-ը խմբապետին, որ ժպիտն երեսին՝ գովասանքի քանի մը բառով վարձաարեց իր «Արթուն պահակ» սկաուտները:

Յաջորդ օրը, սրուեալ ժամուն, յարձակումը սկսաւ եւ շատ շուտով գրատուեցաւ Քիաղըտհանէն, որուն գրեթէ ամբողջութեամբ թուրք բնակչութիւնը ապշահար կը զիտէր այդ սարօրինակ փոքրիկ «բանակ»ին «յաղթական» տոգանցքը, մինչ օգր կը թնդար «Չմեռն անցկացաւ գարուն է արդէն» եւ... «Հուստա, հուստա, Անդրանիկի սուրը շողշողայ» մարտական երգերով: (Այս վերջինը Նժդեհի ձօնուած երգն է, որ Անդրանիկի անունով կ'երգէին):

Այս անմտտանալի եւ նոր փորձ մը եղող արշաւանքը յաջողութիւն մըն էր ամէն կերպով:



Քիաղըտհանէի պաշարողական փորձէն նկարներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՆՁԸ «Հ.Մ.Ը.Մ.»ԻՆ

Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհի կարճ ժամանակի ընթացքին յաջող կերպով յատաճացուցած աննախընթաց շարժումը հայ նոր սերունդի հոգիներուն մէջ, և մարդական ու սկստատական ասողջ գոտախորակու թեամբ մը մաքուր ու անխարզախ նկարագրի աէր հայեր պատրաստելու իր իտէալը՝ արդէն իսկ արձագանգ գտած էին նորաստեղծ հայ հանրասպետութեան մէջ: Հայաստանի կրթական նախարարութիւնը պաշտօնապէս հազարակցած էր Հ.Մ.Ը.Մ.ի կեդր. վարչութեան հետ և խնդրած, որ Փիզիքական դաստիարակութեան և սկստախորհի պատրաստումը մասնագէտներ ուղարկուին Հայաստան, հայրենիքի զարթոյններուն մէջ մարմնակրթութեան կիրարկման հակելու և Հայաստանի մատուց սերունդը սկստատական ուղղութեամբ կազմակերպելու:

Երևանի կոտախորհութեան այս զիմումը՝ ամէնէն մեծ և հպարտացուցիչ վարձատրութիւնն էր Հ.Մ.Ը.Մ.ի համար: Իր լուսաշող հորիզոնը կ'ընդլայնէր մինչև լուսապսակ գագաթը ալեփառ Մասիսի, և նորագոտ հայրենիքի վերելքին օգնելու սրբազան պարտականութեան կը հրաւիրուէր:

Եօթը հոգինոց ցանկ մը կ'ընկերանար պաշտօնական նամակին, որուն մէջ կար Վահան Զերազի և իմ անունը:

Ի դէպ՝ ըսեմ, որ Զերազ, 1914ին, Փարիզէն գնաց Հայաստան, միանալու հայ կամաւորական բանակին, և մինչև 1918, հայրենիքի ազատագրման համար ախպար ու նուիրեալ կամաւոր զինուորի պարտականութիւնները լիովին կատարած, 1919ին վերադարձաւ Պոլիս, և յետպատերազմեան Ազգ. կեանքի թոհ ու բոհին մէջ զինք ամէնէն աւելի ոգեւորողն ու մխիթարողը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ը, որուն ամենահարազատ ունիւրաներէն մէկն էր եղած, իր նախապատերազմեայ օրինակելի գործունէութեամբ:

Հայ հանրապետութեան վերոյիշեալ հրահրին՝ Չե-
րազ առաջին ու խանդավառ թեկնածուն եղաւ, որուն նոյն
խանդավառութեամբ անմիջապէս հետեւեցայ՝ եւ, իր ձեռ-
նասունն ու սիրած Տիգրանը: Յանկի անուններու միւս հինգ
հոգիները, անձնական կամ բնասանկան կարեւոր պատ-
ճասներով, մնացին լուս: Օննիկ Եղաժաճեանի անունը
չկար: Սամաթիոյ մասնաճիւղէն էր եւ տակաւին իր վրայ
ուշադրութիւն դարձնող գործ մը չէր բրած. բայց, Հ.Մ.
Ը.Մ.ի սղիմպիականին, իր մարզած երկու տասնեակ փոք-
րիկներով չափական մարզանքի յաջող ցուցադրութիւնը
զնահատուած էր: Այս պարագային անակնկալօրէն իր կա-
մաւոր թեկնածութիւնը դրաւ եւ բնգունուեցաւ. որով՝
Վահան Չերազ, Օննիկ Եղաժաճեան եւ Տիգրան Խոյսեան
կազմեցին այն առաքելութիւնը, որ նորանկախ Հայաստա-
նի նոր սերունդի մարմնամարզա-սկսուտական կեանքը
պիտի կազմակերպէր:

Հայ հանրապետութեան կողմէ Ալիքսանդր Խատիս-
եան ուղարկուած էր արտասահման, հայկական գաղութ-
ներու մէջ Հայ Բանակի ի նպատակ հանդանակութիւն մը բ-
նելու: Իր այս առաքելութիւնը գլուխ հանելու բնթացքին,
իր համոզիչ ու կուս բանախօսութիւններով, ան հաստաք ու
սէր կ'արժարձէր զէպի նորագաւ հայրենիքը: 1920 Յուլիս
3-ին, սփանչելի բանախօսութիւն մը բրաւ, Բերայի «Սիլ-
լօղոս» սրահին մէջ, որ՝ ինչպէս ժողովուրդը կ'ըսէ, այն-
քան ժողովուրդ կեցած էր որ՝ «Ասեղ ձգելիք տեղ չկար»:

Ա. Խատիսեան շատ ուղիղ էր ու անկեղծ: Երբեք չը-
փորձեց ծածկել զրոյթիւնը հայրենիքէն ներս: Պարզեց
սրտբացօրէն՝ ամէն նկույթիւն: «Դո՛ւ՛ք, բաւ, — այստեղ
պետական ամէն յարմարութիւն ունիք աւելի քան մե՛նք
եւ... շփեղօրէն, մի՛նչեւ համագգեստաւոր նուագախումբ
(Քնար Փանֆաւ) եւ պատշափօրէն հագուած ու մարգուած
փոքրիկ աշխոյժ սկաւտ — զինուորներ»: Արձագանգ ըլ-
լալով Հայաստանի կառավարութեան Կոչին, հրահրեց
Պոլսոյ զանազան կազմակերպութիւնները (բժշկական, զե-
ղագործական, Հայ Սպայից, եւն. եւն.) նուիրեալներ
զրկել հայրենիք եւ օգնել հայրենիքի ներքին բազմաթիւ
դժուարութեանց վերացման: «Հայաստան պէտք ունի ամէն
տեսակի եւ ամէն աստիճանի օգնութեան», եւ աւելցուց.
«Անոնք՝ որոնք պիտի երթան հայրենիք, պէտք չէ ակնկա-
լեն նոյն ու հանգստաւէտ ապրելակերպ ունենալ այնտեղ:
Պիտի երթան միայն նուիրումի զգացումով եւ իրենց գըլ-
խաւոր վարձատրութիւնը պիտի ըլլայ՝ Հայաստանի անը-
ման օգն ու ջուրը վայելել ու նորագաւ հայրենիքի վերել-
քին օգնած ըլլալու զգացումով երջանկանալը»:



Նիկոլ Աղբալեան, գրական մեծ
 քննադատ, Հայաստանի կրթական
 նախարար եւ Համալսարանի
 Հիմնադիր



ՀԱՅ ՍԿԱՌԻՏ

Հ. Մ. Ր. Մ.

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

Պ. ՏՈՒՆ, ԹԻՒ 1 — 25 ՀՈԿՏՄԲԵՐ 1919

ՈՂՈՒՅՈՒ ԲՈՉ ԱԵՒ ԱՐԱՍԻ
 ԿՈՐՈՒԷՐՈՒ ԿՈՐՈՒՄ ՏԵՅԵԱՐԱՆԻ
 ՈՂՈՒՅՈՒ ԲՈՉ
 ԱԵՏԵՐԱՆՈՒՆԻՉ ԲԵՆԵՔԵՐՈՒԿ
 ՎՅՅՈՒՄԻՆՈՐԵՒ



ԽՈՒՆՎԱԾՈՒԹՅԱՆ Գ. ԱՐՁԱՐՅԱՆ

«Հայ Սկաուտ»ի Ա. Թիւի կողմից

ՀԱՅ ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒՄ

28 Մայիս 920

Հայ Հանրապետութեան Տարեւոյնն է այսօր: Ուրախ եւ հպարտ է ամէն Հայ. դարերու երազուածը իրականութիւն մըն է հիմայ եւ ՀԱՅԱՍՏԱՆ ՄԸ ՈՒՆԻՆՔ:

Սակայն ամէն այս տեսակի արտայայտութիւննեկ պարտականութեան գիտակցութիւն մը կ'ենթադրեն:

Հայը այսօր աշխարհի ազգերուն առջեւ պարտականութիւն մը կը ստանձնէ, պատասխանատուութիւն մը յանձն կ'առնէ, կազմել հայրենիք մը եւ բարգաւաճեցնել զայն:

Ազգը այս յանձնատուութիւնը կ'ընէ ուժի մը վրա վստահելով, եւ այդ ուժը այդ վստահութեան յենարան դուն ես Հայ պատանի: Դուն լաւ գիտցիր պարտականութիւնդ:

Հայը հաւածական ու յողմած, Հայաստանը աւերաւ ու ամայի կը սպասեն քեզի, քու բազուկներուդ:

Դարերէ ի վեր կը մաքառի ցեղը, կը դիմադրէ փոթորիկներու, եւ տակաւին այսօր ան պատնէշին վրայ: Երբ արշալոյսը կը ծագի, որովհետեւ թշնամիներու շրջապատուած է մեր հայրենիքը, եւ քու երէց եղբայրներդ կը հսկեն հոն՝ պատնէշին վրայ:

Վազը, ինչ կ'ըսեմ, այսօր, այսօր իսկ կը լսեն հայրենահրաւէր փողը, մեզի է այս հրաւէրը, մանաւանդ քեզի, հայ սկաուտ պատանի:

Պիտի սկսի հայրենաշէն շախատանքը եւ դուն երբ սոք պիտի դնես հայրենիքիդ հողին վրայ, հոն անմիջապէս այդ տեղէն, քու երէց եղբայրներուդ կողքի պիտի սկսիս ստեղծագործող, շէնցնող շախատանքի Ոտքերուդ առջեւ ցեղիդ ոսկորները, անոր քանդուած օճախներուն աւերակոյտերը պիտի տեսնես, գերեզման տպաւորութիւն պիտի թողու քու վրադ այդ տեսարանը:

Պիտի չը յուսահատիս, պիտի սկսիս մէկ կողմ գետեղել այդ նուիրական փշուրները, եւ անոնց տեղ պիտի դնես կեանքի դրօշմը:

Այո՛, ամայութիւն կը տիրէ հոն, դուն քու երգովդ պիտի ողբերես այդ ամայութիւնը:

Աւերակ է այդ երկիրը, դուն քու բազուկներովդ պիտի կերտես անոր աւերակ գիւղերն ու քաղաքները Ամլացած են դաշտերն ու պարտէզները, դուն արշասարբը պիտի դարձնես զանոնք, քու ջրտինջովդ:

Քեզի կը սպասեն Հայն ու Հայաստանը:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ «ՀԱՅ ՍԿԱՌԻՏ»Ի

Այս վստահութիւն յառաջացնող անխարզախ բանախօսութենէն քանի մը օր ետք, Պր. Ստախսեան հրաւիրուած էր Գնալը կղզի, յայտնի փաստարան՝ Պր. Հմայեակ Խոսրովեանի իրբեւ հիւր:

Պատմական օր մըն էր այդ փոքրիկ, հայաշունչ կղզիին համար: Ամբողջ կղզին ոտքի էր եւ յուզումով կը ըսպասէր Մեծ հիւրին, աչքը յաւած՝ Պոլսէն կղզի եկող ամէն մէկ նաու: Եւ ահա, երեւցաւ Ֆրանսական «Union» ապահովարական ընկերութեան անօրէն, հայազգի Գայսէրլեանի սպիտակ, գեղեցիկ գրօսանար, որ սիրով տրամադրուած էր Ստախսեանի այս ճամբորդութեան: Մինչ, կղզիի փոքրիկ նաւամատոյցին վրայ, ընդունելութեան յանձնախումբ մը եւ Գնալըյի իմ սկաուաներս «Բարի եկաք»ի պաշտօնական ձեւակերպութիւններով էին զբաղած, քիչ անկին՝ մեծ նաւամատոյցին մօտեցած կղզիներու շոգենաւէն զուրս կ'ելլէր, Պոլսէն մասնաւորաբար հրաւիրուած «Քնար Փանֆաս»ը, որ իր նուազածուններու պերճ ու գեղատեսիլ համազգեստներով տպաւորիչ էր: Զինուորական կատարեալ քալուածքով ու բոլոր հայ սիրտերուն մէջ ուրախութեան սարսուռ մը ստեղծող նուազածութեամբ անհասաւ Ա. Ստախսեանն ու իր շնորհալի կիներ պառնուասիրող բազմութեան, եւ խմբական անթերի շրջան մը բնելով՝ անցաւ գլուխը Ստախսեանի թափօրին, եւ զուարթ ու եռանդուն նուազածութեամբ առաջնորդեց նորապատ Հայաստանի առաջին արտաքին գործոց նախարարն ու իր պատուոյ թափօրը՝ Պր. Հմայեակ Խոսրովեանի բնակարանը, որու դրան առջեւ մեր մեծ փաստարանը, իր բնասնիքով, ժրպտազէմ կը սպասէր իր մեծայարգ հիւրին:

Ընչոք ասնր զիմաց, փոզոցին միւս կողմը, Գնալըյի սկաուաները փոքրիկ վրան մըն էին հաստատած, հոն գլխերկու եւ ասն վրայ հսկելու համար: Ընթրիքէն յետոյ, Ստախսեանի եւ Տիկնոջ փափաքով, առաջնորդեցի գլխենք վրանին մօտ, ուր սկաուաները իրենց առանապետի հրամաններով՝ պատշաճ յարգանքը տուին բարձրապատիւ հիւրերուն, եւ անոնց հետաքրքիր հարցումներուն զոհացում: Այդ այցելութեան առթիւ էր որ, բնթրիքէն ետք, Պր. Խոսրովեանի բնակարանը հասաքուած հիւրերուն հետ խօսակցութեանց բնթացքին, ակեկականալով կղզիի ժողովուրդի ջախջախիչ մեծամասնութեամբ հայեր բլլալուն, կատարով մը բտաւ թէ՛ «Ուրեմն, նախագահ Ուիլսընի 14 կէտերով ծրագրի համաձայն, կրնանք պահանջել որ այս կղզին մաս կազմէ Հայաստանի, եւ ես կ'անուանեմ զայն Հայ Կղզի:

Հ.Մ.Ը.Մ.ի Հայ Կողմի (Գնալը)
(X-րդ մասնաճիւղ) սկսում են ծո-
վեցերեայ իրենց մարզարանին մէջ
(1920):

Աջ ծայրը՝ խմբապետ Տիգրան
Խոյեան, որ հետեւեալը կը վկա-
յէ։ —

«Հ.Մ.Ը.Մ.—Գնալը մասնաճիւղի-
նը եղող այդ դրօշակը, որուն գոյ-
ներն են կարմիր եւ սեւ, իսկ
Հ.Մ.Ը.Մ.ի նշանակը ներմակ, նոյն
այն դրօշակն է, որ Հանրապետու-
թեան հրաւերին ի պատասխան Պոլ-
սէն Երեւան գացած մարզա-սկսու-
տական առաքելութիւնը (Վ. Զե-
րագ, Տ. Խոյեան, Օ. Եագմա-
նեան) Հ.Մ.Ը.Մ.ի կեդր. վարչու-
թեան հաւանութեամբ տարաւ հայ-
րենիք եւ Հայաստանի Հ.Մ.Ը.Մ.ի
առաջին դրօշակը ըրաւ։

1974-ին, երբ Հայաստան այցելե-
ցի, գգուշօրէն հետաքրքրուեցայ 54
տարի առաջ հայրենիք տարած մեր
այդ դրօշակովն ու այլ գոյփերովը,
բայց շատ բնականօրէն ունէ հետք
չգտայ»։



Հ.Մ.Ը.Մ.ի Բ. Եւ վերջին պատգամաւորական ժողովը Պոլսոյ մէջ

Ահա թէ Ե՞րբ, ո՞ւր և ինչպէ՞ս մեր Գնայր կողին բաժնացաւ իր նոր ու հաճելի անունը՝ Հայ Կղզի: Յ. Ճ. Սիրունին, որ Խատիսեան գոյգր ստաջնորդած էր Պոսէն Հայ Կղզի, հրատարակաւ ծանօթացուց զիս Տէր և Տիկ. Խատիսեաններուն և յայտնեց թէ շուտով, 10 օրէն, Հայ Կղզիի սկաուտ խմբապետը երկու բնկերներով կը մեկնի Հայաստան, սկաուտական աշխուական ոգիով պատուաստելու համար հայրենիքի մեր նոր սերունդը:

1920 ՅՈՒԼԻՍ 26ին, Ձերագր, Օննիկն ու Ես մեկնեցանք զէպի Հայաստան:

Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Դիւանագիտական Միասնային

Հ. Հ. ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍԻ

№ 145/1789

Ապրիլ 1920 Ք.

ԵՐԵՒԱՆ

Ի լրումն Մինիստր Ադրալեանի հեռագրի որով խնդրում է երկու մասնագէտ սկաուտ պետեր յղել Երեւան, պատիւ ունիմ տեղեկացնելու ու Մինիստրութեան ծրագիրն է Հայաստանի մէջ ամենալայն չափով տարածել սկաուտութիւնը, բայց դրան արգելք է հանդիսանում հմուտ մասնագէտների բացակայութիւնը: Ուստի եթէ տակաւին չէք դրկած մարզիչներ, խնդրում եմ բարեհաճէք առանց յաղապելու կատարել Պ. Մինիստրի խնդիրքը, որովհետեւ ժամանակն անցնում է եւ կարիքը ահագին է:

Հանրային Կրթութեան և Արուեստի Մինիստրութեան
Բժշկա-առողջապահական բաժնի Վարիչ
ԲԺԻՇԿ. Վ. ԱՐՄՐՈՒՆԻ

Հայաստանի Կրթ. նախարարութեան
նամակը Հ.Մ.Ը.Մ.ին

Դ Ե Պ Ի Ե Ր Կ Ի Ր

26 Յուլիսին Պոլսէն Հայաստան մեկնեցան երեք սկսուտական մարզիչներ — երեք ուխտաւորներ եւս — սկսուտական Հայրենաշէն դործը հոն եւս տարածելու համար:

Ոգեւորութիւնը եւ լաւատեսութիւնը զլիաւոր պալկաժներն էին մեր երիտասարդ ընկերներուն: Անոնք գիտակ էին իրենց դէմ ելլելիք խոչընդոտներուն եւ սակայն ոյժ կը զգային անոնց դիմադրելու:

Վերջապէս պէտք էր երթալ եւ դիմադրել ամէն դժուարութեան քանի որ մերն է Հայրենիքը եւ մերը պիտի ըլլայ հոն ցանուած ամէն սերմի արդիւնքը: Դիւրին թէ դժուար, այս երկուքին տարբերութիւնը կը ջնջուի, կամքի ոյժով եւ այս ոյժը ունին մեր տղաքը:

Քարափին վրայ ողջերթի մասնակցող իրենց սահմանափակ թիւով ընկերները եւ ծնողական շրջանակը ոգեւորութեան եւ եռանդի մթնոլորտ մը ստեղծած էին նաւին շուրջ որուն վերնայարկի անկիւնը Հայ դբօշին մօտ կը ծածանէր Հ.Մ.Ը.Մ.ի դբօշը, որ կ'երթար իր ծփանքներովը մեղմացնել Հայրենի ցաւերէն իրեն բա-

ժին ինկած մասը:

Ան կ'երթար ծփալ քառասուն հազար որբերու, — քառասուն հազար կորիւններու — Հայրենաշէն ձեռքերուն մէջ. կ'երթար ան հովանաւորել ցեղին կորովը տեւականութիւնը, անյաղթելիութիւնը, ոգեկոչելու Վահանգններու, Վարազդատներու եւ Սասունցի Գաւիթներու դարերը:

Մեր ընկերները գիտակ էին ասոր եւ դժուարութիւնները աւելի պիտի խթանէին իրենց կամքն ու կորովը, անոնք չէին կրնար մեղկութեան եւ անճրկումի ցեխին մէջ թաթխել այդ դբօշը, որ կը ծածանի այսօր Հայ յաղթաբազուկ երիտասարդութեան ափերուն մէջ վերամբարձ: Այդ դբօշը, որ հաշտարար լիազօրն է մայր բնութեան անյաղթ բարոյականի եւ մարդկային Ֆիզիքա-բարոյական անկումի միջեւ:

Մենք վստահ ենք մեր ընկերներուն վրայ, մեր հաստքը իրենց հետ է ինչպէս մեր ոյժերուն մեծ մասը:

Երթա՛ք բարով տղա՛ք, յոյսերնիդ պատկուի. Վահագնի ոգին ձեզ զօրավիզ:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ «ՀԱՅ ՍԿԱՌԻՏ»Ի ՕԳՈՍՏՈՍ, 1920




Հ.Մ.Ը.Մ.ի 20-րդ Մասնաճիւղի Արմաշի սկսուտները, որոնք Հայաստան գացին՝ գիւղատնտեսութիւն ուսանելու եւ ծառայելու հայրենիքին

Բ.

Հ. Մ. Ը. Մ.

ՆՈՐԱՍՏԵՂԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ



Պոլսէն Հայաստան մեկնող Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնը նաւուն վրայ (26 Յուլիս 1920), *Վահան Չերազ*, կեդրոնը, *Օննիկ Եպիֆանեան*, գանգին կողմը, *Տիգրան Խոյեան*, սկտ. տարագով, դրօշակը բռնած :

ՄԵՐ ՀԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Երկու շաբթի, Յուլիս 26, 1920, ժամը երկու քուկէսին, Ֆրանսական Semiramis շոգենարը բաժնուկցու Պոլսոյ Ղալաթիոյ քարափէն: Սիրազեց բաժանում մըն էր: Քարափին վրայ խոնուած բազմութեան մէջ էին, — Վահան Չերազի հայրը՝ փաստարան Գասպար Չերազ, իր եղբայրը՝ Լեւոն, իմ ծնոցքս ու մերինները, բազմաթիւ սրացու բարեկամներ, Հ.Մ.Ը.Մ.ական եղբայրներ եւ Կեղը. Վարչութեան անդամներ՝ Գրիգոր Յակոբեան, Հայկ Ճիզմէճեան, Գարլո Շահինեան ու քարատուար՝ Կարօ Ուշաքիան, որոնք արդէն Շարաթ օրը, Կեղրոնի գրասենեակին մէջ, ամենաջերմ ու անմոտանայի «Ողջերթ» մը պարզեցեցին մեզի, եւ անման Կարօն, լեւնազնացնէրու պեղեցիկ գաւազան մը նուիրեց ինձի, որպէսզի... Մասին ի վեր բարձրանալու իմ «Երազ-փափաքս» իրականացնեմ...:

Ժամը չորսուկէսին, հազիւ, Պոլսոյ նաւահանդիսաէն զանդազօրէն հեռացանք, մեզի Բարի ֆաւուրարի մազթոյ սիրելի բազմութեան մը կանչերն ու օդին մէջ շարժոյ բազմաթիւ ճերմակ թաշկինակներու տեսքը մեր հոգիներուն մէջ:

Մայր բնութեան հարազատ գաւակ՝ Չերազը, Օննիկն ու եւ շոգենարին ցտուկին կողմը տեղաւորուեցանք, մեր պայտասակներով:

Գեղեցիկ յանուակ գիշեր մը ունինք, բացօթեայ բանակում մըն է անքուն՝ բայց հաճելի: Վերջին քանի մը օրերու յարուած մթնոլորտը, ճամբորդութեան համար հազճեց պատրաստութիւնները եւ ազատ Հայաստանի կոչին արժանի եղած ըլլալու մտածումը՝ հոգեկան բարձր ու անհանգարտ արամազրութիւն մը ստեղծած էին, եւ քունը վանած աչքերէս: Ամէն ինչ որ պատահած էր՝ կը վերլուծէի այդ գիշեր: Օրինակ. սնտուկս պատրաստած ատենս՝ Վահան Չերազը մօտս էր. տեսաւ որ ձեռք մը հազուտա եւ ամառուան յարդէ գլխարկ մը տեղաւորեցի գոյքերուս կողքին: Իրեն յատուկ ախորժալուր խնդուքով մը՝ «Տիգօ, այդ յարդէ գլխարկը «զանիթ» (կը գրուեն) կ'ընեն ու ձիւրուն իրբեւ կեր կու տան» ըսաւ: Տարի մը ասաջ Հայաստանէն վերադարձած էր Պոլիս եւ հայրենիքի ազատ պայմաններուն ծանօթ էր, բայց եւ այնպէս գլխարկս ձեռքի սնտուկիս մէջ, հոգ չէ թէ Հայաստանի ձիւրուն կեր ըլլալու համար...: Լայն ժպիտ մը պծուեցաւ հոգուս մէջ, որ սակայն մթազնեցաւ իսկոյն տխուր յուշով մը. միտքս եկաւ այն

վայրկեանը, կզղիի շողենաւին կամըջակին վրայ, Շարաթ գիշեր, երբ քնքուշ հայուհի մը՝ Էմմա Ասատուր (Հրանդ ու Ջապէլ Ասատուրներու աղջիկը) անկեղծ արցունքներ թափելով կը նախանձէր իմ ստանձնած առաքելութեանս, եւ՝ . . . «Իսկ ի՞նչ եմ ես, ազատ հայրենիքի անձանօթ մը եւ իրեն օգնելու անկարող մը, Սիւլի-ի անարժան ու անպէտք աղջիկը . . . որքա՛ն ուրախ եմ քեզի համար, բայց . . . կը նախանձիմ . . . » կ'ըսէր ու կ'արտասուէր: Եւ զեռ առաքելատիպ հայրս՝ Վահան Քհնյ. Խոյեան եւ գորովագութ մայրս, որոնք խոստացան փոխադրուիլ նորագատ հայրենիք, երբ «Սրբազան կոչ»ը ընեմ իրենց, եւ ընտանիքի միւս անդամները, ու՝ աղուսը սկսուաներս . . . Բոլորին ալ մեծ «Մնաք բարով» մը ըսի հոգիէս ու դարձայ զէպի Արեւելք, ըմբռնելու համար առաւօտեան արշալոյսի զմայլելի երանդները, Մայր Հայաստանի ազատ վրձինով զծուած, որուն լուսապայծառ հորիզոնին եւ էութեան երկրպագելու կ'երթայինք երեք ուխտաւորներս՝ Վահանը, Օննիկն ու ես:

Յաջորդ օրը՝ Յուլիս 27, 1920, կամըջակի ընդարձակ մասերուն մէջ գննական պատշա մը ընելէ ետք, որոշեցինք փոխադրուիլ շողենաւին միւս ծայրը, դրօշակին մօտ, բարձր մասի մը վրայ: Հոն շատ աւելի ստանձնացած եղանք եւ զոհացած, քիչ մը աւելի պատսպարուած՝ բաւական ուժեղ վշտով Սեւ ծովեան հովէն, որ հեղահեղ ալեկոծեց միտպոյն ջուրերու անձայրածիր տարածութիւնը, ի մեծ հաճոյք՝ Չերազին ու ինծի (Վիզ եւ Տիզ), իրրեւ ծովու ամէն մէկ քմահաճոյքին ծանօթ ու ծովային կեանքի վարժ եղսպներս:

Երեկոյեան ժամը 6-ին ինկպոլու ենք: Ժամը 9-ին կը մեկնինք եւ յաջորդ օրը Սաւսունի նաւահանգիստն ենք: Հովր հանդարտած է ու ծովն ալ խոցող: Ժամը 7-ին Օրտու ենք: Հայ եւ յոյն ճամբորդներ, որ Օրտուի քարափը պիտի իջնէին, զինազարդէն երկուքէս տարի ետք, վախոցան իրենց հեռ բերած պոլսական թերթեր նաւէն դուրս հանելու, սրովհեան այս քաղաքները, բոլորն ալ, Մասթաֆա Քէմարական էին, եւ ոչ խոյամ՝ փոքր թիւով տարրը սեւական սպանալիքի տակ կը գոնուէր:

Ժամը 9-ին կը մեկնինք ու 12-ին կը հասնինք Կիրասուն, մեծ ու գեղեցիկ նաւահանգիստը: Հանգարտ ծովը այնքան հրապուրիչ է, որ Վ. Չերազի հեռ նաւէն ծով մտանք, կամըջակէն ցտակելով: Առաջին անդամն էր որ՝ ես այդպէսի բարձրութենէ մը ծով կը նետուէի: Օ՛ր ջուրը գով էր ու կազուարիչ. օ՛ր ի՞նչ Բէյք էր: Ծովէն նաւելլու համար օգտուեցանք նաւուն քովէն կախուած շուա-

 <p>ՀԱՅ ՄԱՐՄԱՆԱԿՐԱԿԱՆ ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ</p>		<p>ՀԱՅ ՍՐՈՒՂՆԵՐ ՀԻՄՆՈՒՄ 1918</p>	
Մարմնակ	Կոմիտե		
Անուն	Արթուր		
Թուսական Մեկնական			
Կ Գոյն			
Ի Գիւն		<p>ՀԱՅ ՍՐՈՒՂ</p> <p>Խումբ Խմբակ Բնակավայր</p> <p>Ստորագրեմ Խմբակագիր</p> <p>26 1920</p>	
ՄԱՍՆԱԿՆԻՒՄ ԿԱՐՏՈՒԹՅԱՆ	19		

Հ. Մ. Բ. Մ. ի անգլամա-
տարը, գոր ծոցը դրամ
եղբ. Տիգրանի հոյեան մտաւ
Հ.ս.ստանի:

Եւսեա զարգացման անհատներ

- Հարկեր զարգացման
1. - Ընտանեկան զարգացման և ընտանեկան
հարկերի հարկերի և ընտանեկան հարկերի
 2. - 4 բնակչի, 4 սեռական և 4 կան հարկ
 3. - 12 բնակչի, 12 բնակչի կան, և 4 բնակչի հարկ
 4. - 4 կան 25 սիրուց կան
 5. - 4 կան սիրուց կան
 6. - Կարգի հարկ 4 կան
 7. - Կարգի, արտադրողի, արտադրողի, արտադրողի, արտադրողի, արտադրողի
 8. - Կարգի 8 բնակչի և 2 զ. հարկ, արտադրողի արտադրողի և 2 զ. հարկ, արտադրողի և 2 զ. հարկ
 9. - Կարգի 1 կան 4 կան
 10. - 4-5 կան անհիմնական հարկերի զարգացման
 11. - անհիմնական հարկերի հարկերի հարկերի հարկերի հարկերի հարկերի
 12. - Կան 4 կան, 4 կան հարկերի 4 կան
 13. - Կան 4 կան, 4 կան հարկերի
 14. - Կան 4 կան, 4 կան հարկերի հարկերի հարկերի հարկերի հարկերի
 15. - Կան 4 կան, 4 կան հարկերի հարկերի հարկերի հարկերի հարկերի
 16. - Կան 4 կան, 4 կան հարկերի հարկերի հարկերի հարկերի հարկերի
 17. - Կան 4 կան, 4 կան հարկերի հարկերի հարկերի հարկերի հարկերի



Եղևիկ Եղևիկ
Քաջունի եղբայրները, որոնք
արդեն Հայաստան կը գտնուէին:

Հետեւինք ներսան տարուած գոյներու
գտնելը:

նէ Ելարանէն, որուն վրայ բարձրանալու համար լազի նստակէն (թակքա) անցանք ու նստակը թրջեցինք: Երկրորդ անգամուն, կարճամիտ ու առելու թեամբ սնած նստալարը իր նստը հետացուց Ելարանէն՝ մեզ ծովուն մէջ անօդանական ձգելու մտօք: Բայց իր շորքոտանիական արարքին մէջ զոհանալու ստիժէն զրկեցինք զինք, որովհետեւ Վիլին հեռ, իրը սկառուներ, շատ զխրին կերպով, իրարու օղնեցինք ու մազլեցանք սանդուխն ի վեր. յիմար «հայրենասէր» լազին շուարած արտայայտութեան տակ, որուն ի տես՝ Չերազ իրեն յատուկ ծիծաղը պատթկացուց:

Այսօրուան ծովու լողանքը, և մինչև այս օր, ամէն օր, մեր ունեցած դաստիարակիչ խօսակցութիւններով համեմատած մթնոլորտը սքանչելի արամաղբութիւն մը յատաջացուցին մեր մէջ. երջանիկ էինք:

Ժամը 2-ին մեկնեցանք դէպի Տրապիզոն:

Նստուն մէջ, մեր քովը, Պաթում գացող հայ ճամբորդներ ունէինք. Թագուր Յովհաննէսեան անունով Իզմիրցի երիտասարդ մը, որ թրքական բանակի նախկին ըսպայ մը եղած էր և հայաստան կ'երթար Հայկական Բանակին միանալու: Թեթևարարոյ անձնասրտութիւն մը: Կոստանդին Եղիկեան, Ալեքսանդրարօլցի: Ռուսական բանակի հարիւրապետ սպայ, որ 20 տարեկան է ի վեր Վլատիմիրսառք մ'նայէ ետք, կը վերադանոր հայրենիք: Լուիկ, համեստ ու քաղցրարարոյ մէկը, 40-50 տարեկան: Ասատուր Սիմոնեան, որ Պոլսոյ Գումգարուի սկառուներէն ետոյ իր փոքրիկ Սիմոնիկին և իրենց ծանօթ Համեստուհի էրանզիլիան (Շապիւն Գարահիսարցի) օրիորդի մը հեռաւարական գործով Պաթում կ'երթար: Ճամբու լաւ բնկեր մը:

Երեկոյեան ժամը 8-ին Տրապիզոն էինք, ծննդավայրս, ուրիշ հետացեր եմ, գրկի վրայ, 1896ին, և որուն առաջին անգամ մօտէն ծանօթացեր եմ 9 տարի առաջ, 1911ի ամբան, Պոլսոյ Կեդրոնական վարժարանի իրը ուսանող, իմ ամառուան արձակուրդս անցրնելով Տրապիզոնի զիւղերու դմայլիկի և ազատասենչ հայութեան մթնոլորտին մէջ, որ ձեռքէ ձեռք խլեցին ու սպասուեցին զիս, իբր իրենց երբեմնի առաջնորդական փոխանորդ և յեղափոխական քարոզիչ՝ Վահան Քհնյ. Խոյեանի զուակը: Անմտանայի՛, երա՛ց օրեր... Կսկծահար սև յուշերու ամպերով մթապնած օրեր, որովհետև 1915-ի ահաւոր նախճիրէն հալիս թէ քանի մը հողիներ ազատեցան այդ «հոգի» ու

քաջարի ժողովուրդէն:

Քաղաքէն նստ եկած Պր. Խուչպուլեանէ մը կը տեղեկանանք, որ քաղաքը տենդոտ պատրաստութեան մէջ է՝ ի նպատակ Քէմալական Շարժումին, եւ ոչ խալամներու ապահովութիւնը օրէ օր աւելի կը վատթարանայ: Պր. Խուչպուլեանէ տեղեկացանք նոյնպէս, որ քաղաքին մէջ, կազմուած է Պոնտական Պատանեկան Միութիւն մը, որ մատուց սերունդի եւ որբերու մարմնակրթութեան հոգը ստանձնած է եւ արժանի է քաջալերութեան: Քանի մը գիւրքեր եւ «Հայ Սկստ» պաշտօնաթերթի քանի մը թիւերու հետ քաջալերական ու որոշ չափով տեղեկատուական նամակ մը զրկեցինք. գայն առաջին անգամ ըլլալով կնիքեցինք՝ ԵՐԵՒԱՆԻ ԿԵՒՐՈՆԻ անուամբ պաշտօնական կնիքով: Եռանդուն, լուրջ ու վստահելի Հայ էր Խուչպուլեանը:

Ժամը գիշերուան 12-ին «Մնաս Բարով» կ'ըսենք գեղեցիկ Տրապիզոնին, աւելի ճիշդը՝ Յոնետիքիւն... Չէ՞ որ մեր ընդլայնուած Հայաստանի գլխաւոր նաւահանգիստը պիտի ըլլայ ան... «Ասպետ» Վահան Չերազը քովս է կանգնած. կը նայիմ իրեն խորհրդաւոր նայուածքով մը եւ իր վճռակամութիւն արտայայտող, լուսաշող, հեռուին սեւեռած աչքերուն մէջ կը կարգամ՝ «Սահմանք Բազաց Զէնք Իւրանց» որ տեսայ, թէ ինչպէսի գուրգուրանքով զետեղեց իր սնտուկին մէջ, Հայկական Եռագոյնի հետ միասին, Պոլիս, երբ իր զոյքերը կը հաւաքէր՝ իր միակ երազն ու նպատակը եզրը նորագոյն Հայաստանը երթալու համար...:

Պաքում հասանք, 1920 Յուլիս 30ին, աստուան ժամը 11-ին: Սա՛ վերջակէտն է մեր Սեւ ծովեան ճամբորդութեան: Վրաստանի հոգի վրայ ենք (Կովկաս):


Շաբաթ, 9 Օգոստոս 1920: Ժամը չորսուկէտն է: Այսօր վերջապէս կը մեկնինք Պաթումէն, շոգեկառքով՝ պիւլի Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Երևան: Պաթումի հայ հիւպատոս՝ Պր. Աթարեկեանի խոստումին համաձայն (Պր. հիւպատոսը շատ սիրայիւր ու օգտակար ըլլալու արամազիւր էր մեզի հանդէպ) մեզի արամազրուած է առանձին վակոն, ուր բնգունած ենք ալեքսանդրապոլցի մայրիկ մը եւ երեք քոյրեր (Խուտապէրեան), ինչպէս նաեւ կարնեցի ուրիշ գաղթական մը. որով, վակոնին մէջ կը գտնուին 10 հոգի եւ մեր Պոլսէն բերած մարզական ու սկստական գոյքերու սնտուկները: Մեզի հետ են նոյնպէս մօրաքրոջս պատանի գաւակը՝ Հրանդ, որ անակցիաալիօրէն պնդեց մեզի հետ Հայաստան երթալ ու զինուորական վարժարան մտնել. եւ... Արշալիք Շիրակեանը, մեր յանդուզն ահա-

բեկիչը, որքն շատ անսկիզկալօրէն հանդիպեցայ Պաթումի գլխաւոր պոպոսային վրայ, քաղաքը հասած մեր առաջին օրն իսկ: Ես գինք Երեւանի մէջ կը յուսայի ահանել, սրովհետեւ մէկուկէս ամիս առաջ մեկնած էր Պոլսէն: «Անտառակ»ը իրեն յատուկ արագութեամբ պատմեց ինծի թէ՛ ինչպէս Սեւաստարոյ, Կէրշ, Էյն, ինկեր էր, բաւական արկածներ անցուցեր եւ արշաւիրաւոյն լ «Ողբաական» է մը եւք՝ վերջապէս յաջողեր էր հասնիլ Պաթում: Երբ իմացաւ թէ շատով կը մեկնինք գէպի Երեւան, սրտեց իր դարձերը արագ կարգադրել ու միանալ մեզի: Եր մասին խօսեցայ Վահան Չերազին եւ այդ բանեց, սր Արշաւիրը գտնայ իր սիրոյն, գորգուրանքին առարկան:

Պաթումը բաւական բնդարձակ եւ ներկայանալի քաղաք է, շատ սաք օդով, բայց հրաշալի, երկար ծովափով: Բնաւ չէինք կարծեր սր այսակեղ կը մնայինք երկար ժամանակ, (8 օր): Մեր գոյքերուն մաքսային գործառնութիւնները չափազանց նեղեցին մեզ: Վրացի պաշտօնէութեան անհող ու անճարակ շարժումովքին իրը արդիւնք՝ Վահան Չերազին սնտուկը ծովն ինկաւ, եւ աւելի ու չնկատուեցաւ որ՝ սնտուկի մէջ եղած արժէքաւոր իրեր եւ գիրքեր միաստուած էին: Երկու օրով՝ ես Պաթումի մօտակայ բարձունքին վրայ գանուօղ «Ախարշէն» գիւղը գացի, սր բրնակոյ իմ երկու մօրաքոյրներս ու իրենց պարագաները, ամենաջերմ հիւրասիրութեամբ մը, կեանքիս յաւազոյն ապրումներուն մաս կազմող յիշատակներ պարզեցին ինծի:

Պաթումի մէջ մեր օրերը արդիւնաւէտ դարձուցինք:

Օննիկին սկստու իմբասպետի սարապով բլլալը, մեզ ծանօթացուց ակուոյն վրայ գանուօղ ռուս, հրէայ եւ հայ սկստաներուն... Բոլորին հետ իսկույն ահտակցութիւններ ունեցանք: Իսկ հայ սկստաներուն թելադրեցինք զատուիլ սուսերէն եւ առանձին, ազգային գրոջմով կազմակերպուիլ իրբեւ շ.Մ.Բ.Մ.ի մասնաճիւղ: Այս ձեռնարկին մէջ նիւթական թէ բարոյական ամէն օժանդակութիւն բնել խոստացաւ Պաթումի ազգային միութեան նախագահ՝ Պր. Մնտօեանը, ազնիւ, կարուկ, եւ հակառակ ալեխառն մօբութիւն՝ երիտասարդ հոգիի աէր, մտասհտութիւն ներշնչող անձնաւորութիւն մը: Շատ լաւ տպաւորեց մեզ: Ուրեմն, Պաթումի մէջ կազմուեցաւ շ.Մ.Բ.Մ.ի մասնաճիւղ մը, առայժմ 20 անդամներով, սրանք բոլորն ալ սկստաներ էին: Այս վերջիններուն հետ բաւական զրազուեցանք: Բուսերէն հրամանները հայացուցիւնք եւ անհրաժեշտ տեղեկութիւններ հագորդեցինք իրենց: Տղաքը սղեւորուեցան:



Հ.Մ.Բ.Մ.Ի կեդրոնական վարչոն րեան կնիքը կրող դր օշախօսու րեան աչք-բեկարանը, զոր առաճեցու րիւնը հետք տարաւ եւ րաճեց Հայաստանի սկառտանե-րունի:

Médecin sanitaire
de la ville de Batoum
la 14 Octobre 1920
№ 14160
Batoum.

Certificat.

La section sanitaire de la ville de Ba-
toum certifie que Hoian
Sigzan
avait reçu une injection de vaccin antipesteux.

Médecin sanitaire Hoian



Պարուճի մէջ Տիգրանի հայեանի տրուած պատուատանի վկայագիրը:

Այդ օրերուն կովկասի մէջ շրջագայող դրամարուդ-րեքէնի:

Այս մասին պաշտօնապէս տեղեկագրեցինք Պոլսոյ
Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնին:

Պաթումի օգր մարդս կը գանդաղեցնէ: Ժողովուրդը կարծես ժամանակէն առաջ ձերացած է. մեզի, թոյլ ու անճկուն մարդիկ, որոնք գիւրին կը խոստանան, բայց խօսք յարգելի չեն գիտեր: Ժամանակին արժէքը ի՞նչ է՝ չեն գիտեր: Այստեղ՝ այս օրը, առանց նեղուելու, վաղը կամ միւս օրը եւ կամ միւս շաբաթը կրնայ բլլալ, եւ սա՛ շատ պարզ բան է: Եւ ասոր համար չէ՞ որ մենք մինչեւ օրս կը յամենանք աշտակ մնայ, վերջին երկու օրերը, իր ժամանակին չմեկնող՝ երկու օրով ու շացոյ շոգեկառքին մէջ անցրնելու պայմանաւ . . . :

Մեր շոգեկառքը, մեր վակոնէն դաս, ունի 9 վակոն եւս, որոնք բոլորն ալ բերնէ բերան լեցուն են դաղթականներով: Մեծամասնութեամբ Պոլսոյ մօտակայ շրջաններու գիւղերէն, որոնք շատ հետունները չէին աքսորուած ու գինապատրին հեռու են վերապարձած, ու հիմա Հայաստան կ'երթան:

Երեքշաբթի, 10 Օգոստոս 1920

Աստուտեան ժամը 7-ն է: Թիֆլիս ենք, Վրաստանի մայրաքաղաքը, որ եղած է կովկասահայ մասսորականութեան եւ արուեստի կեդրոնը, եւ շէնցած է ու հարբստացած՝ գլխաւորապէս հայերու միջոցաւ: Մէկ օրուան ճամբան երեք օրէն կտրեցինք, որովհետեւ ամէն կայարանի անօրէն՝ մեր կառախումբը սպասուց: Ի՞նչ արած, վրացական հոգի վրայ ենք եւ վրացի պաշտօնեաներու քրմահաճոյքին խաղաղիք: Պաթումէն մինչեւ աշտակ միշտ գեղեցիկ բնութիւն մը վայելեցինք: Վրաստանը ամբողջ պարակց մըն է կարծես, իսկ անծայրածիր դաշտերու գրեթէ միակ բերքն է կլիպասցորենը, աստաօրէն:

Այսօր՝ Չորեքշաբթի, ժամը 5-ին, մեկնեցանք Թիֆլիսէն:

Երէկ, ամբողջ օրը քաղաքը պարտեցանք՝ Վիզը (Չերազ), Օննիկը, Հրանդը, Արշաիրն ու եւ: Իրապէս արժող, փաստաւոր քաղաք է: Կովկասի Պոլիսն է, բռնք: Ամենագլխաւոր տեղերը այցելեցինք: Անցանք Թիւնեւէն եւ բուսարանական անուանի պարաէզը հաճոյքով պարտեցանք: Այցելեցինք Ս. Յակոբայ Վանքը, որուն խորանին առջեւ 2 մոմ վասեցի, մէկը՝ հայրիկիս, իսկ միւսը մայրիկիս համար: Վանքի բակին մէջ կային շերիմները հայ մեծանուն զօրավարներ՝ Լօրիս-Մելիքօֆի, Տէր Աուկասօֆի, Լազարէվի, զրազէա Մնգուկեանցի (Թատերագիր) եւ ուրիշ մեծերու: Կարելի չէր հեռանալ Թիֆլիսէն առանց այցելելու համբաւաւոր Հաւլապարը եւ չտեսնել Հաւլա-

պարեան մթնուլորար սակզծոյ տիպերը:

Ծանօթացանք Թիֆլիսի հայ սկստաններու պէտ՝ Մատթեանի հետ: Համակրելի ու խանդավառ երիտասարդ մը: Չերազի եւ Օննիկի հաւանութեամբ, փոքրիկ ուղերձով մը՝ Պոլսոյ սկստաններու կողմէ ողջունեցի իրենց ըսկստատեան կողմը, երբ հանդիպեցանք իրենց, ու լաւ բզգացումներու փոխադարձ հարգարկեցութիւն մը ունեցանք:

Թիֆլիսի եւ ընդհանրապէս այս կողմի հայերու աճեւնաւայտանելի մէկ սոփսրութիւնն է իրենց ուստախօսութիւնը: Հայերէնը խօսելու կ'ամէնան:

Հիմա, Սանահինի կը մօտենանք, արդէն Հայաստանի հոտը կ'աննենք... Մեր ամբողջ կատախօսմբը զարգարած է հայկական զրօշակներով եւ ուսնի ճիւղերով, որոնցմով այնքան հարուստ են Դեպեա պետի եղերքները: Լօսիի հակայ ու ժեռատ լեռներուն մէջջն է սը կ'սնկիինք: Շատ արգարացիօրէն մեր երգիչները իրենց հակակրօրը բրնակապայք են բնարեր այդ բարձր սարերը: Շուրջի բնութիւնը այնքան պեղեցիկ է՝ որքան վայրի՝ արձիւններու բարձունքներ են բոլորն ալ: Իսկ Դեպեա պետը, «Անոյշ»ի այնքան անոյշ Դեպեա, արժանի երակն է այս զմայլելի բնութեան: Երկար տանն է սը, արդէն, կ'ուղեկցի մեզի, իր երկու եղերքները տատարէն զարգարած՝ շնորհագեղ ուսնիներով:

«Ասում եմ ուռին աղջիկ էր ինձ պէս, մնում էր եարին ու չեկաւ նա տես... խեղճը տարտից կուացաւ, ջրերի վրայ ուռեմի դարձաւ... Անոյշի այս յուզիչ տողերը կը յիշեմ ու կ'երգեմ յանկարձ, ինչպէս քիչ առաջ, Մատախլու կայարանը, մեր երկար սպասման ասթիւ, Չերազին ու Արշաւրէրին հետ Դեպեաի զով ջուրերուն մէջ էր յուզանք կ'առնէինք, եւ յարձանուտ մասին մէջ գացի եւ սկսայ երգել «Անոյշ»ի «Կուշ, փուշ, Անոյշ»ը: Դեպի այդ մասի արագափայ ջուրերը կարծես նոյն բաներով, նոյն եղանակով բնկերակցեցան ինձի: Դեպեա, պեղեցիկ ու բարբարոս Դեպեա, սը Պոլսոյ Բրթիշան թատրոնին մէջ մեր ներկայացուցուցած «Անոյշ»ի ազուոր յուշերը արթնցուց հուրիս մէջ:

Ամբողջ օր մը մնացինք Սանահին: Կատախօսմբը պետին ճիշտ եղերքը կանց առած էր: Օզր աննման էր, պայծաս ու մաքուր: Ճամբորդները օգտուեցան ասիթէն եւ թէ՛ իրենք լուցան եւ թէ՛ իրենց ճերմակեղէնները լուացին պետին մէջ, ամբողջ օրը զուարճացան, պարտեցան: Իսկ մենք՝ սկստաներս, Սանահինի մէջ գանուպ աղքատ գողթականներու համար, կատախօսմբի ճամբորդներէն՝ հայ, պանիր եւ ուրիշ ուտելիքներ հաստեցեցինք: Մեզ միշտ ամե-

բիկացիներ կարծեցին:


Մինչևի այստեղ եկանք վրացական շոգեկառքով, իսկ ասկէ անդին այլևս հայկական շոգեշարժ մեքենայով պիտի ստաջնորդուինք: Ասկէ անդին Հայաստանն է, մէջն բլլալով Ձեզոք գօտին: Արդէն հանդիպեցանք հայ զինուորներու եւ հայ ոստիկանի — երա՞գ է սա, թէ՛ իրականութիւն . . . :

Սանահինէն մեզի հետ առինք երեսի վրայ մնացած երկու հայ սրբեր, 13 տարեկան, մէկը՝ Տիգրան, միւսը Արամ անունով: Տիգրանը շատ խոստամնալից է եւ համակրելի, այլ տարիքին՝ հիանալի լուրորդ է արդէն: Պաթումէն ուրիշ սրբ մըն ալ բերած էինք արդէն, վաչական անունով փաստասր հայտ տիպար մը: Որով՝ այժմ երեք սրբեր, լաւ ու խոստամնալից հայտըղիներ կը աանինք մեզի հետ Հայաստան, այնտեղ լատագոյն սրբանոցի մը յանձնելու մտազրուիթեամբ: Այս անոյշ աղաքը մեզմէ տեսած գուրգուրանքէն մխիթարուած են յայտնապէս եւ ոգևորուած՝ իրենց վազուան լաւ օրերու հետանկարով:


Ուրբաթ, Օգոստոս 13, 1920.— Ալեքսանդրապոլ ենք: Հայաստանի կեդրոնական քաղաքը, ուր՝ Թիֆլիսէն երևան գացող գնացքը շունչ կ'աննէ ու կը մեկնի զէպի երևան: Կարս գացող շոգեկառքերն ալ այստեղէն կը մեկնին:

Մինչևի հոս, Հայաստանէն ստացած մեր ապաստութիւնը չափազանց մխիթարական է: Լեւրկ լեռներու միջև սեղմուած ձորերը ծառախիտ են, իսկ գաշաերը, բնդարձակ գաշաեր, կը յայտնեն թէ բոլորովին երկրապործական երկիր մըն է Հայաստան: Տարբեր պատկեր մը գծուեցաւ մեր աչքերուն առջև: Գաղթականութիւն, աղքատութիւն, սով ու հիւանդութիւն նշանակող մեր Հայրենիքը, ապաստ Հայրենիքը (ինչպէս լած էինք հետո Պուսէն) հրաշափայլ փոփոխութիւն մըն է արձանագրած մեկուկէս տարուան իր ապաստոյտութեան բնթացքին: Ամէն կողմ հերկուած է եւ ամէն կողմ, ամէն գաշաի վրայ աշխատողներ կան: Յայտնի է որ հայ հակատներու օրհնուած քրտինքը սկսեք է խառնուիլ հայ հողերուն եւ յուսատու եւ յուսատու կանաչով, բերքով է ծածկեր հայրենիքի դաշտերը:

Պատերուն վրայ խումբ խումբ արջաաներ կ'արածին. ահաստիկ սշխարներու հօտ մը, որ կը բարձրանայ սա զիմացի բլուրն ի վեր: Ահա ուրիշ մը, որ կ'որոճայ սա ձորակի ուսիններուն շուքին տակ . . . Ի՞նչ լաւ, ի՞նչ սփոփարար տեսարան է. հոգերոյժ զեպ մըն է այս երեսոյթը . . . Հայաստ-



Արագած լեռը, որուն վրայ կախուած կը մնայ «Լուսաւորչի կանխեղը» անսպառ յոյսը հայ ժողովուրդին:



ԱՐՄԱՏ. Շախատանի եւ Շախ ժողովուրդի յարեանականութեան խորհրդանիշը:

65 00	Առկ -օրը	17	70.250 00
65 00	Արիւն	16 00	215 00
50 00	Աճը	12 90	185 00
40 00	Աւարտ	10 90	160 00
35 00	Կեղ-Բարսի	9 00	130 00
30 00	Արած	7 50	110 00
25 00	Օրհարած	6 50	95 00
15 00	Յիւսկանք	3 90	60 00
15 00	Սալապու	2 50	45 00
5 00	Յրիւն	1 00	20 00
	Գօ՛ւ ո՛ւ ի Ս.		
Ընթ.	Դ. Գնացի	Թ. 10	Շին
Օր.	Ք. Բ.	Ք. Բ.	Օր. Բ.
Взрослый			
Образец 1.			
Հ. Հ. Յ. Ջ. Դ. Ր. Ա.			
БИЛЕТЪ III К.			
№ 3078 Сер. А.			
ՏՐ			
ЭРИВАНЬ-ГОРОДЪ			
ДѢТСКІЙ			



տանի այս վիճակը կը զարմացնէ ու հիացումով կ'ողբերէ մանաւանդ միշտ կողքիս եղող մեծ «եղբայրս» Վահան Զերազը, որ մեր հայրենիքի ազատագրման ճամբուն վրայ մաքառած է, կամաւորական գունդերու թէ Զօրավար Անդրանիկի հերոսական մարտնչումներուն մէջ իր պատուոյ բացառիկ ակըր սնեցած, եւ հազիւ տարի մը առաջ Պոլիս վերադարձին, սակէ անցած տակն, տեսած է միայն ամալու թիւն: Այժմ որ Հայաստանի անհաւատալի եւ անդարմանելի կարծուած գժուարութիւններուն, թշուառութեան պատկերը իր հայրենասէր հոգիին մէջ, կը վերադառնար հոն, իր պաշտած Հայաստանին նորէն ծառայելու համար, կ'ըսէ պարզապէս՝ «Այսքան կարճ ժամանակի մէջ աս ի՞նչ փոփոխութիւն է, յառաջդիմութիւն է, սքանչելի՛...»:

Ալեքսանդրաբոյլ գացած տակն՝ շեմ կրնար մտնայ խորհրդաւոր ու բոցակէզ այն երեւոյթը, որ ունեցաւ մեր վակոնին առաջի դրան մէջ ծածանող հայկական եռագոյնը, երկար փապուղիէն դուրս ելլելու վայրկեանին: Այդ՝ խաւարէն դէպի լոյսը ելլելու տակն, կարծես՝ հրկհի մը ծուխերուն մէջ խեղդուած ու վերջապէս ազատ շունչ քաշել ուզող բոցակէն լեզու մըն էր, որ մեր (Զերազին ու իմ) աչքերուն երեւցաւ: Մեր զրօշի այդքան խորհրդաւոր ծածանման պատկերը միշտ սպասուրուած կը մնայ ուղեղիս մէջ:

Չեմ կրնար մտնայ նաեւ սկաւտական բարի գործը, գոր Ալեքսանդրաբոյլ հասնելէ քիչ տառջ բրինք:

Ալեքսանդրաբոյլի շատ մօտիկ գիւղի մը կայարանը առանց հանդիպելու, գնացքը շարունակեց իր բնթացքը՝ դէպի Ալեքսանդրաբոյլ: Մէջ մըն ալ լսեցինք բարձր ձայներ, թէ «Մարդ է վար բնիկ, գնացքից մարդ է վար բնիկ»: Կատախտամբը կեցաւ. ժողովուրդը վախոններէն դուրս թափեցաւ յայտուած. կին մը վար ինկեր էր: Օննիկին հետ խսկոյն մեր սկաւտական ձուկերն ու բարդէ ծածկոց մը առնելով, Զերայն ալ հետերնիս, սկանք դէպի ես՝ մեր եկած ճանապարհը վազել՝ սկաւտական վազքով (20 քայլ վազել եւ 20 քայլ քայլել շարունակաբար): Շուտով ուրիշ վազողներէ տառջ անցանք, եւ մինչեւ որ մեզի հետեւող ժողովուրդը մեզի հասաւ, մենք արդէն մեր ձուկերով եւ ծածկոցով պատուաբակ մը կազմած ու արկածահար կինը պատուաբակին վրայ դրած էինք: Կինը գիբուկ ու բաւական սարեց մայրիկ մըն էր: Գնացքը երբ շէր կեցած իր գիւղի կայարանը, ինք իր ձեռով ինքզինք վար նետած էր, որ մինչեւ Ալեքսանդրաբոյլ չերթայ: Իր գիբուկ, մտաւ բլրալը վերկած էր իր կեանքը: Ողջ էր: Գլուխը սկրթուած էր, թեւն ալ ցաւցաւցած: Իսկ ինք, անկումի արդիւնք՝ մը-

տացիր վիճակ մը ունէր: Օննիկն ու ես պատգարակը երկու ծայրերէն վերցնելով (վիրաւոր կրնր վրան) սկսանք քալել ետ՝ զէպի շոգեկառքը: Ճամբորդներու գնահատող նայուածքներով եւ արատյայտութիւններով շրջապատուած էինք: Ասոնց մէջ բժիշկ մը կար՝ Թէրզեանց մականունով, որ շատ գնահատալից շեշտով մը՝ «Ա՛յ, սկստար արզէն իր պաշտօնին մէջն է» բտտ ու մեզի հետ եկաւ մեր վակոնը, ուր իր հսկողութեամբ մեր փոխադրելի գեղարանի (բաւական ճօր) գեղերով, խնամեցինք վէրքերը զիւրացի հայ մայրիկին եւ Ալեքսանդրայի հասնելնուս պէս յանձնեցինք զինք տեղույն հայ ստտիկանութեան: Ժողովուրդը բացառապէս լաւ տպատրուեցաւ, խակ մեկք, ամենահրաշալի տրամադրութեան մը տիրացանք:

Ալեքսանդրայի, իր կայարանի շրջապատով, անշուք ու անխնամ քաղաքի մը տպատրութիւնը կը ձգէ, բայց ներքը, բուն քաղաքը՝ կոկիկ ու մաքուր է արզէն: Ամէն ինչ կարելի է գտնել աշտակ: Հաճելի անակնկալ մը ունեցանք: Մեզ եկան գտնի տեղույն սկստաները, եւ մինչեւ մեր մեկնելը՝ իրենց ծառայութիւնը զբին մեր տրամադրութեան տակ: Մանաւանդ իրենց համակրելի կազմակերպիչը՝ վաքրիկն Հրայր Սասունի, որ շարքաչ երեսոյթով, իր աղաներով՝ շատ գոհացուց մեզ: Հիանալի էին: Մեզ տարին Նահանգապետի՝ Կարօ Սասունիին մօտ, սրտի ծանօթ էի Պոլսոյ Կեդրոնական վարժարանէն: Շատ սիրալիք բնուանելով թիւն մը բրտ, մազթելով մեզի յաջողութիւն՝ մեր առաքելութեամբ, սրտի հայրենիքը աշխարհ պէտք ունէր: Մեզի՝ ուրիշ անակնկալ մը պահած էր Հրայր Սասունին: Առաջնորդուեցանք գաշա մը, ուր տղաքը Փոթիցոյ կը խաղալին. աւելի ճիշդ խօսելու համար, բենք՝ գնդակի մը ետեւէն կը փողէին: Ինչ որ ալ բլլայ, անակնկալը հաճելի էր, Ալեքսանդրայի եւ... Փոթիցոյ...:

Այսօր, Օգոստոս 14.— Առտուօտեան ժամը 9-ին մեկնելիք շոգեկառքով՝ երեկոյեան ժամը 7-ին հաղիւ կը մեկնինք: Հայաստանի Բ. բարձրագոյն լեւոր՝ ԱԲԱԳԱՍ, ժողովուրդի սրակումով՝ գեղեցիկն Ալազետազ, մեր հորիցոնի շքեղ պարծանքը՝ մեզի հետ է միշտ: Քիչ ետք պիտի կորսրնցենք զինք, վերստին գտնելու համար՝ Երեսանի մօտ, ուր սակայն, վեհապանծօրէն պիտի իշխէ աբեուր Մասիսը:

Ալեքսանդրայի կայարանին մէջ տեսանք իշխանագուն Աշխարպէկ Լօռու Մեիփ Քալանթարեանցը՝ Փրոֆ. 1^o ռի Ե. խառակից հնազաւար, որ խսկապէս վախելու է եւ ուրտաքինով մարդ էր: Կատարումընիս մարդատար լայք է, բայց իր ետեւն ունի ապրանքի վակոններ, սրտնց՝ վրան բաց եղող կառքի մը վրայ տեղատրուած

ենք մենք՝ 7 հոգի (Վիգ, Օննիկ, Հրանդ, Արշաիր, Այլք-սանդրարոյէն ծանօթ մը՝ Պր. Վահան, Պաթումէն նոր հասած բնկեր մը՝ Մուշեղ, ու ես) : Այս վախճանը գինուորական վախճան բլրաբով, բազմաամամբ՝ առանձնաշնորհեալ է միւսներէն, եւ իրբեւ թէ՛ աւելի հանդատաւա : Ամբողջ հոգիով պատրաստուած եմ Մասիսէն իմ առաջին ապաւորութիւնս խորապէս ունենալու : Անհամբեր եմ, որովհետեւ Վահան Չերապր աւետեց ինծի որ՝ այս ճամբուն վրայ, տեղ մը, Մասիսը ինքզինք ցոյց կու տայ : Անքուն եմ ու անհանգիստ : Վիգը գիտէ ասիկա եւ ուրախ է որ այսպէս կը բզգամ : Մեզմէլ գատ, մեր կառքի միւս ճամբորդները, կերպով մը, տեղ մը գտած են ու խորունկ կը քնանան :

Առաւօտեան զէմ կը հասնինք էջմիածնայ կայարանը : Հետաքրքիր աչքերս անհամբերութեամբ կը գննեն հորիզոնը. քովէս՝ աննման Չերապր, «Լաւ նայէ, Տիգօ, լեբան ձեռով որեւէ շուք չե՞ս տեսներ, մեր աջ կողմը» կ'ըսէ մեղմօրէն : Արգարեւ, յանկարծ, առաւօտեան մթնշաղին մէջ մեր աջ կողմը կը նկատեմ բարձր ու գորշ, հազիւ նրկատելի դանդուած մը. հսկան է... ՄԱՍԻՍԸ : «Մասիսը, ազա՛ք, Մասիսը» կը բացազանչեմ, առանց զգալու : Օննիկը քրթմնջելով կ'արթննայ քիչ մը եւ՝ «է՛, ինչ բնեմ...» կ'ըսէ ու կրկին կը խորանայ իր քունին մէջ... : Միւսները խաղաղ են : Խաւարին հեղհեղէ փարատելուն հետ, այդ գորշ զանդուածն ալ ասկաւ աւելի որոշ զարձաւ. արդէն գազաթի սպիտակութիւնը ասրատմօրէն սկսաւ տեսնուիլ, եւ քիչ ետք՝ «Արեւի առաջին համբոյրը՝ Մասիսի գազաթին» մեծապէս նկարր, որ Պոլիս «Աշխատանքի տան» սենեակներուն մէջ, Պոլսոյ զանազան արուեստագէտներու կազմակերպած միացեալ ցուցահանդէսին մէջ ցուցադրուած էր, նկարիչ Փամնու Թէրլէմէգեանի կողմէլ եւ այցելողներու միահամուս հիացման արժանացած, վեհափառօրէն կենդանացաւ՝ երջանկութեամբ գինովցած աչքիս ու հագիւս առջեւ : Մասիսի գազաթին իր համբոյրը առլէ շատ վերջն է որ՝ Արեւը կը լուսասորէ, կ'ոպհուրէ Հայաստանի գաշտերն ու գիւղերը : Կարծես Մեր աշխարհի այդ գարաւոր պահակն ու պահապանը, ամէնօրեայ արեւն իսկ կ'ուզէ փորձել, քննել եւ յետոյ արածնել որ ան, իր ճատապայթնեբով, թափանցէ հայրենի ծերպերուն, բուխերիկներուն, հերկուող հոգերուն, հայ հոգիներուն խորը :

Մինչեւ Երևան, անբացատրելի պակուցումով մը, գրեթէ միմիայն Մասիսն եմ գիտեր, Մասիսը՝ որ որքան գիտես այնքան կ'ուզես աւելի գիտել, որովհետեւ ամէն վայրկեան զէմզ կ'ունենաս նոր Մասիս մը, նոր գարգարանքով, նոր հրատարակով :



13 Օգոստոս, 1920
Մանասին

Սիրելի Հայրեկիս,

Պաթաժկն երկու նամակ գրած եմ Ձեզի «Ճակատամարտ»ի միջոցաւ: Հիմա Մանասին ենք, քիչ ասաջ Հասանք: Երկի աստուտ Թիֆլիս Հասանք եւ մինչեւ իրեկան այդ կապիտալ մասուրական կեդրոնը եզոզ գեղեցիկ քաղաքին լուսալոյն մասերան ծանօթացանք: Այցելեցինք Ս. Յակոբայ մեծ լիանք՝ սրան բակին մէջ իրարու քոյ շարուած կան՝ Լօրիս Մելիքօֆի, Տէր Ղախատֆի, Լապարէֆի, Անգուկեանցի, Ատախեանցի, Մանթաշօֆի, Էւին, Էւին, գամբարանները: Թիֆլիսի սոյս-սրաւթներան (Հայ) ճեա տեսնուեցանք, իրենց մարդանքներան ներկայ եղանք, եւ իրեն Պոլսոյ սրաւթներու ներկայացուցիչ՝ ինձի ինչու քանի մը խանդավառ խօսք ազգել իրենց:

Հիմա այլեւս Հայաստանի սահմանին վրայ կրնանք նկատուիլ: Անցանք ամբողջ Էստի տմենադեղեցիկ աւ փասաչունչ բնութենէն: Դեպէս գետը, սր երկար տանն է մեզի կ'ուգեկցէր, այդ իսկապէս գեղեցիկ Դեպէտը, «Անուշ»ի Դեպէտը, ճիմա, մեզմէ քիչ մը ճեաուն սրցէն, տեւախանօրէն կը գտալ: Վազր աստուտ պիտի լուսալինք ճան: Մեր կատարումբը, սր ներգաղթական գնացք մըն է, գորդարուած է ամբողջովին Դեպէտի երկրքի տակի ճիւղերով եւ Հայկական գրօճերով:



Շիրակ, ԲՇ., 13 Սեպտ. 1920

(Handwritten Armenian text, partially obscured by a stamp)

OTRIPOTOBHOE
 CAJIE POSTALE
 PLYBHOE
 POST. GARD.

Փամբ 11-ն է, լսյար քիչ է:
 Գիշեր բարի: Վազր՝ ոյ Հայաստան
 եմ:
 Բարեներ, Համբույներ
 ՏԻԳՐԱՆ
 Ս. Յակոբայ լիանքին խորանին առջեւ
 երկու մամ փառեցի: Մէկը՝ Հայրեկիս,
 միւրը՝ մայրեկիս Համար:

Կիրակի, 15 Օգոստոս 1920

Երևան ենք վերջապէս: Քիչ ասաջ անցանք Ձանգի-պասարէն, նոր պրատուած թրքական ալլ ըմբոստ գիւղե-րու շրջանէն: Ժամը ասուտական 8-ն է: Հասած կայարան-նիս կոկիկ է, բայց կը շարունակենք ճամբանիս ու կ'իջնենք նոր կայարանը, որ քաղաքին եղերքն է արդէն: Բայց սա գեռ կայարան պիտի ըլլայ... ասոյժմ ոչինչ է...: Մօտե-րը գտնուող բարե-վանեցիկ մը ասունը կ'ընդունուինք: Հոն լաւ մը կը լուսացուինք, կը կոկուինք ու կը մանենք քաղաք, նորագոյն Հայաստանի մայրաքաղաքը՝ Երևան: Երազա-յի՛ն, երջանի՛կ վայկեան...:

Կ'երթանք ուղղակի Եղնիկին (Քաջունի):

Ինչպէս մինչև հոս, այստեղ ալ, ճամբան հազար-ու մէկ գործացած նայուածքներու տակ մնացինք: Տեսակ տեսակ սղգերու պատկանեցանք: Մէկը կ'ըսէ. — «Անդ-լիացիներ են»: միւսը՝ «Ամերիկացիներ են էլի»: ուրիշ մը՝ հնդկի կ'ընէ մեզ: Ասելի ուրիշ մը՝ ոչինչ կը հասկնայ, հինգերորդ մը՝ ռուս: Մեզ Անգլիացի շինելով՝ մեր ետե-ւէն ինքնիրեն կը հայհոյէ: Վերջապէս, ո՞ր մէկը ըսել...:

Եղնիկը, իմ շատ սիրած, ալլ քաղցր ու սքանչելի հայրողին, ասունն է: Կարօտով կ'ողջադուրուինք: Նուիր-եալ մըն է: Թրքական բանակի սղայ, կովկասեան ճակա-տէն յաջողած է անցնիլ սուսական կողմը: Մեր առաքե-լութեան չորրորդ անգամը պիտի ըլլայ: Ինք արդէն կազ-մակերպած է «Կրք կայարան» (սղջիկ սկաուտներ) 250 հոգինոց խումբ մը: Ան ալ, ասաջին անգամն ըլլալով, իր սկաուտական համազգեստը կը հագնի, եւ շորս մ'առաջը դուրս կ'իջնենք պարակու եւ մեր քայն եղած նամակներն ու թերթերը իրենց հասցէներուն յանձնուլու:

Երևանը լաւ շի սղատուրեր մեզ. Ալեքսանդրաբոլի շի հաստարիւր: Երկու գեղեցիկ հաստարակաց պարտէզ ու-նի, մէկուն անունն է՝ «Անգլիական Այգի»: Մեծ քաղաք չէ. փոքոցները՝ անկանոն ու փոշոտ: Գլխաւոր փոքոցի անունն է՝ Աքովեան: Թրամուէյի գիծեր կան, բայց ասանց կառքերու: Երկու յարկանի շէնքեր են պաշտօնատաները եւ քարաշէն: Մայրաքաղաք ըլլալու արժանի չէ. եւ սա-կայն, եթէ Հայաստանի ամենատանջաք գիւղն ալ ըլլայ, քանի որ բնաբուսած է իրրեւ մայրաքաղաք ազատ Հայաս-տանի, նա կը գտնուայ ամենաշքեղն ու ամենագեղեցիկը աշխարհի բոլոր քաղաքներուն, արժանի՛ մեր սիրոյն ու պարգուրանքին: Չէ՞ որ ալեքա Մասիսն ունի իր հո-բիգոնին վրայ: Ուրեմն՝ շուտով, մօտ աղաղային, Ե-րևանը կ'ընդարձակուի ու կը ճոխանայ ամէն կերպով եւ կը գտնուայ ամէն հայու հարազատ Հայաստանի սիրուն մայրաքաղաքը:

ՀԱՆԳԻՊՈՒՄՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՁՆԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԵՏ

Երևանի մէջ, մեր հասնելու յաջորդ օրն իսկ սկրսանք մեր պաշտօնական այցելութիւններուն:

Նախ, ներկայացանք Կրթական նախարար՝ Գէորգ Ղազարեանին: Շատ սիրալիբ եւ յուսազրիչ ընդունելութեան արժանացանք: Ամէն կերպով համամիտ է մեզի: Մեր ծրագիրներու մասին մանրամասն զեկուցում մը ուղեց: Յաջորդ օրն իսկ պատրաստեցինք եւ իրեն յանձնեցինք:

Նախապէս ժամադրուելով այցելեցինք Պատերազմական նախարար՝ Ռուբէն Տէր Մինասեանին: Ժամադրութեամբ որոշուած՝ տակնին զացինք իր պաշտօնատանը, բայց ստիպուած սպասեցինք, որովհետեւ Քրանտական զինուորական պատուիրակութեան մը հետ զբաղած էր: Մեր այդ սպաման տակն հաճոյքն ունեցանք ծանօթանալու երիտասարդ հայ սպայի մը հետ, որ իր զօրավարին՝ Նժդեհի մասին խօսեցաւ խանդավառ հիացումով եւ մէկ կերպիւ զէպքեր պատմեց մեզի իր բաժնէն իր փաստով: Վերջապէս Քրանտական բանակի երկու բարձրաստիճան սպաները զուրս եկան նախարարին սենեակէն եւ մենք հրաւիրուեցանք նախարարին մօտ:

Չափազանց լաւ ընդունեց մեզ Հայաստանի պատերազմական նախարարը (զբաժիտ հաստատալս չի պար) Ռուբէն Տէր Մինասեան: Հետաքրքրուեցաւ սկստուական ոգիով ու անոնց տրուած դաստիարակութեամբ, մաք-

զանքներով, զբոշախօսութեամբ, հեռախուզական վարժութիւններով եւ մեր հայերէն հրամաններով: Բարձրօրէն գնահատեց նոր, մտազաչ սերունդին արուած այդ գաստիարակութիւնը եւ խոստացաւ մեզի ամէն զխրութիւն ընձեռել: Հիանալի արամազրութեամբ ու գոհացած բաժնուեցանք մեր պատերազմական նախարարէն, որ նոյնպէս լաւ ու գոհ սպասորութեան տակ էր մնացեր:

Մեր Երրորդ պաշտօնական այցելութիւնը տունք՝ Ներքին Գործոց նախարարին: Իր օգնականը՝ Պր. Քրմոյեան եւ ընդունեց մեզ շատ սիրալիք, խոստացաւ կարելի ամէն աջակցութիւն տալ մեզի եւ սրտանց մազթեց՝ յաջողութիւն: Արտցաւ մէկն էր Պր. Քրմոյեան եւ շատ լաւ սպասորեց մեզ:

Կրթական նախարարի յանձնարարութեամբ այցելեցինք բժիշկ Արծրունիի, իրրեւ վարիչ՝ բժշկա-սանիտարական (իմա՝ ասոցջապահական) եւ մարմնակրքական նիւզի: Այս երկար բարակ անունով կոստամբոսեան պաշտօնի գլխաւոր գրուած Պր. բժիշկը՝ շատով ցոյց տուաւ, որ մարմնակրթանքի էութեան մասին շատ ծանծայ, կամ՝ բնա՛ւ ծանօթութիւն չունի, բայց վստահակ խելացիօրէն մեզ լսելու եւ մեր բաժնէրէն օգտուելու, երեւի իր գիրքին հեղինակութեան նուաստացում չբերելու շատ սխալ մտածումով, յամասեցաւ պնդել՝ իր անպաշտպանելի տեսակէաներուն կամ «գիտցածներուն» վրայ: Յայտնի է որ բաւական դժուար պիտի ըլլար իր հետ վարուիլը: Օննիկը, քիչ մը բուսն ու անհամբեր, սկսած էր իր ցուցամատր օգին մէջ շարժելով խօսիլ յարգելի բժիշկին հետ, որ սրբանեղած ու վերասորուած կը հրաւիրէր Օննիկը, որ ցուցամատր չշարժէ: Մեր սկստատեան ժողովին մէջ, Չերազ այս հարցը սեղանի վրայ դրաւ եւ քայքայէն, բայց վճռական յանձնարարեց Օննիկին՝ որպէսզի եւ ըլլամ մեր տեսակէաները բժիշկ Արծրունիին ներկայացնողը, որ օգին մէջ ցուցամատր չշարժի եւ վերասորանք չըլլայ...: «Ի՞նչ բնեմ, ասանց իմ գիտակցութեանս, աս մասս բարեքի զիրքեր կ'տանէ, ինչպէ՞ս բնեմ» լսելով, քիչ մը զժգոհ, բայց ազուար գործակցական սլով մը համաձայնեցաւ, որու շուրջ բնուեց: Օննիկը:

Բժիշկ Արծրունիի այլաւ յամատութիւնը՝ անիմաստօրէն մեզ անշարժութեան մասնեց, մինչեւ որ Կրթական նախարարի միջնորդութեամբ մեր կապերը խորհրդան բժիշկ Արծրունիի հետ եւ մենք գծեցինք մեր ուղղութիւնը, այնպէս ինչպէս որ պէտք էր ըլլար:

**

Այսօր, Եզնիկի սկաուտներու և աղջիկ սկաուտներու հետ, քաղաքէն դուրս, փոքրիկ արչաւի մը գացինք։ Չանդու (Հրազդան) գետին մէջ յոգացինք, զանազան խաղեր ըրինք և հաճելի ժամանակ անցուցինք, բայց սուիի զսրսցական աշակերտներու արչաւ մըն էր քան թէ սկաուտներու :



Արչաւի Շիրակեան, Սողոմոն Թեկլիրեանի, Արամ Երկանեանի, Միսաֆ Թորլաֆեանի և Ստեփան Նաղիկեանի հետ կազմեց հաշկական Նիւթէնպէրի :

ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

Անմոռանալի օր մը.— Օգոստոս 19, 1920, Հինգ-
շաբթի օր, Երևանի բոլոր վաճառատուները, պաշտօնա-
տուները, մամուլը, ամէն ինչ փակ էր: Ամէն կողմ զրօ-
շազարդուած՝ քաղաքը աօնական մթնոլորտ ունէր, ես-
ուզեա՝ ամէն կողմ: Ա. Ահարոնեանէն (Փարիզ) պաշտօնա-
կան հետադիւր էր եկած, որ թրքական պաշնադիրը, ՍԵՆՐԻ
դաշնագիրը, արդէն ստորագրուած է թուրք պատուիրա-
կութեան կողմէ, որուն համաձայն Հայաստանի կը կցուին
նաև տանկական հոգամասեր: Քաղաքի հրապարակին
վրայ մեծաչափ հանդէս եղաւ: Նախարարական ամբողջ
կազմը և բարձր պինտորական զասը ներկայ էին: Օտար
ներկայացուցիչներ կային (Անգլիացի, Ամերիկացի և
Պարսիկ): Վարչապետ Համօ Օհանջանեան այժ սղևոր-
ուած ճառ մը խօսեցաւ: Մէջընդմէջ կը նուազուէր զին-
ուորական «Փանֆուր»: Երևանի պարէտը՝ յայտնի գե-
րասան Շահխաթունին, իր չէրֆէսֆա զգեստն հագած,
տևական շարժման մէջ էր, կարծես՝ ամէն տեղ էր և իր
զփուար պաշտօնը կ'արժեցնէր վայելչօրէն, Երևանի՝ այդ
օրուան պատմական բեմին վրայ: Պաշտօնական զօրանցք
տեղի ունեցաւ: Այդ առթիւ ճանչցայ Հայկ. ևորակազմ բա-
նակի առաջին սպարապետը՝ Զօր. Նազարբեկեանը: Իբ-
րարձր զիրքին վայել արտաքինով ու երեսօյթով փաստաւոր
տղամարդ մը, որ գլխաւոր ուշադրութիւնը կը վայելէր
ներկայ հսկայ բազմութեան:

Հանդէսը, իրրեւ հանդէս, նուիրուած՝ այլ պատմական մեծ արժէք ներկայացնող օրուան, շատ համեմատ էր եւ ազբառ, մանաւանդ մեզի համար, որ Պոլսոյ մէջ, զանազան առիթներով, եւրոպական ամէն ազգերու պատկանող բանակներու տպաւորիչ զօրանցքներ տեսած էինք... առաջնակարգ Փանֆատներով: Բայց հայ ժողովուրդի եւ հայրենիքի ազատութեան ի խնդիր, արխնոտ ետթալանն ու մահուան զրօշակը իրր առաջնորդ ունեցող զարասր թշնամիի մը զէմ մահու կենաց միճուական մաքատումէ մը զեռ նոր դուրս եկած եւ իր նորազատ գոյութիւնը կարենալ պահելու համար իսկ անտուն ու անյոյս զազթականութեան, թշուառութեան, ազբատութեան եւ համաճարակներու զէմ անհաստատալի արխութեամբ պայքարած, ու ժաթախ վիճակով միայն յազթած եւ անմահութիւնը զբեկած այս ժողովուրդէն ու իր աննման զեկազարներէն, կտտավարութենէն, տեղի ի՞նչ ակնկալել այսօր: Այս օրուան այս «անշուք» հանդէսը, իր ազգային ու բարոյական արժէքով, մեզի համար ամէնէն շքեղն ու հարուստն էր որ որեւէ տեղ, որեւէ ատեն կայացած ըլլար: Երեւակայեցէ՛ք, առաջին անգամն էր որ, վեց զարերու զերութենէն ետք, ազատ Հայաստանի մայրաքաղաքին մէջ, հայ պետական հանդիսութեան մը ներկայ կ'ըլլայինք... Յուզուած էի հոգեպէս, եւ ուրախութեան, հպարտութեան զսպուած արցունքներ ազատօրէն կը գլտորէին այսերէս վար: Դառնալով իմ «Մեծ եղբօր» Վահան Չերազին, որ միշտ քովս էր հանդէսի տեսչութեան՝ «Վիզ, սա ի՞նչ ժողովուրդ է, կարծես՝ անաարրեր է, շի յուղտիք» բախ: «Քեզի նման յուզուելու, արտասուելու ոյժ մնացած է մէջերնին» պատասխանեց: Որքա՞ն իրատունք ունէր, այլ ժողովուրդը ինձմէ տեղի ճանչած եւ անոր մահու-կենաց պայքարին մէջ իր հպարտ տեղը զբաւած աննման Չերազը:



Անկախութեան տօնակատարութիւնը Երեւանի մէջ,
1919 Մայիս 28:



Զօր․ Եղապարբեկեան:



Զօրատանդէս․ նկարի աջին՝ Զօր․
Արարատեան (ստորով):



Զօր․ Արարատեան:



Մարզանք



Զօր․ Սիրիկեան:

Հանդէսը վերջանալէն յետոյ, Վահանն ու Լս, լսապոյն արամադրութեամբ, քովբնախ վտպոցները մտանք, թափառեցանք: Հետաքրքրական պատկերի մը ստջեւ գասնք մենքզմեզ: Ամէն տունը զրօշազարդուած էր, փոքրիկ զրօշներ, ի հարկէ, քանի որ խոշոր զրօշակի մը համար պէտք էր կատակներ զփուար էր գտնել: Երևի՛ քաղաքի իշխանութիւնները պատասխրած էին Լսապոյն զրօշներով զարդարել տաները: Այդ փոպոցներուն մէջ մենք տեսանք ամէն գոյնի եռագոյն դրօշներ: Ինչպէս բախ՛ կատ զփուար էր գտնել, չկար, իսկ քու ուզած գոյնով կատ՞, ի հարկէ չկար. սրով՛ ինչ երեք գոյն որ գտած, ճարած էին, կարեր էին քով-քովի ու գարսը կախած: «Ախրր, երեք տարբեր գոյներ են, էլի...»: Վրոյն ու Տիգր տեսարանէն զուարճացած լսա մը խնդացին...:



Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան շէնքը:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ, ԱՆՁԵՐ, ՎԱՅՐԵՐ, ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Այս շարժու, այցելեցի Սօնիկին (Տիկ. Մալխաս)։ Մալխասը գործով էջմիածին էր գալիս։ Խեղճ Սօնիկ, սարիկ մը ի վեր ազամարոյժ է եւ անկողին կը մնայ։ Նոյն, խոր ու ապաստիւն ունեւոր կը սրահէ իրեն իրբեւ հարստութիւն։

Այցելեցի նաեւ գերասան Յովհաննէս Զարիֆեանին, խոյնի ընտանիքի միշտ սիրած ու յարգած գերասանին։ Հայ կողմի եւ Պոլսոյ ներկայացուցիչներէն, չին օրերէն խօսեցանք։ Այստեղ, իր գեղարարութեան ասկ, արժէքատար խումբ ունի, որուն մէջ են Յ. Արեւիան, Բերեան, Տիկ. Մալխասեան, Տիկ. Արաքս եւ ուրիշ կարող գերակատարներ։ Հայաստանի աստղին թատերախումբը կազմած ըլլալու մեծ պատիւը կը վիճակուի Զարիֆեանին (Զարիֆեան)։

Կիր., Օգոստոս 29)։ Այսօր, «Աստուածածնայ տօնին» առթիւ, Եղնիկը, Վիզը եւ եւ գայինք Երեւանի բարձունքին վրայ գանապ Նորք վիզը, որուն վանքի տօնախումբութիւնն էր, ժողովրդական ու խառնուրդութիւն կար։ Յետոյ՝ Եղնիկի ազգիկ սկստաներէն մէկուն ընտանեկան այգին գայինք, աստա խաղող կերանք, գրօնեցինք, եւ ժամը 2-ին քաղցր գայինք, Երեւանի վրայ նայող բարձունքի մէկ ուրիշ վիզը, Գանափեւ (Խ. Արափեանի ծննդավայրը), բիւրի Օհանեանի կազմէ հրախրուած։ Հիանալի ընդունելութիւն մը բրա։ Երեկոյեան միջնազգին վերազարձանք Երեւան, գուարթ, կենսունակ եւ լուսազոյն օր մը անցուցած ըլլալու գոհունակութեամբ։

Արեւոս ասք օր մը, Եղնիկը, Չերապը, եւ ու շատ համակրելի երիտասարդ ուսուցիչ մը խոշոր ձմերուկ մը (Վաղարշապատ-էջմիածնի ձմերուկ, որ կը մըրցի լուսազոյններուն հետ) գնեցինք եւ մտանք «Գանձակ» անտնով ճաշարան մը՝ ուտելու համար։ Միջին ատրիքով հայ կին մը, որուն գոգնոցը՝ լուսազոյն կը կարօտէր, պնակներ դրա իւրաքանչիւրիս ասջեւ։ Իմ պնակս մաքուր չէր։ «Դուք մաքուր պնակ չունէ՞ք» հարցուցի սպասակին, որ ցրուած արատախառնութեամբ մը երեսիս նայելէն յետոյ՝ «Ոչ, չունենք» պատասխանեց։ «Այո ի՞նչ պատասխան է, — բա՛ն, — կը լուսա ու կ'ունենաք»։ Իսկոյն օգնութեան հաստ Զերապը, թէ՛ «Բուրիկ, քամրգ քապալս չունէ՞ք»։ «Հաս, պալաս, ի հարկէ ունենք» բառ ու պնակ բերելու։ Մեր ծիծաղին հետ մէկտեղ, Չերապը՝ «Տիկօ, — բառ, — Հայաստանի մէջ էս, եւ կը կարծես թէ մաքուր հայերէն»

պէսք է խօսիւ. երբեմն գիտցած թրքերէնց գործած է թա-
թարական շէշտով եւ ինծի պէս կը հասկցուիս»։ Իսկոյն
յիշեցի ու Եզնիկին պատմեցի, թէ ինչպէ՛ս, Պաթումի մէջ,
մեր սասաջին օրուան սասաօտուն, երես յաւալու համար
օճառ չտեսայ եւ պանդոկի մարդը կանչեցի, որ օճառ բերէ
ինծի։ Ընչդ այս միամիտ կնոջ պէս՝ չհասկցաւ, թէ ի՞նչ
կ'ուզեմ, մինչեւ որ Չերազը կացութիւնը փրկեց՝ «Ասպօֆ
ա ուզում, էլի» բսկով... :

*
**

Օննիկը, առենէ մը ի վեր, Պուլիս փերայանալու
միտքեր կ'որոճայ. Սամաթեան ու ասուր կը քաշեն գինք
երեւի։ Այդ մասին մեր՝ չորսերես ժողովին մէջ ուղղակի
բասեցաւ իրեն, որ ժամ սասաջ փերջնական սրտման մը
յանդի եւ մանասանդ մեզի լուր սայ իր բնելիքին մասին։

Որոշեցինք որ՝ Եզնիկն ու Օննիկը Երևան մնան,
իսկ Վահան Չերազն ու ես՝ Ալեքսանդրաբոլ, ուր կազաչի
Բոստի եւ Բոլիկոնի հին սուսական հսկայ գորանոցները հայ
որբանոցներու են վերածուած, 20 հազարէ աւելի որբերով։
Սկաստական պատրաստ ու պարարտ գետին մը արդէն։
Կարսի մէջ կը գտնուի, մեր Պուլսոյ սկաստաներէն, Ազասի
անունով մէկը, որ սկաստ խմբապետի ստալիճան տուած
է ինքն իրեն եւ գործի վրայ է... Նոյնիսկ՝ «Հայ Արի» ա-
նունով թերթիկ մը հրատարակել սկսած է։ Որոշուեցաւ որ,
Ալեքսանդրաբոլ մեր երթալէն յետոյ, ես Կարս երթամ,
Ազասիի խնդիրը մօտէն քննեմ ու ջանամ կարգադրել։

Երևանի Մխիթարեան փոքրիկ վարժարանի պա-
տասխանատու հայր մը, երիտասարդ, շատ համակրելի,
եկաւ մեզի ու մարզական գոյքեր խնդրեց, մասնաորբար
Փուլթալ։ Գոհացուցինք զինք եւ խնդրեցինք որ մեզի հետ
միշտ իր կապը պահէ։

Դպրոցական արձակուրդի ամիսներ ըլլալով, դըպ-
րոցներէ ներս մեր գործունէութիւնը սպասման վիճակ ու-
նի։ Միայն թէ, զպրօցներու ուսուցիչ-ուսուցչուհիներու
չուէտական չափական մարզանքի դասերու կազմակերպ-
ման ծրագիրներ կը մշակենք արդէն։

Այստեղ, զժբախտարար, մարմնակրթանքը իր ա-
ռողջ եւ բնջհանուր օգտակար ձևովը չ'ըմբռնուիր։

Տիրապետող մարզական դպրոցը՝ հունգարական,
չեխոսլովաքեան ծաղումով՝ Socol գրութեան վրայ հիմ-
նուած է եւ մարզասրահի զանազան գործիքներու վրայ՝
հիւանդիօրէն ձկուն ու ճարպիկ մարզիկներ կը պատրաս-
տէ, զարդացած զնդերներով։ Ալեքսանդրաբոլի մէջ տե-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՄԱՐՏԱՆՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԿՆՈՒԹՅԱՆ
ՆԵՐՄԱՏՈՒԹՅԱՆ
ՄԻՆԻՍՏԵՐԵ

République d'Arménie.
MINISTÈRE
de l'Instruction Publique et
des Beaux Arts

Վ Կ Վ Յ Կ Վ Ն .

22 Ապրիլի 1920 թ.

Պ Ե Կ Կ Կ

Տրվում է սույն վկայականը սկաուտ պետ *Միգրան Բույեանի* առ այն, որ նա սկաուտական եւ մարմնակրթական գործը կազմակերպելու համար ուղեւորվում է նախապես Կարս Ասորիզամիշ եւ այլ բաղաժներ, ուստի նախարարութիւնս խնդրում է բոլոր հասարակական եւ պետական հաստատութիւններին ցոյց տալ պ. *Բույեանի* օրինակի աջակցութիւն: Վերոյիշեալը վաւերացւում է սիրով:



Սկաուտներ եւ կնիքով:

Կրթութեան եւ

Ստորին նախարարի Օ գ ն ա կ ա

Բ Ե Կ Կ Կ

Ստորագրում
Կրթութեան նախարար

Միգրան Բույեանի
Սկաուտական ընկերության
Միգրան Բույեանի
Սկաուտական ընկերության
Միգրան Բույեանի
Սկաուտական ընկերության
1920 թ.



Յովհ. Բաջազկունի



Չ. Օսակյանի



Ալ. Իսակյանի

22 Ապրիլի 1920-ին Տիգրան Խոյեանի տրուած վկայագիրը

սակցութիւն մը ունեցայ մարզական գեկափարին՝ Պր. Մարգարեանի հետ: Շատ քաղաքավար, հաճելի անձնատուրութիւն մըն էր, կրօն ու սերով եւ ոչ կաշառու երեսօթով: Թեթեւ վիճարանութիւն մը ունեցայ հետը, յայտնելով թէ մարմնակիր թանքը մասնակի աշխատանք մը չէ, այլ ասոցջ կակներ պատրաստելու կոչումը պարտութիւն մը, մարմնական գաստիարակութիւն մը՝ որ մարգարաշներէն պուրս, բնութեան ծիրին մէջ, նաեւ մարտը օղին հետ, ամէն անսակի մարզանքներու ամբողջութիւն մըն է, որ կը պատրաստէ ուղիւ ու ճկուն մարմիններով եւ ամէն կերպով ասոցջ կակներ: Նայեցաւ ինձի ու շրմ կերպով եւ՝ «Ինչպէս դու ք» բռտ: Ասոցջութեան նմոյշ մըն էի եւ այդ սառն, կարմիր երեսներով եւ ուղիւ կեցումով. ժպտեցայ իրեն հետ եւ շնորհակալութիւն յայտնեցի: Էտ բարեկամներ եղանք:

Դէպի Էջմիածին. — Կիրակի, 19 Սեպտ. 1920, ասուտեան ժամը 10-ին երեսանէն կը մեկնինք գէղի էջմիածին: Բնեկերնէր՝ Վահան Զեբազ, Եգնիկ եւ Գուրգէն Քաջունիներ, Յարութիւն Արրեան, Կոպեռնիկ Թանաքեան, Զարմայր Մարտիրոսեան, Բարքամ եւ Ես. 8 հոգի:

Շարաթ գերեզման եւ գիշերը տեղացած անձրեւէն ետք՝ հիանալի, արեւատ օր ունինք, քաղելու համար յարմարագոյն հոյն ու օգր: Մինչեւ էջմիածին 18 վերստ է: Ժամը 12-ին, 9 վերստի վերջաւորութեան, Փարսաբար գիւղի աստակէն եկերքէն հասց աղբիւրի մը քով քիչ մը հանգստանալէ ետք, ձմերուկ մը կը գնենք եւ գիւղին ծայրը, ծառերու շուրթին տակ, կը ճաշակենք: Ժամը մէկուկէսին «Ձուարթնոց»ի աւերակներուն մէջն ենք: Հսկիչ եւ յարգումը Սաշիկ Վարդապետը հոն չէ: Կը պարտինք, կը հիանանք եւ կը պատկասինք մեր նախահայրերու հայ մշակոյթին հանգչոյ ունեցած նուիրումէն վերայ: Այցելուներու սպասարութիւններուն յատկացումը տեղաւորին մէջ կը ստորագրենք ու «Բարձրացիր-Բարձրացուր» նշանակով կը կնքենք: Մեր ամենակարկաստան գէձքերու ստորագրութիւնները կը նկատենք այդ տեղաւորին մէջ: Լաւագոյն սպասարութեամբ եւ յարգանք կը հետանանք Ձուարթնոցէն, Սաշիկ Վարդապետին համար «Հայ Սկաուտի» բացատրիկ թիւը ձեռքով: Ի գէղ կ'ուզեմ յայտնել թէ Հայաստանի սահման՝ Սանահինէն մինչեւ Երեսան մեր ճամբուն վրայ, շա՛տ շա՛տ տեղեր, ծառերու վրայ փորագրեցինք «Բարձրացիր-Բարձրացուր»ը կամ Հ.Մ.Բ.Մ.ը:

Ժամը 2-ը քիչ անցած Հսիփսիմեանց վանքն ենք: Ամուր, կրկիկ եւ հայկական ճարտարապետութեամբ շինուած: Մոմ մը կը վառեմ եւ քիչ մը խունկ կ'առնեմ: Յիշա-

տակի համար պիտի զրկեմ զանոնք բարեպաշտ մայրիկիս :
 Զօրփում է կոյսի գերեզմանը (գեանափոր պահարան)
 կ'այցելենք, զինք քարկոծելու համար գործածուած քարե-
 րը (իրբեւ թէ) կը տեսնենք՝ հոն են :

Ժամը 3-ին կը մանենք Վաղարշապատ, ուր կը գրո-
 նուի Հայոց Ս. Եկեղեցւոյ Արքութիւն Սբբոյ էջմիածնայ
 վանքը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բազմապարեան
 դահլիճ :

Արդէն էջմիածին եմք : Գիւղը բաւական կոկիկ է,
 բայց շատ տաք : Կը պտորտինք ամէն կողմ : Ներսէս Կաթո-
 ղիկոսի շինել տուած եւ «Ներսէսեան Լիւն» յորջուրջուած
 ջուրի բաւական խոշոր տապանը, Չերազին հետ կը չա-
 փենք, առայժմ մեր երկուքին յայտնի ծրարքով :

166 մեքր երկար, 68 մեքր լայն եւ 6 մեքր խոր ա-
 լազան մըն է : Կիտով լեցուն է արդէն, բայց ջուրը աղտոտ
 է, ապա թէ ոչ, առջին բնելիքնիս կ'ըլլար հանուիլ եւ
 ջուրը ցատկել :

Չերազին հետ բաւական որոշ, իրականութիւն բու-
 րող Երագ մը ունիք, — Հայկ. Ընդհ. Ողիմպիականը յա-
 ջորդ տարի Հայաստանի մէջ բնել, եւ այս տապանը հրա-
 շալի մըջտալայր է լողալու, իսկ էջմիածինը շրջապատող
 պատմական ու սուրբ յիշատակարաններու, Մասիսի նման
 հայկական ու բնական անփոխարինելի տեսարաններու եւ
 վանքի մօտիկ գանուող դաշտային առուելութիւններու
 հրաւիր կարդացող փաստը մեզ միանգամ բնդմիշտ կը հա-
 մողէ թէ՛ Յաջորդ Համահայկական Ողիմպիականը տեղի
 պիտի ունենայ այստեղ, Ս. էջմիածնայ ու Արարզան Ա-
 րարատ-Մասիսի ներքնոց մթնոլորտին մէջ . . . :

Երեկոյեան ժամերգութեան հրաւիրող էջմիածնայ
 զանգակներու զօղանջը ահա : Արարզան սարսուռ մը կը
 զգամ . . . : Կը մանենք Մայր Տաճարը : Քանի մը վարդա-
 պեաներ եւ երկու պղիբ արարողութիւն կը կատարեն, իսկ
 հաւատացեալներու թիւը շատ քիչ է : Դարձեալ մոմ մը կը
 վառեմ. այս ալ՝ պաշտելի հայրիկիս համար, եւ պիտի
 զրկեմ իրեն :

Մենք, գաւիթի զրան մէջ կայնած էինք : Ուշադրու-
 թիւնս գրաւեց վարդապետներէն մէկուն լաւ, հաճելի ձայ-
 նը եւ Կոմիտաս Վարդապետի ձեռով երգուածքը. ձայնն ալ
 քիչ մը կը յիշեցնէր զայն : Այս մտածումս կը հաղորդեմ
 Չերազին եւ Արքանանին, որոնք քովս են կեցած : Այդ նոյն
 վարդապետը, երբեմն, զգուշութեամբ գլուխը կը դարձնէր
 ու մեզի կը նայէր : Արարողութիւնը աւարտելուն պէս այդ
 վարդապետը մեր կողմը եկաւ . . . Ո՛վ զարմանք, այդ վե-
 դարին տակ, մեր սան շատ մտերիմ՝ զեղագործ Գառնիկն

էր: Վարդապե՞տ, Գառնիկը՞, մեր «Խենթը՞»: Իրեն յատուկ ջերմ խառնուածքով սղջագուրեց մեզ և պատմեց, թէ տարի մը առաջ իբր պեղապործ եկած էր Հայաստան՝ օգտակար ըլլալու համար, և հարցումներու տեղատարափով մը հասկցանք որ՝ հիւանդացած է Թիֆուսով, և խնամուած ու ստողջացած է վանքին մէջ: Յետոյ, թէ՛ իր շէնչող բնասրտութեամբ և թէ՛ լաւ ձայնովն ու եկեղեցական արարողութիւններուն, շարականներուն մասին ունեցած ծանօթութիւններովը իր օձիկը ձեռք կու տայ, և Կաթողիկոսի հրամանով՝ էջմիածնայ միաբանութեան անդամ կ'ընտրուի, ու զգալի վարդապետ ձեռնադրուելով: Միաբանութեան ամէնէն կրասերն է և սիրուած բարբէն: Մեզ ասաջնորդեց եկեղեցւոյն զանազան մասերը և հարկաւոր բացատրութիւնները տուաւ: Այցելեցինք Ս. Միսոնի Կաթան զանազան սենեակը, որ՝ ուրիշ թանկագին իրերու հետ՝ կար նաև Ս. Գրիգոր Լուսաւորչի սեղի ու արծաթ ձեռքը: Ուղեց որ ևս ու Արքեանք (որ ծանօթ էր իրեն մեր Գնալը կղզիի եկեղեցւոյ զգրապետութենէն) այդ զիշեր իր հետը ըլլանք. «Հաճոյքով ամէնքդ ալ կը հիւրասիրէի, բայց աւելի աւել չունիմ» բառ մեր խոմբի միւս անգամներուն: Ասաջին անգամ իրեն հանդիպումիս՝ եկեղեցիին մէջ, «Մօ՛, խենթ Գառնիկ» բառ իրեն շարկով. «Սուս եղիք, ծօ՛, հիմա Յովսէփ հայր սուրբ ևմ» պատասխանեց: Ուրեմն, այդ զիշեր, Յ. Արքեանն ու ևս հիւրն էինք էջմիածնայ միաբան Յովսէփ հայր սուրբին... որ իր մաքուր ու ներկայանալի սենեակը արամազրեց մեզի:

Կատակելու արտօժակս բռնեց և զժգո՛ս արտայայտութեամբ մը՝ «Գիտե՞ս, Յովսէփ հայր սուրբ, — բառ, — շիտակը ևս հրակըզ ուրախութեամբ ընդունեցի, որովհետև կ'ակնկալէի տեսնել վանաշրանի կէս մութ-կէս լոյս խցիկ մը, չոր ու ամուր պատակելիք տեղով մը, և ուր՝ վուշէ շապիկ հագած՝ Աւետարան կամ Նարեկ կը կարդատ զո՞ն, երկիւղածօրէն... Շատ յուսախար եղայ այս փաստոր անկողինները տեսնելով՝ սա լուսաւոր, հանդիս սենեակին մէջ»... Սօսքս չէի վերջացուցած, ևրբ մեր լաւ հայր սուրբը՝ «Հայտէ՛ ծօօօ, — դստայ, — մենք աստեղ ճղնասորներ չենք. բայց իմ անոյշ Տիգրանս, ճղնասորներու չափ անարատ ենք, զիտցած եղիք»: Կը ճանչնայի զինքն ու իր լաւ հողին. որով, սղջագուրուելով հետը՝ «Գիտեմ, զիտեմ, մեր հիանալի՛ Խենթ Գառնիկը» բառ և կատակ վերջացուցի:

Ճաշի առեն ամէն ինչ որ կերանք ու խմեցինք (զիւնի) վանքի ու վանականներու ձեռքերով էր հասունցած, պատրաստուած:

Առաւօտուն, հրաշալի օդով մը արթնցանք, մեր յոգնած մարմինները մաքուր ու հանդսասաւէտ անկողիններուն մէջ քունէն կազդուրուած :

Ժամը 5-ն է եւ հայր սուրբը կը մեկնի առաւօտեան ժամերգութեան մասնակցելու : Կ'աճապարեմ ու ետեւէն կը հասնիմ էջմիածնայ վանքի վաղ առաւօտեան արարողական միջոյցները բմբուխներու համար. այսպէսի սրբազան առիթ, իմ ապրելիք օրերուս մէջ, անգամ մըն ալ կը բնամ ձեռք ձգել : Մասնակցեցայ երգեցողութեանց եւ վերացայ, հոգեպէս բարձրացայ . . . :

Վանքին բակը՝ առաւօտուն հիանալի է. թարմ ու զով զեփիւս մը քնքշօրէն կը շոյէ երեսները, ամբողջ կուրծիւնդ : Արեւը արդէն իր սլոյսինը առած է Մասիսի կատարին : Քիչ ետք, կէս ժամ յետոյ ամբողջ զաշար կ'ողողի իր կենսատու ճառագայթներով :

Վերջապէս հասաւ մեր մեկնելու ժամը զէպի Երեւան :

Անմահական լեռնային թէ զաշտային տեսարաններով չըջապատուած՝ մեր խումբը կ'ընթանայ առաջ, զուարթ ու կենսունակ : Երեւանի գրեթէ սահմանակից, նախքան Հրազդանի կամուրջը անցնելնիս, աջ թևի վրայ քարէ պատով չըջափակուած մեծ այգի մը կար : Այգիի զբանը մէջ կանգնած ազամարդ մը, խումբին բաւական առջևէն գացող Չերաղին ձայն առլով՝ «Ա՛յ մարդ, ճամբէ կու գաք, յոյնած պէտք է ըլլաք, արեք ներս ու զովացէք մի քիչ ու խաղող կերէք» բտա : Իսկ Չերաղը՝ «Ա՛յ մարդ, զբանից լաւ բան չէիր կարող մեզ առաջարկել» ըսելով՝ զէպի այգիին դուռը սկսաւ երթալ :

Ես որ քանի մը քայլ միայն հեռու էի եւ լսած էի խօսակցութիւնը՝ հետեւեցայ Վիգին : Խումբի մնացած մասն ալ շուտով եկաւ, միացաւ մեզի, եւ այգիի տիրոջ՝ վանեցի Շահպէտեանի հրաւերով նստանք զեռին, չորս կողմերնիս խաղողներով ծանրարեւոտած սրթատունկերով չըջապատուած : Երեկոն յառաջացած էր, կէս մը միջցած, եւ ցերեկուան արեւին փոխարէն փայլուն լուսնկայ մը կը ջանար քչիկ մը լուսաւորել արբեցուցիչ միջոյցները, իսկ մեր սքանչելի հիւրամեծարը՝ տեսակ տեսակ խաղողներ կը բերէր միշտ ու «Կերէք տղերք, մի խնայէք» կ'ըսէր : «Կերէ՛ք. երբ ես այս այգին գնեցի՝ խաղողի Փունար քսան կոպէկ էր, իսկ հիմա գուք զիւսէք էլի, 120 կոպէկ է Փունար. կերէք, ինձ չէք կարող վնասել . . . » : Երազային այդ երեկոն եւ վասպուրականցի այգեատիրոջ սրաաբուխ հիւրասիրութիւնը իր՝ Հայաստանի անմահա-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՇՐՋԱԳԱՅՈՒԹԵԱՆ ԴՐՈՒԱԾ ԹՂԹԱԴՐԱՄՆԵՐ ԻՐԵՆՅ ԿԷՍ ԶԱՓՈՎ



կան խաղողներով, հողեպէս գինովցուցած էր բոլորս եւ
ցաւելով մեկնեցանք այդ այգիէն, «Մէկի տեղ Աստուած
քեզ հազարումէկ պարգեւէ, աղբեր ջան» մաղթանքներ տե-
ղացնելով հայաստանցի այդ ազնիւ մարդու գլխուն:

Օննիկը վերջնականապէս որոշեց մնալ եւ իր առա-
քելութիւնը արժեցնել:

Հ Ե Ռ Ա Յ Ի Ր

Վարձ		Ուր Որտեղից	Խիւած է
Խփելու համար պատասխանի —	Բուք. Կ.		Ին Ժ. ր.
Ընդամենը			Ժեյի Ք
Ընդամենը			192 թ. Ք
			Խփեց

Կարգ	Բառ. քան.	Ընդունւած ;	Պաշտօնական նկատողութիւն
	-ին Ժ. ր.	

Մրցումը տեղի ունեցաւ «Կազաչի Բոստ»-ի (նախկին զօրանոց, այժմ՝ սրբանոց) գեղեցիկ դաշտին վրայ: Հոն էր ու կր նախագահէր, Շիրակի նահանգապետ՝ Կարօ Սասունին: Նոյնպէս հոն էին քաղաքային նուագախումբը, ծանօթ երեսիկներ և ահագին բազմութիւն: Երեսանը Օ-ի դէմ 1 կօլով յաղթական դուրս եկաւ:

Նախքան մրցումը սկսելը, Չերազ Վահանի հետ Ալեքսանդրարօլի գլխաւոր փողոց՝ Արովեանի վրայ էինք: Մէյ մըն ալ տեսնենք, վիզէն թմբուկ մը կախուած մէկը, փողոցին վարէն կու գայ դէպի մեր կողմը և միեւնոյն առան կը թմբկահարէ: Մեզմէ քիչ անդին, փողոցին ճիշդ մէջտեղը կեցաւ ու սկսաւ մունեակիկի իր պաշտօնը կատարել, յայտարարելով սապէս. «էս օր, էս սրահաթիս, ձէն Էմ տալիս, մաիկ արէք: էս օր, ժամի երկուսին, Ալեքսանդրարօլի «Վարզան Զօրավար» խումբը Երեսանից եկած խմբի հետ, Կազաչի Բոստի դաշտի վրայ...» Յայտնի է որ նեղ կացութեան մէջ է, Փութպօլը չի յիշեր, արագ-արագ գլուխը աջ ու ձախ կը դարձնէ, կարծես տեղէ մը, մէկէ մը օդնութիւն հայցելու համար: Այս քանի մը բողբէլ լսու թեան առան՝ դարձեալ Չերազը կացութիւնը կ'ըմբռնէ և մեր կեցած մայթէն ու թեյ շէշտով մը «Փութպօլ» կը պոտայ: Խեղճացած, բարի մունեակիկը Չերազի բերնէն Փութքը հաղիւհնչած, իր ամբողջ ուժով «Փութպօլ են խաղալու...» յայտարարեց և յաղթականօրէն քայլել սկսաւ աշխոյժ չափով մը թմբկահարելով... Կարծէր հոն բլլալ ու լսել Չերազի արտօթալի խնդուքը:

Այս առտօս, կայարանէն, Վիզն ու ևս ուղղակի Եղիշին (Քաջունի) սենեակը գացինք, հոն բաւական հանգրտացանք և նախաճաշեցինք: Եղիշէ Քաջունին, Եզնիկին Եզրայրը, Պոլսոյ մարմնակրթական շարժման սահմիրաներէն մէկը Եզած է և «Տօրք» Փութպօլի խումբին խաղացողներէն մէկը՝ Վահան Չերազի հետ, սրուն գասրնկերն է Եզած նոյնպէս՝ Կեղրոնական վարժարանի մէջ: Յարցելի վաստակ մը ունի աղգային կեանքի մէջ: Քարաուզարն է Եզած Անդրանիկի «Հարուածոց զօրամաս»ին և այժմ Հայաստան է՝ իրբև ներկայացուցիչ Մանչեստրի Հայ պաղութի կազմած՝ «Հայ փախստականներու հագուստեղէնի ֆրնա»ին և Հայ կարօտ գաղթականներու համար գրեթէ ամէն ինչ պարունակող բնագործակ պահեստ մը հաստատած է Ալեքսանդրարօլի մէջ: Կառավարութեան մօտ՝ Եղիշէի և իր պաշտօնէութեան վարկը մեծ է: «Ասպրիա» (Եղիշէ Թօփճեան գլխաւոր փողոցի վրայ) մեծ պանդակի թիւ 1 գլխաւոր սենեակը կը բնակի:

Երևուան-Ալեքսանդրարուլ եսանդուն մրցումին իր-
րևւ գաաաուր կրնամ բակ թէ՛ խաղի օրէնքներուն մէջ շաա
«բաղիկ» էին երկու կողմի խաղացողներն ալ, որուն ար-
զինք՝ իմ գաաաուրի սուլիչը շաա աւելի հնչեց քան սեւէ
ուրիչ գաաաուրի, սրեւէ ուրիչ տեղ... : Չերազր այս մա-
սին թղթակցութիւն մը զրկած է Պուլիս՝ «Հայ Սկաաու»ին :

Երկու շարթի օր, երկու խումբերը, նոյն գաշտին
վրայ, անպաշտօն մրցում մը ունեցան : Վահան Չերազն էր
խաղին գաաաուրը : Ես, «սէնարը Փորուրըա»ի զիրքով
խաղցայ Ալեքսանդրարուլէն : Արզինք՝ 2-ի դէմ 3 կօլով
«Վարդան Չօրավար»ը յաղթեց : Այդ զիշեր, յայտնի մար-
տիկ՝ Սասունցի Մուշեղի հրաւերով, հաաաքուեցանք իր
սենեակը եւ մինչեւ կէս զիշեր իսկական հայկական ԲէյՖ
մը ըրինք : Հայ աղջիկ սկաաաաներու լաազոյն զեկավար-
ներէն եղող՝ սքանչելի Օֆելիան ալ այնտեղ էր : Հայկա-
կան հարազաա պարերու պանծացում մը եղաա այդ «աաք»
հաաքոյթը : Միջոց մը գացի ուղղակի Սասունցի Մուշեղ
հսկային մօա, գրաւեցի իր կողքին զիրքը եւ ջանացի ար-
զարացնել յանդգնութիւնս... Եւ մեծ ու հաճելի ըոպէ մը
եղաա ինծի համար, երբ, խմբապեա Մուշեղ, լեանական
աննման սասունցիի շեշտով մը, թափ աուա իր մարմնին
եւ քովրնաի, ինծի նայելով՝ «Տօ, բաաամպուլցի, էսպէս
պարելը ումի՞ց ես սովորել» բաա : Իսկույն, ջերմօրէն պա-
աաախանեցի՝ «Մշոյ խաա գիւղի Տէր Քերտրի աղուց եւ
Խնուսի Լաճ՝ Սուրէնից» (Պէրպէրեան վարժարանի մէջ,
իմ հոգեկից՝ Սուրէն Բարախեանը, յետոյ քահանայա-
ցած), եւ իմ կարգին, ես ալ թափ աուի իմ սրունքներուն :
Ի՛նչ լաա ըոպէներ էին, ապրումով լեցուն :

ՀԱՅ-ԹՈՒՐԻՔ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Գշ. 28 Սեպտեմբեր 1920.— Երևանի խումբը, որուն կէսը Հայկական Բանակի սպաներ էին, այս գիշեր մեկնեցաւ :

Սորբրգամիշի ճակատէն վառու մասնազին լուրեր հասան : Թուրքերը, այդ կողմէն, ճակատը ճեղքած են : Ուրշած էինք (Եղիշէն, Վահանն ու Լո) այդ գիշեր, ՉարիՓեան թասերախումբի կողմէ ներկայացուելիք «Տայֆուն»ին երթալ, բայց ճակատի լուրերը ամէն արամազրութիւն փճացուցին : Հաւաքուեցանք Եղիշէի սենեակը և այսպէս թէ այնպէս՝ Ժամանակը անցուցինք : Լսեցինք թէ՛ Սասունցի Մուշեղը արդէն կը պատրաստուի վաղն իսկ մեկնելը գէպի ճակատ, սասունցի 250 ձիաորներով, որոնց արամազրութիւնները շատ բարձր են և ինքնալստաս :

Թուրք և Հայ կախիներ, ճակատէն վառ լուրեր, զինուորական պատրաստութիւններ, այս բոլորը Չերազը դրած են գերազանցապէս անհանգիստ, ջղազրզիս վիճակի մէջ, և զժուար չէ ինծի համար գուշակել՝ թէ Վահանը շուտով կը ձգէ ամէն ինչ և կը մեկնի Էսուի դաշտ, և ինծի կը մնայ՝ ասանձինն տանել մեր տաքելութեան պարտականութիւնները, որոնց գործազրութեան ուղղութեամբ, արդէն զրական և արդիւնարեր աշխատանքի ենք լծուած :

Այսօր, 29 Սեպտեմբեր, այցելեցի՝ Ալեքսանդրարօլի ծայրը գտնուող մեր մեծ սրբանոցը՝ «Բալիկոն» : Ռուսական բանակի հսկայ կայան մը եղած է նախապէս, ամէն կարգի զինութիւններով, նման քաղաքի միւս ծայրը գտնուող «Կազաչի բոստ»ին, որու գաշտին վրայ տեղի ունեցաւ Երևան-Ալեքսանդրարօլ Փութպոլի մրցումը : Ռուսուցչական կողմին անուններուն մէջ հանդիպեցայ՝ Յօղիկ Արապեան անունին : Հետաքրքրուեցայ և տեսակցեցայ հետը : Այո, ենթադրութիւնս ճիշդ էր : Տրապիզոնի Արապեան հարուստ բնասնիքի զաւակ, բարձր կրթութիւն ստացած, շնորհալի Յօղիկն էր, որ պատերազմէն առաջ, իր եղբոր հետ, Տրապիզոնէն Մանչեստրը (Անգլիա) ճամբուն վրայ, Պոլիս, Գնալը կղզի, մեր սիրելի հիւրերը եղած էին երեք օր : Եղբայրը կ'երթար Մանչեստրը, հիւսուածեղէնի ճարտարարուեստի նորագոյն կերպերը ուսումնասիրելու, որպէսզի դանսնք գործադրէ Տրապիզոն, իր սկսած գործարանին մէջ : Ծանօթացուցի ինքզինքս. թէ՛ ուրախացաւ և թէ՛ աչնուականօրէն տխրեցաւ, և քանի մը անհրաժեշտ տեղեկութիւններէ ետք՝ նախընտրեց լսել ու չփշել այն սարսափի օրերը : Ո՞րեկէ ուր, Աստուած իմ...

Այս երեկոյ կարճ այցելու թիւն մը տուի Չարիֆեաններուն (զերասան), Տիկ. Արաքսը հոն էր. ծանօթացուցի ինքզինքս, և ան, ոպետութեամբ՝ երկարօրէն հարցուց մեր բնասանիքի և Պուլտոյ լուրերուն մասին: Իրենց տուի՝ Պուլտէն հետս բերած Յասուփ երեսի ներկեր: Չափազանց յարգի անցաւ. իրենց ներկերը զբեթէ սպասած էին և իմ բերածներս, թէ և Քրանսական (Գերմանականներն ևն լուսագոյնը) ճիշդ ասենին հասան: Երջանիկ զգացի, որ իրենց «նկօրին» հասայ. . . Մեկնած ատենս Չարիֆը տուն եկաւ, տուփերը արագօրէն աչքէ անցուց և երբ զեղին գոյնով ներկը տեսաւ՝ «Այ ապայ, ինչս՞ է երկու օր ասաջ չրերիբը, որ Տայֆունի (ճարտնական) համար գործածէի» բտաւ, և իր բոլոր ներկայացումներուն համար սպաս մտաքի ամս մը տուաւ: Աոյն զիչերը «Իերասան Քին»ը կը ներկայացնէր. գացի: Վերջին արարին կէսին ելիկարական հոսանքը զազրեցաւ, լոյսերը մարեցան և մամի լոյսերով վերջացուցին ներկայացումը: Երեսանի մէջ այսպէս բան չի պատահիր, շնորհիւ արագօրէն «Հրագրան»ին:

Դշ. 2) Սեպտեմբեր. — Լուրերը տեղի ծանրացան այս աստուտ: Սարրզամիշէն փախստական զաղթականներով լեցուն գնացք մը հասաւ հոս: Քաղաքը պատուած է, կ'ըսեն:

Զօրավար Սեպուհը հասաւ Երեսանէն: Թուրք և շայ այս նոր պատերազմի հրամանատարական կեզրոնը փոխապրբուած է Ալեքսանդրաբոլ: «Սարզարապատի Հերոս», յայտնի սաղմաւար՝ Զօր. Սիլիկեան և զնդապետ Շահմազեան եկան Երեսանէն և իջեանեցան «Ասդորխա» պանդոկը, Եղիշէ Քաջունիի սենեակին ճիշդ գիմացի սենեակը: Զօրավարը արզիլած էր «Անհանպատացնել Պր. Քաջունին», անոր բնակած լուսագոյն սենեակը պրաւել տալով, զինուորական անհրաժեշտութեան համար: Որքան փափկանկատութիւն՝ զօրավարի մը կողմէ. . . : Զինուորական սենեկս պատրաստութիւններ կան և զինուորական վիճակ յայտարարուեցաւ: Ոչ ոք կրնայ հեռանալ քաղաքէն, ասանց օրինական արածնապրի:

Թուրքերու յարձակողականը առայժմ կասեցուած է, կ'ըսուի. . .

Երեսանէն նոր զօրք եկաւ՝ ճակատ մեկնելու համար: «Վարդան Զօրավար» զրահապատ զնացքն ալ եկած է:

Այսօր, զօրավար Սիլիկեանն ու Սեպուհը օրօմնապիլով կարս ևն մեկնեն:

Ես՝ իմ կարս մեկնումս քանի մը օրուան համար յետաձգեցի:



Հրետանիի վարժուրիւն



Անդրանիկ՝
հրամանատար կամաւորական Ա. գունդի



Վահան Չերազ կամաւորական գունդի մը մէջ (նոստրի՝ աջէն երրորդը) 1916-ին, Երեսանի մէջ :

Թրքահայ ազոց արամազրու թիւնը, խոտորջուրցի քաջերու շունչով կրակուած, շատ բարձր է. մօտալուս կախի երազներով կը խայտան:

Վախս իրականացաւ... Չերազն ու Եզնիկը իրենց հրաժարականները զրկեր են Կրթական Նախարարութեան և Վահանը իր բոլոր շարժումներով կը մասնէ ինքզինք թէ՛ որոշած է իսկոյն Հայկական Բանակ կրթալ:

Օննիկէն նամակ ստացալ, որ ստաջին անգամ բլլալով վճակամութիւն կը յայտնէ մեր գործը աւելի ուժով յատջ ասնելու. ինք՝ Երևանի մէջ, իսկ և՛ Ալեքսանդրարու: Չերազը Եզրայրական տեսակցութիւն մը ունեցաւ ինծի հետ և պարզեց՝ կտուի ճակատ մեկնելու որոշումը, և Չերմօրէն սղջագորտելով՝ յաջողութիւն մաղթեց ինծի...: Չերազ Վահանը, իմ պատանեկան օրերու «Հերոս»ը, որուն շատ բան կը պարտիմ, զնայ իր զինակից բնկերոջ, շատ լաւ ու քաջ ազոց մը՝ «Փիթ»ին հետ: Աստուած հետեւինն բլլայ և Ատարայրի սղին՝ իրենց ստաջնորդ:

**

Ասանձին ևմ: Լծուեցայ գործի: Սկսուտական սասնակներու մէջ կազմակերպուած որբերը հազուեցնելու ձեռնարկեցի: Կտաւի սկէպ կար, իսկ Հայաստան՝ շունչը: Գիմեցի Եզնիկին: Միտսին մասնք իր պահեստանոցը և քանի մը կտոր բան պանք, ան ալ յարմարցնելու պայմանաւ: Որոշեցի գիմել Ամերիկեան Նպաստաւաւտոյցին:

Միլթըն Պրատն էր անունը մեծաւորին: Ժամազրրուեցանք՝ յաջորդ օրուան համար, ժամը ցերեկէ ետք 2-ին: Որոշուած ժամանակէն թիչ ստաջ՝ Պր. Պրատնի գրատեսնակն էի. ինք հոն չէր. սպասեցի մինչև 2-ր 15 վայրկեան անցած: Կրնայի աւելի երկար սպասել, բայց՝ բռնմ, շարաճճի մտածում մը թելազրեց ինծի ժամազրութիւն յարգելու պատ մը սալ ամերիկացի պաշտօնատարին: Քարտուգարին անունն էր՝ Վահան: «Ըսէ՛ Պր. Պրատնին, որ Scout Master-ը եկաւ, սպասեց ձեզի և մեկնեցաւ՝ ցաւ յայտնելով, որ զուք ձեր ժամազրութեան ներկայ չէիք»: Հազիւ հասեր էի Թօփճեան փողոց՝ երբ փոքրիկ օթօ մը կանգնեցաւ մօտս: Արագօրէն զուրս ցտակեց շատ համակրելի, զեռ երիտասարդ կոչուելիք չէկ մաղէբով մէկը: Ինքզինք ներկայացուց և նախ անգլերէնով, (ինչ որ չէի հասկընար), յետոյ՝ Քրտնսերէնով ներսգութիւն ինդրեց պատահածին համար, շատ շնորհայտօրէն և «Ատաջին՝ հայ անհասն էք, որ զիս պզտիկ ձգեցիք այս ձեւով: Այստեղ, — բաւ — ժամազրութիւնը արժէք չի ներկայացներ, ճիշդ ժամանակին չեն գար և Աստուած գիտէ միայն թէ



№

Կապու 2/2/1920

Սրբազան

Ինչպես և անհրաժեշտ է հարկերի վճարումը...

Գրեցի Ձեզին այս օրը...

Ձեր ցուցման համաձայն, ես...

Մի քանի օրվա ընթացքում...

Ձեր հարգանքներով...

Գ. Բ. - Տնօրենի և ֆինանս...

Ձեր հարգանքներով...

ե՞րբ կու գան»։ «Բայց այս անգամ մոռցաք, որ Scout Master մըն էր ժամադիրը» ըսի։ «Ա՛խ, այո, ես ալ Scout Master մըն եմ՝ ամերիկեան սկաուտներու» ըսաւ աշխոյժով եւ ձեռքը երկարեց ինձի։ Ձերմօրէն իրարու ձեռք սեղմեցինք եւ՝ «Եղբայրներ ենք» ըսելով՝ հրամայուց զիս իր օքօն մտնալու։ Գացինք նպաստամարտից՝ պահեստը։ Երբ ներս մտանք՝ «Ձառէ ինչ որ կ'ուզես, պահեստը քուկէ է» ըսաւ տաքարին շեշտով մը։ Եւ... բարեկամները դարձանք։ Այս պահեստը ունէր իմ ուզածներս եւ անշուշտ օգտուեցայ ամերիկացի «եղբորս» բարի արամազրութենէն։

*
**

Որբանոցի աղոց հետ իմ գրադումներս կանոնաւոր հունի մէջ մտած են արդէն։ Տասնմէկ ուսուցիչներ արամազրած են իրենք զիրենք շուէտական մարգանքի դասեր առնելու, եւ աստջին դասը ատած եմ իրենց։ Հաճելի եւ շատ խոստամնալից դասարան է։ Մեր դասերու մթնոլորտը լուրջ է եւ զուարթ։

Անակնկալ եւ հպարտացուցիչ բան մը պատահեցաւ։ Հայկ. Բանակի թնդանօթային բաժնի վերին հրամանատար՝ Զօրավար Արարատեան (սքանչելի զինուորական մը՝ Ռուսական Բանակէն), որ Ալեքսանդրաբոլ եկած էր Կարս երթալու համար, զիս տեսնել կ'ուզէր։ Գացի իսկոյն, զինուորական լաւ բարեւ մը ատի իրեն։ Բարեւս ատու՝ գոհացած, եւ հրախրեց որ նստիմ։ Ալեքսանդրաբոլի բլրան վրայ գտնուող բերդի մարտկոցներու համար 21 մեծ ըսկաուտներ կ'ուզէր, իսկոյն թնդանօթներու վրայ վարժութեան սկսելու պայմանաւ։ Սոստացայ՝ յաջորդ օրն իսկ իմ պատասխանս տալ իրեն։ Կարս պիտի երթար, որով գնդապետ Նալբանդեանի մը հասցէն ատաւ, որպէսզի անոր հետ պահենք մեր կապերը, եւ՝ «նա գիտէ այս մասին» ըսաւ։ Ձերքս սեղմեց ջերմօրէն եւ գնահատեց սկաուտական այս գործակցական ոգին, յաջողութիւն մաղթեց եւ իմ՝ «Մնաք բարովի» զինուորական բարեւիս փոխադարձեց ու... բաժնուեցանք։

Հոգիս կը խայտար հպարտութեամբ։ Առանց ժամանակ կորսնցնելու հաւաքեցի մեծ սկաուտները եւ պարզեցի՝ զիրենք կանչելուս նպատակը։ Բոլորն ալ հիանալի ոգիով «Պատրաստ ենք իսկոյն մարզուելու» ըսին եւ... իւրաքանչիւրին ձեռքը սկաուտական ձեռով թօթուելէ ետք՝ յարարութեան մէջ մտայ գնդապետ Նալբանդեանի հետ, որ բարձրօրէն գնահատեց սկաուտական այս հայրենանուէր ոգին, ու... ժամադրուեցանք, մարզուելու համար, յա-

Ջորջ օրուան երեկոյեան : Լուրը հազորդեցի աղոցս, եւ յա-
 ջորդ օրը սկառուաներս ու ես պացինք բերդը, ուր՝ գնդա-
 պետը գովեստի ու խորխուսանքի մէկ երկու խօսքերէ յե-
 տոյ, յանձնեց զանոնք մարդիչի մը, աշխատանքի սկսելու
 համար :

*
**

Շք. 9 Հոկտ. 1920. — Այսօր տօնական օր է եւ Կա-
 թողիկոսի (Գէորգ) անուանակոչութեան օրը : Ալեքսանդր-
 րարոլի մայր եկեղեցիին մէջ, աիրող կացութեան առթիւ,
 Կաթողիկոսի Կոնդակը պիտի կարդացուի : Առաւօտուն
 կանուխ եկեղեցի պացի : Խիա բազմութիւն կար : Վաչո մը
 զինուոր, բոլորն ալ հագնուած անգլիական բանակի՝ հա-
 գուսաներով՝ եկեղեցւոյ բակին մէջ կանոնաւոր շարուած
 էին : Եկեղեցիին մէջ ներկայ էին՝ Ջօր. Սիլիկեանը, քա-
 ղաքապահ գնդապետը՝ Զատիկեան եւ ուրիշ հետեւորդ-
 ներ :

Փոքրիկ աղջիկներ ու աղաք, միաձայն Եկմալեան
 պատարագը կ'երգէին՝ շատ հաճելի ու ներզաշնակ : «Հայր
 Մեր»էն ստաջ, «Էջմիածին է Հօրէ...» երգելով, Կոնդա-
 կը թափօրով տարին խորանին վերայ, ուր՝ պատարագիչ
 սրբազանը, երկու խօսքէ ետք, կարգաց դայն յստակ յստակ
 ու բարձր : Ուղերձ մըն էր այլ ամբողջ հայ ժողովուրդի
 բոլոր պատերան, եւ կոչ մը՝ գէպի հերոսական, կորովի
 դիմադրութիւն, կոխ : Արարողութենէն ետք, պատարագիչ
 սրբազանը, զպատարուած եւ մեծ թափօրով, եկեղեցիին
 բակը եկաւ եւ հոն բարեւի կեցած զինուորներուն խանդա-
 վառ ուղերձէ մը ետք, օրհնեց անոնց զէնքերն ու ճանա-
 պարհը, եւ յաղթական վերադարձի մաղթանքներ բրաւ :
 Յետոյ, թափօրը՝ ստուարացած, զինուորական քայլերով
 րնթացող բանակայիններու առաջնորդութեամբ առջանցք
 մը կատարեց քաղաքի գլխաւոր փողոցի (Թօփճեան) մէ-
 ջէն : Եկեղեցիին մէջ, Կոնդակի րնթեցումէն ետք, երբ եր-
 գեցիկ խումբը «Հայր Մեր»ը երգեց, պատարագիչ Սրբա-
 զանը կրկին ետ վարձաւ գէպի ժողովուրդը եւ յուզուած
 կերպով բաս . «Այսօր անուանակոչութեան ալ տօնն է Սրբ-
 րագան Հայրապետին . ինձ իրատունք կու տա՞ք, որպէսզի
 իրեն հեռագրեմ թէ զուք, հայ ժողովուրդը, որոշած է մին-
 չեւ իր արեան վերջին կաթիլը՝ Կոստիլ թշնամուն գէմ : Ի-
 րատունք կուտա՞ք...» Եկեղեցիին ժողովուրդը պատասխա-
 նեց՝ միարեան . «Այո, ինդրում ենք...»

Կիր. 30 Հոկտ. 1920.— Առաւօտուն, ժամը 10-ին, Խրիմեան վարժարանի մէջ, շուէտական եւ չափական մարզանքներու շատ շինիչ եւ ասողջապահութեան կարեւոր ազդակներ ըլլալնուն շուրջ դասախօսութիւն էի որոշած ուսուցիչներուն: Բոլորն ալ ներկայ էին եւ սակայն սովորականէն տարբեր, բնկճուած հոգեվիճակով, կարծես անտրամազիր՝ դասախօսութեան ունընդրելու: Ասկէ առաջ, միշտ թիւ տրամադրութեամբ եւ հիանալի արդիւնք տուող դասարան մը եղած էր, որով զիրենք ցնցել աշխատեցայ եւ ուզողակի հարց տուի իրենց, թէ՛ ի՞նչ է պատահած, իրենք նման չեն իրենց: Կը սիրէին զիս եւ ըսին թէ՛ չէին ուզեր դասաւանդութեան գալ, բայց զիս վշտացնել չէին փափաքեր, ու. ահա՛ հոս են, բայց... «Բայց ի՞նչ» ըսելուս պէս՝ գրեթէ բոլորը միասին «Կարսն ընկել է» ըսին, ու՛ ճշացին: Յաւ ու բողոք կար իրենց ձայներուն մէջ եւ... խոշոր հարցական սեւ նշան մը՝ իրենց աչքերուն խորը... Կարսի անկումը կը նշանակէր անորոշութիւն, գաղթ, արևն ու փլուզում՝ շատ մը սրբութիւններու...: Աչքերս կարծես դուրս ժայթքեցին իրենց կողերէն, անբացատրելի սեղմում մը զգացի կուրծքիս տակ եւ «Ի՞նչ» մը միայն ըսի: Այդ ի՞նչն էր մէջ կային այն ամէն ինչերը, որ այդ բոթը յառաջացուց մէջս...: Դաս սալու տրամադրութիւնս ի հարկէ փճացու, դաս ըսելու տրամազիր ոչ մէկը կար արդէն, այդ ըսպէն... Մտեցայ իրենց եւ՝ «Շուտով տուն գացէք եւ կացութեան ու մեր երկրի պահանջներուն համեմատ շարժեցէք» ըսի: Ժողովեցի ինքզինքս, նոյնը թելադրեցի իրենց եւ յաջորդ դասի օրն ու ժամը հարցական նշանի մը տակ գրի: Իւրաքանչիւրին հեռ ջերմօրէն ողջապարտեցայ եւ փոխադարձաբար բարձր տրամադրութեամբ բաժնուեցանք իրարմէ:

**

Քաղաքը ճնշող մթնոլորտ մըն է ստացեր. ամէն դէմք սարսափ ու յուսալքում կ'արտայայտէ: Գիւղերէն, շարան շարան, սայլեր՝ փախստականներու, ամբողջովին բեռցուած կու գան ու կ'անցնին դէպի Հեռուն: Փախուստի, խուճապի տրամադրութիւն մը կը նշմարուի, խօսքերու եւ գործերու մէջ: Դասալիք, փախստական, իրենց զէնքերը հետերնին վերցուցած, ճակատար լքած զինուորներու չափը չկայ. բոլորն ալ իրենց ընտանիքներուն փրկութեան ետեւէն են: Աղէտը շատ մեծ է եւ պատճառը՝ կ'ըսուի թէ հակահայրենասիրական գաղափարներով թունաւորուած մեր մաս մը զօրքի պատճանոթիւնն է: Չեմ կողաւ: Կարսը ինկած է մէկ ժամուան մէջ, կ'ըսեն, առանց իր բերդերուն

Թնդանօթները կարելի չափով օգտագործելու : Հայանուն «Կարմրածներ» լաւ են աշխատակր մեր զօրքին մէջ եւ . . . ա-
 չա՛ տա՛ տա՛ տար արդիւնքը . . . : Կարսը ինկած է Հոկոս . 29-ի
 ժամը 2½ին : Շատ քիչ ժողովուրդ կրցած է փախչիլ . այն-
 քան որ՝ անսպասելի, կարճ ժամանակի մէջ պատահած է
 անկումը : Երկու գունդ զինուորներ ներս են մնացած, գե-
 ըրի՞ թէ ինչ՝ չի գիտցուի : Կ'րսեն թէ՛ Զօր . Արարատեանն
 ալ բերդին մէջ մնացած է . . . : Կարսի առջեւ, գեղապետ
 Մազմանօֆ, սուսահայ լաւագոյն ու փորձառու սպանե-
 ընն մէկը, անձնասպան է եղած, տեսնելով որ իր հրաման-
 ները սեւէ արժէք չունին իր զօրքերուն համար եւ չի կրնար
 օգնութեան հասնելու իր ոյժը օգտագործել : Մեր զօրքի
 մնացած մասը, հաւատարիմ մասը զիրք է լոնած Ղըզըլ
 Չախչախի մէջ, ուր Սեպուհը, Սմբատը եւ գնդապետ Մե-
 ըիմանօֆ կը հսկեն : Երէկ գիշեր, նահանգապետ Կարօ Սա-
 սունին, ժողովրդական թատրոնին մէջ, ժամը 6-ին, հոծ
 բազմութեան մը, կարճ զեկուցում մը ըրաւ կացութեան
 մասին, եւ պարզելով թէ հայ ժողովուրդի համար փա-
 խուստի որեւէ տեղ չկայ, հրաւիրեց ժողովուրդի լոյսը
 դասերը անխտիր, միանալու՝ կուռ ու վճռական ինքնա-
 պաշտպանութեան համար : Երէկ՝ Հոկոս . 31, իմ մեծ
 սկառուներէս 30 հոգի, կամաւոր գացին ճակատ : Ուզեցի
 որ միասին երթանք, բայց այդ սքանչելի նայուածքներով
 ու կեցուածքով հայորդիները՝ «Սմբապետ, քու աւելի
 կարեւոր աշխատանքդ այստեղ է» ըսին ու արդիւնցին :
 Համբուրեցի, կուրծքիս սեղմեցի զիրենք եւ վերջին սկա-
 ուտական բարեւով մը բաժնուեցանք . . . :

Մ թնդորտը դարձեալ ծանրօրէն ճնշիչ է, օդը շնչելն
 իսկ դժուար է : Ամէն կողմ յայտարարութիւններ՝ ժողո-
 վուրդը հրաւիրող, որ ճակատը զօրացնէ :

Այսօր, Դշ . , 2 Նոյեմբեր 1920 .— Կանուխ առաւօտ-
 եան, Ղըզըլ Չախչախի կողմէն Թնդանօթի ճայներ լսելի
 են : Կոխ է սկսեր, կ'րսեն : Բանագնացները չեն յաջողած .
 թուրքերը ծանր պայմաններ կ'առաջարկեն :

Այսօր, Սեպուհի բանակէն Խոտորջուրեցի Թորգո-
 մը եկաւ : Չերագ Վահանէն նամակ բերած էր, որ կ'ըսէր
 թէ՛ պատրաստուինք գաղթելու : Թորգոմը, Խոտորջուրե-
 ցի այդ քաջ տղան նոյնիսկ ընկճուած է : Բոլոր տղաքն ալ
 այդպէս են, յուսալքուած, ընկճուած : Դեռ կարելի չէ ըմ-
 բրոնել, թէ ի՛նչ խիստ հարուած է իջած մեր գլխուն :

Ես, որոշեցի յաջորդ օրն իսկ մեկնիլ ճակատ, Թոր-
 գոմին հետ : Պատրաստութիւններս արդէն տեսայ : Մ իմի-
 այն շատ անհրաժեշտ իրեր դրի պայուսակիս մէջ . մնացեա-

լը յանձնեցի ամերիկացիներուն՝ որոնք կը մնան: Ըսի քարտուղար Վահանին. «Եթէ վերադառնամ՝ յուսամ թէ գոնէ սիրած գիրքերս կը գտնեմ, իսկ եթէ չվերադառնամ՝ քուկըդ են, ըրէ՛ ինչ որ յարմար կը դատես»:

Թնդանօթի ձայները, երեկոյեան դէմ դարձեալ շատցան: Տաք կռիւ է աջ թեւի վրայ, Սմբատի զօրամասին կողմը: Այնպէս կը թուի թէ՛ վճռական ժամը կը մօտենայ:

Այսօր, ժամը 3-ին, «Փիթ» ենք եւ Գղեցի Յակոբենք, երկու սայլով դէպի Ղարաֆիլիսէ ճամբայ ելան, ճաճուրի վրայով: Այս՝ վեցերորդ անգամն է, որ այդ հրաշալի ընտանիքը կը գաղթէ:

Ուրբաթ, 4 նոյեմբեր 1920. — Չորեքշաբթի գիշեր, ժամը գիշերուան 10-ին, խուճապով դուրս եկանք քաղաքէն (Ալեքսանդրաբոլ), ամբողջ նահանգապետարանի պաշտօնէութեան հետ:

Կարօ Սասունին, Սասունցի Մուշեղին հետ, 30 ձիաւորով՝ առաւօտեան դէմ դուրս պիտի ելլէր:

Բանակէն ոչ մէկ որոշ լուր ունէին, այն սոսկալի գիշերը: Կը կարծուէր, թէ արդէն պաշարուած էինք. այնպէս որ՝ վստահելի որեւէ ճամբայ չկրցան ցոյց տալ մեզի: Երեւան անցնիլ՝ բոլորովին անկարելի էր:

Փիթը, Յակոբը, Տաճասն ու ես բռնեցինք Ղարաֆիլիսէի գլխաւոր ճամբան, որ լեցուն էր արդէն փախչող ձիաւորներով ու սայլերով: Ձիւնի, ցեխի մէջ հազար նեղութեամբ ընթացող եւ ո՞վ գիտէ քանի՞ երորդ անգամն ըլլալով գաղթող ժողովուրդի մօտէն անցած ատեն սրտաճրմիկ էր տեսնել իրենց երեւոյթը եւ լսել՝ վճատած հոգիներու դառն արտայայտութիւնները: Ճանապարհին ջանացինք մեր կարելի չափով օգտակար ըլլալ այդ վշտաբեկ ժողովուրդին...

Ճաճուրհասանք առաւօտեան ժամը 2-ին: Հոն՝ սայլերու մէջ գտանք մեր Փիթենց ընտանեկան սայլը: Մեկնեցանք ժամը 5-ին: Ճաճուրի լեռը հազիւ դարձած, թնդանօթի ձայները սկսան որոշապէս եւ աւելի զօրեղ լսուիլ: Սոսկալի ցուրտ է, ամէն կողմ սառած է եւ տակաւին կը ձիւնէ: Ճաճուրի լեռնէն իջնելու համար շատեր թեւ թեւի, իրար նեցուկ հանդիսանալով, շատ զգուշութեամբ ու մեծ դժուարութեամբ կ'իջնէին լեռան ստորոտը, ուր՝ բոլորս ալ խճողուեցանք կովերու ախոռներու մէջ. հոն, այդ բարի կենդանիները իրենց կովային արտայայտութիւններով կը մատնէին իրենց զարմանքն ու դժգոհանքը մեր անհրաժեշտ ներկայութեան համար, բայց իրենց շունչերով տաքցած եւ «հոտաւէտ» մթնոլորտը ախոռին՝ մասնաւոր գը-

րաւչութիւն մը ունէր այդ օր, անտանելի ցուրտէն գրեթէ սառած մեր քիթ ու բերնին, ոտքերուն եւ սմբողջ մարմնին համար... :

Երեկոյեան Համամլը գիւղը գիշերեցինք, եւ այսօր, Երեկոյեան ժամը 3-ին հասանք հոս՝ Արշալ գիւղը, որ Արաքիլիսէէն 4-5 վերստ է: Այս գիշեր այստեղ կը մընանք, գլուխ դնելիք տեղ մը գտանք արդէն:

Փիթը կայարան գնաց, գնացք կար դէպի Ալեքսանդրաբոլ եւ նոյն գիշերն իսկ մեկնեցաւ հոն:

«Սենեակնիս» աղտոտ է ու խճողուած: Յուսամ՝ քիչ մը հանգստանալու եւ թերեւս քնանալու պատեհութիւն կ'ունենամ:

Այստեղ կը վերջանան իմ փոքրիկ յուշատետրիս՝ մատիտով գրուած եւ երբեմն հազիւ ընթեռնելի տողերը, որոնց հետեւեցայ՝ յուշերս աւելի վաւերական ու կենդանի դարձնելու համար:

Յաջորդող օրերու ընթացքին, Տաճատին հետ, սպասողական դրութեան մը մէջ, ջանացինք ստանալ Հայաստանի լուրերէն, որոնք բոլորն ալ վհատեցնող էին: Դէպքերը գահավիժեցին, Հ. Հանրապետութիւնը տապալեցաւ եւ... Տաճատին հետ, գլխիկոր ու հոգեկան տանջանքներով ճնշուած, հազար դժուարութիւններով, կրցանք մենք մեզ նետել Պաթում, եւ այնտեղէն ալ՝ Պոլիս:

Դեկտեմբերի մէջն էր. Տաճատը ինձի հետ առած գացի Գնալը կղզի, մեր տունը: Մերինները լուր չունէին: Հայաստանի դժնդակ կացութիւնը մտահոգած էր զիրենք եւ իմ՝ յանկարծ երեւնալուս անակնկալը մեր էր, թէ՛ ուրախ եւ թէ՛ տխուր: Տաճատը մեզի մօտ մնաց քանի մը օր եւ մեկնեցաւ:

Александровский Уездный Учительский Союз.

Квитанция № 432

Получен членский взнос от Анны Шришмуцкой

Анны Шришмуцкой

Анны Шришмуцкой

Анны Шришмуцкой

Председатель Союза И. И. И.

Казначей И. И. И.

ՊՆՏ. 9009

Ստան. 004

Ներ-ուր

1926 թ.

ՄԱՐՏԻ ԸՐԵՐ ՈՒ

Ստան. 004

Եղանակներ

Վար. անդամ

Գանձարար

Handwritten notes and a circular stamp.

1926

Ստան. 004

Եղանակներ

ՊՆՏ. 000. 004

Ձև №

ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒՐ

30

Վար. գանձարար

Issued Oct. 23rd 1926

NEAR EAST RELIEF

PERMANENT Dikran Hoian

Boy Scouts Leader

Good for passage on any N.E.R. AUTOBUS.

E. A. ECKMAN
Director of S. & T. S-2

No. R. M. Gilman

ԵՐԿԱՆ 4009.

№ 1951

ԳՐԵՏՆԵՐ

ԲՈՒՐ. 50 ԲՈՒՐ.

Դասակ ըմբ.

Վարարի Գրք

Հայաստանի մէջ Տիգրան Խոյ-
հանի տրուած ստացագիրներ:

Պսիխը՝ իր թուրք ոստիկաններով, անբարտաւանացած մթնոլորտով անչնչելի էր այլեւս ինծի համար: Հօրենական տան կարօտած, նուիրական մթնոլորտը, ընտանեկան տաքուկ, գուրգուրոտ շրջապատը, սրտցաւ ընկերներու ջերմ վերաբերմունքը չէին կրնար մեղմացնել հոգեկան տանջալից ապրումներս, երբ՝ տեւականօրէն կը յիշէի իմ հպարտ ու քաղցր օրերը Հայաստանի մէջ, եւ այդ յուշերուն հետ անբաժան, մոռալ ու գլխու պտոյտ տուող պատկերներ, դէպքեր ու դէմքեր, կը մթազնէին հոգիս: Եւ... որոշեցի հեռանալ:

Իսկ ի՞նչ եղաւ մեր առաքելութիւնը:

У Д О С Т О В Ъ Р Е Н И Е №. 3142.

Дано сие отъ Управленія Эриванскаго Военскаго Начальника С.-В. ХОИЛУ ТИ... въ томъ, что онъ мобилизованъ и поре-данъ въ распоряженіе МИНИСТРА НАРОДНАГО ПРОСВѢЩЕНІЯ, что по какому-то распоряженію печатъ удостоверенъ. - " 26 " Апреля 1920 г. Г. Эривань.



Эриванскій Военскій Начальникъ
ГЕНЕРАЛЬ-МАЮРЪ

[Handwritten signature]

Савдыва щи Эриванскимъ Уезднымъ
С. Р. БИМЕ - Пунктомъ
ШТАБЪ-КАМПАНЫ

[Handwritten signature]

Երեւանի զինուորական ընդհանուր հրամանատարին հաստատող իր սկսու-տապետ Տ. Սոսեանին, որ կը հաստատէ ըրբըր զինուորական անձնակազմերուն, որ Տ. Սոսեան Կրթական Նախարարութեան կազմէ յանձնառու տառերութեան կազ-ուած է:

ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ՀԱՇՈՒԵՅԱՐԴԱՐԸ

Հայկ. Հանրապետութեան ուղղակի սրտաբուխ զգացումով եւ հպարտ խանդավառութեամբ մը «Հ.Մ.Ը.Մ.»-ի տուած դրական պատասխանը շատ բնական էր. ուրիշ կերպ չէր կրնար ըլլալ այն պատմական, լուսաշող օրերուն, երբ դարերով իր ազատութեան ձգտող հայ ազգի շղթաները փշրուած էին եւ նորաստեղծ հանրապետութիւնը հայոց, իր կռնակը չտկելու ջանքերուն մէջ, աշխարհացրիւ հայ ժողովուրդին կը դիմէր անխտիր եւ սրաբացօրէն, որպէսզի օգնութեան ձեռք երկարեն իրեն: Նորահազմ «Հ.Մ.Ը.Մ.»-ը իր ոգիին վայել աշխոյժով, եղաւ առաջիններէն, որ՝ «Մասիսի գլխին» պարզուած Հայ ոգիի հրեղէն դրօշակը միշտ կանգուն պահելու համար իր յառաջապահները ուղարկեց Մայր Հայրենիք: Փառաւոր էր, հիանալի, սակայն մեր «Երկիր Դրախտավայր»-ը ափսո՛ս, զրկանքի, «չկայ»-ի հայրենիքն էր այդ օրերուն: Գերմարդկային ճիգերով, անկարելի նկատուելիք միջոցներով եւ նուիրումի, անձնուրացութեան անգրեւի չափերով, լարուած ջիղերով, աննահանջ պայքար էր բացուած՝ «չկայ»-ի, աղքատութեան, անօթութեան, համաճարակ հիւանդութիւններու (որուն մեծ զոհերէն մէկն եղաւ, սքանչելի՛ «Վանայ Արամ»-ը) դէմ: Այս բոլորին վրայ կ'աւելնային ներքին՝ նենգ ու անպարկեշտ նկարագիրներու եւ արտաքին՝ անհաշտ դրացի ազգերու չարաչահութիւնները, դաւաճանութիւններն ու դաւադրութիւնները: Եւ պատահեցաւ անխուսափելին, երբ, թուրք եւ ռուս միացած շահերը խեղդամահ ըրին, իր ազագուն սրունքներուն վրայ դեռ նոր կանգնելու փորձ ընող մեր մանուկ հանրապետութիւնը:

Այն նորագատ հայրենիքի երկուքուկէս տարիներու կեանքը դիւրի՛ն-դիւրի՛ն քննադատողները — հոգ չէ թէ՛ ինչ հաշիւներով ըլլան անոնք — թող իրենց միտքի եւ հոգիի անխարդախ մէկ վայրկեանին, ձեռքերնին իրենց խիղճին վրայ դրած, փորձեն տեսնել այդ օրերու իսկական, տխուր պատկերը եւ, ըստ այնմ դատեն...:

Ուրեմն, այդպէսի հայրենիքի մը մէջ պէտք էր գործէինք: Գործը սուրբ էր մեզի համար: Որբանոցներու մէջ խճողուած բազմահազար անուշիկ որբերու մարմնային ու հոգեկան կազմաւորումը, սկառուտական բարձրացընող Ոգիով՝ մեր առաջնահերթ նպատակակէտն էր, եւ այդ գործին նուիրուելու կամքն ու խանդը չէր որ կը պակսէին մեզի. սակայն, դժբախտաբար, անգուշակելի պատմութիւնը տարբեր բախտ էր սահմանած մեր Առաքելութեան:

Միայն երկու ամսուան «գործունէութիւն» մը ունեցաւ 4-երու (Չերազ, Օննիկ, Տիգրան եւ Եղնիկ) առաքելութիւնը: Գրեթէ մէկ ամիսը, անտեղի կերպով վատնուեցաւ կրթական նախարարութեան (բժիշկ Արծրունի) ներկայացուցիչի եւ մեր միջեւ գոյութիւն ունեցող անհաշտ տեսակէաներու միաձեւումին: Սեպտեմբեր ամիսը մտանք արդէն եւ մենք՝ չորսս, դպրոցական տարեշրջանի համար, մեր կողմէ խնամքով մշակուած եւ կրթական նախարարութեան վաւերացման ենթարկուած մարմնակրթական ծրագիր մը պատրաստեցինք, որուն գործադրութեան հազիւ սկսած՝ պայթեցաւ թուրք եւ հայ նոր պատերազմը: Թրքական «գալլ»ը, քաջալերուած ռուսական «արջ»էն (որ Ազրբայճանն ու Վրաստանը իր թաթին տակ առնելէ ետք կը սպառնար Հայաստանին), զօրաւոր յարձակման անցաւ, եւ ինչպէս որ յիշատակած եմ գրութեանս մէջ, անհաւատալի դիւրութեամբ Կարսին տիրացաւ եւ սկսաւ արշաւել դէպի Ալեքսանդրաբոլ, որուն կեանքն ալ երկար չեղաւ, դժբախտաբար: Թրքական բանակներու թիրախը՝ բերդաքաղաք Կարսն ու երկաթուղային կեղրոն՝ Ալեքսանդրաբոլն էին: Կոիւնները սաստկանալուն պէս, Վահան Չերազն ու Եղնիկ Քաջունին, իմ պատանեկան տարիներու երկու աննման առաջնորդները, հրաժարականնին տուին կրթական նախարարութեան եւ մեկնեցան կռուի ճակատ: Օննիկը մնաց Երեւան, առանձին, եւ ես՝ Ալեքսանդրաբոլ, նոյնպէս առանձին: Փութով սկսանք, դպրոցներու համար մեր չարախ պատրաստած՝ ծրագիրը գործադրել փորձել: Ուսուցիչներէն գործակիցներ ճարեցինք, անոնց միջոցով դպրոցներէ ներս տարուելիք մարմնակրթական աշխատանքին թափ տալու համար: Սկսուտական շարժումը, միշտ գրաւիչ մատղաշ սերունդին համար, պայմաններու բերումով աւելի դանդաղ սկսաւ յառաջանալ: Միեւնոյն տան, պատերազմական դրութեան պարտադրանքին տակ, մեծ սկսուածները արամադրեցինք քաղաքային վարչութեանց եւ զինուորական իշխանութեանց կարիքներուն, անոնց դիմումին իրբեւ գոհացում: Դէպքերը սակայն գահավէժ ընթացք մը առին, կացութիւնը շատ ծանրացաւ, հայ հանրապետութիւնը ինկաւ: Ես, հոսանքէն քշուած՝ ազամայ հեռացայ երկրէն: Աւելի ուշ, Օննիկն ալ հեռացաւ: Իրեն հանդիպեցայ 1930-ին, գաղթական «Հ.Մ.Ը.Մ.»ի առաջին պատգամաւորական ժողովին՝ Բարիգ:

ՎԱՀԱՆ ԶԵՐԱԶ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՍՈՒՐԲ ԳՈՐԾԸ

Վահան Զերազ, Մասիսի միւս կողմի հայ աշխարհը վերագրաւելու երազով բանակին միացած այդ աննկուն զինուորը, ընկճուած ու թեւաթափ, կերպով մը կը մտնէ Ալեքսանդրաբոլ եւ գիշերանց կ'երթայ, զգուշօրէն կը բաղխէ դուռը իրեն հին ծանօթ եւ վստահելի ծեր հայ մայրիկի մը, եւ յայտնելով իր ով ըլլալը՝ կը մտնէ ներս, իր հետքը կ'անյայտացնէ այդ լաւ մայրիկի տուն-թաքստոցին մէջ եւ կ'ազատի համայնավար որսկաններու ձեռքն իյնալէ: Փետրուարեան Յեղափոխութենէն յետոյ կը ձգէ իր թաքստոցը եւ իր քաջ անգլերէնովը զինուած կը ներկայանայ Ամերիկեան Նպաստամատոյցի պետ՝ Milton Brownին, որ հիանալի ոգիով եւ որբերու բարեւաւութեան անկեղծօրէն նախանձախնդիր մէկն էր: Պր. Պրաուն իսկոյն լաւ վճարումով պաշտօն մը կու տայ Վահանին: Այդ պաշտօնը տեսակ մը պահակութիւն էր «Կազաչի բոստ»ի որբանոցի շէնքին մէջ: Զերազ արդէն ինքզինք գտած եւ ամերիկեան պաշտպանութեան տակ ապահով՝ կը մտածէ այդ որբերու սկաուտական դաստիարակութեան մասին: Իր միտքը կը յայտնէ Պրաունին, որ շատ ջերմօրէն կ'ընդունի առաջարկը: Պրաուն ալ՝ ամերիկեան սկաուտներու Scout Master եղած էր: Այդ յայտնեց ինծի, երբ Ալեքսանդրաբոլի սկաուտներու հազուստներուն համար կտաւեղէն ճարելու ջանքերուս մէջ իր բարեկամութիւնն ու գործակցութիւնը չահեցայ:

Այդտեղ, ուրեմն, իմ պատանեկան օրերու, Բրոքի կղզիի ասպետը՝ Զերազ, ամբողջովին կը նուիրուի մեր որբերու թէ՛ մարմնական, թէ՛ հայկական եւ թէ՛ հոգեկան դաստիարակութեան՝ սկաուտական պատուիրաններու շինիչ առաջնորդութեամբ: Իր կեանքը այդ եղած էր միշտ, Պոլսոյ մէջ, ուր Շաւարշ Քրիսեանէն շատ առաջ, առանց մարմնամարզական թերթի, լոկ իր անձնական օրինակովը, իր վարակիչ հայրենասիրութեամբը եւ իր խրոխտ ու մաքուր նկարագիրովը հայ մարմնակրթական շարժման ամենաարժանաւոր ռահվիրաներէն մէկը եղած էր՝ Գ. Յակոբեանի, Վարագի, Քաջունի եղբայրներու եւ ասոնց նման քիչերու զմայլելի գործակցութեամբ:

Եղած էր միշտ փոքրիկներու սիրուած բարեկամը, եւ ահա, պատեհութիւնը կը ներկայանար նորէն փոքրիկներու աշխարհին մէջ գործելու. եւ այս անգամ՝ շատ աւելի սուրբ աշխարհ մը, մեր միլիոնաւոր նահատակներու կտակ՝ անուշիկ որբերու աշխարհը: Արդէն ատոր համար չէ՞ր միթէ, որ խանդավառ ոգիով եկած էիմք Հայաստան...

Վահան Չերազ, իրեն յատուկ տաղանդով եւ հոգեկան սրտագեղ զգացումներով կը գրաւէ սէրն ու վստահութիւնը իր որբ սկիտաւներուն, եւ Պրատունի հիացիկ ու գոհունակ աչքերուն տակ, տիպար տասնեակներ կը կազմակերպէ այդ որբերէն, որոնք՝ իրենց թոյլ, անկարգապահ եւ խարդախելու հակամէտ նկարագրային վատթար գիծերը կը փոխարինեն առոյգ, կարգապահ եւ պատուախընդիր նկարագրով, եւ իրենց շարքերուն մէջ կը սնուցանեն Գուրգէն Մահարիի նման հայկական նուրբ զգացումներով հարուստ ապագայ բանաստեղծներ: Իրրեւ ամէն կերպով առողջ հայեր ըլլալու հպարտութեամբ ճակատնին բարձր բռնած՝ այդ Հայ Արիները եղան Վահանի ջանքերուն արգար վարձատրութիւնը: Վահան Չերազի յառաջ բերած այդ գեղեցիկ արդիւնքը վարձատրութիւնն է նոյնպէս, եւ միակ շօշափելի գործը, զոր «Հ.Մ.Ը.Մ.»ի հայաստանեան առաքելութեան անունին կրնանք կապել, քանի որ այդ առաքելութեան ամենավաստակաւոր եւ արժանաւոր երէց անդամն է որ, երբ առիթը ներկայացաւ՝ սկստակաւ դաստիարակութեան սրբազան արժէքը երեւան բերաւ:

Իժմախտաբար, սակայն, Հայաստանի մէջ հաստատուած նոր վարչաձեւի անընդունելի պահանջներուն չենթարկուող Վահան Չերազի գեղեցիկ, որբակերտ շէնքը, զանազան անպարկեշտ ձեւերով, ներսէն կը սկսի քանդուիլ: Հետզհետէ որբերու շարքերը կը սկսին թունաւորուիլ՝ նկարագիրները փճացնող անխիղճ քարոզչութիւններով, Չերազի նման առաջնորդ մը վարկաբեկելով ա՛յն աստիճան՝ որ հպարտօրէն իր զմայլելի որբերուն ամէն կերպով ազնուականացած տասնեակներու գովքը հիւսող ասպետական Վահանը, իր վերջին նամակներուն մէջ, կ'ողբար աւերուած վիճակը երբեմնի շքեղ շէնքին, որուն փլատակներուն տակ մեր ապագայի յոյսը կազմող որբերու մէկ մոլորած մասի նկարագիրներն էին թաղուած: Նոյն այդ Չերազն էր որ, երբ ես, Ամերիկայէն, 1924-ին կը գրէի իրեն, թէ որոշած էի մարմնակրթութեան մասնագիտութեամբ զօրանալ եւ վերադառնալ Հայրենիք, իրեն մօտ, հոգ չէ թէ ինչ կ'ըլլայ Հայաստանի վարչաձեւը, ուրախութեամբ կը պատասխանէր թէ՛ «Բու տեղդ հոս է...»: 1926-ին, սակայն, երբ իր դէմ սանձարձակօրէն լարուած հալածանքը զինք կ'առաջնորդէր դէպի մօտալուտ «Պաշտելութիւնը» տանող «Գողգոթան», կը գրէր ինձի թէ՛ «Նրբ դպրոցդ աւարտես, հարկաւ հայահոծ գաղութներէն մէկուն մէջ քեզի արժանի պաշտօն մը կը գտնես, ուր քու մասնագիտութիւնդ կը գործադրես քու գիտցած ձեւով...»: բացայայտօրէն զիս կը զգուշացնէր, «Մի՛ գար հոս» կ'ըսէր:

Ինձի գրած վերջին նամակով, միշտ միեւնոյն ընկերանուէր Չերազը, երէց եղբօր իր դերը կը կատարէր:

Մէկուկէս ասորի, կեղբանական Սիպերիոյ մէջ, աքսորականի տաժանելի կեանքը, անշուշտ կը քայքայէ առողջութիւնը կրանիթեայ կազմով շարքաշ Վահանին, և 1927 տարուան Դեկտեմբեր ամսու վերջին օրերուն, սուսու պատիր գրպարտութիւններով, վատահամբաւ Մետեխի բանտը նետուած մեր երէց եղբայրը՝ մահն ու զայն իրեն պարտադրողները արհամարհելով, սոսու մը կանուխ, իր բանտակիցներու արցունքոտ աչքերուն ասջեւ, իրեն վայել հերոսական ասպետի կեցումքով կը գնդակահարուի... Հագա՛ր արիստու... .

Թրքական հայաջինջ ծրագիրին 1915-ին զոհուած նահատակ Շաւարշ Քրիսեանէն յետոյ, 1927-ին սասական զպրելի հալածանքներով, իր նոր կազմած բնտանեկան տաքուկ բռնէն (կինն ու նորածին աղջիկը) և իր պաշտած Հայաստանէն սրկուած ու գնդակահարուած նահատակ Վահան Չերազն է որ կ'արձանագրուի ահա «Հայ Մարմնակրթական Ընդհ. Միութեան պատուոյ տետրակ»ին մէջ... .

Ծնկաչոք յարգանք մեր ՄԵՆՆ նահատակներուն:



Հայաստանի երկար ուղին

36. Բնոց Բէ Զոց.

Ախարիցոս Կոն Տւնտ Ե՛ Վաւաւա և Բ' ցարթ
Յ՛՛ Ե՛՛ Բոթաւա: այս Կոնոս Կոնոս Կոնոս Ե՛ Լաւաւա
և Կոնոս Ի Կոնոս Կոնոս Ե՛ Լաւաւա Կոնոս Ե՛ Լա
Կոնոս Կոնոս Ե՛, "Բնոց Բ' Զոց Ե՛ Զոց" Կոնոս:
Կոնոս Կոնոս Կոնոս Կոնոս Կոնոս Կոնոս, Կոնոս Կոնոս
Կոնոս Ե՛ Զոց Կոնոս Ե՛ Զոց և Բ' Կոնոս Կոնոս
Կոնոս, և Կոնոս Կոնոս, Կոնոս Կոնոս Կոնոս: Կոնոս
Կոնոս Կոնոս, Կոնոս Ե՛ Կոնոս Կոնոս Կոնոս Կոնոս
Կոնոս:

37. Կոնոս Կոնոս.

Կոնոս Կոնոս Կոնոս 80 - 100 Կոնոս Կոնոս Ե՛
Կոնոս: Կոնոս Ե՛ Կոնոս և Ե՛ Կոնոս Ե՛,
Կոնոս Կոնոս Ե՛ (Կոնոս): Կոնոս Կոնոս
Ե՛ Զոց, Կոնոս Կոնոս Կոնոս, Ե՛ և Կոնոս
Կոնոս Ե՛ Կոնոս Կոնոս Կոնոս և Ե՛ Կոնոս Կոնոս:
Կոնոս Կոնոս Կոնոս Կոնոս: Կոնոս Կոնոս և
Կոնոս Կոնոս, Կոնոս Ե՛ Կոնոս Կոնոս: Կոնոս Կոնոս
Կոնոս Կոնոս Կոնոս Կոնոս Կոնոս: Կոնոս, Կոնոս
Կոնոս Ե՛ Կոնոս Կոնոս Կոնոս Կոնոս Կոնոս Կոնոս
Կոնոս:

38. Group comparison.

When making group vs group tests to find if there is a difference between groups, it is important to use the same test:

When comparing data is quite often, use the same test to find if there is a difference between groups: When comparing data with the same test, it is important to use the same test to find if there is a difference between groups: When comparing data with the same test, it is important to use the same test to find if there is a difference between groups:

41. General terms:

Groups before the test are called groups, 6-10 when the test is repeated: The first group is called the control group, the second group is called the experimental group, the third group is called the comparison group: The first group is called the control group, the second group is called the experimental group, the third group is called the comparison group: The first group is called the control group, the second group is called the experimental group, the third group is called the comparison group:

42. Unpaired test:

When comparing two groups it is important to use the same test: When comparing two groups it is important to use the same test: When comparing two groups it is important to use the same test:


43. Comparison with test:

When comparing two groups it is important to use the same test: When comparing two groups it is important to use the same test: When comparing two groups it is important to use the same test:


Վահան Չերազ



Այն հասնող բարձրի մէջ կազաչի Բոստի
եւ Բոյիկոսի սկաւտները՝ «Որքերու
Բանակ»-ը իր մեծ առաջնորդին՝
Վահան Չերազի շուրջին տակ :



Սկաւտները
նորածին մը
գաւաճ եւ կենաճ
են :



Եսայեան որբանոցի սկաուտները (1921)

Ետեւի կարգը, ձախէն չորրորդը ապագայ գրագէտ՝ Արամ Հայկազն
 ք: Ա. կարգ, կեդրոնը նստած (աջին) Պետրոս Պոնտացին, որբանոցին
 տնօրէնը:



Արամ Պապանեան ոչ միայն վագֆի առաջնակարգ մրցորդ էր, այլ
 Հ.Մ.Ը.Մ.ի Պոլսոյ մեր լաւագոյն խմբապետներէն, վոսփորի շրջանին
 Սկաուտ վարիչը:


ՍԿԱՌԻՏՈՒԹԻՒՆԸ

Սկանուութիւն, մեր վաղը կառուցող նոր սերունդին Փրկութեան լուսաշող փարոսը՝ մի՛շտ կանգնած է բարձր եւ կը լուսաւորէ, թւողութիւն կու տայ՝ մարդկային ընկերութեան մեր օրերու բարոյական ալեկոծումին մէջ, դէպի իրեն թիալարող սկառտական նաւակներուն, որոնց դեկը վստահուած է բարոյապէս ու ոգեպէս կատարեալ, ճարտար ու փորձուած նաւավարներու :

Քսաներորդ դարու սկիզբին, Մեծն Բրիտանիա (Անգլիա), իր մէկ Մեծ զաւկին՝ Զօր. Պէյտրն Փաուլի հանճարեղ մտածումովը կեանքի կոչեց՝ իր մատղաշ, նոր սերունդը խանդավառող բազմակողմանի շարժում մը, որ գերազանցապէս դաստիարակչական էր եւ պատանիներու թէ՛ մարմնական եւ թէ՛ մտային եւ թէ՛ հոգեկան արժէքները հաւասարակշիռ կերպով զարգացնող, անոնց մէջ՝ պատուախնդիր, սլատասխանատուութեան գիտակ եւ պարտաճանաչ քաղաքացիներ դառնալու առողջ ու ազնիւ սերմերը ցանող կրթական ձեւ մը, «Իպրոց» մը, — Սկանուութի՛ւնը : Փրկութեան ամուր լաստ մը, որ քաղաքակիրթ կոչուած ազգերու ամէնօրեայ թոհուրոհին մէջ շուարած եւ վաղուան պայքարին համար իր զաւակները լաւագոյն նկարագրով մը զինելու մտահոգ ազգերու համար օրինակելի դարձաւ, եւ շարժումը տարածուեցաւ ամէն կողմ :

1907-ին Անգլիոյ մէջ իր ձեւը գտած սկառտութիւնը՝ 1912-ին արդէն իր արձագանքը գտաւ Պոլսոյ հայ գաղութէն ներս, իսկ համաշխարհային առաջին պատերազմի վերջնալուծն գրեթէ յաջորդ օրն իսկ, 1918-ին, սկառտական մաքուր գաղափարականով ու դաստիարակութեամբ, թրքական արիւնարրու գեհնէն հազիւ ճողոպրած մեր սրտահատորներուն մարմնապէս, բարոյապէս եւ հոգեպէս վերականգնումին եւ զանոնք տիպար Մարդիկ դարձնելու :

մտահոգութեամբ «Հայ Մարմնակրթական Ընդհ. Միութիւնը» (Հ.Մ.Ը.Մ.) ծնունդ առաւ, իր գլխաւոր եւ ամենակարեւոր գործը նկատելով սկաուտական դաստիարակութիւնը մեր նոր սերունդին եւ որբերուն: Հայրեր ու մայրեր, եւ ամբողջ հայ ժողովուրդը՝ սիրեցին, եւ գուրգուրացին իրենց փոքրիկ «ասպետ»ներուն եւ անոնց միջոցաւ՝ զանոնք կազմակերպող միութեան՝ Հ.Մ.Ը.Մ.ի վրայ: Սկաուտական ամէն նոր տասնեակ՝ նոր ու տասնապատիկ ՀԱՅԲ աւելցուց Հ.Մ.Ը.Մ.ին, եւ սկաուտութիւնը շատ իրաւամբ դարձաւ սիրան ու հոգին Հ.Մ.Ը.Մ.ի: Առանց այդ շարժումին Հ.Մ.Ը.Մ.ը պիտի ըլլար մարգուած դնդերներով եւ մարզական ոգիով հայ մարզիկներու մարմնամարզական կազմակերպութիւն մը միայն, վստահարար առանց վերածուելու համահայկական այն աննախընթաց հայ նոր սերնդային կազմակերպութեան, որ Հ.Մ.Ը.Մ.ն է այսօր: Սկաուտութիւնն էր որ, իր գրաւիչ ու դաստիարակիչ միջոցներով, ոգեկան կերտումի հաճելի դպրոց մը եղաւ, եւ իր ազնուական մթնոլորտին մէջ շաղախեց, ձեւաւորեց այնքան փոքրիկներ եւ այդ փոքրիկներով երջանկացուց այնքան ծնողներ, յոյս ու իրաւունք ներշնչեց ամբողջ հայ ազգին, աւելի վստահութեամբ նայելու՝ իր հարցական Վաղուան, իր մօտիկ ապագային:



Թիֆլիսի աղջրկ սկաուտները Հայաստանի մէջ

«ԿՏՐԻՃ»ՆԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՑ ՄԵՁ

Տեղին է յիշել թէ՛ սկսուտական գաղափարականը նոր չէ մեր մէջ... Զարմանալի ժողովուրդ ենք արդարեւ, ինչ լաւ բան որ կը սակզծուի ու կը քարոզուի՝ «Այդ մեմֆ ունիմֆ արդէն» կ'ըսենք, եւ իրաւ ալ, դարերու փոշիներու տակէն շոյս աշխարհ կը բերենք մեր ըսածը փաստող մագաղաթ մը, գրութիւն մը, առարկայ մը կամ աժգունած թերթերով գիրք մը, եւ... կը հպարտանանք: Այդպէս է նաեւ այս պարագային:

17-րդ դարուն, 1680-ին, Մոլտավիոյ Պաթուշան, Լէմպրիկ եւ ուրիշ քաղաքներու հայութիւնը, իր նոր սերունդը այլասերումէ փրկելու, զայն հայ կեանքին եւ աւանդութիւններուն, սրբութիւններուն կապուած պահելու եւ անկէ վստահելի, պատուախնդիր, պարտաճանաչ ու հայ ցեղին ազնուացման նուիրում շայ Մարդէր կերակուր մտքով, կանոնադրութիւն մը պատրաստած էր, որ միշտ վաւերացուած էր օրուան կաթողիկոսէն: Ուրեմն, Պէյտըն Փառլէն 200 եւ աւելի տարիներ առաջ, մենք՝ հայերս, մեր նոր սերունդի մասին սնուցած նոյն մասնօգտութիւններով նոյն նպատակը հետապնդած ենք: Կանոնադրութեան օրէնքները շատ կը նմանին սկսուտական օրէնքներուն: Անգամները կը կոչուէին «Կտրիմ»ներ եւ 12 տարեկանին պարտաւոր էին միանալու կազմակերպութեան, որ իրենց կը սորվեցնէր ըլլալ կարգապահ, պատուախնդիր, գաղութի կարիքներուն հասնող օգտակար անհատ մը եւ հնազանդիլ՝ կանոնադրութեան ամէն մէկ կանոնին, զայն խստօրէն գործադրել պահանջող իմբապետին, որ կ'ընտրուէր «Կըտրիմ»ներէն եւ կը վաւերացուէր քաղաքի Մեծերէն: «Պրաստավա» էր կազմակերպութեան անունը եւ անոր պատկանելու եւ «կտրիմ» կարենալ կոչուելու համար 12 տարեկան նորընծայ անդամը պարտաւոր էր հաղորդուիլ եւ երդում տալ: Իմբապետը գաղութի վստահութիւնն ու յարգանքը վայելող, բարոյական բարձրութեան հասած օրինակելի անհատ մըն էր, որ իր «Կտրիմ»ներուն խորհրդատուն էր, դատաւարակն էր, անոնց սայթաքումներուն առթիւ խիստ ու անաչառ դատաւոր մըն էր եւ իր որոշումները վերջնական էին: Մեծ եղբայր մըն էր ան, որ կը ջանար մաքուր ու ոգեշունչ նկարագիր մը կերակուրել իրեն վստահուած «Կտրիմ»ներուն մէջ: Ինչպէս կը տեսնենք, իր ընդունելութեան պայմաններով, իր կազմակերպչական կառոյցով եւ իր նպատակով, հայ «Կտրիմ»ներու կազմակերպութիւնը շատ նման է անգլիական Պոյ Սկաուտներու

չարժումին, ուր՝ նոյնպէս սկառուտ մասթրըրը (Խմբապետը) գլխաւոր է ու հական դեր մը ունի իրրեւ Ուղեցոյց եւ ոգեկերտ: Սկառուտ Խմբապետէն ամէնէն աւելի պահանջուածը, իր գիտութեանէն աւելի՝ իր ոգին, նկարագիրն է. նոյնպէս սկառուտներու մաքուր նկարագիրն ալ առաջին ու ամենակարեւոր արժանիքն ու հարստութիւնն է անոնց, հոգ չէ թէ կուրծքերնին տակաւին «Պարապ ըլլայ» սկառուտական գիտելիքներու աիրացած ըլլալը հաստատող նշանակներէ:

(Ս. Էջմիածնայ «Արարատ» պարբերաթերթի հին թիւերէն մէկուն մէջ յիշատակուած էր «Կտրիճ»ներու վերոյիշեալ կանոնադրութեան մասին, զոր, մեծ բարեկամս՝ բանասէր Արշակ Ալպոյաճեան ուշադրութեանս յանձնեց, 1919-ին, Պոլսոյ մէջ, եւ այդ մասին՝ այս տողերը զրոյին ստորագրութեամբ խնամուած յօդուած մը լոյս տեսաւ Հ. Մ. Լ. Մ. ի պաշտօնաթերթ «Հայ Սկառուտ»ի 1919-ի բացառիկ թուին մէջ եւ արատապուեցաւ Պոլսահայ մամուլին կողմէ):

«Կտրիճ»ներու եւ «Սկառուտ»ներու գեղեցիկ համոզումներու ապրելակերպը համոզումն ու իտէալն է նոյնպէս Հ. Մ. Լ. Մ. ին:

Ամերիկայի Միացեալ Նահանգներու ամենախոհուն նախագահներէն՝ Մեծն Լինգոլնի պատմական դարձած խօսքին նմանողութեամբ, կու գամ ըսելու թէ՛ «Հայ ժողովուրդէն ծնած, հայ ժողովուրդին համար եւ հայ ժողովուրդին հետ շնչող» այս մեծագոյն երիտասարդական միութիւնը իր մէջ սնուցանեց բազմադարեան հայ ժողովուրդի ամենաազնուական առաքինութիւնները եւ փոխանցեց զանոնք իր հաւատաւոր անդամներուն, անոնցմէ յառաջացնելով, Մարմնով, մտքով ու հոգիով «Ասպետ»ներու բանակը՝ որ կը կոչուի՝

«ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ՍԿԱՌՈՒՏՆԵՐ»:

Ակադատութեան հիմնադիր Է. րնդեանուր սկաուտայեան Զօր. Պէյ-արն Փատրի գնահատակը Հայաստանի սկաուտներուն :

ARMENIAN BOY SCOUTS

I HAVE just heard from the Boy Scouts in Armenia, at a place called Kazatchi-Post, near to Alexandropol. There are six troops of them, each about forty strong. Little more than a year ago these boys were wild, dirty, half-starved urchins. To-day they are described as fine, clean, upstanding young fellows taking their turn of duty in guarding their post.

They are very keen on boxing and football, both strictly according to British rules. Each boy keeps a book which records all about him, his name, age, parents, date of Scout promotions and awards. There is a "Golden Page," showing any specially good action done by him, and also a "Black Page," on which any bad action would be recorded.

There is a list of all equipment that has been issued to him. The Scout keeps a diary in the book in which he puts down any Scout ideas that he has learnt or Good Turns carried out each day and so on.

The motto of the Armenian Scouts is "Rise and Raise." It means "Improve yourself and help others to rise..."

Not a bad motto for any Scout to follow.

Their worst Scout punishment is to deprive the Scout of his right to carry his staff for a certain number of days.

That shows to me that those Armenian boys have got the true Scout spirit since they take a real pride in their Scout staves.

Robert Baden-Powell

«The Scout» No 744 Chief Scout

Վասն Չերազի ղեկավարած սկաուտական շարժումը այնքան խանդավառութիւն ստեղծեց Հայաստանի մէջ, որ ներշնչեց այլազայ հայ բանաստեղծներու առաջին երգերը :

Ս Կ Ա Ո Ւ Յ Ն Ե Ը Գ Ը

Օրը մթնում է, քնդում են անհուն
Մտերը մեր ժիւ խնդութեամբ ջանիլ...
Մտեր է հազել մեր պահակասուն,
Ու մենք չենք կարող մեր ճիւղը զգանել :

Վեցնում ենք շարժով առաջ ու առաջ,
Մեր օսկերի սակ գեթնին է քնդում,
Մեզ հրդեհել է նա կեանքի մի կանչ
Ու մենք նգոր ենք աշխարհիկ բանում :

Շարքեր նոյնազօր, շարքեր բնաբխ
Փռուել ենք որպէս վազալու մի օսկ,
Կազաչի-Բօսից մինչեւ զինչ Վասիօր,
Մինչեւ արեւմուտք, հեռուար Բօսուն...

Սկզբունքից վեր, վերելից վերելք,
— Եկէ՛ք, կանչում ենք առայսմենքին,
Եկէ՛ք շարժ առ շարժ մեր աշխարհով մեկ,
Հենքը անցան, նոր բախտ չբերին...

— Եկէ՛ք, կանչում ենք, բոյ մեր կանչքանց
Ձեր հոգիներում հուրի պէս աչքի,
Մեր յայրամասկին եկէ՛ք ու հաւեք,
Եկէ՛ք միացէ՛ք մեր հոմ շարքերի :

Երկիրը մեր հին, մարտում բիր անցան,
Կանչում է արբուն, կանչում ու կրկին
Մեր խումբերն են անցնում յայրապան,
Հիսուն նոր պատկ, նոր կեանքի վաստին :

Հայաստան Գ. ՄԱՀԱՐԻ



Վ. Չերազի սկաուտները :

Գ.

Հ. Մ. Ը. Մ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ

ԱՄԵՐԻԿԱ ԺԱՄԱՆՈՒՄՍ ԵՒ
ՆԻՒ ԵՈՐՔԻ Հ.Մ.Ը.Մ.Ը

1921 Ապրիլ ամսու առաջին շաբթուն, Մեղալի Էլլաս յունական շոգենաւով հասայ Նիւ Եորքի նաւահանգիստը: Ձիս դիմաւորելու եկած էին, Պոլսոյ Գնալը կըղզիի մանկութեան ընկերներ՝ Հայկ Հիւսէյիմեանն ու Գաբրիէլ Մահառեանը, որ «Տորֆ» Փութպոլի խումբին մէջ «Փորուըրտ» կը խաղար եւ բազմակողմանի մարզիկ մըն էր: Ասոնց կ'ընկերանար, Պէրպէրեան վարժարանի աշակերտներէս՝ Յարութիւն Քիւրտեան (յետոյ՝ յայտնի պատմագէտ), որ զիս ուղղակի իր բնակած յարկաբաժինը տարաւ իբրեւ իր մէկ շաբթուան հիւրը: Համով-հոտով շարաթ մըն էր այդ, մեր պէրպէրեանական քաղցր յուշերովը համեմուած:

Իմ առաջին սենեակս վարձեցի՝ East 26-րդ փողոցին վրայ, որ Նիւ Եորքի հայ գաղութի կեդրոնական մասին մէջ էր եւ հայկական կեանքի եռուզեռը յառաջացնող շրջանը՝ իր եկեղեցիներով, կուսակցական ակումբներով, հայկական ճաշարաններով, կեդրոնացած հայ բնակչութեամբ: Իմ ամէնօրեայ կայանս ու նամակներուս հասցէն էր՝ 52 Lexington ave. Հ. Յ. Դաշնակցութեան ակումբը, որ չափազանց կենսունակ ու բանուկ կեդրոն մըն էր այդ տարիներուն՝ Նիւ Եորք հասնող այլազան հայութեան համար:

Իմ՝ Նիւ Եորք գալս շուտով իմացուեցաւ մարզան-

քով հետաքրքրուող երիտասարդութեան կողմէ: Հրաւիրուեցայ ժողովի մը՝ որ «Հ.Մ.Ը.Մ.»ի անունով էր հաւաքուած: Դուրս եկաւ, որ երկուքուկէս ամիս առաջ, Փետրուարին, պոլսեցի երեք պատանիներ՝ Օննիկ Քէմանեան, Մամաս Խուպէսէրեան եւ Յակոբ Գարապէկեան, Պոլսոյ «Հ.Մ.Ը.Մ.»ական մթնոլորտի գրաւիչ ու շինիչ համը իրենց հոգիներուն մէջ, զիրար իբրեւ Հ.Մ.Ը.Մ. - ականներ ճանչանուն պէս, «հայտէ՛, հոս ալ Հ.Մ.Ը.Մ. մը կազմենք» ըսելով՝ գործի են անցեր: Իբրեւ փորձառու երէց եղբայր մը, իմ իրենց մէջ երեւնալս, նոր յոյսերով զօրացուց զիրենք, եւ այդ գիշերն իսկ՝ վարչութիւն մը կազմուեցաւ, իմ մասնակցութեամբս: Ժողովը տեղի ունեցաւ Տոքթ. Պայրնտրեանի officeին մէջ: Յարգելի բժիշկը, միջին տարիքով մէկը, այդ եռանդուն տղոց դիմումը քաջալերելով՝ վարչութեան ատենապետութիւնն էր ընդունած եւ խոստացած, որ իրենց կողքին կը կենայ: Մեր նոր վարչութեան ատենապետ ըրինք զինք նորէն: Դժբախտաբար, չեմ յիշեր անունները այդ վարչութեան բոլոր անդամներուն. գիտեմ միայն որ վարչութեան մէջ էին Գարբիէլ Մաճառեանը, Արշաւիր Հիւսնեան, (կարելորոյ մը) Մամաս Խուպէսէրեան, Օննիկ Քէմանեան եւ ուրիշ մը (7 հոգի): Մամասն ու Օննիկը Պոլսոյ Բերայի մասնաճիւղի անդամներ եղած էին, իսկ Յակոբը, Սկիւտարի մէջ, Գարլօ Շահինեանի հիմնած «Հայրդիֆ» ակումբէն էր: Երեքն ալ լաւագոյն «ոգի»ով օժտուած տղաք էին:

Նիւ Եորքի «Հ.Մ.Ը.Մ.» մասնաճիւղը, այսպէսով, եղաւ առաջին «Հ.Մ.Ը.Մ.» մասնաճիւղը՝ Ամերիկայի:

Մարմնակրթական ընդհանուր պատասխանատուութիւնը վստահուեցաւ ինձի: Գարուն էր, հիանալի օրեր ունէինք: Բնութիւնը, իր բաց դաշտերով առինքնող էր շատ: Զեռնարկեցինք իսկոյն Փութպոլի խումբի կազմութեան, որուն սիրահար խաղացողներ շատ ունէինք Վօն Գորտլէնտ Բարֆի ընդարձակ դաշտերը եղան, ինչպէս ուրիշ ազգերու, նոյնպէս մեր խաղափորձերու՝ մարզուելու կեդրոնը: Ամէն Կիրակի օր, քանի մը նոր տղաք կ'աւելնային մեր շարքերուն վրայ: Եռանդ ու ոգեւորութիւն կար ամէն մէկ անդամի մէջ: Կիրակի օրերը, հայ կեանքի մէջ գործող զանազան կազմակերպութիւններ իրենց դաշտահանդէսները կ'ունենային: Ասոնք սքանչելի հայ ժողովրդի խմբաւորումներ էին, որոնց կարելի էր ծանօթացնել նորակազմ «Հ.Մ.Ը.Մ.»ը իր նպատակովն ու գործելակերպովը: Նոր խօսք էր որ կը լսէին: Ամերիկայի հայ գաղութին մէջ առաջին անգամն էր, որ մարմնակրթութեան անունով

միութիւնն մը կեանք կ'առնէր՝ կազմակերպելու համար մեր նոր սերունդը գէպի մարմնով, մտքով ու հոգիով առողջ, նկարագրով անբասիր, գիտակից ու վստահելի հաւաքականութիւնն մը: Այս սողերը գրողն էր, ընդհանրապէս, վերոյիշեալ ուղերձները ընողը, եւ նկատի ունենալով կուսակցական շատ սուր ու անտեղի պայքարը այդ օրերու հայ կեանքէն ներս, կը շեշտէր թէ՛ «այս գործը կուսակցական չէ՛, ամէն համոզումի տէր հայու եւ անոր գաւկիհն առջեւ բաց են դռները «Հ.Մ.Ը.Մ.»ի եւ իբրեւ փաստ կը յիշէր մեր անդամներուն անունները, կամ կը ներկայացնէր զանոնք անձամբ, որոնք կը պատկանէին տարբեր տարբեր համոզումներու, եւ սակայն, իբրեւ հայեր, միացած էին մէկ կազմակերպութեան մէջ եւ եղբայրօրէն իրենց լաւագոյնը կ'ընէին, մարզական կեանքէն ներս, հայ անունն ու պատիւը ամէն կերպով բարձր պահելու համար...: Արշաւիր Հիւսնեանը վերակազմեալ Հնչակեան էր: Իրեն հետ իրենց ահումբը կ'այցելէի, ան ալ կու գար ինծի հետ՝ Հ. Յ. Դաշնակցութեան ահումբը, եւ այսպէս՝ ուրիշ անդամներ ալ կը ջանային հայ համայնքի մէջ Հ.Մ.Ը.Մ.ը ծանօթացնել իբրեւ համայն հայութեան պատկանող կազմակերպութիւն մը, հայ երիտասարդներու եղբայրակցութիւն մը:

Խօսքի վրայ չէր հաստատուած, այլ՝ գործի վրայ, այս նոր շարժումը:

Կիրակի օրերը, երբեմն Վօն Գորտլէնտ բարբի վրայ մարզուող ուրիշ աղգերու խումբերուն դէմ Փութպոլի մրցումներ կ'ունենայինք եւ մեր խաղը դիտողներու ստուար հայ բազմութիւնն մը կը հետեւէր ու կը քաջալերէր մեզ: Կը յիշեմ, Հ. Յ. Դաշնակցութեան (52 Lexington ave.) ահումբի սրճարանապետ՝ Մեծ Ճանը (խոշորակազմ էր), որ կ'ըսէր ինծի յայտնի ներողամտութեամբ. «Ընկեր Խոյեան, քու մարզական գործը իմ այս գործիս վնաս կու տայ, ժողովուրդս դաշտ կը տանիս»: Մեծ կազմով այդ մարդը մեծ սիրտ ունէր՝ եւ համակիր էր «Հ.Մ.Ը.Մ.»ի շարժումին, ինչպէս շատեր:

Փութպոլի կողքին, դաշտին վրայ, հետզհետէ կանոնաւորաբար, փորձեր սկսանք ընել վագելու, ցատկելու (բարձր ու երկար), գունտ նետելու, նիզակ ու սկաւառակ արձակելու եւ դրօշարչաւի: Մասնակցողներու, կանոնաւոր կերպով հետեւողներու թիւը օր ըստ օրէ շատցաւ:

Մեր Փութպոլի խումբը ներկայանալի վիճակ ստացած էր: Ամերիկեան Մէթրօփօլիթէն Լիկին անդամակցեցանք եւ առաջին տարին իսկ աչքառու դիրք գրաւեցինք:

Ամէն մրցումէ առաջ խումբը իր ժողովը կ'ունենար, ուր կարծիքներ, թեւադրութիւններ եւ բողոքներ կը լսուէին խումբի անդամներէն, եւ ժողովը վերջանալէ առաջ՝ խմբապետը իր շինիչ թեւադրութիւնները կ'ընէր թէ՛ խաղի, եւ թէ՛ խաղի ընթացքին խումբի ունեցած մարզական պատուարներ յգիի մասին: Ոգիի պահպանումն ու գործադրութիւնը մասնաւորաբար կը շեշտուէր մեր խաղացողներուն, եւ պատի՛ւ իրենց, հայ խումբը մի՛շտ ճանչցուեցաւ իբրեւ մաքուր ոգիով մարզիկներու խումբ:

League-ին կը մասնակցէին 16 խումբեր զանազան ազգերէ: Մեր խումբը, որուն խաղավայրն էր City College of New York-ի դաշտը, բաւական յառաջացաւ: League-ի ախոյեանութեան համար, վերջին մրցումէն առաջ, ճակատեցանք սպանական Catalonia խումբին դէմ, յաղթեցինք՝ 1-ի դէմ 5 կէտով եւ վերջին մրցումը ունեցանք, իրլանտական շատ զօրաւոր Try-Connell Celtic-ի, բնաւ չպարտուած խումբին հետ եւ 1-3 արդիւնքով պարտուեցանք, որով երկրորդ լաւագոյն խումբը եղանք League-ին: Սումբի անդամներու իւրաքանչիւրը ստացաւ գեղեցիկ արծաթ medal մը: Այդ medalներու բաշխումին համար, յաղթանակի երեկոյթ մը սարքեցինք 27-րդ փողոցի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ սրահին մէջ: Հայութիւնը հպարտ էր իր մարզիկներով եւ սրահը լեցուց ամբողջովին: Իբրեւ խմբապետը խումբին, այս տողերը գրողը յանձնեց medalները խումբի խաղացողներուն՝ գովասանքի պատշաճ խօսքերով, յետոյ սկսանք գեղարուեստական բաժնին ու խրախմանքին: Երաժիշտ Տիգրանեան երգեր տուաւ, իսկ հայկական ոգեւորուած պարերուն ատեն հաճոյքն ու պատիւը ունեցայ պարելու Մշոյ սոխակ՝ Արմենակ Շահմուրատեանի (աջ կողմս) եւ Վանայ մեծ նկարիչ՝ Փանոս Թէրլէմէզեանի (ձախ կողմս) հետ, որոնք՝ ահանատես եղած էին մեր մըրցումին:

Իմ ստացած medalս ծառայեց սուրբ նպատակի մը: Տարիներ ետք, երբ նշանուեցայ, իմ կեանքի ընկերակիցիս՝ Սիրարփիին հետ, մատանիի փոխարէն եւ փոխադարձ համաձայնութեամբ, այդ medalը գործածեցինք իբր կապ՝ մեր գալիք կեանքին...:

**

Մեր առաջին պաշտօնական հանդէսը եղաւ բարոյական յաղթանակ մը: Լաւ սրահի մը մէջ՝ խնամուած յայտագիր մ'ունեցանք: Մարզական ցուցադրութիւններէ ետք, սկաուտական վրանով, գիշերային բանակումի տպաւո-



Հ.Մ.Ը.Մ.ի նիւնտրֆի մասնահիւղի փուրպօղի Ա. խոււրը 1922-ին. ետեւի շարք ձախին, երկրորդը՝ Տիգրան Խոյեան, քաղը՝ պարզ հագուստով, Պոլսոյ «Տորֆ»ի լաւագոյն յտաջապահներէն՝ Գարրիէլ Մանաւեան:

ՀԱՅ ԱՄԱՆՇԱԿՐԹԱԿԱՆ ԸՇԴ.ՆՈՒԹԻՒՆ

(Հ.Մ.Ը.Մ.)

ՀԱՅ ՍՎԱՌՏՆԵՐ

ՇՆՆՈՒՄԻ ՆՈՍՏՐԵ

ՀՈՒՒՐԱՏՈՒՄ

ԳՐԻՉ 10 ԱԷՉԻ

ՆԻՒ ԵՈՒՅ

Հ.Մ.Ը.Մ.ի Ա. շարք-ժոււմները նիւնտրֆի մէջ մատնանշող հուրպատմաւոր:

րիչ պատկեր մը ներկայացուցինք: Օրուան բանախօսն էր՝ Բարգէն Եպիսկոպոս Կիւլէսէրեան (յետագային՝ Կաթողիկոս՝ Մեծի Տանն Կիլիկիոյ), որ կուռ ու գեղեցիկ բանախօսութեամբ մը, ակնարկ մը նետեց նախ մեր հեթանոս նախահայրերու մարզական հետաքրքրութեան ու նուաճումներուն վրայ եւ իսկոյն ծանրացաւ առողջ մարմնի անհրաժեշտութեան՝ իւրաքանչիւր անհատի համար: Մարմնակիրքանքը՝ յայտարարեց Սրբազանը, ազգային գոյութեան խնդիր մըն է: Նորագոյն ազգային գաղափարի մը փթթումը թող տեսնեն Նիւ Եոբֆի մէջ, յանձին այս ափ մը պատանիներուն, որոնք մարմնակիրքանքի հանդէպ ունեցած իրենց հոգածութեամբը, կը խոստանան ապագայ գորաւոր պաշտպանները հանդիսանալ թշուառ հայութեան: Անոնք՝ որ կ'ուզեն Ազգը պահպանել, թող իրենց նպաստող ձեռներն երկարեն, իսկ երիտասարդներ՝ որ իրենք գիրենք կարող կը գգան, թող գգան միանան այս մարզիկ-սկաւառներուն, եւ ինքզինքնին բարձրացնեն, որպէսզի կարող ըլլան ուրիշներն ալ բարձրացնել, եւ այն ատեն կ'ունենանք առողջ ու կորովի հայութիւն մը:

Հանդիսականներու առաջին շարքին վրայ նստած էին յայտնի դաշնակցական Չատիկ Մաթիկեանն ու իր կողքին՝ Գալիֆօրնիայէն մեծահարուստ ուրիշ դաշնակցական մը, նոյնպէս ուրիշ կարեւոր մարդիկ: Յաջորդ օրը մեր վարչութեան անդամ՝ Արշաւիր Հիւսնեան «միւսնեւրուն» ակումբը կ'երթայ անոնց տպաստութիւնները լսելու համար. «Օ՛ր, — կ'ըսեն, — վերէն վար դաշնակցական կը հոսէր կոր, ձգեցինք դուրս ելանք»: Արշաւիրն ալ սրանեղած՝ «Սրբազանն ալ, ծօ՛ր յիմարներ» կ'ըսէ, ու կը յարէ. «Թող մնայիք ու փոխէիք մթնոլորտը»:

Կուսակցական լարուած մթնոլորտ էր: Մեր մարզական գործունէութիւնը սրահներու մէջ պէտք էր շարունակուէր:

Ապա՛նոված էինք, 27-րդ փողոցի մեր եկեղեցիին սրահէն շարաթր՝ մէկ գիշեր: Շուէտական մարզանքներ եւ կարելի չափով ուրիշ տեսակ մարզանքներ եւ բմբշամարտութիւն՝ Արշաւիր Հիւսնեանի կարող առաջնորդութեամբ, հետաքրքրեց բաւական թիւ մը մեր ազաներէն:

Ե. 27-րդ փողոցի եկեղեցին կը կոչէին՝ Դաշնակցական եկեղեցի. իսկ Ե. 17-րդ փողոցի հայ եկեղեցին՝ Ռամկավար եկեղեցի: Պոյսէն եկողներու համար անհասկնալի ու սիրտ նեղացնող էր այդ: 17-րդ փողոցի եկեղեցւոյ հոգարարձութեան անդամներէն մէկը՝ Մարտիքեան, Հ. Մ. Ը. Մ. ի անդամ էր, իսկ եկեղեցւոյն զպրտպետը, իմ

մանկութեան մօտիկ ընկեր՝ Գաբրիէլ Մաճառեանն էր, որուն հետ, Գնալը կղզիի եկեղեցին, Ղպիրներ էինք: Կարգադրեցինք որ շաբթու մէջ գիշեր մըն ալ «Ռամկավար» եկեղեցիին սրահը օգտագործենք իբրեւ մարզարան, որպէսզի կուսակցական պիտակ չփակցուի Հ.Մ.Ը.Մ.ի վրայ: Ես ալ քանի անգամ գացի ու Գաբրիէլի կողքին մասնակցեցայ արարողութեան:

1922-ի վերջերը Գաբրիէլ նամակ ստացաւ Վահան Զերազէն, Հայաստանէն: Իսկոյն գրեցի իրեն, եւ մանրամասնօրէն պարզեցի իմ Հայաստանէն հեռանալու պարագաները եւ զինք կոչեցի՝ «Հայաստանի հաւատարիմ պահակ»: Շատ ախորժած էր այդ որակումէն, եւ ատկէ յետոյ գրած նամակները կը ստորագրէր՝ Հաւատարիմ Պահակ:

*
**

Դաշտային զանազան մրցումներու մէջ ինքզինքնին մարզած մեր անդամներուն, իրենց կարողութիւնները ցուցադրելու պատեհութիւն տալու եւ Հ.Մ.Ը.Մ.ի համար նոր թափ ստեղծելու մտօք՝ ծրագրեցինք դաշտային մրցումներու (ողիմպիական) օր մը կազմակերպել: Անդամական ժողովը խանդավառօրէն ոյժ տուաւ մտածումին:

Մեզի նոր անդամ էր եղած, «Հայ Ուսանողական Միութեան» ժրջան ատենապետ՝ Հայկ Սարափեան, կարող եւ օգտաշատ երիտասարդ մը, որ մարզիկ էր եղած եւ գիտէր, դաշտային մարզանքներու օրէնքներու մասին: Ամէն ժողովէ ետք՝ կ'ըսէր ան, թէ «Հաճոյք էր ըլլալ մեր անդամական ժողովներուն, ուր ամէն մէկ անդամ սրտով կը հետաքրքրուէր ամէն մէկ հարցով եւ ժողովի միջնորդութեամբ կենսունակ էր ու խանդավառ»: Սիրեցի զինք եւ լաւ բարեկամներ եղանք ու միշտ այդպէս մնացինք:

1922-ի Սեպտեմբերի առաջին շաբթուն, Labor Dayի օրը, Brooklynի Elmer Parkի մրցադաշտին վրայ ունեցանք Հ.Մ.Ը.Մ. Նիւ Եորքի առաջին ողիմպիական խաղերը: Կը մասնակցէին՝ Նիւ Եորքի, նորակազմ West Hobeke (N. Y.) մասնաճիւղի եւ Նիւ Ճորջիէն Pyramid մարզական ակումբի մարզիկները: Օրուան վերին դասաւորն էր՝ Հայկ Սարափեան, որ շատ ձեռնհասօրէն կատարեց իր պաշտօնը, իսկ օրուան քաղուհին էր՝ դերասանուհի Տիկ. Արաֆա Զարիփեան: Բաւական համարձակ փորձ մըն էր որ ըրինք: Նորութիւն մըն էր գաղութին համար եւ գոհ ձգեց եկողները: Համեմատաբար փոքր, բայց, իբրեւ առաջին փորձ, յաջող էր ու քաջալերիչ: Յաջորդ տարիներուն աւելի մեծ

տարողութեամբ ողիմպիականները շարունակուեցան: 1923-ին, Հայկ Սարաֆեանն էր կրկին, վերին դատաւորը, իսկ 1924-ին՝ այս տողերը գրողը:

Արշակ եւ Միհրան Գարակէօզեան, գորգի առաջնակարգ վաճառատան երկու կարեւոր պաշտօնեաներու՝ Օննիկ Թաշճեանի եւ Հայկ Հիւսէյինճեանի (Պոլսոյ հայ կղզիէն մանկութեան ընկերներ) բարեխօսութեամբ, ես ալ մաս կազմեցի նոյն հաստատութեան պաշտօնէութեան եւ ապրուստի աւելի ապահով ու մնայուն պայմաններ ունեցայ:

**

Սկառուտական ֆիւզը, այստեղ, Ամերիկայի մէջ, Պոլսոյ անկախութիւնը չունէր: Պարտաւոր էինք կապուելու ամերիկեան Պոյ Սկառուտներու կազմակերպութեան: Ամերիկեան Պոյ սկառուտներու պատկանող աստիճանաւոր հայ երիտասարդի մը հետ, ամերիկեան Պոյ սկառուտներու կեդրոնական գրասենեակը գացինք: Շատ սիրալիւր ընդունելութենէ յետոյ ինծի ըսուեցաւ թէ՛՝ զուտ հայկական տասնեակներ չէի կրնար կազմել. եթէ նոյն թաղին մէջ, հայ պոյ սկառուտի մը դրացի եւ շատ մտերիմ խաղընկերը ուզէ միանալ այդ տասնեակին եւ տարբեր ազգի զաւակ ըլլայ, չեմ կրնար մերժել, պարտաւոր եմ զայն ընդունիլ տասնեակին մէջ: Բացատրեցի մեր պայմանները եւ մեր փափաքը հայերէնն ու հայոց պատմութեան եւ մշակոյթի գլխաւոր դէպքերն ու դէմքերը մեր սկառուտներուն սորվեցնելու, եւն. եւն.: Հետաքրքրական ու սրտցաւ տեսակցութիւն մըն էր: Ի վերջոյ համաձայնեցան փորձել մեր փափաքած ձեւը եւ ուրախութեամբ բաժնուեցանք: Արդէն սկառուտական կազմակերպութեան ուղղութեամբ աշխատանքի սկսած էինք եւ այս նոր կարգադրութեամբ աւելի թափ աուինք շարժումին: Օննիկ Քէմանճեանի նման բաւական փորձառու (Բերայի — Պոլիս — սկառուտներէն էր) անդամներ, առաջնորդներ իրենց լուսագոյնը տրամադրել սկսան ի նպաստ գործին: Մարգանքներ, բանակումներ, դասախօսութիւններ զիրար յաջորդեցին եւ ուզեցինք, զուտ սկառուտական հանդէսով մը ներկայանալ հայ համայնքին, բայց հանդէսի թուականի խաչաձեւում մը տեղի ունեցաւ «Հայ. Բարեգործական Ընդհ. Միութեան (Հ. Բ. Ը. Մ.) Նիւ Եորքի մասնաճիւղին հետ: Յանցանքը իրենցն էր, մասնաւոր արժէք տուած չէին մեր «փոքրիկ» շարժումին: Մեր վարչութեան մէջ հարցը ծեծուեցաւ եւ որոշուեցաւ մեր հանդէսի թուականը փոխել՝ եթէ Հ. Բ.

ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ՄՐՅՈՒՄ

(CHAMPIONSHIP MATCH)
1922-1923 ՇՐՋԱՆԻ

METROPOLITAN JUNIOR LEAGUE-Ի Բ. ԲԱԺՆԻ
"GALICIA" ՍՊԱՆԱԿԱՆ ԽՈՒՄԲԻ
ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼԻ ԽՈՒՄԲԻՆ ՄԻՋԵՒ



New York City College-ի դաշտը, ուր իր մրցումները կը կատարէր Հ.Մ.Ր.Ն.Ի Ա. Խումբը: Նկարը առնուած է 1923-ին յաղթական խաղի մը առթիւ, շրջապատուած հայ եւ սպանացի հանդիսականներով:



ՀԱՅ ՄԱՐՄԵՆԱՅԻՐԱՅԱՆ ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ ՆՐԻ ԵՌԲԻ (ՅՈՐԴ) Մ. ԺԻՂԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԽՈՒՄԲԸ

Յ ՅՈՒՂԻՍ 1923

ԿԻՐԱՆԻ ԿԵՍՕՐԷ ՎԵՐՋ ԺԱՐԸ ԺԵՐ 2-ԻՆ

WOODSIDE FIELD, LONG ISLAND, N. Y.

ՄԱՆՕՐ — Կլեմտ Սենթրըլ-էն աստէ, Բորնա (Լոնկ Այլընտ) Քրէյըր եւ կամ Սեֆըրս կլըմիս էլ-լեվէյքըտէն աստէ, Բորնայի Քրէյըր եւ Վառնայտ Սրէյշըրը դուրս կընկով զուել ձկկ փողոց զեպի րէ եւ վեց փողոց զեպի ձախ:

Ամբողջ շրջան մը գտնի միշտ յաղթական ընթանակի ետք, այսօր Հայկական Ֆուտբոլի Խումբը ուրջ տարին ազգիքէ կազմուած Ֆուտբոլի Կեփի մը մէջ կարժամանայ տնայեանութեան մրցումը խաղալու պատուին:

Մեր տղաքը կարող էր իրենց արդիւնքով եւ վտան էր քէ ամբողջ նիւ ետքի հայ գաղութը նոյն կարողութեամբ պիտի փութայ իր տղոցը վերջին յաղթութիւնը եւս ծափահարելու ուղղակի դաշտին վրայ:

Մեր խաղը բնաւ չզիտի վտանկ Հայ կարմիր Քաշի գաղտնաւորելին: Մրցումէն վերջ հայ մարզիկներն ու մարտնչուրը միտմեմ կ'ընթան գաղտնաւորէն, որ կրկու կարգան միտմեմ վեր է մեր մըրցումայրէն եւ ուր մեր մարզիկները կրնայ սկրաքմար մանակցութիւնը խոտապած են թերեւ զանազան մարզական խաղերով:



Տիգրան Խոյեան Ամերիկայի մէջ կը վերագտնէ Պոլսոյ Հ.Մ.Ր.Ն.Ս.ական իր եղբայրները:

Տիգրան Խոյեան եւ Պոլոս Չատըրբեան:

Կեդրոնը՝ Արամ Պապայ-հան, աջին՝ Տիգրան Խոյեան, ձախին՝ Պաղչէնեան:



Մ.Ը.Ի կողմէ այդ ուղղութեամբ դիմում ըլլայ: Եւ ահա՛ առաջնորդութեամբ Արտաւազդ Գույումեանի, որ, Մկրտիչ Սանտալի հետ անդամակցած էր «Հ.Մ.Ը.Մ.»-ի՝ զիս տեսնելու եկաւ Միհրան Գարակէօզեանի գերազնիւ գուսարը՝ Օր. Լէյլա Գարակէօզեան: Լսած էի իր մասին՝ իբրեւ շնորհալի եւ բարեգութ հայուհի մը. իմ անձնական այդ ծանօթութիւնս տասնապատիկ աւելի բարձրացուց իր հոգեկան արժէքը՝ իմ աչքիս: Արտաւազդը անգլերէնով ներկայացուց զիս իբրեւ մեր սկաուտներու խմբապետը, որուն՝ միջանկեալ պատասխանեց յարգելի օրիորդը «He looks like one» կարճ հաստատումով մը: Մեր վարչական որոշումին համաձայն սիրով ընդունեցի մեր հանդէսը յետաձգելու թելադրութիւնը եւ «Քանի որ մեր հոգիին խօսող հայ օրբերու ի նպաստ է այդ հանդէսը, եթէ թոյլ կու տաք, այդ օրը, մեր սկաուտները, ձեր կարգադիր յանձնախումբի սրամազրութեան տակ կը մտնան՝ իբրեւ կարգապահութեան հսկիչներ կամ ուրիշ ինչ որ գործի յարմար կը զատէք» ըսի Օր. Գարակէօզեանին, որ չափազանց գոհացած այս կամաւոր գործակցութենէն՝ գովասանքի խօսքերով բաժնուեցաւ ու զնաց Արտաւազդի նոյնքան դոճունակ ընկերակցութեամբը:

1922-ի աշնան, Պոլսէն մեզի տեղեկացուեցաւ որ՝ նկատի ունենալով Մուսթաֆա Քեմալի շարժման յաջող ընթացքին իբր հետեւանք հայ ազգային ռեւէ աւողջ գործունէութեան անկարելիութիւնը, «Հ.Մ.Ը.Մ.»-ի կեդրոնական վարչութիւնը Պոլսոյ իր գրասենեակը կը փակէ եւ «Հ.Մ.Ը.Մ.»-ի գործունէութիւնը կը դադրեցնէ Պոլսոյ եւ Թուրքիոյ մէջ, քաղաքական անցուդարձերու աննպաստ գահավիժումին պատճառաւ: Կեդրոնի եւ մասնաճիւղերու ղեկավար տարրը, ուրեմն, հեռացաւ Պոլսէն դէպի պանդըխտութիւն: Ո՛ւր որ կրնար:

Նիւ Եորքի մասնաճիւղը, բացառիկ ժողովի մը մէջ, որոշեց, գոնէ առժամապէս, մինչեւ կացութեան պարզուիլը, «Կեդրոնական Վարչութեան» դերը կատարել: Այս տողերը գրողը ստանձնեց վարչութեան քարտուղարի պաշտօնը, որպէսզի ջանայ կապեր գտնել ու հաղորդակցիլ Թուրքիոյ մօտիկ ուրիշ երկիրներու մէջ թերեւս նոր ծիւարձակած «Հ.Մ.Ը.Մ.»-ներու հետ:

«Հայաստանի Կոչնակ» թերթի նախաձեռնութեամբ Նիւ Եորքի մէջ «Հայ Մշակութային Միութիւն» մը հաստատուած էր, որ ամէն ամիս, զանազան նիւթերու շուրջ, յաջող դասախօսութիւններ կը սարքէր: Միութեան քարտուղարը՝ Պր. Տիֆինեան, Հ.Մ.Ը.Մ.ի վարչութեան դիմեց, ընդհանրապէս մարմնակրթութեան եւ մասնաւորապէս Հ.Մ.Ը.Մ.ի եւ սկաուտութեան մասին բանախօս մը ունենալու համար: Դասախօսութեան երեկոն բաժնուած էր երկու դասախօսներու միջեւ: Պոլսոյ Նիկողոսեան վարժարանի հիմնադիր տնօրէնին կինը՝ Տիֆին Նիկողոսեան (լուրջ պատրաստութեան տէր, ամենայարգելի եւ շնորհալի հայուհի մը) պիտի խօսէր՝ «Հայկական ձեռագործութեան պատմութեան ու նուրբ արուեստի մասին» ինչ որ շատ ուսումնասիրուած կերպով ներկայացուց յարգելի դասախօսը: Պր. Տիֆինեան զիս ներկայացուց իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի առժամեայ Կեդր. Վարչութեան քարտուղարը:

Սրահը ամբողջովին լեցուած էր ունկնդիրներով, որոնց մէջ, առաջին շարքին վրայ իր գրաւիչ արտաքինով նստած էր Տ. Արքեպիսկոպոս Յովհաննէսեան:

Շատ ծանօթներ կային, Հ.Մ.Ը.Մ.ականներ եւ յայտնի գործիչ՝ Արսէն Միքայէլեան, քրոջ որդին Տ. Սրբազանին:

Երբ ամպիոն բարձրացայ, նկատեցի որ բացի Տ. Սրբազանէն ու Արսէն Միքայէլեանէն, գրեթէ բոլոր ունկնդիրները, փլած էին իրենց մարմիններով, յոգնած մարդոց պէս նստած էին: Սկսայ՝ սապէս. «Նիւթը՝ որուն մասին պիտի խօսիմ մարմնակրթութիւնն է, որ կը ձգտի առողջ եւ ուղիղ կեցուածքով մարդիկ հասցնել հայ ժողովուրդին մէջ: Ուրեմն կը խնդրեմ որ ամէն ոք շտկուի, թոյլ չնստի...»:

Մինչեւ օրս, ժպիտ մը կը գծուի երեսիս երբ գոհունակութեամբ կը յիշեմ ամբողջ սրահի ժողովուրդին մարմնով շտկուիլը եւ կը լսեմ այդ՝ հաւաքապէս ուղղուելու փորձին յառաջացուցած թեթեւ հովի: Նման չչ՛չ... ձայնը, շուկը...: Դասախօսութիւնս երբ աւարտեցի, գացի նստայ Սրբազանին մօտ, որ իսկոյն՝ «Յառաջարանդ տեղին էր, հասնեցայ» ըսաւ:

**

Նիւ Եորքի առժամեայ վարչութիւնը երկար շտեմեց, աւելի ճիշդ իր ուսերուն նետած վերարկուէն հրատարեցաւ, որովհետեւ հետզհետէ մեզի համող լուրերու համաձայն, Պոլսէն հեռացող «Հ.Մ.Ը.Մ.»ականներ, ի-

րենց նոր հաստատուած երկիրներուն մէջ, իրենց անձնական ապրուստի, ապահովութեան հետ մէկտեղ, սկսած են Հ.Մ.Ը.Մ.ական նոր կեանք ստեղծել, գաղթական ու տեղացի նոր սերունդը կազմակերպելով: Պուլկարիա, Ռումանիա, Յունաստան նոր ոգեւորութեան շրջաններ սկսած են դառնալ, մանաւանդ Բարիզ (Ֆրանսա) ուր, հիմնադիր երկու անդամներ՝ Գրիգորն ու Գարլօն, քարտուղար եւ «Հայ Սկսուս»ի խմբագիր՝ Կարօն, Գ. Շէհրիկեանը եւ շատ մը վաստակաւոր սկսուսներ ու խմբագետներ ապաստան էին գտած: «Կեդրոն»ի դերը ստանձնելու ամենայարմար ու արժանի քաղաքն էր, ստեղծուած պայմաններու տակ: Իսկ Եգիպտոսն ու մանաւանդ Միջին Արեւելքը (Հալէպ, Պէյրութ, Երուսաղէմ, Ամման եւն.) ուր, աւելի ուշ, երբ հայ ժողովուրդի ենթարկուած չարչարանքներու դառն բաժակը ցմրուր ըմպած եւ արիւնաշաղախ անապատներու խաչելութենէն հրաշքով ճողոպրած մեր որբ սերունդը դիմաւորուեցաւ «Հ.Մ.Ը.Մ.»ի եւ սկսուսութեան կազմուրիչ ու փրկարար «Ոգի»ով, Հ.Մ.Ը.Մ.ը վերածուեցաւ ցեղային ու ազգային հզօր ու անառիկ բերդի մը, որուն պաշտպան, առոյգ ու աննման «զինուոր»ները, ամէն տեսակ խոչընդոտներ հարթելով, հպարտօրէն սրբազան պատմութիւն մը կերտեցին, չքեղ ու պատկառելի:

**

1923-ին, օր մը, Հ. Յ. Դաշնակցութեան ակումբի գրադարնն էի. յանկարծ ներս մտաւ Արշաւիր Ծիրակեանը, շատ լաւ հագուած, աչիոյժ ու ժիր՝ ինչպէս միշտ: Հաճելի անակնկալ մըն էր: Ողջագուրուեցանք եւ իմ հարցումներուս, հետաքրքրութեանս գոհացում տուաւ, աբազօրէն պատմելով՝ Պոլսէն յետոյ, Եւրոպայի մէջ իր ունեցած յաջողութիւններու մասին: Նոյն օրն իսկ, Հայաստան, Վահան Չերազին գրեցի՝ այսպէս. «Խնդիր»ը հոս է: (Հայաստան գացած ատեն, մեզի հետ էր եւ Արշաւիրը, որ իրեն յատուկ ձեռքի ժիր շարժումով մը՝ «Խնդիր է» կը պատասխանէր, երբ՝ գնացքին ե՞րբ ճամբայ ելլելու մասին հարցում կ'ուղղէինք իրեն: Չերազն ու ես լաւ մը կը խընդայինք մեր սիրելի Արշաւիրին հետ եւ միմիայն Չերազին ու իմ միջեւ գործածուելու պայմանով, Արշաւիրին ծածկանունը դրինք՝ «Խնդիր»:) Ուրեմն, նամակս սկսայ վերոյիշեալ ձեւով, — «Խնդիր»ը հոս է: Ինչպէս որ գիտես, իր հայրը, երկար տարիներէ ի վեր շան կաշիի վաճառականութեամբ կը զբաղի: Վերջերս, իր հօր հաշտոյն, Եւ-



Հ.Մ.Ը.Մ.ի նիւ ետրէի Ա. եւ Բ. խումբերը միասին. բերդապահ Մամասի
 սֆն ու ձախը Գ. Մանասեան եւ Տ. Խոյեան: Իսկ աջ ծայրը, հագուստով, եղիշէ
 Քաջունի, հայ մարմնամարզական շարժումի ուսիվիրաներէն:



Հ.Մ.Ը.Մ.ի նիւ ետրէի տղաքը առաջին տարիներուն: Եղբայրական ի՛նչ
 սէր ու ոգի:

րոպայի զանազան երկիրներու մէջ շատ յաջող արդիւնքով շրջան մը ընելէ ետք, եկած է այստեղ: Չի գիտեր թէ՛ իր յաջորդ գործառնութիւնը ո՞ւր պիտի ըլլայ...»:

Այս տողերէն ո՛չ ոք կասկածած ու բան հասկցած էր, բացի՝ Չերազէն, որ իր պատասխան նամակին մէջ գրած էր. — «Խնդիր»ը համբուրէ ճակատէն՝ իմ կողմէս, եւ ըսէ՛ թէ՛ այստեղ իրեն համար շատ գործ կայ...»:

*
**

«Հ.Մ.Ը.Մ.»ը իր պատուոյ տեղը գրաւած էր արդէն Նիւ Եորքի մէջ, իր նոր սերունդի ամէն կերպով առողջ ուղղութիւն տուող գործունէութեամբ: Ֆութպոլ, դաշտային ու մարզարանի վերաբերեալ մարզանքները, կանոնաւորաբար գումարուող՝ անդամական ու յանձնախմբային ժողովներով յառաջ եկած ընկերական կեանքը, անդամներու միջեւ ստեղծուած ջերմ ու ընկերական վերաբերմունքը եւ անդամներէն ոմանց ընտանեկան շրջանակներուն ցոյց տուած հարազատ ու սրտբաց չիրասիրութեան շինիչ տպաւորութիւնը անդամներու վրայ՝ յառաջ բերած էին մթնոլորտ մը, որ Հ.Մ.Ը.Մ.ի ցանկացածն էր, եռանդուն ու ոգեւոր՝ իբրեւ մարզիկ, յարգալիւր ու կարգապահ՝ իբրեւ անդամ, պատուախնդիր ու պարտաճանաչ՝ իբրեւ մարդ: Մեր ներքին, ջերմ ու անկեղծ մըթնոլորտի կազմութեան մէջ Քէմաննեան ընտանիքը (Օննիկ Քէմաննեանի մօրաքոյրը, մայրն ու քոյրերը) գլխաւոր դեր կատարեց: Մեր մարզական յայտագրին վրայ աւելցուցինք նաեւ Քեմիսը, որուն հետեւողներուն մէջ, կ'ուզեմ յիշել մեծ դերասան Յ. Ջարիֆեանն ու իր կինը՝ դերասանուհի Արաֆսը, նոյնպէս՝ գիտնական Մանասէ Սեւակը: Փութպոլիստներու թիւը ու նուիրումը ամէնէն մեծն էր, ինչպէս եղած է միշտ եւ ամէն տեղ:

Մեր տարեկան «ողիմպիական»ները հետզհետէ ամէնէն փնառուած մարզահանդէսները եղան: Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպած այդ մրցահանդէսին միշտ կը հրաւիրուէին ու կը մասնակցէին Հայ Ուսանողական Միութենէն մարզիկներ եւ մրցորդներ՝ ուրիշ մարզական խումբերէ:

ՆՈՐ ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ
ԵՒ ՎԵՐԱՀԱՆԴԻՊՈՒՄ Ա. ՇԻՐԱԿԵԱՆԻ ՀԵՏ

Գարակէօզեան հաստատութիւնը երկու շաբաթ վճարուած արձակուրդ կու տար իր սովորական պաշտօնեաներուն: 1932-ի իմ արձակուրդս տրամադրեցի հայաստան տարրեր քաղաքներու մէջ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղեր կազմակերպելու աշխատանքին:

Առաջին այցելութիւնս տուի՝ Ֆիլատէլֆիային, ուր սքանչելի աղաք կային ու պարարտ հող՝ սերմնացանի համար: Զ. Կոկեան, Վահրամ ու Գառնիկ Քէչկէկեան եղբայրներ, Մէհթէրէսեան, Մանկիկեան, Էլվանեան ու ուրիշներ ջերմ ընդունելութիւն մը պարգեւեցին եւ զօրաւոր մասնաճիւղի մը համար բոլոր տուեալներով հարուստ երիտասարդական խանդավառ մթնոլորտով մը վարձատրուեցայ: Ֆիլատէլֆիայի դրացի, փոքրիկ Քէմտրնի մէջ ալ շատ շուտով մասնաճիւղ մ'ունենալու խոստումն ալ առած մեկնեցայ Պոստրն, հայ մամուլի, հայ մտաւորական կենդրոն քաղաք: Առաջին այցելութիւնս տուի՝ հայ Ռամկավար Ազատական կուսակցութեան պաշտօնաթերթ՝ «Պայքար»ին: Շատ ջերմ ու սիրալիր ընդունելութեան արժանացայ: Խմբագրութեան յանձնեցի օրինակ մը Հ.Մ.Ը.Մ.ի առաջին «ծրագիր-կանոնագրէն»: Պր. Ա. Նազարն էր խմբագիրը: Ըստ թէ՛ կը ճանչնար հայրիկս եւ շատ քաղաքավարօրէն բաժնուեցանք: Երկրորդ այցելութիւնս տուի՝ Հ. Յ. Դանիակցութեան պաշտօնաթերթ՝ «Հայրենիք»ին (հին շէնքը): Տաքուկ ու սրտբաց ընդունելութիւն մը կը սպասէր ինձի: Դերասան Զարիֆի ու Տիկ. Արաքսի միջոցաւ ծանօթացած էի խմբագրապետ՝ Ա. Դարբինեանին: Յանձնեցի իրեն օրինակ մը՝ մեր «ծրագիր-կանոնագրէն»: Հաճոյք էր ըլլալ Դարբինեանի քաղաքավար ու անկեղծ շրջապատին մէջ: «Վերածին»ը որ մարմնակրթութեամբ շատ էր հետաքրքրուած ու Y.M.C.A.ի անդամ էր, ստիպեց ու խոստումս առաւ յաջորդ օրը, Y.M.C.A.ի աւագանին մէջ միասին լողալու համար:


Կրկին հանդիպեցայ Արշաիր Շիրակեանին եւ մինչեւ մեկնելու, ամէն օր, զիրար կր տեսնէինք: Դեռ Պոստընէն չմեկնած «Հայրենիք»ը գեղեցիկ խմբազրական մը նուիրեց «Հ.Մ.Ը.Մ.»ին, հրաւիրելով ընթերցողները ներկայ ըլլալու Հ.Մ.Ը.Մ.ի անունով տեղի ունենալիք ձեռնարկին, որ՝ գեղարուեստական ընտիր յայտագրի մը հետ՝ Հ.Մ.Ը.Մ.ի պտտգամարերը պիտի խօսէր մարմնակրթական այլ համահայկական միութեան մասին: «Վերածին»ն ալ նոյն հրաւիրը յղած էր ընթերցողներուն իր ամէնօրեայ երգիծական սիւնակին մէջ: Դժբախտաբար «Պայքար»ի մէջ որեւէ գրութիւն չերեւաց Հ.Մ.Ը.Մ.ի կամ հանդէսի մասին: Զեռնարկը տեղի ունեցաւ, որուն յաջորդեց երիտասարդներու ժողով մը, որ նախապէս տեղի ունեցած, ուրիշ ժողովի մը եզրափակումն էր: Ֆիլատէլ-Ֆիլայի պարարտ հոգը շկար այստեղ, բայց կարելի եղաւ վարչութիւն մը կազմել, որուն ամենաարժէքաւոր անդամն էր «M.I.T.»ի ճարտարագիտական ուսանող Զարեհ Սուրեան՝ իրրեւ քարտուղար: Ափսո՛ս այլ սքանչելի երիտասարդին, որուն փայլուն միտքն ու շքեղ հոգին ա՛յնքան կանուխ խաւարեցան անողոք մահուան սեւ շուքին տակ: Զարեհ Սուրեանը մղիչ ուժն էր Պոստընի Հ.Մ.Ը.Մ.ին: Ֆութպոլի խումբ մըն ալ ունեցան, որ նոյնիսկ ոչ հայ խումբի մը զէմ մրցում մը սարքեց: Պէտք ունէր օգնական ուժերու: Դիմեցին մեզի: Մրցումը՝ շարաթ օր մըն էր: Նիւ Եորքի Հ.Մ.Ը.Մ.ի խումբէն՝ Պողոս Պէօրէֆ-նեան, Մամաս Խուպէսէրեան (բերդապահ) եւ Տիգրան Խոյեան, Արտաւազդ Գուլումեանի եւ ուրիշ երկու հոգիներու ընկերակցութեամբ, Ուրբաթ գիշեր մեկնեցան ու Շարաթ օրուան խաղին մասնակցելով, պատուով դուրս եկան: Դաշտի վրայ, խողը գիտեւրու եկած էին բաւական թիւով հայեր:

Ուրեմն, հինգ մասնաճիւղեր ունեցանք: Շատ շուտով Քէմտընն ալ միացաւ ու կազմեց՝ ճորջ մասնաճիւղը:

Պոստընի այս այցելութիւնս համեմտող փոքրիկ պատմութիւն մը կ'ուզեմ ընել:

Պոստընի մէջ շատ յայտնի ճաշարան մը կար, Գօգոյին փաշարանը: Գօգօն բարձրահասակ կոշտելու շափ բարձր հասակով, թիկնեղ եւ ճաշարանապետի ճարպոտ փորով, դանդաղաշարժ, ամէն բանի տեղեակ ըլլալու մարմաջով, խիստապէս բարի, հին գաշնակցական մըն էր: Կերակուրները համով էին եւ ճաշարանը միշտ լեցուն՝ յաճախորդներով: «Հայրենիք»ի «տապանիք»ն հոն կը ճաշէր: Առաջին անգամ Արշաիր Շիրակեանին հետ գացի Գօ-

Վազֆի մրցում. ձախ
ծայր՝ Արամ Պապայեան,
աջէն Երրորդ Տիգրան Խոյ-
եան:



Վազֆը կը շարունակուի:



Պալիս, ախտրէն որք հասած մեր Վար-
դան, այդ օր, առաջին կը հասնի 100 Խարտ
վազֆի մրցումին:



Բարձրութիւն ցատկի


գոյին ճաշարանը: Ինչպէս բոլոր յայտնի հայերու, հերոս Արշաւիրի հանդէս ալ շատ հոգածու ընթացք մը ունէր: Իսկ ո՞վ էի ես, Արշաւիրին հետ, ըստ երեւոյթին, մտերիմ կապ ունեցող մը: Եկաւ, գնաց, ուշի ուշով գննեց զիս իբրեւ թէ առանց յայտնի ընելու եւ ճաշիս համար սեւէ վճարում չընդունեց: Իմ՝ քիչ մը նեղուած բողոքիս՝ «է՛հ, ազգին համար դուն շատ ես վճարեր, աս ալ իմ կողմէ պատիկ բան մը թող ըլլայ» ըսաւ: Արշաւիրէն ալ դբամ չառաւ: Արշաւիրը թեթեւ նշան մը բրաւ ու դուրս ելանք: «Նորէն հրամսէ» ծանօթ հրաւերը Գօգօն մեր ետեւէն մեզի հասցուց:

Յաջորդ օրը, այս գոգոյական հիւրասիրութեան մասին «Հայրենիք»ի «տղաքը» գիտէին արդէն, Արշաւիրին շնորհիւ:

Յերեկուան ճաշին, այդ «տղաք»ը լաւ մը գուարճանալու տրամադրութեամբ չըջապատեցին մեզ՝ Արշաւիրն ու զիս, առօք-փառօք շողակրատելով մտանք ճաշարան: Գօգօն իբրեւ լաւ հիւրամեծար դարձաւ շուրջերնիս, միշտ զիս դիտելով, ես՝ որ Արշաւիրէն զատ, այսօր ալ ընկերացած էի Եսեան Նաթալիով, Արտաշէս Վանարեանով եւ վերջապէս ազգին ուրիշ կարեւոր դէմքերով, ուրեմն ես պէ՛տք էր որ շատ կարեւոր մէկը ըլլայի. բայց, ո՞վ էի. . . :

Այդ տարին, «Հայրենիք»ի պատի օրացոյցը քովէ քով դբած էր նկարները՝ Սողոմոն Թէ՛լիբեանի եւ Միսաք Թօրլաքեանի, պատկերներուն տակն ալ երկու գիրար խաչածեւոզ ատրճանակներ տպուած էին, իբրեւ հաւաստիք՝ երկու հերոսներուն անարեկիչներ ըլլալնուն:

Մեր սեղանը սովորականէն աւելի աղմկուտ էր, «տղաք»ը որոշած էին շարչրկել Գօգօն իր հետաքրքրութեան մէջ: «Ձեմ կրնար բսել, Գօգօ. . .» կամ՝ «ի՞նչ է, ամէն բան պէտք է գիտնա՞ս. . .» եւ նման պատասխաններ միայն կը ստանար բարի Գօգօն իմ՝ ո՞վ ըլլալս հասկնալու իր ճիգերուն մէջ: Յանկարծ՝ բարձրաձայն ու երկար — հա՛, ա՛ — մը դուրս եկաւ «յաղթական» Գօգոյի բերնէն: «Հայրենիք»ի օրացոյցին վրայ, Սողոմոնին գիմացի նկարը նմանցուցեր էր ինձի, եւ որովհետեւ Միսաքը տրապիզոնցի էր (մեր փեսան էր) կամաց մը մօտեցաւ ինձի ու. . . «վաղը նորէն եկուր, խամսի (տրապիզոնցիներու սիրած ձուկը) պիտի եփեմ, կարօտցած ես չէ՞» ըսաւ: Ես ալ տարտամօրէն իրեն նայեցայ եւ անորոշ կերպով՝ «ինչ ո՞ւ. . .» ըսի: Գօգօն գնաց գոհացած, իսկ Արշաւիրը, սր հետեւած էր խօսակցութեան՝ «Տղա՛ք, Սոյեանի Միսաքին տեղը դբաւ» ըսաւ:



1923-ի Նիւ Եորքի սպիտակակապույտները



Նիւ Եորքի ֆուրպոլի խումբը, 1923- եղիշէ Քաջունի՝ ձախ ծայր, զգեստով, Տ. Խոյեան զետիմը (ձախէն Ա.Բ) Մանատեան ուսէի՝ աջ Գ.Ը



1923-ի Նիւ Եորքի ֆուրպոլի խումբը յաղթական մրցումէ մը վերադարձին:



Տիպրան Խոյեան 1923-ին, City College-ի դաշտին վրայ, ուր Հ. Մ. Ը. Մ. Բ կը խաղար միշտ:

Խաղը վերջացած էր: Դուրս ելանք ճաշարանէն, ես՝ ամէնէն վերջը, որպէսզի Գօգոյին, հետաքրքիր բարի Գօգոյին ըսէի թէ սխալ էր հեռեւութիւնը, ես Միսաք Թօրլաքեանը չէի, բայց շատ մօտիկ էի անոր եւ արմատս՝ Տրապիզոնի հողին մէջ էր թաղուած եւ խամսի պալըքին ալ շատ կը սիրէի: Աստուած հոգիդ լոյսերու մէջ հանդ-չեցնէ, մեր լաւ ու առատաձեռն Գօգօ...:



Նյւ Ետրֆի ֆուրպոլի խումբը. ոտֆի՝ կեդրոնը Տ. Խոյեան:



Տիգրան Խոյեան՝ ֆուրպոլի սիրահարը:

ՄԱՐՄՆԱԿՐԹԱՆՔԻ ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՈՒՍԱՆՈՂ

Վահան Չերազի հետ (Հայաստան) մեր նամակապրութիւնը կը շարունակուէր: Ալէքսանդրապոլի Կազաչի Բոստ որբանոցին մէջ, ամերիկեան որբախնամի պաշտպանութեան տակ, ընդհանուր պահակութեան հետ մէկտեղ՝ որբերու մարմնական ու հոգեկան ազնուացման աշխատանքին նուիրած էր ինքզինք եւ անհունօրէն գոհ էր իր վայելած արդիւնքովը:

Այլ օրերուն Երկընտրանքի մը առջեւ գտայ ինքզինքս: Բարձրագոյն կրթութեան հետեւելու իմ փափաքիս երկու լուծումներ ներկայացան: Մէկը երկրագործութեան մէջ մասնագիտանալու համար, ջանալ մտնել Cornell համալսարանը, ու՛ր քանի մը հայ ուսանողներ կային արդէն եւ անոնցմէ երկուքը՝ Արամ Պապաեան եւ Գէորգ Պահչէնեան, երկուքն ալ Պոլսէն ծանօթ Ռոպրոզ գոլէնի ընթացաւարտներ էին: Ա. Պապաեանը մեր լաւագոյն վազողը եղած էր Պոլսոյ մէջ եւ ամենալաւ պատրաստուած սկաուտ խմբապետներէն մէկն էր: Վոսփօրի խմբապետն էր: Այս երկու մօտիկ բարեկամներս կը ստիպէին զիս Cornell երթալ, կ'ապահովցնէին որ իմ մարզական կարողութիւններովս կրնայի նպաստընկալ ուսանող իբրեւ ընդունուիլ, քանի որ նիւթապէս բաւական ծանր բեռ մը պիտի ըլլար համալսարանական ուսանողի կեանքս: Միւս կողմէ, նոր Հայաստանի մէջ ալ կարենալ գործելու, Չերազի նման որբանոցի մը մէջ որբերու մարմնական ու հո-

գեկան ազնուացման նուիրուելու իտէալական հեռանկարը զիս կը քաշէր, որով որոշեցի՝ Փիզիքական դաստիարակութեան մասնագէտ մը ըլլալ ու վերադառնալ Հայաստան, հոգ չէ թէ անիկա ըլլայ տարբեր իշխանութեան, տարբեր գաղափարականի տակ: Իմ գործը դաստիարակչական բնոյթ պիտի ունենար եւ ոչ՝ քաղաքական: Չերազ Վահանին գրեցի որոշմանս մասին եւ իր պատասխան նամակին մէջ՝ «Տեղդ հոս է» գրած էր: Խոստում մըն էի տուած իմ հոգեկից աւագ եղբորս, ուրեմն պէտք էր պատրաստուիլ:

Springfield (Mass)ի մէջ Y.M.C.A.ի Springfield Collegeը մարմնակրթական լատագոյն Collegeը նկատուած էր եւ դպրոցներու մէջ դասաւանդող մարմնակրթական ուսուցիչներու հարիւրին 65-ը այդ «ուսումնարանէն վկայուած» ներ էին, այդ օրերուն: 1924, Հոկտեմբեր էր արդէն, ու շացած էի: Արձանագրութիւնները փակուած էին: «Հայրենիք»ներու խմբագրապետ՝ Ա. Դարբինեանի եւ Վահան Գարտաշեանի բարեկամ James Gerard (հայասէր)ի կողմէ բարձր յանձնարարականով մը ներկայացայ ամերիկեան սկաուտական կեդրոնի նախագահ Dr. Fisher, որ՝ տեղեկանալէ ետք իմ պայմաններուս եւ մարզական ու սկաուտական վաստակին՝ ինք անձամբ ձեռք առաւ հարցս եւ շուտով բացուեցան իմ առջեւ Springfield Collegeի դռները:

Տնօրէնութիւնը Պոլսոյ կեդրոնական վարժարանէն իմացաւ՝ իմ կեդրոնականի ուսանողութեանս առթիւ սովորած ճիւղերուս մասին եւ հիմնուելով այդ տեղեկագրին վրայ՝ ակադեմական զանազան դասընթացքներու համար վարկ շնորհուեցաւ ինծի, եւ չորս տարուան տեղ երկու տարուան շրջան մը բոլորելով՝ վկայականի արժանի գրանուեցայ, այդ երկու տարին տրամադրելով զուտ մարմնակրթական դաստիարակութեան վերաբերեալ դասընթացքներու:

Springfield Collegeի մէջ, կրօնական ճիւղ մը անհրաժեշտ է վկայուելու համար: «Կրօնից Պատմութիւն» կոչուած դասընթացքը ընտրեցի ինծի համար, բայց դուրս եկաւ որ՝ այդ նիւթը չա՛տ հեռու էր իր վրայ փակցուած խոշոր անունէն: Ամերիկայի մէջ բողոքականներու եւ կաթոլիկներու պայքարներուն պատմութիւնն էր, որ զիս երբեք չէր հետաքրքեր եւ սեւէ առընչութիւն չունէր իմ իւրացնելիք մասնագիտութեանս հետ: Բողոքեցի տնօրէնութեան առարկելով թէ՛ սա ընդհանուր կրօնից պատմութիւն չէ, ես՝ կեդրոնականի մէջ ուսած եմ այդ նիւթը իր իսկական արժէքով: Տուի մեր դասագիրքին անունը՝

«Orpheus», Լոնտոնի մէջ ապուստ, և ըսի թէ ուսուցիչս էր՝ Եգիշէ Արքեպիսկոպոս Դուրեան, այժմ՝ պատրիարք Երուսաղէմի: Իմ լաւ բախտէս, այդ Կիրակի օրուան New York Timesի Magazineի մէջ Երուսաղէմի հայկական վանքի մասին հետաքրքրական յօդուած մը լոյս տեսած էր և Magazineի կողքը զարդարուած էր Դուրեան Սրբազանի մեծագիրը նկարով: Խնդրեցի որ Կեղրոնականի տեղեկազրէն ստուգեն բառս, ինչ որ ըրին ու անմիջապէս զիս ազատարձակեցին բողոքական-կաթոլիկ պայքարներու պատմութիւնը ուսուցանող գասրնթացքէն և անոր տեղ, ի՞մ ընտրութեամբ, Magazineի գասրնթացքին հետեւեցայ:

Սկսուտական իրա՛ւ Ոգիի խօսումն արուայայտութեան մը հանդիպեցայ, Springfield Collegeը մտնելուս տառջին շարաթիւր. թէ՛ ի՛նչպէս...

Դպրոցի սրահին մէկ անկիւնը, սեղանի մը վրայ, ամբողջովին բացուած խոշոր տետրակ մը նկատեցի: Մտակցայ՝ հետաքրքրուած, և տեսայ թէ՛ ուսանողներէն մէկուն կը պատկանէր այդ, և ան՝ նորեկ ուսանողներէն կը խնդրէր տեղեկութիւններ իրենց մասին, իսկ ամենավերջը կը հարցնէր թէ՛ կեանքի մէջ, ամէնէն աւելի ի՞նչ կ'ուզէր ըլլալ: Այս հարցարանին կարելի եղած չափով պատասխանեցի, իսկ վերջին հարցումին իբր պատասխան գրեցի.

«Սկսուտ մըն եմ, պիտի ուզէի մնալ ու ապրիլ միշտ՝ իբրեւ կատարեալ ոգիով, անխաթար սկսուտ մը»:

Յաջորդ օրը եկաւ ու զիս գտաւ տետրակին հարցարանին տէրը: Համակրելի արտաքինով, ժպտերես երիտասարդ մըն էր: Վստահութիւն ու անկեղծութիւն կը ներշնչէր քեզի: Pringle էր անունը, իմ գտարանէս: Ամերիկեան Boy Scoutներու կազմակերպութեան մէջ Eagle Scout (Արծի սկսուտ) բարձրագոյն աստիճանով պատուուած էր: Քանի մը հարցումներէ ետք, ողջագորուեցաւ հետս և՛ «Ինչո՞ւ կրնամ օգնել քեզի» բառ: Անկեղծօրէն ըսի իրեն, թէ ոչ գալուս պատճառաւ՝ որոշ նիւթեր տակաւին թերի ու անհասկնալի կը դառնան, և յետոյ՝ սղուգրել չեմ գիտեր և professorին բառները արագօրէն տետրակիս մէջ գրելու ի վիճակի չեմ: «Հոգ մի՛ ըներ, սկսուտ եղբայր, — բառ, — և ամէն գասի սկիզբէն սկսած ըստը noteերը մեքենայրուած վիճակով ունիմ, քեզի կու տամ անոնք, սրպէսզի արտադրես և up to date ըլլաս», և աւելցուց. «Ես իմ noteերս միշտ կու տամ քեզի որ օգտուիս, և խնդրեմ՝ մի՛ վարանիր ինծի վրմելու, եթէ ևէ նկատութիւն ունենաս և օգնութեան պէտք զգաս»:

Mr. A. Zarinian
(Queen of the day)



Տիգրան Խոյեան մարզիկները շարքի շարած պահուն



Վազբի աարաին



Տիգրան Խոյեան՝ հեծանուորդ

Երկու սկաուտներս մի՛շտ մնացինք «եղբայր»ներ:
 Soccer Փութպոլի առաջին խումբին (Varsity) մէջ խաղըն-
 կերներ էինք: Աւելի ուշ, դպրոցէն ընթացաւարտ ըլլալու
 մեր տարին, դարձեալ ցոյց տուաւ իր ոգիի բարձրութիւ-
 նը: Կատարեալ սկաուտ մըն էր՝ արծիւի բարձրասլաց
 թռիչքով: Հիացաւ մեր «Բարձրացիր-Բարձրացուր» նշա-
 նաբանին վրայ:



Տիգրան Խոյեան ազատարար
 լողորդի պատուաբեր նշանով:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԼԻԲԱՆԱՆ ԵՐԹԱԼՍ ԶՈՒՐԸ ԿԻՅՆԱՅ

1924-ի դպրոցական արձակուրդիս ատեն պոլսեցի, լաւ ծանօթ ծաղկավաճառի մը քով (Madison Ave.ի վրայ) աշխատեցայ, դպրոցական յաջորդ տարուան համար նիւթական օգնութիւն մը ապահովելու մտօք:

1926-ին իբրեւ Պսակաւոր Ֆիզիքական դաստիարակութեան (B.P.E.) աւարտեցի Collegeր: Նախքան այդ՝ Հայաստան վերադառնալու եւ մասնագիտութիւնս այնտեղ գործադրելու մտօք զիմում կատարեցի պատկան իշխանութեանց, բայց այն ատենուան Խորհրդային Հայաստանի վարչապետ Մուսիկեանի դրած պահանջները շատ խիստ էին. գաղափարական ինքնուրացում կը նշանակէր այդ: Անելի մը առջեւ կը գտնուէի, երբ փիշղ ատենին հասաւ Վ. Չերազի նամակը, որուն մէջ, երկու տարի առաջ՝ «Տեղդ հոս է» ըսող սքանչելի Չերազը, կը գրէր՝ «Երբոր դպրոցդ աւարտես, հարկաւ հայաշատ գաղութներէն մէկուն մէջ պաշտօն մը կը գտնաս, ուր կրնաս մասնագիտութիւնդ արժեցնել քու սորված ու գիտցած ձեռովդ»: Պարզապէս հոս մի՛ գար կ'ըսէր, զիս կը զգուշացնէր, իսկ իր այդ քանի մը բառերը ինծի համար ամենապաշտօնական տեղեկութիւններէն աւելի ճշգրիտ էին եւ արժող: Աւելի ուշ տեղեկացայ որ իր ու իր գործին հանդէպ սանձարձակ հալածանք մը սկսած էր, զազրելի եւ անգութ կերպերով, մինչեւ որ քանդուեցաւ իր հողեկան գոհացման աղբիւր եղող որբանոցէն ներս խմորուած հայաշունչ ու ոգեպէն մթնոլորտի շէնքը որբ սկաստաներուն, եւ Չերազն ալ նահատակուեցաւ, որովհետեւ ուղիղ ու անթեք մնաց միշտ եւ իր հայաստանեան սիրոյն ու նուիրումին մէջ՝ անյողդողդ:

Այսպէս, ուրեմն, Հայաստան երթալս, իբրեւ մասնագէտ, օգր ցնդեցաւ:

Տարեվերջին, դպրոցի ծանուցումներու տախտակին վրայ յայտարարութիւն մը՝ մարմնակրթական ղեկավարի (Physical director) պաշտօն մը կ'առաջարկէր, Պէյրութի մէջ, Ամերիկեան Համալսարանին համար: Իսկոյն թեկնածու ներկայացայ: Տնօրէնութիւնը նկատի ունենալով իմ ֆրանսերէն գիտնալս եւ Soccer ֆութպօլի մարզիչ մը ըլլալու առաւելութիւններս՝ քաջալերեց թեկնածութիւնս: Համալսարանի տնօրէնին կինը եկած էր Ամերիկա եւ մօտէն ծանօթ ըլլալով իմ «սկաուտ եղբայր» Eagle Scout Pringleի ընտանիքին՝ կը ջանար համոզել Pringleը ընդունելու Պէյրութի պաշտօնը: Pringle եկաւ ինծի հետ խորհրդակցելու այս մասին: Ըսի իրեն թէ՛ լաւագոյն ու պատուարեր զիրք մըն է առաջարկուածը Պէյրութի նման գեղեցիկ ու յառաջադէմ քաղաքի մը մէջ: Բայց հինգ տարի օտարութեան մէջ ապրելու հեռանկարը հաճելի չէր իրեն եւ որոշեց՝ մերժել: «Հա՛ պա դո՞ւն, — ըսաւ, — այդ ժողովուրդներու հոգեբանութիւնը կը հասկնաս, ինձմէ աւելի առաւելութիւններ ունիս այդ երկրի պաշտօնին համար»: «Pringle, — ըսի, — եթէ ճիշդ է որ պիտի մերժես քեզի առաջարկուած այս զիրքը, ես աւելի քան երջանիկ պիտի ըլլամ եթէ այդ պաշտօնը ինծի ձգես»: Հրճուալից արտայայտութիւններով ողջագուրեց զիս եւ՝ «խսկոյն քու մասիդ պիտի բարեխօսեմ, իմ՝ քեզ ճանչցած ձեռօխ, եւ վստահ եմ որ այդ պաշտօնը քուկդ պիտի ըլլայ», ըսաւ ու գուարթ արամադրութեամբ բաժնուեցանք:

Անօրինակ հոգեկան արամադրութիւն մը պաշարեց զիս: Կարծես թէ՛ արդէն որոշուած էր իմ Պէյրութ երթալս: Երազներով, մօտիկ ապագայի հինգ տարիներու այդ բարձրացուցիչ պաշտօնավարութեամբ եւ միեւնոյն ատեն տեղւոյն հայ կեանքի եռուն իրականութեան հետ ըլլալու գեղեցիկ պատեհութեամբ գիտովցած՝ նստայ եւ իսկոյն Պոլսէն Բարիդ ապաստանած (ստիպուած) ծնողքիս գրեցի, որ շուտով, դպրոցը աւարտելուս պէս, Պէյրութ երթալու ճամբուս վրայ Բարիդ պիտի հանդիպիմ ու զիրենք վայելեմ:

Սկաուտ «եղբայրս»՝ Pringle եւ դպրոցի տնօրէնութիւնը, համալսարանի տնօրէնին արկնողը խօսեր են իմ մասին, բայց արիկինը ըսեր է որ՝ եթէ հայ չըլլար, վայրկեան մը անգամ չէի վարաներ եւ հաւանութիւնս կու տայի: Բայց, այդ ատենները (1926) հայ եւ արաբ յարաբերութիւնները լարուած են եղած եւ հայու մը յաւելումը ուսուցչական կազմին վրայ անզգոյշ եւ ոչ յանձնարարելի քայլ մը կ'ընայ ըլլալ: Երազներս չբացան, ափսո՛ս...:

ՄԻՇՏ Հ.Մ.Ը.Մ.Ի ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ

Springfield College-էն վկայուելէս յետոյ, Նիւ Եորքի կամ մօտակայ փոքրիկ քաղաքներու մէջ, դպրոցական պաշտօն մը ջանացի գտնել եւ չյաջողեցայ: Պէտք էր ապրիլ սակայն: Պոլիս, իմ հօրենական տան գրեթէ հարազատ գաւակ եւ մեծ եղբօրս մօտիկ ընկեր հոսորով Պապատեան՝ լսեր էր իմ մասիս, եւ լուր զրկեց, որ երթամ զինք տեսնեմ: Պոլսոյ իրաւարանական համալսարանը աւարտած սանասարեանցի Սոսորով Պապատեանը, կեանքի պայմաններու պարտադրանքին ենթարկուելով, հագուստ մաքրելու գործարանի մը մէջ այժմ (spotler) արատներ մաքրող էր: Գաղափարակից գործատէրերը լաւ կը վարձատրէին իրենց խղճամիտ պաշտօնեան եւ իրենց յարգանքը անպակաս կ'ընէին անոր հանդէպ, որ՝ հակառակ իր հանրային գործիչի կրակոտ համբաւին՝ համեստօրէն հանդուրժած էր սորվիլ այդ արհեստը եւ... ընտանեօք՝ ապրիլ...: Մօտաւորապէս այս իմաստով համոզիչ ու մեծ եղբօր շունչով տաքուկ, քանի մը խօսք բաւ ինձի, եւ արդէն համաձայնած էի յաջորդ օրուրնէ սկսեալ երթալ իրեն հետ ու այդ արհեստը սորվիլ իրմէ:


Սոսորով Պապատեանի վարժ ցուցմունքներուն տակ՝ շուտով վճարովի գործ մը կարենալ գոհացնելու չափ արհեստը սորվեցայ, ինչպէս՝ ինձմէ առաջ՝ նոյն ուսուցիչէն նոյն արհեստը սորվեր էին Արսէն Միքայէլեանն ու Վարդգէս Ահարոնեանը եւ գրեթէ չէին գործադրած: «Վերածին»ի երգիծական սիւնակներէն մէկուն վերնագիրն էր՝ «Նիւ Եորքի Բծախնդիրները», ուր համով-հոտով քաջբըշուքներ էր տեղաւորած մեր երեքի հասցէին:

«Հ.Մ.Ը.Մ.»ը իր մասնաճիւղերով եւ նոր սերունդի մէջ յառաջ բերած ոգեւորութեամբ՝ դէպի առողջ ու մաքուր ապրելակերպ մը, դարձած էր արդէն զգալի ոյժ մը՝ ամերիկահայ գաղութի արեւելեան շրջանին մէջ: Իմ՝ collegeը եղած շրջանիս կազմակերպութեան կեանքը շարունակուած էր դովելի խանդավառութեամբ եւ նոր անդամներու յաւելումով: 1925-ի դպրոցական արձակուրդիս առթիւ այցելեցի Providenceի հին գաղութին: Արտաշէս Հացիկեանի նման փորձ ու վաստակաւոր հանրային գործիչի մը գործակցութիւնն իսկ բաւարար չեղաւ հիմնուած մասնաճիւղը կենդանի պահելու համար:

1926-էն ետք, իմ սպրուստս լայնօրէն ապահովող նոր արհեստովս ապահովուած՝ նոր թափով լծուեցայ կրկին «Հ.Մ.Ը.Մ.»ի սրբազան շարժումին: Springfieldի մէջ ստացած ազատարար լուղորդի (Life saver) պաշտօնական վկայագրովս, Նիւ Եորքի High schoolներէն մէկուն

աւագանին մէջ իմ հսկողութեամբ լողալու դասընթացք մը հաստատեցինք:

Անակնկալօրէն, Նիւ Եորք հասաւ, Եղիշէ Քաջունին, 1908-ին Պոլսոյ Կեդրոնականէն ընթացաւարտ, Չերազի դասընկեր, յետոյ Չերազի, Սիմոնի, իր եղբօր՝ Եղնիկի հետ «Տորք» մարմնամարզական ակումբը հիմնող եւ յիշած երեք անուններուս հետ, «Տորք»ի Փութպոլ խաղացողներէն եղող եւ հայ մարմնակրթական շարժման ուսուցիչներէն՝ մեծարժէք ոյժ մը, որ 1914-ին Պոլսոյ իրաւարանական համալսարանը աւարակուն պէս գնաց երկիր՝ Վա՛ն, հայ ժողովուրդի անիրաւուած զաւակներուն դատերը պաշտպանելու թրքական անօրէն օրէնքին առջեւ: «Տորք»ի լաւ Փութպոլիստներէն՝ Գաբրիէլ Մաքառեանը երջանիկ էր իր հին թաղեկիցը ողջագուրելով: Եղիշէն, հակառակ ամուսնացած ու զաւակներու աէր ըլլալուն, չկրցաւ հետաքրքրուիլ ու իր թանկագին փորձառութիւնն ու խորհուրդները չտրամադրել մեր ջանքերուն: Դասախօսեց մեր Փութպոլի խումբին, շրջան մը առննապետր եղաւ Նիւ Եորքի մասնաճիւղին, բայց, աւելի ուշ, ստիպուած եղաւ ամփոփուիլ իր ընտանեկան եւ գործի նպարտադրութիւններուն տակ, միշտ, մնալով Հ.Մ.Բ.Մ.ի տղոց հետ իր սրտով ու քաջայերութիւններով:



Տիգրան Խոյեան Հ.Մ.Բ.Մ.ական րեկիս խաղացողներուն հետ Նիւ Եորքի առաջին սարիներուն:

ԴԵՊՔ ՄԸ ԵՒ Հ.Մ.Ը.Մ.Ի
«ԵՂԲԱՅԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ»Ը

Նիւ Եորքի մասնաճիւղը, ամբողջ Հ.Մ.Ը.Մ.Ի պատմութեան մէջ միակը եղող դէպք մը ունեցաւ, որ շատ նշանակալից է եւ ցոյց կու տայ Հ.Մ.Ը.Մ.Ի ներքին առողջ մթնոլորտը:

Վարչութեան անգամ՝ Արչաւիր Հիւանեանը մեր Պոլսոյ որբ սկաուտներէն՝ Վահրիճ Քէնտէրեանի հետ Նիւ Եորքի Քէցֆիլ շէնքերուն մէջ որսորդութեան կ'երթայ: Ինծի ալ առաջարկեցին միանալ իրենց, բայց ստիպողական ուրիշ գործեր արդելք էին, չգացի: Որսորդութեան միջոցին (ինչպէս ամէն տարի կը պատահի) Արչաւիրը ծունկէն կը վերաւորէ Վահրիճը, որ շատ արիւն կը կորսնցնէ եւ անկարող կ'ըլլայ քալելու: Արչաւիրը ուսամբարձ կը տանի Վահրիճը մինչեւ վար՝ Kingstonի հիւանդանոցը, ուր, մեր անդամներէն Քէլէշեան եւ ուրիշներ, յաջորդ օրը փութացին հիւանդանոց Վահրիճին արիւն տալու համար:



Այս դէպքը սակայն Նիւ Եորքի հայ համայնքին մէջ տգեղ, չափազանցուած ու զայրացուցիչ բամբասանքներու դուռ բացաւ: Ես՝ Նիւ Եորք քաղաքէն դուրս, ծովեզերեայ տեղ մը, իմ արհեստս կը կիրակէի այդ ամբան ընթացքին: Լուր դրկեցին ու կայութեան տեղեակ ըրին զիս: Վահրիճը Նիւ Եորքի հիւանդանոցն էր փոխադրուած: Արամ Պապեանին հետ (որ Cornnellէն նոր վկայուած, Նիւ Եորք եկած էր) գացինք հիւանդանոց, Վահրիճին մօտ: Անկողնին մօտ շէկ օրինորդ մը նստած էր: Հայուհի շէր: Ըսած էին ինծի, թէ այդպէսի մէկը միշտ կը թունաւորէր Վահրիճը եւ լուրեր կը տարածայնէր: Արամ Պապեանն ու ես, իբրեւ աւագ եղբայրներ, սկաուտ եղբայր՝ Վահրիճէն սկաուտի խօսք առինք որ Արչաւիրի հանդէպ սեւ բան պիտի չխօսի եւ այդ օրիորդին լեզուն պիտի պրկէ: Խոստացանք իրեն, որ հիւանդանոցը ձգելէն անմիջապէս յետոյ, «եղբայրական դատական ատեան»ի մը մէջ ամէն ինչ կը կարգադրենք: Վահրիճը իր սկաուտի խոստումը յարգեց:

«Հ.Մ.Ը.Մ. եղբայրական դատարան»

Վահրիճ հիւանդանոցէն երբ դուրս եկաւ՝ կը կազար, եւ այդպէս ալ մնաց:

Շաբաթ գիշեր մը, Մկրտիչ Սանտալի «Armenia Press» տպարանին մէջ տեղի ունեցաւ այդ պատմական հանդիպումը՝ դատական: Երկու «Հ.Մ.Ը.Մ.»ի անդամներ էին, որ պիտի դատուէին չորս «Հ.Մ.Ը.Մ.»ի անդամներէ կազմուած դատական ատեանի մը կողմէ, եւ որոնք հետեւեալներն էին, — Վահրամ Տէրտէրեան, Արամ Պապեան (սկառուտապետ) Մկրտիչ Սանտալ եւ Տիգրան Խոյեան (Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիր անդամ): Դատական կազմը գլխաւոր դատաւորի պատիւր ինծի շնորհեց: Նախքան դատի սկսիլնիս, Արշաւիրին եւ Վահրիճին իբրեւ եղբայր դատաւոր մը, առանց ծամծմելու ըսի թէ՛ «Այս դատավարութիւնը պիտի առաջնորդուի եղբայրական մաքուր եւ ուղիղ ոգիով, հիմնուած՝ զուտ ու անխարզախ ճշմարտութեան վրայ: Պետական իշխանութիւն չենք, ոստիկանութիւն չունինք մեր կամքը պարտադրելու եւ ճիշդ այդ պատճառաւ ալ աւելի բարձր ենք մեր արժէքով, որովհետեւ մեր այս երեկոյեան մթնոլորտ բարձրօրէն եղբայրական է: Մեզմէ երկուքը կը ներկայացնեն ձեզմէ մէկը, իսկ միւս երկուքը ձեզմէ միւսը, բայց չէ՞ որ բոլորս ալ նոյն խոստումը տուած եղբայրներ ենք. այդ՝ դատական ձեւակերպութեան համար է միայն, այլպէս չորսս ալ ձեր երկուքին հետ ենք: Գիտցէք որ իւրաքանչիւրս պիտի ըլլանք շատ շեշտակի մեր հարցումներուն մէջ, եւ ինչ որ լսեր ենք, ինչ որ գիտենք պիտի դնենք ճշմարտութեան սեղանին վրայ: Կը սպասենք ձեզմէ նո՛յն ընթացքը ձեր միջեւ պատահածները պատմած ատեն: Մեր վնիւնները պարտադրելու մէկ միջոց միայն ունինք՝ պատիւը. պատուոյ ձեր խոստումը պիտի ըլլայ մեր ապահովութիւնը՝ իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ականներ, մեր տալիք վճիռի գործադրութեան: Կ'ընդունի՞ք բարոյական այս պայմանը իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի ուխտուածներ»: Այսպէս հարցոցի իւրաքանչիւրին դատ-դատ: Արշաւիրն ալ, Վահրիճն ալ ընդունեցին մեր տալիք վճոխն ենթարկուիլ: «Ուրեմն, — ըսի, — մեր այս գիշերուան հանդիպումը իմաստ կ'առնէ եւ կը սկսինք դատավարութեան»:

Դատավարութիւնը ընթացաւ շատ բուռն եւ տեւեց մինչեւ կէս գիշերէն յետոյ, ժամը 12ուկէս: Դատուող տղաքը առանձին, առանձին իրենց ձեռով պատմեցին զէպքը. իրենց ուղղուած հարցումները եղան շատ անկեղծ ու



Մարզիկները պատրաստ :



Դրօշարշախն Տիգրան Խոյեան գաւազանիկը կը փոխանցէ Վարդանին :

չեչտակի: Տարածայնուած, լսուած ու գիտցուած ամէն լուր մէջնեղ բերուեցաւ եւ եղան վայրկեաններ, ուր, երկուքն ալ լացին: Վերջապէս այդ փոթորկոտ գառաւարութիւնը խողաղ մթնոլորտով մը վերջացաւ եւ փոխադարձ համաձայնութեամբ Արչաւիբը խոստացաւ բաւական լուրջ գումար մը առ վաճրիճին՝ իրրեւ «վնասուց հատուցում»: Դատական մարմնի շորս անգամներս շտրճաւորեցինք մեր «եղբայր»ները ջերմ ողջագոյրումով մը: Նոյնը բրին նաեւ Արչաւիբն ու Վաճրիճը, որոնք զարձան կրկին մօտ բարեկամներ, պապանձեցնելով բամբասող շար բերանները:

Ո՞վ էր Վաճրիճը:

Պոլիս, Հայաստան մեկնելէ առաջ, երբ հրաւիրուեցայ որբերու հաւաքավայր կեդրոնի անօրէնութեան, օր մը, «ճակատամարտ»էն մասնաւոր յանձնարարակաւնով շատ համակրելի, առաջին վայրկեանէն սիրելի, բայց բնկճուած երեսոյթով փոքրիկ մը բերին: Կերպով մը պաշտպանեալա եղաւ: Զինք յանձնեցի Եսայեան վարժարանի որբերու բաժնին, որ լաւագոյնը կը նկատուէր նորահաստատ որբանոցներուն մէջ: Սկառուական շարքերու մէջ իր բնկճուած հոգին վերադարձնում մը ունեցած էր, եւ կը յիշեմ զինք 1919-ին, Փրանսական ազգային աօնին առթիւ Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպած առաջին սկառուական սոցանցքը առաջնորդող փողահարներուն մէջ, առոյց, աշխոյժ ու պլուխը բարձր, հպարտ: «Քէյֆս եկաւ»: Նոր մարդ մըն էր կերտուած իր մէջ: Եւ աարիններ ետք, Նիւ Եորքի Հ.Յ.Գ. ակումբին մէջ, երբ նոր հասած Զօր. Սեպուհին հեա կ'ողջագոյրուէի, Վաճրիճը հոն էր, մօտեցաւ ինձի եւ ուզեց որ զօրավարին ներկայացնեմ զինք: Կատարեցի փափաքը եւ մականունն ու պիթիւսի բլլալը լսելուն պէս, Սեպուհը իրեն քաջեց Վաճրիճը եւ՝ «Մօ՛, դուն Սարգիսի աղա՞ն ես, հէ՛, մենք բոլոր հայուկներս, որքա՞ն ենք կերեր հօրդ հացը, Քէնսէրեան Սարգի՛ս... հէ՛յ...» մեղմօրէն բացազանչեց սիրելի զօրավարը, կարծես՝ փոխադրուեցաւ հի՛ն, հայգուկային օրերը: Այդպէսի ծնողքի զաւակ էր մեր Վաճրիճը:

ՖՈՒԹՊՈՒԼ, ՖԻԼԱՏԵԼՖԻԱ ՆԻՒ ԵՈՐՔԻ ԴԵՄ

1927-ին Ֆիլատելֆիայի եւ Նիւ Եորքի Փուլթպուլի խումբերը մեծ մրցում մը ունեցան: Խաղավայրն էր Միացեալ Նահանգներու 150 ամեակի առթիւ (1926) կառուցուած հսկայ մարզարանը: Երկու մասնաճիւղերուն ալ ամէն կերպով պատիւ բերող մրցում մը եղաւ այդ խաղը: Մրցումէն ետք երկու մասնաճիւղերու խումբերն ու իրենց համակիր ժողովուրդը մէկտեղուեցան ճաշկերոյթի մը սեղաններուն շուրջ եւ Ֆիլատելֆիայ տղոց հիւրասիրութիւնը վայելեցին՝ Հ.Մ.Բ.Մ. ական ջերմ ու զուարթ, անկեղծ միջնորդարի մը մէջ: Մեզի հետ էր նաեւ յարգելի, արժէքաւոր հիւր մը՝ Մկրտիչ Եանրբեան, որ Իզմիրէն իբր այցելու եկած էր Պուլիս եւ Նիւ Եորքի խումբին հետ եկած էր մրցումը դիտելու: Իզմիրի «Որսորդաց Ակումբ» ծանօթ մարզական միութեան հիմնադիրներէն էր եղբայր Եանրբեան եւ հեղինակը՝ Փուլթպուլի խաղին ու օրէնքներուն մասին հայերէնով գրուած առաջին գիրքին:

Այդ օրը անցաւ լեցուն ամէն կերպով, շնորհիւ Ֆիլատելֆիայ մեր տղոց ցոյց տուած եղբայրական անթերի ոգիին:

«Հ.Մ.Բ.Մ.»-ի ճաշկերոյթներուն սովորութիւն եղած էր, զուարթ տրամադրութիւն ստեղծելու մտօք, զուարճալի փոքրիկ պատմութիւններու պատեհութիւն տալ: Դժբախտաբար «ֆոֆ» ըսուած այդ պատմութիւնները ընողները, աւելի զուարճալի ըլլալու իրենց մրցումին մէջ՝ ուսմութեան, գոհակութեան սահմաններէն ներս կը մտնային: Այդ ճաշկերոյթին սեղանապետի պաշտօնը ինձի տրուեցաւ: Նախապէս յայտարարեցի որ՝ Հ.Մ.Բ.Մ. ական միջնորդը չ'ընդունիր գոհակութիւն, եւ ազդարարեցի որ պիտի դադրեցնեմ այն ֆոֆերը՝ որոնք այդ միջնորդար պղտորելու հանգամանք ունին: Վահրամ Տէրաէրեանը, մեր հաւաքոյթներուն համ տուող այդ ֆոֆերու թագաւոր ու պատմել գիտցող սքանչելի անգամը առաջարկեց, կէս կատակ-կէս լուրջ ձեւով, որ Խոյեանը սեղանապետ չընենք երբեք, որովհետեւ ֆոֆին ամէնէն համով — ըսել կ'ուզէ՝ գոհակութիւն բուրոյ — տեղը, պատմութիւնը կէս կը ձգէ... Տէրաէրեանն ու ես փոխադարձաբար կը սիրէինք զիրար ու այդ առաջարկը իր ֆոֆերու կարգին անցաւ:

Յառկանչանական ուրիշ դէպք մը: Նիւ Եորքի Փուլթաուլի խումբին մէջ երկու պոլսեցի լաւ խաղացողներ ունէինք: Ծերուն եւ Պօղոս Պէնրէֆֆեան: Առաջինը՝ յետասպահ (back) էր, իսկ երկրորդը յառաջապահ (forward): Երկուքն ալ, հակառակ իմ թելադրութիւններուս՝ կը ծխէին: Սպանական զօրաւոր խումբի մը դէմ մրցումի մը առթիւ, երբ իւրաքանչիւր խաղացող իր ուժերուն առաւելագոյնը դուրս բերելու ստիպման տակ գտնուեցաւ, Պօղոսն ու Ծերունը յոգնեցան: Երկուքն ալ խաղի ընթացքին խնդրեցին ինձմէ, որ իրենց կողմը ուշադրութիւն դարձնեմ, որովհետեւ շատ յոգնած են... Այդ օրը Պօղոսը առած էր իմ դիրքս. կեդրոնական յառաջապահ (center forward), իսկ Ծերունը՝ յետասպահ (back): Ես կը խաղայի center halfback: Եթէ ուժերս չտկարանային իմ դիրքովս՝ կրնայի երկուքին ալ օգտակար ըլլալ: Խաղը վերջացաւ 0-1 մեր յաղթանակով: Յաջորդող շաբթուն, ինչպէս սովոր էինք ընել, Փուլթաուլի տղոց ժողովը ունեցանք: Երկրորդ խումբի տղաքն ու անդամներէն փափաքողներ կրնային ներկայ ըլլալ ժողովին: Այդ շատ օգտակար ժողովներուն մէջ, անցնող մրցումը քննութեան առարկայ կ'ըլլար իր ընդհանուր, խմբային խաղացուածքով, խաղացողներու թելադրութիւններով եւ առաւելութիւններով, խաղի ընթացքին ցոյց տրուած մարզական ոգիով եւն., ներկաներուն պատեհութիւն կը տրուէր շինիչ կերպով քննադատել եւ թելադրութիւններ ընել...:

Իրրեւ խմբապետ, այդ ժողովը ես կը վարէի: Յանկարծ՝ անսպասելիօրէն թելադրեցի, որ Պօղոսն ու Ծերունը առաջին խումբէն չխաղան այլեւս եւ պահեստի ոյժ մնան, եւ խաղան այն ատեն՝ երբ ուրիշներ չկան խաղի դիրքերը լեցնող: Ժողովին մէջ կարծես թէ ուժանակ մը պայթեցուցի. ժողովը բողբօքի ալիքով մը փոթորկեցաւ: Գիտէին թէ որքա՛ն կը սիրէի այդ երկու տղաքը եւ մեր խումբի լաւագոյն խաղացողներն էին: Ինչո՞ւններուն պատասխանեցի՝ մրցումի ընթացքին պատահածը պատմելով, որուն՝ իմ խնդրանքիս գոհացում տալով երկու խաղացողներն ալ հաստատեցին պատմածս, «Բայց, — աւելցուցի, — թելադրութիւնս ետ կ'առնեմ, եթէ Պօղոսն ու Ծերունը, այստեղ պատուոյ խօսքերնին տան թէ՛ պիտի չծխեն»: Եւ խօսքս ուղղակի իրենց ուղղելով՝ «Պօղո՛ս, Ծերո՛ւն, իմ լա՛ւ եղբայրներ, կը խոստանա՞ք...» ըսի: Ի պատիւ իրենց, լաւ ոգիով հարուստ իրենց մարզական, Հ.Մ.Ը.Մ.ական կեցուածքին, երկուքն ալ սաքի էլան ու պաշտօնապէս խոստացան չծխել ու այլեւս երբեք չյոգ-



Տ. Խոյեան մարզիկը



Մարտնակրքական գոլէնէն վկայ-
ւած՝ 1926 :



Հ.Մ.Ը.Մ.ի բենիսի սիրողներու խումբը 1923-էն յետոյ : Նկարի ճա-
խին՝ ոտքի, առջեւը Տիգրան Խոյեան (բասփերով), Բովը՝ յայտնի գիտնական
Մանասէ Սեւակ :

նիլ... Իսկոյն գաղի իրենց մօտ ու ջերմօրէն ողջագուրուեցանք: Շնորհանորեցի դիրենք, իրենց ուզին, ու բարի օրինակ մը իրբեւ՝ ներկաներուն թերազրեցի մշակել ալդ նո՛յն սղնիս ուզին մեր բոյոք անգամներուն մէջ: Այսպէս էր «Հ.Մ.Բ.Մ.»ի այն օրեքու ուզեկան մթնոլորտը:

Մերտնն ալ, Պօղոսն ալ յաւէտ բաժնուած են մեզմէ, տարիներէ ի վեր: Աստուած իրենց հոգիները լոյսերու մէջ հանդիպեցնէ...:



Անբակտեղի մնաց հոյեան-Պապայեան
եզրայրակցու թիւր:

ՎԱՀԱՆ ԶԵՐԱԶԻ ՄԱՀՈՒԱՆ ԴԵՄ ՅԱՆԴԻՄԱՆ

1928-ին ականջիս հասաւ Վ. Չերազի գնդակահարման լուրը, Թիֆլիս Մէտէխի բանտին մէջ: Շատ նորեկներ կային Նիւ Շորքի համայնքին մէջ: Աջ ու ձախ լուր տարածեցի, որպէսզի Չերազի մասին ճշգրիտ լուր մը ունեցող մը ճարեմ:

Սոկրատ անունով պարսկահայ մը եկաւ՝ զիս գտաւ: Չերազի հետ բանտակից էր եղած եւ ափսոսանքով պատմեց, թէ բանտարկեալի ամենածանր դրութեան մէջ իսկ՝ միշտ կը ջանար իր բախտակից ընկերներու ոգին բարձր պահել, ու չընկճուիլ, չյուսահատիլ կը թելադրէր:

Սոկրատը տեսնելէս քանի մը օրեր յետոյ մեկնեցայ՝ Մայամի (Ֆլորիտա), ուր, հագուստ մաքրելու Քրանսական գործատեղիի մը վերակացուն պիտի ըլլայի: 1928 Փետրուարի սկիզբն էր: Յերեկուան ճաշի ատեն դուրսը, գործատեղիին առջեւ խմբուած գործաւորները ճիշեր կ'արձակէին: Դուրս գացի եւ տեսայ որ՝ մարդուն մէկը ծառի երկար ճիւղի մը ծայրը երկա՛ր չուան մըն է կապեր եւ այդ չուանին միւս ծայրովն ալ 4-5 ոտք երկարութեամբ օձ մը մէջքն է կապեր: Օձը որ տեսայ՝ Վահան Չերազը յիշեցի իսկոյն: Նա, մեր Իրոթի կղզին, քարահանքին մէջ օձ կ'որսար եւ մեզի սորվեցուցած էր օձին մօտենալու եւ զայն անվնասօրէն բռնելու կերպը: Վահանին մահուան լուրը նոր էի առեր: Ինծի այնպէս թուեցաւ որ Չերազի ոգին էր, որ օձի կերպարանքով եկեր էր իր Տիգոյին այցելութեան... Տարօրինակ՝ բայց ինծի համար անսխալ խորհուրդներէս սթափած՝ զանգաղ, սակայն Չերազին նման հաստատ քայլերով մօտեցայ սողունին, որ պատի տակէն կը յառաջանար: Փրանսացի գործարանատէրն ու գործաւորները սարսափով կը կանչէին եւ կը զգուշացնէին զիս: Օձին որ մօտեցայ, սողունը կանգ առաւ, գլխուն կոշտ մը գացի եւ Չերազի կայնելու ձեւովը, ոտքերս օձի գլխուն երկու կողմերը հաստատեցի եւ սկսայ վար՝ սողունին նայիլ: Որոշ էր որ թունաւոր օձ չէր: Սողունը գլուխը վեր բարձրացուց եւ ինծի նայելով իր լեզուն դուրս հանեց մէկըրկու անգամ: Չերազի ըսելովը, այդ՝ օգնութիւն խընդրելու կերպն է սողունին: Ծռեցայ եւ այնպէս՝ ինչպէս Չերազը սորվեցուցած էր, մէկ ձեռքովս գլխուն անմիջապէս ետեւէն եւ միւս ձեռքովս ալ մէջքէն ամուր բռնելով բարձ-

րացուցի եւ Չերազի շատ անգամներ ըրած ձեւովը, օձին մարմինը վզիս շուրջ, փողկապի նման անցուցի: Յետոյ գլուխը ինծի դարձուցի եւ աչքերուն մէջ նայելով նահատակ վահան Չերազի հետ սկսայ խօսիլ, եւ մեղմօրէն երգեցի, իր գիտցած միակ թրքական երգը — անոր ալ երկու տողը միայն — որ կարծես իրեն համար էր գրուած եւ Հայաստանի ճամբուն վրայ յաճախ կը մըմնջէր: Երգը՝ «Այս երիտասարդ տարիքիս, որքա՛ն բաներ պատահեցան իմ պանդուխտ գլխուս...»: Արտասուքով ծանրացած աչքերովս անգամ մըն ալ դիտեցի բարի օձին աչքերը, սողունը դրի գետին եւ լո՛ււ ու մտազբաղ մտայ գործատեղի, մինչ գործարանատէրն ու գործաւորները կարծեցին թէ՛ ես արեւելքէն եկած օձ հմայող մըն էի: Այդ էր իմ վերջին հանդիպումս աննման Վահան Չերազին հետ եւ հաւատացած եմ՝ Չերազի ոգի՛ն էր, որ այցելեց ինծի, այդ արեւոտ կլիմային մէջ...:

**

1930-ին, Բարիզի մէջ, մայրս թեթեւ կաթուած մը ունեցած էր, եւ գրեցին ինծի թէ մի՛շտ զիս կը կանչէր: Գործս այնպէս մը կարգադրեցի, որ առժամանակեայ արձակուրդ մը ունենամ որ կարենամ մօրս մօտ երթալ: Իմ՝ Բարիզ երթալուս լուրը թելադրած էր Բարիզի մեր մարմնին՝ ընդհանուր պատգամաւորական ժողով մը հրաւիրել, որ պիտի ըլլար գաղթական Հ.Մ.Ը.Մ.ի առաջին պատգամաւորական ժողովը: Բարիզի մէջ էին արդէն հիմնադիրներէն երկուքը, Գրիգոր Յակոբեանն ու Գարլօ Շահինեանը, իմ երթալովս՝ երեք հիմնադիրներ պիտի ըլլային ժողովին մասնակցող: Այնտեղ էր մեր կեդրոնի քարտուղարն ու «Հայ Սկսուտ» պաշտօնաթերթի անխոնջ խմբագիր՝ սքանչելի Կարօ Ուշագլեանը եւ հոն էր նոյնպէս կեդրոնի կարող տոմարակալը՝ Գառնիկ Շահրիկեան, ինչպէս նաեւ Բարիզ ապաստանած շատ մը ուրիշ ղեկավարներ ու վաստակաւոր սկսուտ խմբապետներ:

ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ «ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀ.
ՄԿԱՌԻՏԱՊԵՏ»՝ ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈԲԵԱՆԻ ՀԵՏ

1930 Հոկտեմբերին սկիզբը հասայ Բարիզ, իմ հոգեհատորներուս մօտ: Երեք ամիս իրենց հետ պիտի մնայի: Պատգամաւորական ժողովէն առաջ, ուղեցի Գրիգորը տեսնել: Կարօ Ուշագլեանը առաջնորդեց զիս Բարիզ քաղաքին մօտ արուարձան մը, ուր Գրիգորը նպարավաճառի խանութ մըն էր բացած:

Բաւական ընդարձակ, ներկայանալի խանութ մըն էր: Երբ ներս մտանք՝ Գրիգորը, խանութին խորքը, կըռնակը մեզի դարձուցած դիրքով, ապրանք մը գտնելով զբաղած էր: Փրանսացի յաճախորդ մը, իր մօտ, լուռ կը սպասէր փնտռուքի արդիւնքին: Մենք, Կարօն ու ես անշարժ սպասեցինք դրան մօտ, որպէսզի Գրիգորի գործը չխանգարենք: Գ. Յակոբեանը գտաւ իր փնտռածը եւ ասդին դարձաւ, իր յաճախորդին, եւ յանկարծ, մեզ նկատելով, գրեթէ նչաց՝ Տիգրան... ձեռքի թիթեղեայ տուփը վար ինկաւ ու յաճախորդը մոռցած՝ վազեց իմ կողմս: Ես արդէն՝ արագօրէն հասայ իրեն ու ողջագուրուեցանք...: Իսկոյն՝ ներողութիւն խնդրեց յաճախորդէն, արագօրէն բացատրելով թէ ինչո՞ւ այդ՝ այդպէս պատահեցաւ: Փրանսացին, ներողամիտ ու հաճելի ժպիտով մը, ցոյց տուաւ իր՝ հասկցող մարդ մը ըլլալը եւ իր ուղածը գնելով մեկնեցաւ:

«Է՛, պատմէ Տիգրան, ինչպէ՞ս ես, ե՞րբ եկար», եւ վայրկեանին պատշաճող նման հարցումներով ողողեց զիս: Կէսօր էր. գնաց, խանութին դուռը կղպեց եւ մեզ երկուքս առաջնորդեց վեր, խանութին մէջէն բարձրացող ուրրուն ու կիսախաւար սանդուխներէ: Համեստ, պանդուխտի սենեակ մըն էր. մետաղեայ մահճակալ մը, սեղան մը եւ երկու աթոռ կը կաղմէին կահ կարասին այդ փոքրիկ սենեակին, որ «Հ.Մ.Ը.Մ.»ի հիմնադիր, հայ սկառուտներու ազգային ընդհանուր պետ Գրիգոր Յակոբեանինն էր...: Սկսաւ սեղանը շտկել, սարսիճ եւ ատոր նման, եփուելու պէտք չունեցող, թիթեղեայ տուփերու մէջ եղող եւ ուտուելու պատրաստ բաներ բերաւ խանութէն, եւ է հարկէ՝ պատրաստ խմիչքներ: Իր մահճակալը հրամցուց ինծի՝ նստելու համար, սեղանը մահճակալին մօտեցուց եւ Կարօն ու ինք աթոռները քաշեցին սեղանին մօտ ու նրստեցան: Այն ատեն միայն Գրիգորը հպարտ ու սրտցաւ չբմեղանքով մը՝ «Կը ներես, Տիգրան, — ըսաւ, — այս համեստ ու ազգատ ֆաշիս համար»: Եթէ ուժեղօրէն չզսպէի

ինքզինքս՝ կրնայի հոսփուր, հոսփուր լայն բայց, ուրախ եմ որ կրցայ կատավարել ինքզինքս, եւ՝ «Գրիգոր, — ըսի, — քու ճոխ ու առատ սեղանդ եւ շատ եմ վայելեր քու փառատոր ասնդ մէջ: սա՛ մտերմիկ մթնոլորտի մէջ, մեր երեքիս գաղափարական սրտակցութեամբը հարստացած սա անշուք բայց միեւնոյն ատեն ոգիով ամենաչքեղ սենեակին մէջ, անմոռանալի շունչ մը կայ, որ երբեք, երբեք պիտի չմոռնամ»:


Կարօն սկսաւ իր սրամիտ կատակներուն, մեր յիշողութենէն դուրս եկան համով-հոտով դէպքեր մօտիկ անցեալի, ջերմ ու զուարթ մթնոլորտը պահեցինք մինչեւ մեր մեկնումի վայրկեանը եւ՝ «Ցտեսութիւն, պատգամաւորական ժողովին» րսելով, բաժնուեցանք:

Նոր զգացի ճնշումը հոգւոյս վրայ իմ քիչ առաջ տեսածներուս իբր հետեւանք, բայց միեւնոյն ատեն, նոր ու իսկական Գրիգոր Յակոբեանը գտայ այսօր: Իր աղջիկը՝ Սեղան ատողջական վառ դրութեան մէջ, իր մօր հետ միասին քաղաքէ հեռու, լեռներու կենսատու, մաքուր օդին էջջ գացած էր ապրելու: Կեանքը անդուժ էր եղած յանկարծ, եւ երբեմնի փայլուն առեւտրական ու հարուստ Գրիգոր Յակոբեանը նպարտավաճառի մը խանութէն պիտի ակնկալէր իր ապրուստի գլխաւոր եկամուտը: Ըսի՝ ճանչցայ նոր Գրիգորը, որովհետեւ սկստական բիւրեղ հոգիի մը հպարտ արտայայտիչը ճանչցայ այսօր՝ յանձին սողալին բնշահնուր սկստապետ Գրիգոր Յակոբեանի...:


**

Բնաւեր ու գողթական «Հ.Մ.Ը.Մ.»ի առաջին պատգամաւորական ժողովը սկսաւ: Դժբախտաբար չունիմ թիւը պատգամաւորներուն եւ մասնակցող մասնաճիւղերուն: Հայկ Ճիզմէճեանը Եգիպտոս էր, նոր գործի ձեռնարկած ու չէր կրնար հեռանալ: Գրիգորը, Գարլօն, այս տողերը գրողը, Կարօն ու Շահրիկեանը, Պոլսոյ կեդրոնի հինգ հին գործակիցներ՝ հոն էինք: Այնտեղ էր նոյնպէս Օննիկ Եազմաճեանը, որ ինձմէ ետք հեռացած էր Հայաստանէն: Լաւ մէկտեղում մըն էր, սրտցաւ ու վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ.ականներ էին շատերը եւ հարցերու մօտեցան լրջօրէն, սրտբացօրէն, նոր ու անյաղթելի պայմաններու վերլուծման մէջ շատ իրապաշտ ու զոհողութեանց պատրաստակամ: Հ.Մ.Ը.Մ.ի շունչը տակաւին տաք էր իրենց մէջ եւ վաղուան մտահոգութիւնը ակնբախ՝ ոմանց արտայայտութիւններուն մէջ: Մեր Պոլսոյ կեդրոնի քարտուղար՝ Կարօ Ուշաքլեանը ներկայացուց զիս ժողովին,

Գրիգոր
Յակոբեան
Բարիգի իր
կազմով
1937-38 :



Գրիգոր
Յակոբեան
Ֆրանսայի
Հ.Մ.Բ.Մ.ի
սկսում են երբ
աչ և, անցում ցած
պահուն :




Գրիգոր Յակոբեան, նստած պատուոյ սեղանի ձախին (առանց սկևեցի)
Հայկական ուղիւնպիական, Բարիգ, 1930 :

իրբեւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու «Հ.Մ.Ը.Մ.»-ի ներկայացուցիչ եւ մեծագոյն պատիւը տուաւ ինծի՝ զիս կոչելով՝ «Հ.Մ.Ը.Մ.»ի Զաւարեանը (Սիմոն)։ Ժողովէն յետոյ եղլայրօրէն յան շիմանեցի զինք, բայց կարօն, ամէն առիթի, խտէր ճարտար ու յարմար պաւասխանները տալ, գոհացնել եւ գոհանալ։

**

Բարիգի մէջ, «Հ.Մ.Ը.Մ.»ական, ընտանեկան, բարեկամական քաղցր ապրումներս զժբախտաբար վերջացան եւ վերադարձայ Նիւ Եորք, 1931-ի նոր տարուան առաջին օրը։ «Հ.Մ.Ը.Մ.»ի Նիւ Եորքի անդամական ժողովին տուի իմ զեկոյցը եւ նոր տեղեկութիւններ, տպաւորութիւններ հաղորդեցի իրենց։ Պատգամաւորական ժողովին բերուած զեկոյցներուն համեմատ՝ Պալքաններու մէջ «Հ.Մ.Ը.Մ.»ի թէ՛ մարզական եւ թէ՛ սկստական գործունէութիւնները հասած են ազգային հպարտութիւն յառաջացնող արդիւնքներու, շնորհիւ նուիրեալ ու զիտակից, կարող ղեկավարներու, ինչպէս՝ Յ. Ճ. Սիրունի, Կարօ Ղազարեան, Տոքթ. Սալբի, Թագւորեան, Սարունի, եւ ուրիշներ՝ Ռումանիոյ մէջ, Ներսէս Աստուածատուրեան եւ գործակիցներ՝ Պուլկարիոյ մէջ, Յարէթեան, Գայեան, Դանիէլեան եւ նմաններ՝ Յունաստանի մէջ։ Իսկ ամէնէն աւելի սրտապնդիչ երեւոյթը Միջի։ Յրեւելքի մէջ յառաջ եկած շարժումն է։ Անապատներէն վերադարձած գլխիկոր սերունդը՝ Պէյրութի, Հալէպի, Ամմանի, Երուսաղէմի եւ այլ քաղաքներու մէջ անհաւատալի տարողութեամբ Հ.Մ.Ը.Մ.ական ոգեւոր կեանք ստեղծած է, Ֆութպոլի խումբերու կողքին՝ ուրիշ մարզախաղերու եւ նոյնիսկ սղիմպիական մրցումներու ձեռնարկներ տեղի կ'ունենան։ Որոշ կերպով կը տեսնուի թէ՛ մօտիկ ապագային Հ.Մ.Ը.Մ.ի արժանաւոր ու անառիկ բերդաքաղաքը պիտի ըլլայ Միջին Արեւելքի շրջանը, սկստական ուժեղ ու տիպար բանակով մը։



Գրիգոր Յակոբեան,
Ֆրանսայի մէջ կը
մասնկացէր նաեւ
Հ.Մ.Ը.Մ.ի
մրցասահմոյթներուն

իրբ մարզիկ·
հոս, ձողով բարձրութիւն
ցատկած պահուն։

ԱՄԵՐԻԿԱԷԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՌԱԿՏՈՒՄԸ

1931-ին գործի բերումով փոխադրուեցայ Ֆիլադելֆիա, եւ այնտեղի լա՛ւ տղաներուն հետ գործակցաբար՝ լծուեցանք եռանդուն գործունէութեան: Ազգային կեանքը պղտորուիլ սկսած էր, հայկական զբօշակի հանդէպ անյարգալիբ վերաբերումներ, եւ օտարամուտ դադարներով տարուած հայեր հեռահեռէ մթնոլորտը մշուշապատել սկսան եւ անհամութիւններ ծայր տուին: Երբ-տասարդ սերունդն ալ սկսաւ իրարու հանդէպ ունեցած իր վստահութեան մէջ տկարանալ, աստամսիլ:

1932-ի սկիզբը ամուսնացայ՝ Պոլսոյ բնիկ, սկիւտարցի Սիրարփի Իսպէշէրեանի հետ: Գիտակէց ու բարեկիրթ, ընտանեկան առաքինի աւանդութիւններով սնած հայուհի մը, որուն հետ մինչեւ օրս կը մնանք կեանքի բնկերներ:

Ֆիլադելֆիոյ «Հ.Մ.Բ.Մ.»-ը՝ Զարեհ Կոկեանի անձնուէր ատենապետութեամբ եւ Քէչկէկեան եղբայրներու, Բիւզանդ Աժգահարեանի եւ ուրիշ նուիրեալ գործակիցներու ջանքերով եղաւ Հ.Մ.Բ.Մ.ի ուժեղ մասնաճիւղ մը, թէ՛ մարզական եւ թէ՛ բարոյական վարկով: Հայկական եռագոյնին դէմ մղուած ագեղ ու անխոհեմ պայքարը դժբախտաբար յանգեցաւ սպանութեանը՝ առաջնորդ Սրբաբան, Ղեւոնդ Արքեպիսկոպոս Գուրեանի, որուն իբր հետեւանք ամերիկահայ գաղութը ալեկոծուեցաւ շատ կեղտոտ կերպով: Հայ կիներ փողոց իջան եւ գոեհացան, շրտուելիք, չգրուելիք ստորնութիւններ պատահեցան. եղբայր՝ եղբօր դէմ, հայրը զակին ու զաւակը՝ չօր դէմ ելան, տարիներու սրտակից եւ գոկից բարեկամներ իրարու թշնամի դարձան. գարշելի մթնոլորտ մը յառաջացաւ: Երանի՛ անոնց, որոնք այստեղ չէին այդ տարիներուն եւ շտեան թէ հայր որքա՛ն կրնայ ստորնանալ, գոեհանալ, բարոյապէս, ոգեպէս անձնասպան ըլլալ...:

Այս մահացու թոյնով ապականած մթնոլորտը մասաւ դրեթէ ամէն հայ տունէ եւ ամէն հայ կազմակերպութենէ ներս: «Հ.Մ.Բ.Մ.»-ը բացառութիւն չկազմեց դժբախտաբար: Նիւ Եօրքի մէջ գումարուեցաւ պատգամաւորական ժողով մը: Ֆիլադելֆիոյ մասնաճիւղէն է պատգամաւորներ գացին, — Վահրամ Քէչկէկեան, Զարեհ Կոկեան, Բիւզանդ Աժգահարեան եւ Տիգրան Խոյեան: Մեզ տանող օթոյի ժամանակաւոր խանդարման պատճառաւ քիչ մը ուշ հասանք ժողովին: Դիւանի ատենապետն էր՝ Արշալիբ Հիւսնեան, իսկ ատենադպիրը՝ Վահրիճ Քէնտէրեան:

Առաջին իսկ վայրկեանէն կարելի եղաւ հոտը առնել մահացու թոյնին յառաջացուցած մթնոլորտին: Ծանր էր ու անշնչելի ժողովին օդը: «Հ.Մ.Լ.Մ.»ը իբրեւ կազմակերպութիւն սզգային շրջապատի ամօթալի եւ Հ.Մ.Լ.Մ.ական ոգիին խորթ մտայնութենէն, տգեղ պայքարներէն հեռու եւ բարձր պահելու մեր յորդորները ապարդիւն անցան: Կիրքն ու ատելութիւնը տիրապետեցին ժողովին այնքան՝ որ մեր պատուիրակութիւնը զգուանքով հեռացաւ ժողովէն, որոշած՝ որեւէ կապ չունենալ այլեւս այդ ոգեգուրկ «Հ.Մ.Լ.Մ.»ին հետ:

Հայ մամուլը իր հաւասարակշռութիւնը կորսնցուցած էր, փոխադարձ մեղադրանքներով եւ անարգանքներով լեցուն էին մեր բոլոր, մասնաւորաբար կուսակցական թերթերը: Ժողովին յաջորդող շաբթուն՝ թունաթաթախ մամուլի մէջ տեղեկատուութիւն մը դրուած էր, բոլորովին շրջուած ճշմարտութեամբ: Ֆիլատէլֆիոյ անկախ մասնաճիւղի վարչութեան ժողովին մէջ, փափաք յայտնուեցաւ դատապարտել այդ զեկոյցը եւ ճշմարտութիւնը հրապարակել: Այս սողերը գրողը հակառակեցաւ ոեւէ պատասխան տալուն: «Հ.Մ.Լ.Մ.»ը պէտք էր խառնել դոյութիւն ունեցող ամօթալի, տգեղ պայքարին: «Հ.Մ.Լ.Մ.»ը պէտք է եւ պիտի՝ բարձր ու հեռու պահէ ինքզինք դարչելի, ցեխոտ ըսի ըսաւներէ: «Եթէ չպատասխանենք, կը լռեն» ըսի: Վարչութեան անդամները՝ բոլորն ալ մամուլ նկարագրով, լուրջ տղաք, համաձայնեցան ու լուռ մնացին: Եւ... լռեցին:

Ուրեմն, «Հ.Մ.Լ.Մ.»ը պառակտուեցաւ: Ֆիլատէլֆիոյ մէջ մենք մեր թափը չկեցուցինք: Նոյնիսկ ողիմպիական մը կազմակերպեցինք: 1934-ին, Haverford Collegeի գեղեցիկ դաշտավայրին մէջ 7-րդ ողիմպիականը ունեցանք: Մեր հրաւերին պատասխանելով եկած էին New Jerseyէն՝ Union Cityի մասնաճիւղի մարզիկները: Ամենայաջող ողիմպիականներէն մէկը եղաւ: Վարչական եղբայրներս — շնորհակալութիւն իրենց փափկանկատութեան համար — օրուան թագուհի պատիւը տուին Տիկ. Սիրարփի Խոյեանին:

Այդ ողիմպիականէն ետք, Հ.Մ.Լ.Մ.ի երկուքի բաժնուած ո՛չ «Հ.Մ.Լ.Մ.»ական վիճակը հետզհետէ ինքնին վերջ գտաւ: Նիւ Եորքն ալ իր նախկին թափը վերստացաւ:

ՖՈՒԹՊՈՒԼԻ ՎԵՐՋԻՆ ՄՐՑՈՒՄՍ

Իսկ ես, 1940-ին, ընտանեօք փոխադրուեցայ արեւոտ Մայամի (Ֆլորիտա) քաղաքը:

Համաշխարհային երկրորդ պատերազմը սկսած էր: Անգլիոյ օդուժը իր նորագիրները կ'ուղարկէր Մայամի իբրեւ համանուն համալսարանի ուսանողներ, որոնք երեք ամսուան տեւողութեամբ օդանաւորական դասընթացքէ մը յետոյ կը վերադառնային Անգլիա, աւելի յառաջացած օդանաւային դասընթացքները աւարտելով վարժ ու յանդուգն օդաչուներ դառնալու համար: Մայամի համալսարան գացի, անգլիացի ուսանողներուն հետ շրջման մէջ մտայ, ինքզինքս ներկայացուցի իբրեւ իրենց պաշտօնային խաղին (Փութպոլ) սիրահար եւ ամբողջ կեանքիս ընթացքին այդ խաղը խաղացող մը, եւ ըսի իրենց որ՝ եթէ իրենք խումբերը կազմեն, ես գնդակն ու դաշտը կ'ապահովեմ: Համամտութիւն յայտնելով ընդունեցին առաջարկս եւ յաջորդ անգամ զիրենք տեսնելու 30 հոգիի ցանկ մը ունէին արդէն իրենց ձեռքին: Իսկոյն ծրագրեցինք եւ ժամադրուեցանք: Երկու խումբերու վերածուած անգլիացի տղաքը իրենց վայել աշխոյժով դաշտ իջան ու սքանչելի ցուցադրութիւն մը ըրին իրենց «ազգային խաղ»ին: Ես՝ իրաւարարի պաշտօնն էի առած եւ սուլիչս գործածելու առիթներ քիչ ունեցայ, այնքան որ մաքուր եւ օրինապահ կերպով կը խաղային: Կրակոտ, արագ ու իրենց խաղացուածքը արուեստի մը վերածող մարզիկներ էին: Բոլորն ալ 22-23 տարեկան, Oxford կամ Cambridge համալսարաններու միջնոյորտով սնած կատարեալ երիտասարդներ էին: Հաճոյք էր իրենց ծանօթանալն ու իրենց խաղացուածքը դիտելը: Մեր երրորդ հանդիպումին, ի տես այդ հիանալի երիտասարդներուն, որոնք կը վազվրդէին շուրջս, տարեց Փութպոլիստիս մէջ, միշտ կենդանի «օրդ»ը բողոքեց, չարժում պահանջեց եւ ըսի տղոց որ համբերութիւնս հատու եւ ես ալ կ'ուզեմ խաղալ քիչ մը: Շատ սիրալիբօրէն ընդունեցին բողոքս եւ խումբերէն մէկուն մէջ, իմ փափաքովս center forwardի դիրքը տուին ինծի: Հազիւ 20 վայրկեան միայն խաղացած էի, եւ հակառակորդ խումբի բերդը բաւական նեղ դրութեան մատնած էինք, երբ՝ սքանչելի pass մը տրուեցաւ ինծի. հին օրերու իմ յեանի աշխոյժով օգտագործեցի այդ passը եւ գորաւոր հարուածով մը յաջողեցայ գնդակը տեղաւորել:

հակառակորդ խումբի բերդէն ներս: Բացառիկ ոգեւորութեամբ «հուրբէյ»ի մը արժանացաւ այդ յաջողութիւնս բոլոր խաղացողներուն կողմէ: Գոհացած էի, իբրեւ ֆուլթպոլիստ, վերջին (goal) կոլն էր, որ կ'ընէի եւ այն անգլխացիներուն դէմ:

Շուտով դադար եղաւ եւ բոլորս միասին հաւաքուեցանք դաշտին եզերքի ծառերէն մէկուն շուքին տակ: Շնորհակալութիւնս յայտնեցի ինձի տրուած պատեհութեան համար եւ իրենց տարիքները ուզեցի գիտնալ: Միայն մէկը 31 տարեկան էր, միւս բոլորը 22-23 տարեկաններ էին: «Իսկ քանի՞ տարեկան կը կարծէք որ եմ, ես» հարցուցի: 29-30 տարեկան ըրին զիս: «Շնորհակալ եմ ձեր complimentին համար. միայն, կ'ուզեմ յայտնել ձեզի թէ, Ա. պատերազմէն ետք, Պոլսոյ մէջ, ես խաղացած եմ ձեր հայրերուն դէմ» ըսի: Միահամուռ օ՛, օ՛ օ՛... մը զուրս թռաւ բոլորին չրթներէն: «Անոր համար, այդքան լաւ կոլ մը կրցաք ընել, քիչ առաջ» ըսին: Լուսանկարուեցանք միասին: Շուտով պիտի վերադառնային Անգլիա, զիրենք սպասող զինուորական պարտականութեան լծուելու համար...:



Տիգրան Խոյեան ռուֆի, այ ծայրը ներմակ տարագով, Անգլիոյ Արքայական օդուծի ֆուլթպոլի խումբին հետ, 1942. վերջին խաղը:

Հ.Մ.Ը.Մ.Ը ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԵՋ, ԱՅՍՕՐ

Վերադառնալով Հ.Մ.Ը.Մ.Ին, կու գամ ըսել թէ՛ չուզեցինք այլեւս, այդպէս անմիաբան վիճակով, ջանալ կենդանի պահել շարժում մը՝ որ սկսած էր միութեամբ, եւ հպարտ էր ատով: Իր խորհրդակցական առաջին ժողովին իսկ, 60 տարիներ առաջ, քանի մը զաղափարական թռիչք ունեցող, վճռակամ երիտասարդներ, ինքզինքնին յայտարարած էին... Ընդհանուր Միութիւն, առաջնորդ ունենալով միայն ամբողջ հայ նոր սերունդի միացման սրբազան իտէալը եւ անոր իրականացման համար, իրենց հոգիներուն մէջ, վաղուան արեւոտ կարելիութիւններու հանդէպ իրենց փայփայած անտեղիտալի հաւատքը:

Իսկ ի՞նչ է երեւոյթը այսօր, Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ: «Հ.Մ.Ը.Մ.»ին անունին տակ երկու խմբաւորումներ կան: Մէկը՝ համեմատաբար փոքր՝ իր անդամներու թիւով եւ իր մարզական գործունէութեամբ:

Ամերիկայի մէջ, 1921-ին հիմնուած «Հ.Մ.Ը.Մ.»ի հաւատաւոր վերապրողներ, Մայք Մկրտիչեանի նման կարող ու ժրջան, անխոնջ անհատներու առաջնորդութեամբ անգլերէնի թարգմանած անունը Հ.Մ.Ը.Մ.ի, միութեան լուրերով լեցուն անգլիատառ թերթիկ մը կը հրատարակեն, նոյն այդ Մ. Մկրտիչեանի կարող խմբագրութեամբ: Scholarship հաստատած են իրենց անդամներէն խոստմնալից ուսանողներու համար: Տարին անգամ մը մարզահանդէսներ կը կազմակերպեն, հասութարեր պարահանդէսներ կը սարքեն եւ իրենց անդամներու միջեւ՝ ընկերային տաքուկ ու եռանդուն կապ մը կը ջանան կենդանի պահել: Հայ ազգային հաւաքական ճիգերու կամ պատասխանատուութեանց մէջ մաս չեն առներ եւ կը մնան զուտ ընկերային, մարզական ակումբ մը:

«Հ.Մ.Ը.Մ.» անունը կրող միւս խմբաւորումը, մեծաւ մասամբ, կը բաղկանայ Մերձաւոր Արեւելքէն Ամերիկա եկած երիտասարդներէ, որոնք՝ Պէյրութի, Հալէպի, Ամմանի, Երուսաղէմի եւ ուրիշ քաղաքներու մէջ, 1924-էն ի վեր կազմակերպուած թէ՛ մարզական եւ թէ՛ սկաուտական կեանքի ամենազօրեղ եւ ազգային տեսակէտէ ամենափրկարար ու խոստմնալից իրականութեան մաս կազմած եւ Հ.Մ.Ը.Մ.ական փառաւոր յուշերով լեցուն սերունդ մը կը ներկայացնեն: Հ.Մ.Ը.Մ.ի եւ սկաուտութեան զաղափարականն ու թռիչքը ուղն ու ծուծին մէջ անցած այդ սերունդը, Նոր Աշխարհի օտարութեան մէջ, դեռ ո՛չ շատ առաջ Միջին Արեւելքի մէջ ունեցած իր ըն-


կերային, «եղբայր»ական անխարդախ ու առողջ եւ համահայկականօրէն կենսալից մթնոլորտի կարօտը յազեցընելու համար, զանազան քաղաքներու մէջ, իրարու ետեւէ, Հ.Մ.Ը.Մ.ի փրկարար զբօշը պարզեց, հաւաքուեցաւ անոր շուքին տակ եւ, սա վերջին քանի մը տարիներու ընթացքին, մասնաձուլներու զօրաւոր ցանց մը յառաջ բերաւ, Հ.Մ.Ը.Մ. հայ անունին տակ: Իրենց կազմակերպչական առաջին շրջանին թանկագին աջակցութիւնը վայելեցին գանառահայ գաղութին մէջ տարիներէ ի վեր գոյութիւն ունեցող Հ.Մ.Ը.Մ.ին, որ Հիւսիսային Ամերիկայի ամբողջ հայ գաղութին մէջ թէ՛ մարզական եւ թէ՛ մանաւանդ սկստական կազմակերպութեամբ եւ «նագի»ով ընտրելագոյնն է, լաւագոյն ու լուրջ պատրաստութիւն ունեցող ղեկավարներով, խմբապետներով:

Հրաւիրուեցայ եւ ներկայ եղայ իրենց ներկայացուցչական ժողովներէն երկուքին, երբ տակաւին Գանատա եւ Միացեալ Նահանգներ միացած էին, Գանատան ունենալով իբրեւ կեդրոն: Ժողովներու մթնոլորտը հաճելի էր ու տպաւորիչ, եւ ժողովականօրէն՝ անթերի: Ներկայացուցիչները կը մօտենային հարգերուն լրջօրէն ու գիտակցօրէն, կիրթ կերպով կը վիճէին եւ... ժողովը ամբողջ ընթացքին հայերէնն էր միակ լեզուն, որ կը լսուէր ժողովականներէն. սքանչելի՛...:

Ներկայիս դարձած են անոնք առանձին շրջաններ:

Խանդավառ տղաք են Միացեալ Նահանգներու Հ.Մ.Ը.Մ.ականները, մեծամասնաբար զինուած՝ յարգելի փորձառութեամբ ու վաստակով եւ գովելի հեռաքրքրութեամբ մը՝ Հ.Մ.Ը.Մ.ը պահելու համազգային կենսական պարտականութիւններու կողքին, ի հարկին անոր վարկն եւ ուժը միացնելու՝ հայ ժողովուրդի միլիթոնաւոր նահատակներու նուիրական կտակը եղող, հայկական արդար պահանջներու, իրաւունքներու գոհացման ուղղութեամբ տարուած համազգային ճիգերուն, միշտ հպարտ՝ իր գրւխուն վրայ ծածանող հայ ազգային եռագոյնով:

Իսկ սկստաւոր թիւեր... Հ.Մ.Ը.Մ.ի սիրտն ու հոգին կազմող, անոր աննախընթաց հմայքը կերտող այդ անմահ բարոյական «բանակ»ը, իր «Բարձրացիր-Բարձրացուր» խորիմաստ նշանաբանով Հ.Մ.Ը.Մ.ին արծուի թեւեր տուող եւ իր անդամներուն մարմնական ու հոգեկան ազնուացման միջոցաւ նկարագրային բարձունքներ հասնելու կարող թռիչք պարգեւող այդ «Մասիս»եան շարժումը հայկական, իր Պոլսոյ, Եգիպտոսի եւ Միջին Արեւելքի նախանձելի, կուռ շարքերու անկախ ու ոգեշունչ մթնոլոր-



Տիգրան Խոյեան Նիւ Եորքի նահանգի «Քէցֆիլ» լեռներու վրայ լինի՛ւմը մէջ սուզուած եւ լողացած պահերուն :

Տիգրան Խոյեան միշտ եւ ամէն տեղ հիացումը պահեց մեծանուն դերասան Յովհաննէս Զարիֆեանի հանդէպ (նկարին մէջ միայն գլուխը կ'երեւի) եւ եղաւ նոյնիսկ անոր քատեքախտի մրին անդամներէն :



ար տակաւին չունի այստեղ, ամբերիկեան դժուար պայմաններու տակ, եւ մանաւանդ իսկապէս պատրաստուած սկսուա խմբապետներու սակաւութեան պատճառաւ:

Սկսուտութիւնը, մանկավարժական հիմքերով, թանկագին դպրոց մըն է, դաստիարակչական նոր ու լաւագոյն ձեւ մը՝ մասողաչ սերունդը ամէն կերպով գրաւող իր շատ մը կերպերով, իր՝ անոնց պարգեւած մարմնական, փորձառական եւ հոգեկան ամուր եւ առողջ ծանօթութիւններով:

Բժախնդրօրէն, ամէն կերպով պատրաստուած, անխարդախ պատուի, պարտականութեան եւ պատասխանատուութեան գիտակցութեամբ գորեղացած պաշտելի սերունդ մը պէտք է ըլլայ ան, «մի՛շտ պատրաստ» դիմագրաւելու հայ ժողովուրդի ապագան վրդովող ամէն կարգի դժուարութիւնները, արի՛օրէն ու նուիրումով:

Լրջօրէն մօտենանք եւ դուրուրանք այդ մեր ուժեղ վաղը կազմելիք անփոխարինելի սերունդին վրայ, որպէսզի «Բարձրացիր-Բարձրացուր»ի նուիրական խորհուրդը իր Մասիսեան արժէքը դրոշմէ անոնց հայ հոգիներուն վրայ:

Ծերունագարդ «երիտասարդ» մըն եմ այսօր: Հ.Մ. Ը.Մ.ի եւ սկսուտութեան սրբազան Ոգիին եւ անոր պարգեւած մարմնական թէ՛ հոգեկան ապրումներուս եւ սուրբ յիշատակներուս կը պարտիմ երիտասարդական այս աւելինս:

Երիտասարդական այդ խանդավառութեամբ ալ կը հաւատամ Հ.Մ.Ը.Մ.ի եւ իր սկսուտութեան Ապագային: Ներկայի անոր յարաճուն եւ հաւատաւոր շարքերը, դրօշը բարձր բռնելու անոր անխորտակելի ճիգը այդ հաւատքը ամո՛ւր կը պահեն իմ մէջ:

Այսօր, Սփիւռքի չորս ծագերուն, յիսունէ աւելի մասնաճիւղեր, իրենց տասնհինգ հազար անդամներով՝ կը կազմեն այն հրաքեւ տորմիդը, կամաւոր բանակը, որ կոչուած է ծառայելու Հայութեան եւ Հայաստանի յաւերժութեան:

Այս Ուխտով ճամբայ ելան հիմնադիրները, այս հեռանկարով Հ.Մ.Ը.Մ.ի դրօշին տակ համախմբուեցան սերունդները վաթսուն տարիներէ ի վեր, եւ ա՛յս նպատակին հասնելու ի խնդիր կը գործեն այսօր, ու վստահ եմ, պիտի գործեն՝ գալիքին:

Յուշերուս եւ կեանքիս մայրամուտին՝ հոգւոյս պայծառ լուսաստղն է այս հաւատքը:

ՄԵՐ ԿՈՂՄԷ

Հոս կ'աւարտին երէց Եղբ. Տիգրան հոյեանի յուշերն ու վկայագրութիւնները: Կեանքը, բարեբախտաբար, կը շարունակուի տակաւին: Եւ՛ կոչումի գիծով՝ գաղափարապաշտ մարդը, աւելի լաւ ծառայելու համար Աստուծոյ եւ Ազգին՝ կը ձեռնադրուի քահանայ ու կը նուիրուի Հայ Եկեղեցիին:

Ասկէ անդին, ասպարէզին իսկ բերումով, վարչական գործունէութիւնն ու կապերը կը դադրին Հ.Մ.Ը.Մ.ի հետ: Սակայն սեմը՝ լոկ կրկնահանդերձը կ'ըլլայ սկաւտական տարագին: Քրիստոսի *ծառան* եւ Հ.Մ.Ը.Մ.ի *արին* միասին կ'ապրին իր անձին մէջ: Ամէնօրեայ աղօթքը մոռցրել չի տար իրեն Հ.Մ.Ը.Մ.ի երդումն ու նշանաբանը: Խաչին նանանչները հիւսուած «Բարձրացիր-Բարձրացուր» շողերուն՝ կը լուսաւորեն իր քայլերը տունէ-տուն, քաղաքէ-քաղաք: Սկիւր, խորանն ի վեր բարձրացուցած պահուն, աչքերը կը խորասուզուին երկինք, հոգիով հասնելու համար, Աստուծոյ գահ՝ Արարատին, որուն պատարագ դառնալու ուխտ մը եղաւ իր եւ Հ.Մ.Ը.Մ.ի միւս ընկերներուն, ոսկվիրաներուն կեանքը:

Ու այդ տեսիլքը, ուխտն ու խորհուրդը, փշուր առ փշուր կը մատուցանէ, հաղորդութեան հետ, իր սկիհին երկարող շրթներուն, հոգիներուն: Մասին ու նշխարին հետ՝ Հ.Մ.Ը.Մ.ի ոգին կը բաշխէ հաւատացեալ բազմութեան ու երիտասարդութեան, առիթը չփախցնելով Հ.Մ.Ը.Մ.ի ակումբները այցելելու, սկաւտներու երդման արարողութեանց աղօթքը արտասանելու եւ զանոնք ողջագուրելու, եւ ի հարկին՝ երկրէ-երկիր Հ.Մ.Ը.Մ.ը փրկուողներու, անոր մասնաճիւղերուն այցելութիւն տալու եւ պաշտօնական հանդիսութիւններուն խօսք առնելու:

Հայրենիքի, Հ.Մ.Ը.Մ.ի պաշտամունքը, վերջին անգամ, տարաւ զինք մինչեւ Հայաստան, ոգեւորուելու նորակառոյց հայրենիքով, այլ մանաւանդ, իր *մեծ եղբոր*՝ Հ.Մ.Ը.Մ.ի ոսկվիրաներէն նահատակ վահան Չեքազի ոտնահետքերով եւ անիւններով տրոփուն հողին վրայ ծնրադրելու, եւ անոր ոսկեթել շառաւիղ՝ աղջկան եւ

ընտանիքին հետ ողջագուրուելով՝ կարօտը առնելու:

Վերադարձի համբուն վրայ եկաւ Լիբանան, անգամ մը եւս տեսաւ երազին փթթումը՝ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներուն խիտ ու երկար շարքերը՝ հանդիսական օրերուն, մտաւ դրօշագարդ ակումբները, տուաւ իր օրհնութիւնն ու ըսաւ ներշնչող իր խօսքը Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբանին ուխտեալ երիտասարդ սերունդին:

Կեդր. Վարչութեան ստեղծումէն ետք՝ կապերը անգամ մը եւս ամրացուց իր ձեռնասուն կազմակերպութեան հետ: Միշտ առոյգ եւ երիտասարդ՝ ոչ միայն ներկայ եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի Ա. Ընդհ. Բանակումին (Յունաստան), այլեւ խանդավառութեամբ մասնակցեցաւ անոր աշխատանքներուն, շագփինդ հաւատփին եւ վերամբարձ ոգեւորութեանը մէջ՝ ամէն ֆայլափոխի գօտեպնդելով արի մը, ֆաջալերելով արեւոյշ մը, առանց մոռնալու, պատեհ-առիթ, քեւատարած աղօթքը: Եւ եթէ ֆիզիքապէս բացակայեցաւ Ա. եւ Բ. Ընդհ. ժողովներէն՝ անոնց բացումին յղած շնորհաւորագիրներով եւ պատգամներով ներշնչող ոգի բերաւ իրագործուելիք ծրագիրներուն: Մանաւանդ շարունակեց քվքակցութիւնը Գերագոյն Մարմինին հետ՝ ազնուագոյն ոհով: Եւ անոր առաջարկին ընդառաջելով է որ գրեց իր յուշերը, Հ.Մ.Ը.Մ.ի վաթսունամեակին առթիւ:

Ժամանակի ընթացքին, միշտ արթուն պահակ, հետեւեցաւ մամուլին մէջ լոյս տեսած Հ.Մ.Ը.Մ.ի մասին գրութիւններուն, եւ գիրով ալ հրապարակ եկաւ պաշտպանելու ձշմարտութիւնը, հեռացնելու ստուերները իր պաշտած կազմակերպութենէն եւ անոր նուիրեալ՝ գոհաբեր դէմքերէն:

Այս բոլորը չկան իր յուշերուն մէջ:

Պարտք գցացի՞նք՝ այստեղ արձանագրել զանոնք, պատկերագարդումով, ամբողջացնելու համար կեանքի մը եւ առաքելութեան մը ներշնչող պատմութիւնը:



1915-ի նահատակներն ու անոնց երազը մնացին իր կեանքը իմաստաւորապէս տեսլական եւ խաչը կուրծքին՝ միշտ ալ քալեց Հ.Մ.Ը.Մ.ի սկաւտներուն հետ Ե-դեռնի ոգեկոչման հանդիսութիւններուն:

1974-ին Պեյրույք այցելութեան, ոգեւորուեցաւ ի տես Հ.Մ.Ը.Մ.ի ուռնացած շարքերուն: Երիտասարդի խանդավառութեամբ այցելեց ակումբները, մարզիկի կայտատուութեամբ բարձրացաւ բեմերը՝ հայրենակերտ Հ.Մ.Ը.Մ.ական սերունդին ազնիւ ոգին եւ կենսաբաշխ աւիւնը փոխանցելով նորերուն:



Անրիլիասի Նահատակաց Յուշարձանին առջեւ, Ապրիլ 24-ի սգատօնին: Տ. Խոյեան նստած՝ ծաղկեպսակին հտին: Շրջ. Վարչութեան կողմէ կը խօսի Յ. Գեղարդ:



Զախէն անջ,
եղբայրներ
Յովհաննէս
Շահինեան
(Շրջ. Վրջ.
ատենապետ),
Տիգրան
Խոյեան,
Բիւզանդ
Թորիկեան եւ
Երէցկին՝
Խոյեան:

Հ.Մ.Ը.Մ.ի Պեյրույքի ակումբին մէջ:

Հ.Մ.Բ.Մ.ի հաստիքներուն կամ բանակումներուն երբեք առիշը չփայտաց օրհնելու Հ.Մ.Բ.Մ.ի գրօշին ասկ հասակ նետող սերունդը եւ մատուցանելու անոր Սբ. Հաղորդութիւն:



Փա՛ռ՛ք ու յաղբանակ Հ.Մ.Բ.Մ.ին



Սրբ. Պատարագ՝ բանակումի ընթացքին:

Եղբ. Տիգրան Խոյեան Հ.Մ.Բ.Մ.ի առաջին ոսկի շքանշանը ստացաւ Կեդրոնական Վարչութեան կողմէ. 1978-ին: Վարր, շքանշանի սուշութեւնն ետ ողջագուրումը Կեդր. Վարչութեան ատենապետ՝ եղբ. Վարդգէս Տէր Կարապետեանի հետ:



Սրբ. Հաղորդութիւն՝ արեւուշներուն:



Սրբ. Հաղորդութիւն արիններուն:

Հ.Մ.Ը.Մ.Ի Ա. Ընդհանուր բանակումին՝ Վալաբու (Յունաստան) :



Դրօշակի արարողութեան ընթացքին :




Հ.Մ.Ը.Մ.Ի ֆայերը՝ «Յառաջ Նահասակ»ին ի պատուի :



Քալանոսի բանակումին է, որ Հ.Մ.Բ.Մ.ի քարձրագոյն «Ոսկի Շքանշան»ը պաշտօնապէս տրուեցաւ եզր Տիգրան հոյեանին: Անոր ձայսին՝ միս շքանշանակիրները, եզրայրներ՝Գեորգ Յարէթեան, Լեւոն Գայեան, հաչիկ Բարթեմեան Աչին՝ եզր Վ. Տէր կարապետեան:



Հ.Մ.Բ.Մ.ի Ա. Կեդր. Վարչութեան անդամներու եւ պատասխանատու սկստու խմբապետներու հետ:



Հ.Մ.Բ.Մ.Ի Ամերիկայի ներկայացուցչական ժողովներուն :

Մեծին ու կրտսերին հետ
 հաւասար եղբայրակցու-
 քեամբ :



Հալիվուտի արեւոյշնե-
 րուն հետ 1967 :



Կաղնիին ծլարձակումնե-
 րը : Թեհրանի «Արարատ»ի
 Արի-Արեւոյշնեբուն հետ,
 Վալամուսի բանակումին 1978 :



Միշտ պատմեշի վրայ :

Ա.Մ.Ն.ի Արեւելեան Շրջանի 5-րդ ներկայացուց-
 չական ժողովին եղբ. Տիգրան Խոյեան կմռ տայ իր
 պատգամբ : 26-27 Մարտ, 1982 :



Բեկոր մը իր երագէն...

Իր «Ասպետ»ին եւ «մեծ
եղբօր»՝ Վահան Զերպի
աղջկան՝ Բիւրակնի, անոր
ամուսնին՝ Ռաֆայէլ Իշ-
խանեանի եւ իրենց զակին
հետ, անոնց սեփական տան
մէջ, 1974-ին, Երեւան:



Իր եօրը քոռնիկներէն մէկուն
հետ: Կեանքը կը շարունակուի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա.

Հ.Մ.Ը.Մ.Ի ԾՆՈՒՆԻԸ

ՄԱՐԶԱԿԱՆ ԵՒ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ	7
ՀԱՅԿԱԿԱՆ Ա. ՈՂԻՄՊԻԱԿԱՆԸ	19
ԱԿՆԱՐԿ ՄԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐՈՒ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ	23
Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ	27
Հ.Մ.Ը.Մ.Ի Ա. ՈՂԻՄՊԻԱԿԱՆԸ	47
ՍԿԱՌԻՏՈՒԹԻՒՆՆ ՈՒ Հ.Մ.Ը.Մ.Ը	55
«ԲԱՐՁՐԱՅԻՐ-ԲԱՐՁՐԱՅՈՒՐ»Ը ԻՆԶՊԷՍ ՍՏԵՂԾՈՒԵՑԱԻ	63
Հ.Մ.Ը.Մ.Ի Ա. ՅԱՂԹԱԿԱՆ ՏՈՂԱՆՑՔԸ	67
ՔԻԱՂԸՏ ՀԱՆԷԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ	73
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՆԶԸ Հ.Մ.Ը.Մ.ԻՆ	75

Բ.

Հ.Մ.Ը.Մ.Ը ՆՈՐԱՍՏԵՂԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՁ

ՄԵՐ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ	85
ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՁՆԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԵՏ	101
ԱՇԿԱԽՈՒԹԵԱՆ ՏՕՆԱԿԱՍԱՐՈՒԹԻՒՆԸ	105
ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԱՆՁԵՐ, ՎԱՅՐԵՐ, ՈՐՈՇՈՒՄՆԵՐ	109
ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ ԳՈՐԾԻ ՎՐԱՅ — ՖՈՒԹՊՈԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ	119
ՀԱՅ-ԹՈՒՐԲ ՊԱՏԵՐԱԶՄԸ	123
ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ՀԱՇՈՒԵՑԱՐԴԱՐԸ	137
ՎԱՀԱՆ ԶԵՐԱԶ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՍՈՒՐԲ ԳՈՐԾԸ	139
ՍԿԱՌԻՏՈՒԹԻՒՆԸ	147
«ԿՏՐԻՃ»ՆԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՑ ՄԷՁ	149

Գ.

Հ.Մ.Ը.Մ.Ը ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ

ԱՄԵՐԻԿԱ ԺԱՄԱՆՈՒՄՍ ԵՒ ՆԻՒ ԵՈՐՔԻ Հ.Մ.Ը.Մ.Ը	155
ՆՈՐ ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՒ	
ՎԵՐԱՀԱՆԴԻՊՈՒՄ Ա. ՇԻՐԱԿԵԱՆԻ ՀԵՏ	169
ՄԱՐՄՆԱԿՐԹԱՆՔԻ ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՈՒՍԱՆՈՂ	175
ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԼԻԲԱՆԱՆ ԵՐԹԱԼՍ ԶՈՒՐԸ ԿԻՅՆԱՅ	181
ՄԻՇՏ Հ.Մ.Ը.Մ.Ի ԶԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ	183
ԴԷՊՔ ՄԸ ԵՒ Հ.Մ.Ը.Մ.Ի «ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ»Ը	185
ՖՈՒԹՊՈՂ, ՖԻԼԱՏԷԼՖԻԱ ՆԻՒ ԵՈՐՔԻ ԴԷՄ	189
ՎԱՀԱՆ ԶԵՐՍԶԻ ՄԱՀՈՒԱՆ ԴԷՄ ՅԱՆԴԻՄԱՆ	193
ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ «ԱԶԳ. ԸՆԴՀ. ՍԿԱՈՒՏԱՊԵՏ»	
ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈԲԵԱՆԻ ՀԵՏ ԵՒ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ	
Ա. ԺՈՂՈՎ ԲԱՐԻՉԻ ՄԷՋ	195
ԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՌԱԿՏՈՒՄԸ	199
ՖՈՒԹՊՈՂԻ ՎԵՐՋԻՆ ՄՐՑՈՒՄՍ	201
Հ.Մ.Ը.Մ.Ը ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ	203

Դ.

ՄԵՐ ԿՈՂՄԷ

ԵՐԷՅ ԵՂԲ. ՏԻԳՐԱՆ ՔՀՆՅ. ԽՈՅԵԱՆ ՄԻՇՏ Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԵՏ	209
--	-----

ԽՄԲԱԳԻՐ՝
Յ. ԳԵՂԱՐԴ

Այս հատորին տպագրութիւնը
աւարտեցաւ 1983 Մարտ 31-ին,
Պէյրութ

Տպաքանակ՝ 2000 օրինակ
Կաշեկազմ՝ 150 »

ՆԿԱՐԱՀԱՆՈՒՄ
ԲԱՔԱՆԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

Տպարան Ա.Լ.Թ.Ա.ՓՐԷՍ, Հեռ. 256051, Պէյրութ